



P. Բազում

Վ-2

798



Մեքսիկոյի  
Դոմինիկոս  
Կոնստանտին  
Կոնստանտին

Է  
Տեղ  
Երևանի քաղաքի  
Կոնստանտին  
Յ. Օշկանի

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

Պ. ՍՆԱՊԵԱՆ	Անփշրելի հիւլէն
Պ. ՍԵՒԱԿ	Մկրտում եմ ման կրակով
Կ. ՍԱՍՈՒՆԻ	«Տրտունջ»ի ճամբով
Հ. ՌՇՏՈՒՆԻ	Սեփական կեանքով, սրտի կրակով ու դառնութեամբ
Վ. ՊԱՐՏԻՋՈՒՆԻ	Մի կարեւոր ճշգում
* * *	Աստուած իր գահուն վրայ
Ա. ԱՐՄԱՆ	Յանուն Դուրեանի եւ ճշմարտութեան
Մ. ՄԵՓԱՐԵՆՅ	Պետրոս Դուրեան
Յ. ՕՇԱԿԱՆ	Պետրոս Դուրեան
Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ	«Ընկ» քանաստեղծութիւնը
ԱԼ. ԼԱՄԱՐԹԻՆ	«Լինը» (Թարգմ. Ա. Արման)
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Պետրոս Դուրեան
Բ. ԹԱՇԵԱՆ	Պետրոս Դուրեան
Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ	Պետրոս Դուրեան
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ	Ես՝ Պետրոս Դուրեան
ԳԷՈՐԳ ԽԱԶԱՏՐԵԱՆ	Պետրոս Դուրեան
ՅԱԿԱՆ ՇՈՂԵՆՅ	Դուրեանի մահը
ԳՐԻԳՈՐ ԳԻՒԼԵԱՆ	Պետրոս Դուրեան
Տ. ԶՐԱՔԵԱՆ	Պետրոս Դուրեան
Յ. ԶՈՐԵՏԻ	Թանաւ երգին
Ա. ՏՕՆՈՅԵԱՆ	Տազնապահար քանաստեղծը
Շ. ՄԻՍԱԿԵԱՆ	Բանաստեղծը
ՇԱՀԱՆԴՈՒԵՏ	«Ջրայ» Պետրոս Դուրեանի հետ
Կ. ՍՈՒՐԷՆԵԱՆ	Terra Incognita
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ	«Ես երգերը շատ սիրեցի»
ՀԱՅԿ ԽԱԶԱՏՐԵԱՆ	Վերականգնուեց Պետրոս Դուրեանի ղեմքը
Ա. ՄԵՍՐՈՊԵԱՆ	Զօհրապր եւ Դուրեանը
Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ	«Դուրեանի տնորակ»էն անջատուած էջեր
Ս. ՍԱՐԻՆԵԱՆ	Բարդ, հարուստ եւ քաղմերանգ
Ա. ԱՐԾՐՈՒՆԻ	Մեր առաջին իրապաշտ քատերագիրը
Ա. ՇԱՐՈՒՐԵԱՆ	«Մեր նոր քնարերգութեան առաջին մեծը»
Պ. ԱԼԱՀԱՏՏՈՅԵԱՆ	Պետրոս Դուրեան եւ Շոփէն
Զ. Կ. ՊՕՅԱՆԵԱՆ	Պետրոս Դուրեան եւ Ճան Քից
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Ծանկի՛ եկէ՛ք...
Ա. ԱԼԻՔԵԱՆ	«Տրտունջ»ը անմարդկային իրականութիւն է
Ք. ՅԻՆՊԱՇԵԱՆ	Տուածէն աւելին
Յ. ՊԷՐՊԵՐԵԱՆ	Երկինքի հիւանդութիւն ունեցող տղան
ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Խիզախութեան քանապարհորդը
Ն. ՊԷՐՊԵՐԵԱՆ	Դուրեանի հրապարակախօսական խառնուածքը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Հայ Յեղափոխութեան մանուկ մարգարէն
Վ. Թ.	«Ես կը սիրեմ գ'իմ Պիստոս»
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	«Մթալեան վրայ մթալքիւն մըն ալ»
Ն. ՊԷՇԻԿՓԱՇԼԵԱՆ	Թէրեքա Զուհաճեան
Վ. ՓԱՐԹԱՄԵԱՆ	Պետրոս Դուրեանը ինչպէս որ եղել է
Ռ. ՍԻՄՈՆԵԱՆ	Վաղա՛նեւիկ հանճարը
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	Դուրեանի յուզարկառորութիւնը
ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ	Տապալմագիր Պետրոս Դուրեանի
Վ. ՆՈՐԵՆՅ	Դուրեանի սպասք

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՉԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1-2      ԵՐԵՎԱՆ - ՓԵՏՐՈՒԱՐ 1972      ՊԵՏՐՈՒՅԷ

159-208

### ԱՆՓՇՐԵԼԻ ՀԻՒԼԵՆ...

Երկաթագործի որդի, չքաւորութեամբ չարչարուած մանկութիւն, խեղճ ու կրակ ճեմարանական ուսում մը, գործ մը քննելու հարկադրանքէն ծնած դժնդակ օրեր, դեղագործի աշկերտ, սեղանաւորի հաշուապահ, ուսուցիչ, թարգմանիչ, դերասան, ապտակ՝ չօրը կողմէ, ապտակ՝ դերասանապետի մը կողմէ, նուաստութիւններ՝ շուկայի մարդերէն, տասնութ տարեկանին թոքախտի նշաններ, քանրճէկ տարիքը չբոլորած՝ մահ, կենսագրութիւն՝ Պետրոս Դուրեանի:

Հրապարակագրական 9 յօդուած, 15 նամակ, 1 դամբանական, 13 թատերախաղ, 41 բանաստեղծութիւն, Ժառանգութիւն՝ Պետրոս Դուրեանի:

Այս 41 բանաստեղծութիւններուն չորս հատը հայրենասիրական խորք ունին, երկուքը՝ կրօնաբանութիւններ են, չորսը՝ ազգային, իսկ տասնըննը լեցուած են սիրային ու անհատական սարսուռներով, բնութեան պատկերներով, կոյսերով, մայրերով, մանկիակներով:

Դուրեանի կեանքը, արձակ գրականութիւնը, վերջ յիշուած քանրինը բանաստեղծութիւնները կարելի է կենսագրել, մեկնել, չափերու յարմարցնել, բայց ծանօթ օրէնքներով անկենսագրելի են, անմեկնելի ու անչափելի Դուրեանի միւս կտորները, անսնք, որոնք կը կոչուին՝

«Սիրելի», «Դրժելի», «Լեակ», «Թրճուհին», «Ներսէս հետ», «Տրտուցէ», «Իմ ցար», «Յուշէ», «Հեծեծմունք», «Իմ մահը», «Ի՞նչ կ'ըսեմ», եւ «Երեկոյեան բայ», թիւով 12 հատ:

«Սիրելի» բանաստեղծութեան հետ սիրոյ բիւր գիւթանքներն ու Բանին հմայքները հանդէս հանած չույլութիւնն է Դուրեանի, «Դրժելի» գոհարին հետ դրժողին հարուստ շնորհները եւ գրժուա-

208

Յին ներքին դժոխքը գրսեւորած յախուռն ապրումներու խորհրդանշան, աշխարհային «Լճակ»ին առեւթեր՝ մարդկային յատակներէն եկած փրփուրներու սաստիկ ալեկոծութիւն, «Խրճուխիմ» րերթուածին գիմաց՝ ամբողջ Արեւելքի պերճութիւնն ու խռովքը ցոլացնող ակնարկ, «Տրտուելզէ»ին մէջ մեր օրերու միջազգային մեծերուն վայել մեծախռով ապստամբութիւն, «Լիմ ցաւը» աղաղակին մէջ՝ արեան հաւատարմութիւն, եւ միւսներուն հետ՝ յիշատակի հուր, քայքայման անդունդն եւ անթառամ յիշատակի մը ահօսով մահուան վրայ յաղթանակ մը տանելու գիտակցութիւն, արութիւն, բեղմնաւոր սխրանք:

Այս թւումները, ի հարկէ, շուքերն իսկ չեն առանձնացւած բանաստեղծութիւններուն, որոնց մէջ տեղաւորուած զգայնութիւններու յորդութիւնը, փոթորիկները, ըզմանքները, ներքին բռնկումները, անմնացորդ խոստովանութիւններու տղամարդկային սրակն ու մտածման մրրիկները՝ իրրեւ աննախադէպ երևոյթներու ամբողջութիւն՝ ծանօթ նժարներու մէջ կշռելի ժառանգութիւն չեն եւ դժուար չէ ենթադրել, որ ժամանակը նուաճած եւ բոլոր ժամանակներուն պատկանող Պետրոս Դուրեան յայտնութիւնը քննութեան փայփայուած նիւթ պիտի դառնայ բոլոր ժամանակներու բոլոր քննադատներուն, հոգեբանութեան հետազօտիչներուն եւ հաւանաբար նաեւ արեան ճամբորդութիւններուն ճշմարտութեան հաւատացող կամ ժառանգական օրէնքները խորաչափած մտածողներու:

Մեր անապատին մէջ, մեր Երկնքին վրայ ու շնահեղձ մեր միջավայրին մէջ իրրեւ ջուր կենդանի ու կենսատու արեգակ ու շնորհարաշխ շունչ Դուրեանի յանկարծական երեւումը կը յիշեցնէ գինքը դարերով կանխող միւս յայտնութիւնները, որոնցմէ առաջինը եղաւ «գրին գտիչ, կաղապարիչ մեծ Մաշտոցը», երկրորդը՝ իրաւագրկուած մարդու պիտակցութեամբ Աստուծոյ դէմ ճակատ յարդարած իրաւախնդիր միւս ըմբոստը, նարեկացին, երրորդը՝ իր շնորհներով իր դարը եւ մեր հոգիին կարգ մը կողմերը ողորդած Ծնորհալին, չորրորդը՝ պալատներու թագուհիները երկինքներու հարսնացուցած «Պայտի նոքար Սայաթ-Նովան» ու հինգերորդը՝ ինք, առաջինին պէս պիտարար, երկրորդին պէս՝ ըմբոստ, երրորդին պէս՝ շնորհաշատ, եւ չորրորդին պէս սովահա՛ր Պետրոս Դուրեանը:

Այս անուններուն հետ, տարօրինակ իրականութիւն մը կը տարբուի հայ գայրութեան մէջ: Կարծես աներեւոյթ ուժ մը սահմանած է, որ նախ հսկայ պարսպ մը ստեղծուի ու ապա մարմին առնէ ստեղծադործ բացառիկ խմոր մը, որ իմացական տարածասփիւռ ցոլքով, սրտի ճենճերումներով, հոգեկան յորդարուի քաղցրութիւններով, բեղարածի եանա՛-եանա՛ ջիզերուն բոցերով ու անձին ամբողջական հատումներով դարձնէ՛ յետնեալ բոլոր տուրքերը եւ տոկոսային աննախընթաց համեմատութիւններով յեցնէ իրմէ առաջ ու ետք բաց մնացած բոլոր տարածութիւնները:

«Լուսաւար ու վեհ» ինչ որ բան ունեցած է ժողովուրդը՝ հաւաքեր ու քեզի է տուեր, կ'ըսէ տեղ մը Եղիշէ Չարենց, տուեր է, որ այդ ամէնքը պարզես դալիթի ցնորքին՝ «Եւ ընդմիջտ մնաս մեծ ու սիրիլի»:

Այդպէս վարուած է ժողովուրդը ընդմիջո մեծ ու սիրելի նա' եւ միասնորուն, Հայ դպրութեան լեոնապարին բարձրագոյն գազաթիւները ձեւացնող Մեսրոպ Մաշտոցի, Նարեկացիի, Ծնոր-Հայիի, Սայաթ-Նովայի ու Դուրեանի հետ, շոյլելով անոնց լուսաւոր ու վեհ ամէ'ն ինչ, բեղմնաւոր ամէ'ն ցնորք ու խոհական իմաստութեան ամբողջ հարստութիւն մը:

Եւ դեռ, գուգաղիպութի'ւն է արդեօք, թէ խառնուած քային հրամայականի մը բխումը, որ «մեծ ու սիրելի» Չարենցիին պէս զգան իրենց մեծութիւնը նաեւ զինք կանխողները եւ, այս կամ այն ձեւով՝ պէտքը զգան խօսիլ այդ մասին: Վտանգաւոր է վճռական ըլլալ Հոս, բայց հետաքրքրական են արձանագրուած փաստերը:

Նարեկացին կ'ըսէ՝  
Բայց այս մատեանի յարակալութեամբ կը մեամ անմահ.  
Սայաթ-Նովա՝  
Ամէն մարթ չի կանա կարթայ՝ իմ գիրքն ուրիշ գրէն է-  
Պետրոս Դուրեան՝  
Աստուած, խոկն հսկայ փշրէ հիւլէիս,

Դուրեանի տողը «Տրտունջ»էն է, ա'յն քանդակէն, ուր գիրար խաչաձեւով իմացական ու հողեկան փայլատակումներուն ահագնութենէն շանթահար եղած է նաեւ ի'նքը՝ բանաստեղծը, ա'յն աստիճան, որ աստղերու ահալի սանդուխտն ելլելով աստուածներու բնակավայր «խորն երկին» սուզուելու իր սխարագործութենէն ի'նք կը սուկայ ու պահանջը կը զգայ վերին ուժէն կարգի հրաւիրուելու:

Աստուած, խոկն հսկայ փշրէ հիւլէիս,  
Կեանքը, Հայրենիքը, սէրը, անհատին ճակատագիրը: Դուրեանի ընդգրկած մայր նիւթերն են ասոնք, ամբողջութիւնը՝ հակասութիւններու, հսկայ իրականութիւն մը, ուր իր բաժինը եղաւ ու երգին տարերքը կազմեց աղքատին տառապանքը, անադատին գալարումը, անտէր մնացածին կակիծը եւ ճակատագրէն լքուած մարդուն անդոհանքը: Դուրեան 13 տարեկանին, իր առաջին բանաստեղծութեան մէջ ու հանճարներուն մօտ միայն հանդիպելի կանխահասութեամբ մը զգացած էր մարդուն միակողմութիւնը, մարդուն դատապարտուածութիւնը եւ Անոր՝ Աստուծոյ չէզոքութիւնը, որ աւելի ուշ սնունդ պիտի տար Հոգիին անդունդներէն եկող եւ բարձունքներու բնակիչները ահաբեկող համանուագային «Տրտունջ»ին:

Երկինքը տարողնելու եւ իր յոյսերով, տարակոյսներով, կարօտներով, կարօտներուն մոխիրներով, սիրելու եւ ապրելու բուն պահանջներ ներկայացնելու տակնուվրայութեամբ, հեղուկեամբ ու քինախնդրութեամբ ամենակալ Աստուծոյ ներկայացած պահուն չէ միայն, որ «խոկն հսկայ» է Դուրեանի, այլ իր անչիջելի փառքը կազմած բոլոր քերթուածներուն մէջ, եւ դեռ միայն խոկով հսկայ չէ Պետրոս Դուրեան, այլ շունչով, զողով, հուրքով, նորով, բառի'ն նորով, Բանին նորով, բանաստեղծական իսկութեամբ, որ դար մը ամբողջ անխաթար մնաց եւ իրեւ անփշրելի հիւլէ պիտի մնայ դարեր դարերով:

ՊՕՂՈՍ ՄԵԱՊԵԱՆ

Ես ուզեցի լուկ ու մինակ  
Սըրտակցիլ ջինջ վըտակին հետ,  
Յիշատակի չ'ունի նա հետ,  
Սի'րտ մ'օրօրում մինչ սուգիմ յատակ,  
Գտնեմ զ'իս հան տժգոյն, յստակ,  
Գազտնի'ք մը ունի — այն՝ անթիւ վետ:

**Ս Ի Բ Ե Լ**



Եթեր մը տրոփ սրտի լսեցի,  
Հծծեց. — Կ'ուզե՞ս սիրտ, ե'կ ինծի»:

Ես ուզեցի սիրել զեփիւտ,  
Որ երկնէն թռչի բեկբեկ,  
Նա չը սիրեր խոցել երբե'ք,  
Հոգի մ'որում գազտնի'քն է բոյր  
Գիտէ շոյել երազներ բիւր,  
Երկնի բոյրն յ'ուշ կ'ածէ առ հէք:

Ո՛հ, փունջ մը բոց փըսփըսաց ինձ.  
— Կ'ուզե՞ս պաշտել հոգի մ'աներիծ:

Ես ուզեցի բընարով մի  
Լուկ սիրել հաս, հաս դալկահար,  
Պաշտել, գրկել միայն բընար,  
Սիրող էակ մանչել գ'անի,  
Ըստ իմ բընաց լարել աղի,  
Եւ սրտակցիլ սիրողաբար:

Նէ մօտեցաւ յուշիկ, բսաւ.  
— Բնարդ է ցուրտ սիրտ, եւ սէրըդ՝  
ցաւ»:

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժըպիտ,  
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ:

Ես ուզեցի լուս մեճանայ,  
Սիրել փըթիթք, խորշեր թաւաւ,  
Սիրել կայծերն երկնի կապոյտ,  
Աստուան շաղն, իրիկուան բալ,  
Հակասագրիս սել գիծ կարդալ,  
Խակալ, սուգիլ, ըզմայլիլ սուտ:

Ո՛հ, խորձ մը վարս, եղեմ մը շունջ,  
Շրջագգեստ մը շրջեց իմ շուրջ:

Թօթուեց թեւերն հոգիս մուրս,  
Հանչեց ըզնէ գեղ ու կըրակ,  
Սիրտն անապակ՝ ինչպէս վտակ,  
Անմե'զ՝ ինչպէս սիւք դալկահար —  
Հաւատարի'մ՝ ինչպէս բընար,  
Հրածեշտ տըւաւ կեանքի մեճակ:

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժըպիտ,  
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ:

1871

Ես ուզեցի միշտ ինձ ըլլալ,  
Մըտիկ ընել քնդիւն սրահն,  
Շնչել, խըմել ներս հոգին,  
Եւ շօշափել լուկ ճիւնափայլ  
Ծածոթակին վըրայ ծալ ծալ  
Թափող վարսից ալեակէ՛ք ծըփին:

**Գ Ր Ժ Ե Լ**



Ովկեսն մը տըրտունջ լսեցի,  
«Զիս կը նեղե՛ս — հծծեց ինծի:

Ես ուզեցի ինձու մ'ըլլալ  
Ներս ձեռքին տակ հեւացող,  
Ներս հոգւոյն խորն հիացող,  
Թեքեւ պատկեր մ'ըլլալ շարժեալ,  
Մաճալ գիս, լակ ըզնէ՛ խոկալ,  
Կ'վառէ երազ մ'որուն մէկ շող:

Ամպրայ մը սաստ ցնցեց հոգիս,  
Գոչեց — սիրելի չ'ես կրնար գ'իս»:

Ի գա՛ր սիրտըս մըխաց սուջին՝  
Խընկարկելու սիրտն անապատ,  
Յուցի իրեն ճակատս գունատ,  
Կուրծըս գոգած, մա՛ռն իմ աչքին,  
Ի գա՛ր շուրթերս դողողեցին,  
Զ'ինքը սիրելու հծծեցին յայտ:

Փունջ մը կննիւ, բոյլ մը կայծակ,  
Դժոխք մ'անէ՛ծք խոցեց հոգեակս:

Նէ՛ հեռացաւ ինձմէ, ըսաւ,  
— Բա՛ւ սիրեցի քեզ, մնաս բարեա՛ւ»:

Ես ուզեցի պաշտել ըզնէ՛,  
Սիրել ծըպիտքն՝ փըքի՛քէ՛ անհուն,  
Սիրել առաջերն սեւ աչերուն,  
Եւ այն խոկումն, որ մքազնէ  
Պայծառ ճակատն՝ այն ամպըն է,  
Որ կ'ըջարէ դէմքը լուսնոյն:

Որոտացիմ խոկմանցս ամպեր,  
Կայծակնահար ըրին հագիս,  
Մոխիր դարձան երազներս յ'իս,  
Ճակատագիրս խոճողաց ի վեր,  
Խորջ մը կար, որ գ'իս չը ծաղրեր,  
Այն լուս փո՛ւն էր գերեզմանիս...:

Գիշեր մը սուգ, անդունդ մ'հառաչ՝  
Յուզեց ներս հոգին ու լանջ:

Փունջ մը կննիւ, բոյլ մը կայծակ,  
Դժոխք մ'անէ՛ծք խոցեց հոգեակս...:

# Մկրտում եմ նաեւ կրակով

Գուն կրակ, ես ամբողջ կրակ, վո՛ւր մէ կրակին դիմանամ:

Եւ էլ չի գիժտուում: Ազրում է:

Հնց այդ այրումն էլ կոչում է Սայաթ-Նովա:

Նո՛ւր էր կրակի զերբը, թնչպէս գիտեմք, կոչում է «եռալի դաւաք» կամ «Թարիփի դաւաք», այսինքն՝ ժառանգ կրկի կամ գո՛ղթի: Այս վերնադերքը ճիշդ են, բայց լիազեւ չեն ընդգրկում նրա ամբողջ գործը: Յետոյ, մի 100 տարի անց, պիտի գար մի անհարկ պատանի՝ Պետրոս Դուրեան անունով եւ բնու շիճանալով Սայաթ-Նովային, պիտի բնորոշէր թնչպէս էր, այնպէս էլ որո՛ւր էր մեծ նախորդի (աւելի ճիշդ՝ էր հարազատ հոր) ոչ չ կեանքը:

Հոն երդնի կայ, ո՛չ մատանն:

Այդպէս է, այո՛ւ: «Հոն հրդեհ կայ, ո՛չ ժառանգ»: Այդպէս է, որովհետեւ մկրտում-թիւնը միայն շրջով չի լինում: Մկրտում են նաեւ կրակով:



...Իսկ հիմա ես ունի ուղղակի հակառակ մի ցանկութիւն. թէկո՛ւզ մտնեմ, մի-չէ՛ւ իսկ մտնեմ, միայն թէ սիրածը որտեղ որտեղ էր մահը, ոչ չ կերպ ասած՝ սիրածին գլխաբաց անսեղ:

Թէկուզ հազար դարդ ունենամ, յիս սրտումը ան չիմ ասի.  
Իմ հուճիկ-հե՛քիւնն զուսն թո, յիս էլ ուրիշ նախ չիմ ասի.  
Սայաթ-Նովան ասաց. հայտնւ՛մ, յիս է՛մ մտնիմ ման չիմ ասի,  
Հեծափ բլի, զուսն վրբու յաւ մագրտ շազ ստայվ ա՛յլի յուս:

Որ սա ասուած չէ ասելու համար, որ սա խորապէս այրուած ու տառապուած մի ցանկութիւն է, երևում է Սայաթ-Նովայից 100 տարի յետոյ էլ, երբ այս տղանին ան-տեղեկ մի պատանի՝ զործուած նոյն թելով ու թիւում նոյն խմորից, ոչ թէ մանկան վրայ խօսելիս, ոչ չ ուղղակի մտնելիս է այրում այս նոյն տառապանքը եւ ունենում այս նոյն ցանկութիւնը:

Այլ ո՛չ, անգա՛ւք, եթէ տըրիք մեկի աքբ,  
Իցի՛ւ ք՛անոր գերեզմանիմ էարն լինիմ,  
Եւ զուսն քօջան գաւ շնչե՛լ շուքդ... արտասան՛լ...  
Քեզ երգելու համար, հարկ լով գոլ շիրիմ...

Եւ ահա սա ցանկութիւնն է, որ Պետրոս Դուրեանի ու սրանից 100 տարի անաջ էլ Սայաթ-Նովայի տառապանքի համատարած կարմիրի մէջ ազուցում է յոյսի մի փոքրիկ կապոյտ (էր բառով ասած՝ միմա)՝ արտարձակելով մի ճառագայթ, որից նշոյլում է նրա հոգեյատանկը:

ՊԱՐՈՅՐ ՍԵՆԱԿ



#### 4. ՍԱՍՈՒՆԻ

### «ՏՐՏՈՒՆՁՔ»Ի ՃԱՄԲՈՎ...

Յուզական մտածումի եւ տրտունջի մեծագոյն բանաստեղծի մահուան հարիւրամեակը կը յիշենք, երբ փոքրագոյն տարիքին մահացած այս բանաստեղծը արդէն ԱՆՄԱՀ է:

Հայ գրականութեան անուանի բանաստեղծներէն ամէնէն քիչ տարիներ ապրածը երիտասարդ Պետրոս Դուրեանը կը ներկայանայ մեզի. միայն 21 տարի:

Եւ սակայն Արեւմտահայ Գրականութեան մէջ անոր մուտքը վերածնունդի պոռթկում մըն էր, մեր արդի գրականութեան առաջին զանգահարումը:

Ճիշդ է, թէ Մկրտիչ Պէշիկօպեանի ձայնը հնչած էր Դուրեանէն առաջ, սակայն յեղաշրջող բնոյթ մը չունէր: Աշխարհաբարի յստակացումը համբայ կը կտրէր բնութեան ու երազանքի նկարագրութեանց մէջ, բայց հոգեկան եւ մտածողական ցընցումը կ'ուշանար:

Ահա՛ այդ թուականներուն էր, որ տեղայնոյց պատանիի մը սիւնը կը լսուէր 1870ական թուականներուն:

Առաջին քայլերուն մէջ իսկ խռովօք լեցուն էր ու գիտակից արթնութիւն մը կեանքի բարդ երեւոյթներու մասին:

Անհատական, ազգային եւ համամարդկային «խեղճանց խորան» մըն է Պետրոս Դուրեանի ճակատը, ուրկէ մտածումներով առյցուն զանգահարում մը կը սկսի:

1867-1871 չորս տարիներուն կը լսուի Դուրեանի ձայնը: Պատանի եւ նոր մտած երիտասարդութեան առաջին տարիները, բազմակողմանի գրականութիւն մը կ'աւանդէ հայ ստեղծագործ անդաստանին: Խորիմաստ բանաստեղծութիւնները եւ ազգային ազատագրական վնասկան կարծիքները իրար կը լրացնեն եւ կ'ուռնանան մտածումներու շարանով:

Դուրեանի գրականութիւնը բազմակողմանի խռովանց խորան մըն է:

Իր բանաստեղծութիւններու լաւագոյնները արդէն ծանօթ են ընթերցողներուն, բայց եթէ ուշադիր վերլուծումով մը մօտեմանք բանաստեղծի նամակներուն, հրապարակագրական յօդուածներուն, անկշան տեղ մը ինկած բանաստեղծական նմոյշներուն, քատերական գրուածքներուն, պիտի համոզուինք, որ հրաբուխ մըն է այս բանաստեղծը, հրդեհ է, ինչպէս կը գրէ իր ընկերոջ՝ Ադամեանին, — «*պէտք է որ շուրթն սառ շուրթն տեսնըւի նք... պիտի տեսնես որ հրդեհ է եմ...*»:

Իսկ եթէ վերստին վերլուծական ընթերցումի ենթարկենք ամէնուն ծանօթ ու հազար անգամ արտասանուած ու ծափահարուած բանաստեղծութիւնները, խորիմաստ տողեր պիտի գտնենք, որոնք փոքրիկ բանաստեղծութիւնը մեծարժէք ստեղծագործութեան կը բարձրացնեն:

Բազմակողմանի երեւոյթներու վերընծայումը կրնանք հաստատել Պետրոս Դուրեանի ամբողջական գրականութեան մէջ: Բոլորն ալ ուշագրաւ:

Երկար տարիներու ապրումի եւ դատողութեան տարօրինակ եզրակացութիւն մը կը յանձնեմ ընթերցողներու եւ քննադատներու ուշադրութեան: Բանաստեղծի մը, տաղանդաւոր բանաստեղծի մը լաւ գրուածքին մէջ եթէ բառեակ մը անարժէք է, բանաստեղծութիւնը կ'արժեքրկուի մեր աչքին եւ դատողութեան առջեւ: Նոյնիսկ ձախող մէկ բառը բառական է, որ խոժոռի մեր դէմբը: Սակայն տարբեր է մեր վերաբերմունքը, երբ կը կարդանք Դուրեանը: Գրական արժէք չունեցող նամակի մը, կամ հրապարակագրական յօդուածի մը մէջ շատ յաճախ կը հանդիպինք տողի մը իմաստալից, դատողութեան մը պատկերաւոր եւ փիլիսոփայական այնքան մեծաթռիչ, այնքան խորունկ խոհի մը, որ հասարակ նամակն ու յօդուածը գրական արժէքի կը բարձրացնեն:

Հաննարի կայծն է, որ «*Տրտունջք*»-ի հեղինակը բարձունքի կը հասցնէ, ու տաղանդի պակասն է, որ ուրիշ բանաստեղծի մը մէկ անհամ բառը անոր բանաստեղծութիւնը անհամ կը դարձնէ:

Վաղամեռիկ բանաստեղծի մահուան հարիւրամեակի այս խորհրդածութիւնները կ'ազգէի, որ մղում մը ըլլային մեր միջին և նորահաս սերունդին՝ *նոր վերլուծման ենթարկելու Պետրոս Դուրեանի գրականութիւնը*: Մոռնալ անոր տարիքը, յազական մահը եւ խորասուզուի բանաստեղծի խոռվայոյց հագեցեալ ծովուն մէջ, վեր հանելու համար հաննարի այն արժեւորումը, զոր Պետրոս Դուրեան ընծայեց Հայ Գրականութեան:

Մէջբերումներէ կը զգուշանամ, խտացումը պահելու համար. բայց «*Նճակ*»-էն հետեւեալ տողերը կը յանձնեմ ընթերցողի ուշադրութեան.

*Որքան ունիս դու ալի՜  
Ճակատս այնքան խոկ ունի,  
Որքան ունիս դուն փրփուր՝  
Սիրտս այնքան խոց ունի բիւր:*

Այլ եթէ զոգդ ալ թտփին  
 Բոյլքն աստեղաց երկնքին,  
 Նմանիլ չէ՛ս կրնար զուն  
 Հոգւոյս՝ որ է բոց անհո՛ւն:

Ու մենք այդ անուց երդեհին կը հանդիպինք, երբ մեր գլուխը կը խոնարհենք անոր «Տրտունջ»ին վրայ:

Այս բանաստեղծութիւնը ինքնաշատուկ է, խորիմաստ, մարդկային վիշտի, ողբերգութեան, մարդու եւ Աստուծոյ հակամարտութեան «խոկմանց խորան»ն է:

Միջագային գրականութեան ամբողջ տարածքին, դուք պիտի չկրնաք գտնել գրուածք մը, որ նմանի Պետրոս Դուրեանի «Տրտունջ»ին, բաղդատուի այս բանաստեղծութեան քոնչքին եւ մտածողական կառոյցին:

«Տրտունջ»ը հաննարէն ծնած մեծ գիրք մըն է, հաւասար Շէյքսպիրի «Համլէթ»ին, Նարեկացիի ողբին եւ Աստուածաշունչի լուսագոյն էջերուն: Երև է եւ միայն երկու էջ, բայց կը մնայ բարձրագոյն հորիզոնի մը վրայ՝ իբրեւ մարդկային հաննարի ստեղծագործութիւն:

«Տրտունջ»ը եւ անոր կցուած «Զղշում»ը (որ «Տրտունջ»էն օր մը ետք գրուած է), հաննարեղ գիրք մըն է ըսինք վերը: Որպէսզի չափագանցութիւն չնկատուի այս արտայայտութիւնը, պիտի ուզէի, որ ընթերցողը ինծի պէս գլուխը խոնարհէր այս արտակարգ բանաստեղծութեան վրայ եւ սուգուէր անոր անդունդներուն մէջ. պիտի տեսնէր, որ «Տրտունջ»ը ընդարձակ, ցնցող տրամ մըն է, բազմակողմանի վէպ մըն է, փոքորկալի համնուագ մըն է:

Վստահ եմ, թէ օր մը վաղամեռիկ բանաստեղծը, ինչպէս հայկական, նոյնպէս միջագային գրականութեան աստղերու հոյլին մէջ պիտի դասուի:

Համոզուած եմ...

Կ. ՍԱՍՈՒՆԻ

## ՏՐՏՈՒՆՁԲ

Է՛հ, մնաք բարով, Աստուած եւ արեւ,  
 որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ... :  
 Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից,  
 Աստղերն ի՞նչ են որ, եթէ ո՛չ անբիծ  
 եւ թշուառ հոգւոց անէծք ողբագին,  
 որք թրոին այրել նակատն երկնիքին.  
 Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ՝  
 Յանելուն գէնեքն ու զարդերն հրբատ... :  
 Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարէ գիս,  
 Աստուած, խոկն հըսկայ փշրէ հիւլէիս,  
 որ ժպըրեի ձգտիլ, սուգիլ խորն երկնի,  
 ելնել աստղերու սանդուղէն ահալի... :  
 Ողջո՛յն քեզ, Աստուած դողդոջ էակին,  
 Շողին, փըթիթին, ալւոյն ու վանկին,  
 Դու որ նակտիս վարդն եւ բոցն աչերուս  
 երլեցիր թրթռումս շրթանց, թռիչն հոգւոյս  
 Ամպ տրիք աչացս, հեւք տուիք սրտիս,  
 Ըսին մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,  
 Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետէի,  
 Կեանք մ'անհուն շողի, բոյրի, աղօթքի.  
 Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ  
 Հոս մառախուղի մէջ համբ անշըշունջ,  
 Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,  
 Պիլըիմ անուանդ մոնչեմ անդադար,  
 Թող անէծք մ'ըլլամ ու կողքդ խըրիմ,  
 Թող յորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ» :

Ո՛հ, կը դողդոջեմ, տժգոյն եմ, տժգո՛յն,  
 Փըրփըրի ներսս դըժոխֆի մ'հանգոյն...:  
 Հառաչ մ'եմ հեծող նոներու մէջ սեւ,  
 Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...:  
 Ո՛հ, կայծ տուէ՛ք ինձ, կայծ տուէ՛ք, ապրի՛մ,  
 Ի՛նչ, երագէ վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...  
 Այս ճակատագիրն ի՛նչ սեւ է, Աստու՛ծ,  
 Արդեօք դամբանի մրուրո՞վ է զժուած...:  
 Ո՛հ, տուէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ,  
 Սիրելի կ'ուզեմ դեռ ՚ ապրիլ ու ապրիլ.  
 Երկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,  
 Կայծ տուէ՛ք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէ՛ք:  
 Գարունն ա՛յ մէկ վարդ ճակտիս դալկահար՝  
 Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չեն տար:  
 Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,  
 Լուսինն յար կուլայ, խուճարկէ վըհեր:  
 Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,  
 Անոր համար նա դըրաւ այդ լուսին.  
 Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան,  
 Նախ՝ կեա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վըրան:

Ի գո՛ւր գըրեցին աստղերն ինձի «սէ՛ր»,  
 Եւ ի գո՛ւր ուսուց բուլբուլն ինձ «սիրելի»,  
 Ի գո՛ւր սիւֆեր «սէ՛ր» ինձ ներշնչեցին,  
 Եւ գիս նորատի ցուցուց ջինջ ալին,  
 Ի գո՛ւր թաւուտներ լըռեցին իմ շուրջ,  
 Գաղտնապահ տերեւ չ'առին երբե՛ք շունչ,  
 Որ չը խըռովին երագէրս վրսեմ,  
 Թոյլ տուին որ միշտ ըզնէ երագեմ,  
 Եւ ի գո՛ւր ծաղկունք, փըթիթնե՛ր գարնան,  
 Միշտ խնկարկեցին խոկմանցքս խորան...  
 Ո՛հ, նո՛հ ամէնքը գ'իս ծաղրեր են...  
 Աստուծոյ ծաղրն է Աշխարհն ալ արդէն...:

## ՆԵԿՏՈՐ ՌԵՏՈՒՆԻ

### ՍԵՓԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՎ, ՍՐՏԻ ԿՐԱԿՈՎ

### ՈՒ ԴԱՌՆՈՒԹԵԱՍԲ...



Ամբողջականութեան սկզբունքը Գուրեանի պոեզիայում հասնում է ամբողջ կատարելութեան: Արտացոլում է ոչ թէ արամագրութեան կամ հոգեվիճակի թուլցիկ պահը, կամ իրականութեան անփոփոխ, անշարժ պատկերը, այլ տինամիկ վիճակները, կեանքի կենդանի պրոցեսները՝ ներքին բախումների տրամարանական վախճանով: Այդ իմաստով դուրեանական ֆերթուածը դառնում է ուղղակի իրականութիւնից պոկուած բարբախուն մի պատկեր կամ, ինչպէս գիպուկ ասել է Ա. Զօպանեանը. «Արիւնով լեցուած սրտի մը պէս տաք եւ բարախտուն»: Կեանքի գոյութեան հակառական ձեւերի հարստութիւնը իրենց գոյների եւ երանգների կենդանի խաղով, կեանքի գեղեցկութեան ու պոեզիայով՝ կարելի է տեսնել ո՛չ միայն նրա ամբողջական ֆերթուածներում (ինչպէս «Թրփուհի»), այլ նոյնիսկ առանձին տողերում:

Մարդկային ապրումների ծաղման, ներքին տրամարանական ընթացքի եւ աւարտի հետ, որը Գուրեանից յետոյ առանձնապէս խորացնում է Միամանթոն, ուշադրաւ է նաեւ տրամադրիկ լիբիդոյ: Գուրեանը, ինչպէս Միամանթոյի պոեզիայում մաքառում են կեանքի ձգտումն ու ցաւը, միմեանց են յաջորդում ներհակ հոգեվիճակներ, բացում է տառապանքի եւ յոյսի, սիրոյ եւ ատելութեան, կեանքի եւ մահուան մարդկային յուզաշխարհը, որ իրական աշխարհի պատկերն է: Վերջիննք Գուրեանի «Տրտունգէ»ը, որի մէջ խտացուած են հայ պոեզիայի հիմնական նուաճումները, 70ական թուականների սկզբին:

«Տրտունգէ»ի լակոնիկ պատկերներում բացում է մարդկային հոգին իր բացաժառ խորշերով: Զգացմունքներով ու խոհերով հարուստ այս աշխարհը ապշեցնում է ճարակաւ ապրումների ամբողջականութեան եւ ներքին կոնֆլիկտների հարստութեամբ, մաքառման ու ցաւի, վհատութեան ու ցաման, թուլութեան եւ ուժի հյեւելներով, բախումներով, երազանքի եւ իրականութեան խորունկ տրամաշով: Գեղարուեստական բացառիկ ուժով մարմնաւորում են կեանքի եւ մահուան ողբերգութիւնը, կեանքի եւ մահուան փոխտոփայութիւնը եւ զրանից բխող համամարդկային հարցերը: Մտքի եւ

զգացմունքի՝ ուժը գրասեւորում է իւրաքանչիւր տողում, զբեթէ իւրաքանչիւր տող ստիպում է մտածել, զգալ բանաստեղծական երեւակայութեան թափն ու սլացքը.

է՛հ, մնաք բարով, Աստուած եւ արեւ,  
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...:

Առաջին իսկ տողերը Հնչում են տրամադիկ շեշտերով, մարմնացնելով կեանքի կարօտն ու հողեկան ցաւը, որով մահամերձը հրաժեշտ է տալիս աշխարհին: Եւ որքան բնական, նոյնքան անսանելի է մեռնողի հրաժեշտը՝ նախ Աստծոյն, որ յոյսի եւ հաւատի խորհրդանիշն է նոյնիսկ ժողովրդական լեզուում, ապա արեւին, որ ինքը կեանքն է, կեանքի վիթխարի մարմնացումը: Նոյն անբնական եւ հոգեբանօրէն հասկնալի է կեանքը եւ յոյսը մարմնացնող այդ հսկայական մեծութիւնների (արեւի եւ Աստուծոյ) պլլպլալը, որ տեղիք է տուել բանավէճի: Պայլան բնորոշում է մարդու ուժասպառութեան աստիճանը. արեւը, տիեզերքի այդ ջահը եւ Աստուածն ինքը, որ վառ է ամէն բրիտանի սրտում, հազուա քիչ պլլպլում են մեռնողի հոգու վերեւ, ամէն ինչ խաւարում, աշխարհն ամբողջ մշուշում է նրա աչքում.

Աստղ մ'ալ եւ կ'երթամ յաւելուլ երկնից,

Սակայն երկնքի հետ կապուած այս յիշողութիւնը յանկարծօրէն արեւկոծւում, բորբոքում է մարտեղ հոգին, առաջ բերելով ցասման յանդուձ պոռթկում, աստիւթեան զգացմունքով շողում մի փիլիսոփայութիւն.

Աստղերն ի՞նչ են որ, եթէ ոչ անրիծ  
Եւ թշուառ հոգւոց անէծք ողբագիմ,  
Որք թըռիմ այրել ցակատն երկնքիմ.

Կործանուող մարդու մէջ հոգեբանօրէն ծնւում են նախապաշարումներ, սնտրի յոյսեր: Յանդուձն մտքերին յաջորդում են բարոյական յոգնածութեան, կասկածամտութեան պահեր: Այս պայմաններում հասկանալի է նաեւ մեռնողի վաղանցիկ դարձը դէպի հաւատն ու Աստուած ու ակամայ երկիւղը չրա դէժ բնդվզելու համար.

Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթախարկ գ'իս,  
Աստուած, խոկն երսկայ, փշքէ հիւլէլիս՝  
Որ ծպըրսի գտիլի, սուգիլ խարն երկնի,  
Ելնել աստղերու սանդուխտն ահալի...:

Ներքին դեղարուեստական տրամաբանութիւնն ամուր շաղախ է ստեղծում քերթուածի բոլոր մասերի մէջ: Լուսափայլ գծերով նկարում է մեռնողի հոգու եւ մտքի շարժումը: Դէպի Աստուած կատարած դարձի փութանցիկ պահը արթնացնում է ազօտ յոյսի նշույլ: Դա խորտակուողի մտքի վերջին պատրանքն է: Մահամերձն արդէն ողջունում է կեանքը, արեւին, Աստուծոյն, ողջունում է ժինչեւ իսկ մահին: Ողջունում է, որովհետեւ ծնուել է մի նոր կեանքով ապրելու յոյս, շատ փոքր մի յոյս, քայքայ ինչպիսի՞ խանդավառութիւն: Հարկաւ այս հոգեվիճակն իր դեղագիտական խնդիրն ունի,

նա դալիս է ընդդեմու մեռնողի ապրելու անսահման տենչը, արեւի եւ կեանքի ծարաւը...

Ոգոյն՝ քնք, Աստուած դռդողը էակիմ,  
Շողիմ, փրփիքիմ, ալույն ու վանկիմ,

Ատկայն այս բարձր, ինքնամոռաց ողբերգութեան մէջ յանկարծօրէն ծագում է կասկածը: Մեռնողը նորից գտնում է ինքն իրեն, անդրադառնում է վիճակին, եւ ցնորամիտ պատրանքը նահանջում է զգաստ մտքի առջեւ, իրականութիւնը կեանքի օրհասը կանչում է աչքի դիմաց: Գտակածի հետ աշխարհի ամբողջ գառնութիւնը ներխուժում է հոգին:

Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ  
Հոս մառախուղի մէջ համր անշշունչ:

Ճակատագրական այս հարցը սթափեցնում է մեռնողին, արթնացնելով վերջին ուժերը: Տեղի է ունենում անսպասելին: Մեռնողը կարծես կեանք է ստանում, փոթորկում է, ներսից ժայթքում է ցասում եւ վրէժ, մանչում չլթալակալ Գրոմեթեուսի պէս, շիկացած խօսքերը սրտի խորքից թռչում են դէպի երկինք, եւ կատարում է յանդգնութիւններից գերազույնը. մահաձերձք ծառանում է Աստուծոյ դէմ, մարտահրաւէր նետում Ամենակարողին:

Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դակկահար,  
Պըլլաւիմ անուանդ մըռնչեմ անդադար,  
Թող անէժ մ'ըլլամ ու կողո խըրիմ,  
Թող յորբորջեմ քեզ «Աստուած յիտքիմ»:

Իսկապէս տիտանական ընդվզում, երբ բանաստեղծի ներքը փրփրում է «ըժոխի մ'հանգույն»: Այսպիսի պոսթիւմները հիմք են տուել քննադատներին: Դուրեանի տաղերում տեսնելիս քաջիկսեան կամ «Սոփոկլէսեան եւ Եէյ-քրփիբեան շունչը», համեմատել նարեկացու հետ, եւ այլն:

Ուշադրաւ է նաեւ փոթորկայող հոգու ճշմարտացի արտացոլումը: Հոգեկան ուժերի յարմանը, կատաղի ալքրախումբին անխուսափելիօրէն յաջօրոգ անդատութիւնը: Մարդկային ապրումները դարձանում են հակասական անցումներով, բարդ տրամադիկ ընթացքով, ճակատագրի եւ Աստուծոյ դէմ մղուող յուսահատ մաքառումներով:

Գրականութեան մէջ բացառիկ զուգահիստութիւններից է, երբ բանաստեղծն իր երկր այսպէս ամբողջապէս շողում է սեփական կեանքով, սրտի կրակով ու գառնութեամբ... «Ա՛, կուրծքիս տակ երաքուխ բռնկած է, կրակներ կ'նստան եւ կ'այրեն գիս, այս կրակը երկնքի կրակի Յման է, որ չի մարիր եւ չպիտի մարի մինչեւ որ սպասի ամէն ինչ... Ահա երիտասարդ մը, որ եւկած է աշխարհ՝ միայն իր մահը ու քշուառութիւնը տեսնելու եւ գզալու համար»:

Դուրեանին Միամանթոն հարողատ է հենց այս տրամադիկ լիբիդոյով, բանաստեղծի կեանքի ու ստեղծագործութեան այս արտասովոր համընկնումով, իր ցաւի մէջ այսքան ունենական եւ համամարդկային լինելով: «Տըրտունցէն» արարում է գեղարուեստական համապարփակ ընդհանրացումներով, որի մէջ կարելի է զգալ ե՛ւ աշխարհի անարդար կարգերը, ե՛ւ անհատի



ու ժողովրդի դատան ճակատադիրը, ե՛ւ քաղաքական-սոցիալական ճնշումնե-  
րի դէմ եղած բնականուր բողոքի տրամադրութիւնը .

Ո՛հ, նոքա ամենքը զ՛իս ծագրեր եմ . . .  
Աստուծոյ ծագրն է Աշխարհն ալ արզէն . . . :

Անձնականի եւ հասարակականի այս միասնութեան հետ Դուրեանը բե-  
րում է նաեւ ապինքնող անմիջականութեան արուեստը, որ նոյնպէս իր իւ-  
րատեսակ դարդացումը դատու Սիամանթոյի պոեզիայում : Առաջին իսկ տո-  
ղերից ինչ-որ ճիշդ, հիացմունքի կամ ցուրի հարազատ մի ձայն, մի հնչերանդ  
դարձանալի տնադարտութեամբ բացայայտում է մարդկային յուզաշխարհը՝  
կենդանի շարժման եւ զարգացման ելեւէջներով, անձնականի եւ հասարա-  
կականի բնական շաղխով : Անձնական ցուրի միջից նա տեսնում է կեանքի  
ցուր, սիրոյ պատրանքի միջից՝ պաղ եւ անտարբեր աշխարհը : Ամէն անձ-  
նական ստանում է հասարակական հնչեղութիւն : Բանաստեղծը դառնում է  
ժողովրդի ճակատագրի արտացոլքը : Այսպէս կոչուած զգուտ սուրժեկտիւ լի-  
բիկանն» բնագրիւմ է «Անձպիտ աշխարհը՝ սիրոյ եւ ստապանքի բոլոր  
հակասութիւններով .

Ինձի կ'ըսեն — միշտ տխուր ես» . —  
«Ինչպէ՞ս չըլլամ, մէկիկ մէկիկ  
Թօթափեցան գլխուս աստղիկք . . .  
Արշալոյս մը չ'անցաւ սրբուէս» :

Նժան հողեմիճակում Սիամանթոն պիտի ասէր . «Ինչպէ՞ս չըլլամ, բա-  
նաստեղծի աշուրներս արի՛ւն, արի՛ւն, արի՛ւն է, որ կը տեսնեն» :

Դուրեանի պոեզիայի խորագլու բնագծուած անձնական եւ հասարակա-  
կան բնութիւնը ցոյց է տուել Ա . Չօպանեանը . «Չեմ գիտեր մեր գրականութեան  
մէջ բանաստեղծութիւն մը այնչափ անձնական, այսինքն՝ այնչափ անհատա-  
կան կեանքէ մը ուղղակի բխած . որչափ Դուրեանինը, եւ միանգամայն այն-  
չափ ընդհանուր, այնչափ անորոշ, այնչափ կարող մասնատր եսի մը արտա-  
յայտութիւնն ըլլալէ գատ մարդկութեան եսին արտայայտութիւնն ալ ըլլալ :  
Եւ հազ է այս բանաստեղծութեան մեծագոյն արժանիքը» :

Այսպիսով հայ պոեզիան հարստանում է ճարտականութեամբ : Հասա-  
րակական-քաղաքական մտախները զրտեւորում են ոչ թէ շափածոց հրա-  
պարակախօսութեամբ, այլ մարդկային յոյզերի ու ազրումների բնական  
տարբերով : Մական Դուրեանը կեանքից շուտով հեռացաւ՝ զգալի դարձնե-  
լով բանաստեղծութեան անկումը : Դրանից յետոյ երեք տասնամեակի ըն-  
թացքում արեւմտահայ պոեզիան դրական փարոսներ, Ալիշանի, ՊէշեկիՅաշ-  
լեանի, Դուրեանի պէս ծիրանափայլ տաղանդներ չտուեց, թէպէտ այսուա-  
մենայնիւ թափուր չէր նշանակալի ուժերից :

ՀԵԿՏՈՐ ԽՇՏՈՒՆԻ

Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆԻ

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՃԾԴՈՒՄ

Մի բառը մի աշխարհ է. սա ԹՈՒՄԱՆԵԱՆՆԻ խօսքն է, որ յաճախ ենք վկայակոչում... առանց այդ բառ-աշխարհներով լուրջ զբաղուելու:

Մեր խօսքն այժմ երկու բառ-աշխարհների, երկու բանաստեղծութեան մասին է: Ընդ որում եթէ Թումանյանը բառերի մէջ խտրել չի գրել, եւ նրա ասածը վերաբերում է առհասարակ բառին, ապա մենք ուզում ենք խօսել երկու ոչ թէ «չարքային» ու «հետեւակ» բառերի մասին, այլ այնպիսիների, որոնք դրուած են երկու հանճարեղ բանաստեղծութիւնների առաջին տողերում եւ որոնց շփոթութիւնից երկնքի համակարգում շատ բաներ տեղաշարժուած են, իսկ երկրում շփոթուած են մարդու ձեռքի ու մտքի արգասիքները:

Սկսենք երկնքից՝ իրաւացիօրէն Դուրեանի քնարերգութեան գլուխ-դորձոցը համարուած «Տրտունջէ» բանաստեղծութեան առաջին երկու տողից.

Է՛հ, մնաք բարով, Աստուած եւ արեւ,  
Որ կը ՊԸԼՊԸԼԱՔ իմ հոգւոյս վերեւ...:

Արեւի «պըլպըլում» հասկանալի է, բայց ինչպէ՞ս կարող է պլպլում Աստուած: Գուցէ արեւէ հրատարակութեան մէջ սխալ է սպրդել: Նայում ենք բոլոր հրատարակութիւնները՝ Ե՛ւ Պոյսի (1872, 1893, 1908 թթ.), Ե՛ւ Բաբուի (1900), Ե՛ւ Վիեննայի (1922, 1939 թթ.), Ե՛ւ Երեւանի (1937, 1954, 1963 եւ ուրիշ): Դժբախտաբար այդպէս է նաեւ Դուրեանի «Երկիր» 1947 թուականի հրատարակութեան մէջ, որը կազմել, խմբագրել, բաղձաթիւ ճշգրտունք կատարել ու բացատրութիւններով օժտել է մեծապատակ գիտնական սկազմախումբի շ. Մանուկեանը: Նայում ենք բանաստեղծի երկերի մասին զբերած ցենսական ուսումնասիրութիւնները՝ «Հրաժեշտի տրամադրութեամբ սկսուած մնաք բարովը Աստուած եւ արեւին», «Գլուխի հրաժեշտը Աստուած եւ արեւին» ու այսպէս շարունակ: Նորից ենք կարգում բանաստեղծութիւնը. էլի Աստուած «պըլպըլում» է: Ընդ որում եթէ յաճախ լուրջօրէնք են անցել այդ «պլպլացող Աստուած» մօտով, ապա երբեմն էլ փորձել են իմաստաւորել-մեկնաբանել: «Կարեւորն այն է, — գրում է զրականագէտը, — որ բանաստեղծը հրաժեշտ է տալիս Աստուծոյ, գուցադրելով նրան արեւի՝ բնութեան եւ տիեզերքի երեւոյթներից մէկի հետ»: Այսպէս գրելով «Հայ գրականութեան պատմութեան» երկրորդ հատորում (Հայկական ՄՍՌ ԳԱ հրատարակչութիւն, 1962, էջ 390), հանգուցեալ վաստակաշատ զրականագէտ Վ. Թերզիբաշեանը այսուհանդերձ զգացել է (միակը սովետահայ Դուրեանագէտներից), որ ինչ-որ բան իր տեղում չէ. «ՏԱՐՈՒՆԱԿ է հնչում այս հրաժեշտը մի էրիտանայի համար, որը, թուում է, պէտք է հաւատար հանդերձեալ աշխարհին եւ կեանքից բաժանուելիս համոզուած լինելը, որ գնում է Աստուծու մօտ, եթէ իրօք իր հոգին արդար է եւ չի նախասահմանուած դժոխքին»: Կասկածը կասկած, բայց ի՞նչ անել փաստի դէմ՝ մնաք բարով է ասում Աստուծոն: Եւ զրականագէտը ճիշդը յուշող երկմտութեանը հրաժեշտ է տալիս ու փորձում փրկիստփայական հիմնաւորում գտնել իր իսկ «տարօրինակ» կոչած երկուսից. «Դուրեանը... Աստուծոյ համարում է այս աշխարհը»:

հի էակ, քանի որ մեծնելիս հրաժեշտ է տալիս նաև նրան: ՓիլիՍՈՓԱՅԱ-  
ԿԱՆ ՈՒՇԱԳՐԱԻ ՄԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ (նոյն տեղում):

Ճիշդը «տարբերակն» է եւ ոչ «փոխադրական ուղարու կոնցեպ-  
ցիան»: Ամէն բան իր տեղը կ'ընկնի ու հասկանալի կը դառնայ, եթէ ուղղենք  
մի բառ-մի աշխարհ՝

Է՛հ, մընաք բարով, ԱՍՏՂԵՐ եւ արեւ:

Աստղերը արդէն կարող են պլալալ: Բայց որտեղի՞ց այդ «աստղերը»  
մե՞րն է, թէ՞ Դուրեանի՞նը — Դուրեանի՞նը: Ահա առաջին երկու տողի առ-  
ժիջական շարունակութիւնը.

Աստղ մ'ալ եւ կ'երբքամ յաւելուլ երկնից,

Մի աստղ էլ եւ եմ. մի՞թէ պարզ չէ, որ նախորդ տողերում պէտք է  
աստղեր լինեն, որ մի աստղ էլ ինքը դառնայ. այդպէս են պահանջում «էլ»ը  
(մի աստղ էլ ես), «պլալալը», քերականութիւնը եւ վերջապէս՝ ամենապարզ  
արամարանութիւնը:

Ինչպէ՞ս կարելի է պնդել, թէ բանաստեղծը առաջին տողում «մնաք  
բարով» է ասում, հրաժեշտ է տալիս Աստծուն, երբ մի քանի տող յետոյ  
արձգանում է նրա ծօտ (Ողջո՞յն քեզ, Աստուած) եւ խօսքի բունում նրա  
հետ (բանաստեղծութեան ամենաուժեղ մասն էլ այդ է) . «Անշուշտ ինձ կեանք  
մը պահած եւս ետքի», —

Դիմում է բանաստեղծը Աստծուն, իսկ եթէ այդպէս չէ .

Այժմէն քե՛զ որ շանք մ'ըլլամ դալկահար,  
Պրլլալիս անուանո՞ւ մընչեմ անդադար,  
Թող անէ՞ծք մ'ըլլամ ու կողրդ խրքիմ,  
Թող յորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ»:

Ինչպէ՞ս կարող էր առաջին իսկ տողում Աստծուն եւ արեւին խաղաղ  
«է՛», մնաք բարով» ասելուց յետոյ այս ամէնը տեղի ունենայ: Դուրեանին  
այսպիսի «հակասութիւն» եւ մանաւանդ «զատ յիշողութիւն» վերադրելը վի-  
րաւորական է:


Հետաքրքրական է, որ դեռեւս 1942 թուականին Մփիւռքում նշուել է  
(մեզ ծօտ եւս խօսք եղել է այդ մասին), որ «անբնականութիւն» կայ առաջին  
տողում («պլալալալ»ը եւ «աստղ մ'ալ»ը), սակայն, աւելացուած է, որ այդ  
բացատրութիւնը «համարձակութիւն չի տար սրբազրել բանաստեղծին բա-  
նը»: Այդ համարձակութեան պէտք է դիմել (Մփիւռքում օրինակներ կան,  
մեզ ծօտ՝ ոչ մի), մանաւանդ՝ եթէ նկատի ունենանք, որ «ՏՐԱՍՏԱՆՅԷ՛»ը Դուր-  
եանի կենդանութեան օրով չի տպագրուել իսկ քննադրումս համապատասխան-  
ութեան մը ձեւով կամ անկատար գրուած զասածը կարող է լինել ե՛ւ Աստուած,  
ե՛ւ աստղեր:

Թուում է, թէ կատարուել է սովորական եւ ոչ քիչ պատահող բուն՝ սեւէ  
մէկի ձեւքով զասածը դարձել է Աստուած եւ այնուհետեւ բոլոր հրատարա-  
կութիւններում «պաշտօնականացել է» այդ առաջին ձեւքով կատարուած  
սխալը: Կարծում ենք ժամանակն է «Աստծուն» դուրս հրաւիրել շուրջ մի դար  
իրեն չպատկանող եւ յանիրաւի զբաղեցրած տեղից, վերականգնել «աստղե-  
ք»ի իրաւունքները եւ այսուհետեւ գրել, կարգալ ու մեկնաբանել ճիշդ՝

Է՛հ, մընաք բարով, աստղեր եւ արեւ,

Վ. ՊԱՐՏԻՉՈՒՆԻ

1337-101



**ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԳԱՆՈՒՆ ՎՐԱՅ**

Պատրոս Գուրեանի «Տրաուսիք» բանաստեղծութեան առաջին ապին Աստուածը աւելի շատ երեք աստեղծեակ ճշ կասկածի ենթարկուեցաւ գրականութեան պատմիչներուն եւ ընթացողներուն մեծ ժառին կողմէ, ու զանաւեցան գրականագէտներ, սրտնք, ինչպէս տեսաք կանխող էջերու, կասկածի առժամներէն սեղին տեղան եւ ձեռնակոն յայտարարութիւններ բրին այլ ժառին, որիւմ, թէ՛ զկարծում են ժամանակն է շատունն զորս կրտսիրի շարք մի զար իրեն շատկանազ եւ յանիրաւի գրագեցրած տեղից. վերականգնել շատողերսի իրատւնները եւ այտուեկու գրել, կարգալ ու մեկնարանել ճիշդը՝

Է՛հ, մեղաւ թարսվ ԱՍՏՎԵՐ եւ արիւ,  
«Գրական թերթ»ի 1968 թիւ 10ին մէջ Վ. Գարսեղունիի կողմէ կատարուած այլ պնդումն դէմ, իսկ թերթին իսկ տարուան թիւ 23ին մէջ, լայնածաւալ յոդուածով ճշ ծառայու բանաստեղծ Արամ Արման եւ Արամ Արմանի սպառիչ ձեկնարանութիւնն ինք, զժառնր թէ ժարկ համարակէր այլ ժառին թուք բանալ, երբ վրայ հասաւ վերջ գրուած մեղադրին յուսանկարչական պատճենը, կետեւալ ծանօթագրութեամբ.

«ԵՄՐ»- ԿՈՂՄԻՑ.— Այս յոդուածը գատրատու էր սպագրութեան, երբ ստացուեց Գ. Գուրեանի «Տրաուսիք» բանաստեղծութեան մեղադրի յուսանկարքը:

Ուրեմն, Աստուած Հյանիրաւի գրողեցրաց՝ չէր էր տեղը, այլ էր տե՛ղն էր. բայց յանուն գրականութեան բանք, որ սնուցուել շինաց այլ կասկածը, եթէ կասկածի շնթարիւ էր Աստուած, չէր գրուեր, օրինակ, Արամ Արմանի յոդուածը, որ բանաստեղծութիւն ճշ էր խորութեամբ, լայնքով ու նրբերանգնեղով ըմբռնելու վկայութիւնը կը բերէ եւ ունի գրականութեան պատմագիտականութեամբ ու սրբութեամբ ժամանակու լուկեանի կողմ ճշ ուճը:

Աստուած այլեւ կը դանուի էր դահուն: Բայց արդեօք Գուրեանի գրականութեան մէջ մեղան Աստուած չիտթ տանգնուլ ներկայութիւն էր:

Այս բացարկել խմբագրած առնել, մենք ունեցանք վերջին փորձառութիւն մը, ըստ որում՝ ստուգման կարտու դեռ կան թաղմաթիւ բաներ, ասացուածքի մեներ, պատկերակերտումներ, ֆունէլ աւելի տեղան Գուրեան տպան ենք եւ կարծիք է ըսել, որ շատ տեսակ Գուրեան կայ մէջանել: Կը բուն էրբորս հետ համեմատել Հայաստանի մէջ նորեկի խմբագրութեամբ (1967) յոյս տեսած Գուրեանը զմրճուել Երեւանի մէջ Ալիքերտ Եարուրեանի խմբագրութեամբ յոյս ընծայուած (1971) Գուրեանին հետ, հաստատուելու կամար, թէ իրենց լիցուով, սողերով, բաներով ու կէտարութեամբ որքան արբեր են սնունդ իրարմէ:

Գուրեանագէտ Ալիքերտ Եարուրեանի աշխատանքը գրախօսող Վարդան փորձաժեանի պէս մենք եւս շուտատեցան ենք, որ Գուրեանի արուեստի սիրանարները զեռ կը հանդիպեն ուրայտախիբ անսկիկութիւնք:

ԱՐԱՄ ԱՐՄԱՆ

**ՅԱՆՈՒՆ ԴՈՒՐԵԱՆԻ  
ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ**



Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Պարտիզունու «Երկու կարևոր նշանակություն ունեցող, որ տպագրուեց Վրաստանի Խորհրդի այս տարուայ Մարտի 5ի համարում, պարունակում է միայն մեկ կարևոր նշանակություն ունեցող է, որ յոզուածագիրը Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծութիւնը վերլուծում է գրականագէտին վայել խորաթափանցութեամբ ու նրամտութեամբ եւ ըստ այնմ էլ ճշգրտում առաջին տողի միճելի բառը: Ընդունմն առաւել եւս համոզիչ է դառնում այն համապատասխան օրինակներով, որոնք քաղուած են Չարենցի այլ գործերից: Չնայած դրան, կարծում ենք, որ հարցը վերջնական լուծում չէր ստանայ, եթէ Պարտիզունուն սկզբից եւեթ չբերէր այնպիսի անառարկելի փաստեր, որոնք բնագրի ուժ եւ վաւերականութիւն ունեն: Պարզում է, որ «Չարենցի կենդանութեան օրօք»-ի նրա հսկողութեամբ այդ բանաստեղծութիւնը տպագրուել է երկու անգամ՝ եւ երկու երատարակութիւնների մէջ էլ արեւանամբ «բառ»ն է եւ ոչ թէ «բար»ը (պտուղը): Նո՛յնն է հաստատում նաեւ բանաստեղծութեան բուսերէն այն թարգմանութիւնը, որին «կենդանի օգնութիւն» է ցոյց տուել ինքը՝ Չարենցը:

Իսկ ի՞նչ հիմք ունի գրականագէտը պահանջելու, որ Դուրեանի «Տըրտուկ»-ի առաջին տողի «Աստուած» բառը փոխարինուի «աստղերով»: Արդեօք բանաստեղծութեան բնագի՞րն է յայնարբերել: Որքան էլ զարմանալի թուայ, Պարտիզունին չի էլ հետաքրքրում, թէ բնագիրը պահպանուե՞լ է թէ ոչ: Աւելին. նա ո՛չ միայն չի աստատում, որ «Տըրտուկ»ը Դուրեանի կենդանութեան օրօք չի տպագրուել, այլ, ընդհակառակն, անսկզբ ողբերգութեամբ է այդ փաստով եւ բանաստեղծի բառը փոխելու համարձակութեան կոչ է անում՝ հիմնուելով հենց այդ տխուր փաստի վրայ: «Այդ համարձակութեան պէտք է դիմել, — սիրական շեշտով տառն է նա, — մա՛նուանդ՝ եթէ մկա»

տի ունեցանք, որ «Տրտունջ»ը Դուրեանի կենդանութեամ օրով չի տպագրուել»:

Բարեբախտաբար, Պարտիզունին տեսել եւ կարգացել է տարբեր երկրներում եւ ժամանակներում լոյս տեսած Դուրեանի ժողովածուները, բայց, չգիտես ինչու, մի տեսակ զարմանքով եւ նոյնիսկ հեղձանքով է նրանում այն փաստը, որ բոլոր հրատարակութիւններում էլ բանաստեղծը «մաքրարով» է ասում ո՛չ թէ աստղերին, այլ՝ Աստծուն:

Է՛հ, մընաք բարով, Աստուած եւ արեւ,  
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...:

Գրականագէտը իր «Ճշգում»ը հաստատող ոչ մի փաստ չունի ձեռքի տակ, բացի թիւր պատկերացումներից, որոնց մեղքը ուղում է փաթաթել նաեւ հրատարակչութիւններին մղին:

«Արեւահամ բառ»ի եւ մեծարենցեան «կապոյտ յածումներ»ի արժէքը դնահասող եւ պարտադրող յողուածագիրը զարմանալիօրէն չի կարողանում հաշուել «Աստուա պլպլալու» գաղափարի հետ: «Արեւի պլպլալը հասկանալի է, բայց ինչպէ՞ս կարող է պլպլալ Աստուած», — անկեղծօրէն զարմանում է նա, առանց անդրադառնալու, որ դրանով հաւասարում է իր իսկ դատապարտած այն բարեմիտ մարդկանց, որոնց ասելով, «արեւահամ» կարող է լինել «բարձր (պտուղը), բայց բնաւ ոչ՝ «բառ»ը: Եթէ սառն բանականութեամբ դատենք, արեւի պլպլալն էլ անհեթեթ է, քանի որ պլպլալը (աղօստ փայլփրլլը) յատուկ է միայն տկար լոյսին, իսկ արեւի հրաշէկ գունտը մառւում է, ճառագայթում, շողչողում: Հոգեբանօրէն եւ բանաստեղծական պատկերացումով հասկանալի է սակայն, որ աշխարհին հրատեչտ տուող հիւանդ Դուրեանի շեղուղի վերեւ կարող են պլպլալ ո՛չ միայն արեւն ու Աստուածը, այլեւ ամէ՛ն, ամէ՛ն ինչ, որ կեանքն է խորհրդանշում: «Բանաստեղծիմ պլտօք է ճիշդ հասկանալ եւ բառի մէջ առօրեայ կենցաղում ունեցած նշանակութիւնից գաւտ տեսնել նաեւ այլ նրբերանգներ» պատգամող գրականագէտը, յանկարծ կորցնելով արուեստագէտի նրբամտութիւնը, բողբոջում է, «Աստուա պլպլալու» դէ՛մ, որ գուրեանական դժայլլի պատկեր է եւ մահամերձի այնքա՛ն բնորոշ հոգեմիճակ: Պարտիզունին չի գգում, որ պլպլալացող աստղերին ուղղուած իրաճեշտի խօսքը ոչնչով աւելի լաւ չէ Հայաստանի արեւահամ պտուղը սիրելուց: Դուրեանը հրատեչտ է տալիս ոչ թէ երկնային լուսատու մարմիններին՝ աստղերին, արեւին կամ արուսեակին (որոնք, ի դէպ, պլպլում եւ ճառագայթում են մարդկանց դիմի վերեւ միայն), այլ Աստծուն եւ արեւին, այսինքն՝ քարոյական ու նիւթական ամբողջ աշխարհին, որ մարելու մօտ լոյսի պէս աղօտ փայլիլում եւ առկայծում է բանաստեղծի հոգու վերեւ: Ո՛ւմ համար գաղտնիք չէ, որ աստղերը արդէն կարող են պլպլալը: Բայց չէ՞ որ Չարենցի պէս Դուրեանն էլ «չառտ աւելի՛ն է ցանկացել ասել, քան այն ոչ բանաստեղծական ու խիստ պարզունակ միտքը», որ գրականագէտը ուղում է վերագրել բանաստեղծին: Յօդուածագիրն ամէնից շատ գայթակղեցնողը «Տրտունջ»ի երբորդ տողն է.

Աստղ մ՛ալ եւ կ'երթամ յաւելալ երկնից,

«Աստղ մ՛ալ» արտայայտութիւնը նա բացատրում է նախորդ տողերում «աստղեր» բառի առկայութեամբ: «Մի աստղ էլ եւ եմ. մի՞թէ պարզ չէ, որ

նախորդ տողերում պէտք է ասողեր յիմեն, որ մի ասող էլ ինքը դառնայ՝ այդպէս են պահանջում «էլ»ը (մի ասող էլ ես), «պլլալալը», քերականութիւնը եւ վերջապէս՝ ամենապարզ տրամաբանութիւնը», — *առարկութիւն շփեր-յընող տոնով վճռում է դրականագէտը: Իրողութիւնն այն է սակայն, որ «ասող մ'ալը կապուած է ոչ թէ նախորդ, այլ յաջորդ տողերի հետ:*

Ասողերն ի՞նչ են որ, եթէ ոչ անբիծ  
նւ թշուառ հոգւոց անկծք ողբագիմ,  
նրք թըրին այրել անպատն երկնքին:

*Դուրեանի բանաստեղծական պատկերացմամբ, մեռածների հոգիների ողբազին անկծքները, ասողերի փոխուած, թաշում են երկինք՝ այրելու նրա ճակատը: Իրենից առաջ բաղձաթիւ թշուառ հոգիներ ասողեր են դարձել, եւ հիմա մի ասող էլ ինքն է դառնում՝ աւելանալու երկնքի ասողերին: Ահա այս է յուշում մեզ ամենապարզ տրամաբանութիւնը:*

«Ինչպէ՞ս կարելի է պնդել, թէ բանաստեղծը առաջին տողում «մնաք բարով» է ասում, հիւսմեշտ է տալիս Աստծուն, — *պնդում է գրականագէտը, — երբ մի քանի տող յետոյ բարձրանում է նրա մօտ (նորա՛յն քնք, Աստուած) եւ խօսքի ընդունում նրա հետ: Նախ ճշդենք, որ բանաստեղծը ողջու-նում է Աստծուն ոչ թէ մի քանի տող յետոյ, այլ տասներեքերորդ տողում: Այս ճշդութից յետոյ, առիթից օգտուելով, մենք էլ մեր հերթին հարց տանք Պարտիզունուն:*

*«Ինչպէ՞ս կարելի է, որ բանաստեղծը առաջին տողում «մնաք բարով» է ասում, հրաժեշտ է տալիս ասողերին, երբ ընդամէնը երբորդ տողում, ասող դառնալով, զնում եւ միանում է նրանց:*

*Բայց յօդուածագիրը, ինչպէս երևում է, այնքան է գոհ իր արած գիւտից, որ նոյն ոգեւորութեամբ շարունակում է. «Բուրքանին այսպիսի հակասութիւնն եւ մա՛նաւանդ «վատ յիշողութիւն» վերագրելը վիրաւորա-կան է»: Ո՛չ, «Տըրտունցէ՛նին այդպիսի հակասութիւններ եւ վատ յիշողութիւն-ներ վերագրելը ո՛չ միայն վիրաւորական չէ Դուրեանի համար, այլեւ ին՛ստ պատուարներ: Վիրաւորականը Պարտիզունու հակասութիւնն ու վատ յիշողու-թիւնն է:*

*Արդարեւ, որքա՛ն բնական եւ հղերականորէն գեղեցիկ են «Տըրտունցէ՛նի հակասութիւնները: Բանաստեղծը, որ վաղուց պատրաստում էր մահուան, խաղաղ ու հանդիսաւոր «մնաք բարով» է ասում Աստծուն եւ արեւին: Բայց սպրեւու եւ սիրելու ծարուղով տոշորուող քանամեայ պատանին տաղձաղում է յանկարծ եւ իր հրաժեշտ տուած Աստծուն կոչում է «շանթեր»ի, այսին-քըն՝ չարիքի Աստուած, անմիջապէս յետոյ զղջալու եւ ասելու համար՝*

Այլ, ո՞հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարէ գ'իս,  
Աստուած, խոկն հրկայ փշրէ հիւլիս,

*Որքա՛ն մարդկային է, որ կեանքի եւ մահուան սահմանագծի վրայ իր կարապի երզը հեծեծող Դուրեանը փոթորկուի ու խաղաղուի, համակերպուի եւ նորից ընդվզի, յուսահատուի ու յուսայ եւ այդ տարտամ յոյսով վերջին անգամ վառարանի ճիւղերիմ Աստծուն», հրաժեշտից յետոյ ողջունի նրան,*

որպէս մարդու, լրջի, ծագիկների, ծովերի ու երգի Աստուծո՛ կորզելու հա-  
մար նրանից մի ուրիշ կեանքի խոստումը:

Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,

Անշուշտ պէտք էր, որ պահուէր, բայց բանաստեղծը կասկածում է  
եւ, իր վերջին շունչը «հոս մտախուզի մէջ» կորցնելու սարսափից, նորից  
է հակասում իրեն եւ շանթ գարձած Աստծու կո՛ղն է խուսում որպէս անէծք:  
«Տրտունջք» մտքի սովորական տրամաբանութեամբ զարդացող բա-  
նաստեղծութիւն չէ՛, այլ հանճարային ակնթարթի մէջ խիտ ապրուած մի  
կեանքի եղերապատում, ուր անէծքն ու փառաբանութիւնը, ցատուճն ու ան-  
գորութիւնը, յանդիմութիւնն ու երկիւզը, անյուսութիւնն ու յոյսը, թոխչն  
ու անկումը տիտանական պատկերներով հեւ ի հեւ յաջորդում, լրացնում են  
իրար՝ ունայնութեան խորհրդի գէժ հնչեցնելով այն միակ ու մե՛ծ Հարցա-  
կանը, որ պատասխան չունի՛

Ի՞նչ, երազտ վերջ գրկելի ցարտ շիրի՛մ...

Ըստ յօդուածագրի, բանաստեղծը չպէտք է Հրաժեշտ տար Աստուծն  
նաև այն պատճառով, որ մահից յետոյ դնալու էր նրա մօտ: Այս միտքն  
անուղղակի ձևով արտայայտուած է յօդուածի այն մասում, ուր նա Հա-  
կազրուում է սովետական յայտնի գրականագէտ Վ. Թերզիբաշեանին: Վստահ  
կարող ենք ասել, որ եթէ Դուրեանը հաւատար հանդերձալ կեանքին,  
«Տրտունջք» չէր գրի կամ կը գրէր այնպիսի բանաստեղծութիւն, որի խո-  
րագիրը, «Տրտունջ» չէր լինի: Եթէ Դուրեանը հաւատար՝ հակասութիւն-  
ները կը վերանային, կը փշրուէր կասկածներէ ծանր շղթան, եւ «ք գուրջների  
անհուծօրէն երկարածգուող հառաչը չէր ողբայ ամէն ինչի վախճանական  
ոչնչութիւնն ու ծագրը:

Ո՛հ, նո՛րա ամենքը գ՛իս ծագրեր են...  
Աստուծոյ ծագրն է Աշխարհն այ արդէն...

Դուրեանի համար Աստուծան ու արեւը կեանքի խորհրդապատկերներ  
են, որոնք զերեզմանից անդին գոյութիւն չունեն: Թերզիբաշեանի գեղեցիկ  
բնորոշմամբ՝ բանաստեղծը «Աստուծն համարում է այս աշխարհի էակ, քա-  
նի որ մեռնելիս հրաժեշտ է տալիս նաև նրան»:

Յօդուածագիրը, հակադրուելով հանդերձ Թերզիբաշեանին, չի գլա-  
տում նրա մէջ տեսնել եւ արժէքաւորել այն «առաջաւորը», որը ինչ-որ չա-  
փով նպաստում է իր «աստեղային» տեսութեան զարգացմանը: Բայց աւելի  
յաւ է, որ նախ լսենք Թերզիբաշեանին. «Կարեւորն այն է, որ բանաստեղծը  
հրաժեշտ է տալիս Աստուծն, գուցարեւելով նրան արեւի՝ քնաբեան եւ տիե-  
զիսի երևոյթներէ մէկի հետ: Տարօրինակ է հնչում այս հրաժեշտը մի  
քրիստոնեայի համար, որը, թւում է, պէտք է հաւատար հանդերձալ աշ-  
խարհին եւ կեանքից բաժանուելիս համոզուած լինէր, որ գնում է Աստու-  
ծու, եթէ իրօք իբ հոգին արդար է եւ չի նախասահմանուած դժոխքին:  
Դուրեանը ընդհակառակն (ընդգծումը մերն է.՝ Ա. Ա.) Աստուծն համարում  
է այս աշխարհի էակ, քանի որ մեռնելիս հրաժեշտ է տալիս նաև նրան: Փի-  
լիսոփայական ուշագրաւ մի կոնցեպցիա»: Պարտիզոններն այս պարզ, աներկ-



միտ տողերի մէջ «ճիշդը յուշող երկմտութիւն» է տեսնում եւ հաւաստիացնում է, թէ «...հանգուցեալ վաստակաշատ գրականագէտ Վ. Թերզերաշեանը այսուհետեւ զգացել է (միակր սովետական դուրեմանադէտներէից), որ ինչ-որ բան իր տեղում չէ» բանաստեղծութեան առաջին տողում: Ինչու է Պարտիզուհին իր մոլորութեանը մասնակից դարձնում մի մարդու, որ տուել է առաջին տողի միակ ճիշդ բացատրութիւնը: «Տրտունջէ»ի մէջ «կեանքի յաւիտեանական սղորդութիւնը» տեսնող Թերզերաշեանը չէր կարող այլ կերպ մեկնարանել եւ իմաստաւորել մեծ բանաստեղծի հրաժեշտը: Թերզերաշեանի պարբերութիւնից զեղչելով «ընդհակառակը» բառը, Պարտիզուհին կառուում է «սարօլինակ» բառից (որը, ի դէպ, չի ընդգծել Թերզերաշեանը), ստեղծելու համար այն տպաւորութիւնը, որ իրենից առաջ «հանգուցեալ վաստակաշատ գրականագէտը» զգացել է առաջին տողի տարօրինակութիւնը, բայց չի կարողացել ճիշդ երրակացութեան յանգել:

Պարտիզուհին մազաչափ անգամ չի կասկածում, թէ իր ուղղութեամբ, ոչ աւել, ոչ պակաս, բնագրի վերականգնումն է, թէ «աստղեր»ը մ'չ թէ ենթադրութիւն է, այլ Դուրեանի գրչից ելած վաւերական բառ: «Վայց որովհի՞ց այդ աստղեր»ը. մե՞րն է, թէ՞ Դուրեանինը — Դուրեանինը», — առանց շփոթուելու ինքնավստահ բացազանչում է նա:

Ո՛չ, Դուրեանինը չէ, յօգուածագրի՛նն է, եւ եթէ կ'ուզէք, այդ «գիւտք» յօգուածագրին էլ պատիւ չի բերում, այլ Յ. Օշականին: Նա՛ էր, որ 1942 թուականին, չկարողանալով թափանցել «Տրտունջէ»ի բուն էութեան մէջ, տարօրինակ դատու առաջին տողի «Աստուած» բառը եւ գրեց. «Եթէ ներսի մտքի կայրալ այդ տողը «է՛հ, մնաք բարով, աստղեր ու արեւ», այս սնքնակամութիւնը ինքնին լուծուած կ'ըլլայ, քանի որ յայտնա տողին տիրակալն բառը՝ պլյալլը, աստղերու լոյսը յատկանշող բացատրութիւն մըն է: Եթէ նկատի առնենք նրբորդ տողի մէջ աստղ մ'ալ յաւելումը, վերի ենթաստղիւնը կը թուի աւելի քան հուսանակաւ: Այսպիսով կը լուծուի նախաստղիւնը, որ կայ Աստուծոյ օւղղուած մնաս բարովի մէջ: Մարդ մնաս բարով չ'ըսիր անձր՛ք՝ արուն ինձը պիտի երթայ»: Ահա այս չկշռադատուած միտքն է, որ քանակաբար ատրի յետոյ մեզ քառ առ բառ կրկնելու տխուր պարտականութիւնն է ստանձնել Պարտիզուհին:

Բայց, թիւրիմացութիւնների առիթ չտալու համար, շփոթանալը նշեյու, որ Օշականը ճշգրտում տեսնու յաւանութիւն չունէր բնաւ: Պատահական չէ, որ նա իր բացատրութիւնը սկսում է «Եթէ ներսի»ով, որովհետեւ նրա արածը ուրիշ բան չէ, եթէ ոչ հաւանական թուացող ենթադրութիւն միայն, որը «համարակալութիւն չի տար սրբագրել բանաստեղծին բառը»:

Յօգուածագիրը Օշականի մտքերը իւրացնելուց եւ որպէս իր սեփականը մեզ մատուցելուց յետոյ, ի միջի այլոց գրում է. «Հետաքրքրական է, որ դեռ 1942 թուականին Սփիւտաում Նշուել է (մեզ մօտ եւս խօսք եղել է այդ մասին), որ «սնքնակամութիւն» կայ անպիմ տաղում («պլյալլը» եւ «աստղ մ'ալ»)»: Փոխանակ սկզբից եւեթ բացէ ի բաց խոստովանելու, որ ինքը պարզապէս արձայանագում է ուրիշ մտքերին, բաւարարում է միայն «հետաքրքրական համարելով 1942 թուականին Սփիւտաում նշուած փաստը: Իսկապէս որ հետաքրքրական է երեւոյթ: Հետաքրքրական է նաեւ, որ յօգուածագիրը, չափից աւելի ուղեւորուելով Օշականի վերաբան խօսքերից, չի կարողանում դիմադրել բանաստեղծի բառը սրբագրելու փորձութեանը: Օշականը չէր համարձակում գրիչ շարժել առաջին տողի վրայ, որովհետեւ ընդունում էր, որ Դուրեանի գրած բառը «Աստուած» է: Օշականը աւելի համեստ էր

պահում իրեն, որովհետև, ինչպէս ինքն է վկայում, տեսել էր Դուրեանի «ձեռագիրներուն տեսրակը» :

Յօդուածագիրը, օգտուելով բանաստեղծի ձեռագիրին ծանօթ չլինելու հանգամանքից, ազատօրէն պնդում է, որ «այդ համարձակութեան պէտք է դիմել», որովհետև Դուրեանի գրած բառը ոչ թէ Աստուած է, այլ համառօտագրուած «աստ», որ «կարող է լինել ե՛լ Աստուած, ե՛լ աստղեր» : Բանաստեղծութեան մէջ համառօտագրուած «աստ» : Ձեռ հասկանում, թէ ինչո՞ւ Դուրեանը համառօտագրութեամբ բանաստեղծութիւն պիտի գրէր եւ անհեթեթ զաստօով թիւրիմացութեան մէջ պէտք էր հրատարակելն իր գէպ, Աստուած բառը, բայտ ընդունուած կանոնի, համառօտագրուած է «ԱՅ» (ձեռ-ծատառով), իսկ զաստը սատանան գիտէ միայն, թէ ի՞նչ է նշանակում :

Գտակառ չկայ, որ յօդուածագիրը այս զուարճալի փաստը վերցրել է Մ. Զանաշեանից, որովհետև նա էր, որ առանց անդրադառնալու իր ասածի ծիծաղելիութեան, ամենայն լրջութեամբ սեւեռով սպիտակի վրայ գրել է. «... Աստուած բառը կա՛մ համառօտագրութեան մը ձեւով, կա՛մ անկատար գրուած է իր (այսինքն՝ Դուրեանի — Ա. Ա.) ձեռագրին մէջ՝ աստ, որ կրնայ աստղ ալ ըլլալ : Ենթադրութիւն մըն է անշուշտ այս բացատրութիւնը... » : Տարօրինակն այն է, որ Զանաշեանն էլ Պարտիզունու պէս չի տեսել բանաստեղծի ձեռագիրը եւ, որքան էլ զուսուշտական թուայ, վկայակոչուած է... Օչականին : Նա սկզբից եւեթ պարկեշտօրէն ասում է. «Օչական կը համարի» :

Հարկադրուած նորից ենք բացում Օչականի այն էջը, որ այս բոլոր թիւրիմացութիւնների միակ աղբիւրն է : Նա ենթադրում է, որ հաւանաբար «Տրտունգէ»-ր «սկզբնական մեկնում ունի պատուհանէն տեսնուած աստղակառոյց երկիւնքը» : Նրա կարծիքով, «քերեւս բանաստեղծը մտածած ըլլայ աստղաբուն եւ գրած ըլլայ Աստուած բառը, որ Ույնիւմի հօքը իրականութիւն մըն է այդ պատուհան անոր մտքին վերեւ տիրական» : Նա իր ենթադրութիւնը աւելի հաւանական դարձնելու միամտութեամբ ասում է նաեւ, որ «Աստուած բառին կէտը՝ աստ, գրեթէ մարմինն է աստ բառին», այսինքն՝ Աստուած բառի կէտը՝ աստը գրեթէ աստ-դ բառն է (պակասում է միայն մի տառ) : Համառօտագրութեան մասին հեռաւոր ակնարկութիւն անգամ չկայ Օչականի տողերում :

Եթէ Զանաշեանը զուրկ չլինէր իր կարդացածը ճիշդ հասկանալու տարրական կարողութիւնից, անկասկած առիթ չէր ունենայ ենթադրելու, որ ձեռագրի աստ-ը «կրնայ աստղ ալ ըլլալ» : Պարտիզունին, որ բազմիցս բացել է Օչականի էջը, ո՛չ միայն չի տարակուսում Զանաշեանի սխալ ընթերցմանը, այլև մեծ եռանդով դարգացնում է նրա ենթադրութիւնը եւ այն վերածում իրեղէն ապացոյցի : «Ոնեւ մէկի ձեռքով «աստ»ը դարձել է Աստուած, — արդէն առանց ենթադրութեան եւ կասկածանքի ասում է Պարտիզունին, — եւ այլուհետեւ թալար հրատարակութիւններում «պաշտօնականացել է» այդ աստղին ձեռքով կատարուած սխալը» : Ահա այս ձեւով էլ յօդուածագիրը մերջականապէս «յուծում է» վէճ շարուցող հարցը եւ իրեն իրաւունք է վերապահում վերջին ձեռքով ուղղելու զստալին ձեռքով կատարուած սխալը :

Ձեռք ժխտում, որ աստղին ձեռքով կատարուած սխալներ եղել են Դուրեանի երկերի առաջին հրատարակութեան մէջ : Զօպանեանը գիտեւս 1891 թ. դիմել է Դուրեանի եղբօրը՝ յայտնի բանասէր-բանաստեղծ Եղիշէ արք. Դուրեանին եւ հետաքրքրուել այդ սխալներով : Պատասխան նամակից, որ այժմ գտնուում է գրականութեան եւ արուեստի թանգարանում, պարզուում է,

որ միջուկ բանաստեղծ Ս. Ֆէլէկեանի ձեռքով կատարուած աւերածութիւնները զեւ չեն եղել: Եթէ պարտիզունին կարգացած լինէր այդ նամակը, կը համոզուէր, որ «Տրտուեցէ»ի առաջին տողը զերծ է մնացել աղաւաղումից: Նոյնը չի՞ վկայում նաև Դուրեանի երկրորդ հրատարակիչ Բ. Էքոէրճեանը, որը 1893 թ. ձեռագրերի հիման վրայ վերացնելով Ֆէլէկեանի բոլոր կամայական ուղղումները՝ անփոփոխ պահեց «Աստուած» բառը:

Որ Դուրեանի գրած բառը «Աստուած» է, կարելի է ապացուցել նաև շատ հասարակ ձևով, յոգուածադիրը Չարենցի վիճելի բառի կապակցութեամբ յայտնում է այն ճիշդ տեսակէտը, որ շարքը վերջնականապէս կը լուծէր քննարկը, որը յի պահպանուել: Բարեբախտաբար, «Տրտուեցէ»ի ընտրիչը պահպանուած է: Վերջերս մեր կատարած պրպտումները հոստատեցին, որ կան եւ անաղարտ վիճակում են գտնուած մէկի տեղ նոյնիսկ երկու ձեռագրեր: Հետաքրքրական է, որ Դուրեանը, կարծես կանխազգալով հետագայում տեղի ունենալիք անխորժութիւնները, իր բանաստեղծութիւնները խոստով պատագրել է երկու առանձին տարբերի մէջ: Մեր ձեռքի սակ եղող «Տրտուեցէ»ի երկու ինքնագրերի լուսանկարները պարզ ցոյց են տալիս, որ բանաստեղծը ընթեռնելի ձեռագրով երկու անգամ գրել է «Աստուած»: Յօդուածադիրը Չարենցի հարցում ընդունում է, որ «հեղինակի գրածը վերջնական է համարուում»: Իսկ ի՞նչ տրամաբանութեամբ Դուրեանի գրածը վերջնական չպէ՛տք է համարուի:

Մեզ յայտնի չէ, թէ որեւէ հրատարակութեան մէջ «Աստուած» բառը փոխուած է ճաստղերով: Պարտիզունին պնդում է, որ «Սփիւսքում օրինակներ կան, մեզ մտ»՝ ոչ մի: Ենթահայաբառ կը լինէինք Պարտիզունուն, եթէ նա թէկուզ մէկ օրինակով կարողանար մեզ համոզել, որ իրենից առաջ եղել է առաջին տողի վրայ գրիչ խաղացնող ոեւէ մէկը: Բայց մենք լուրջ կանկաճներ ունենք, որ Պարտիզունուն ծանօթ չէ որեւէ փաստ, բացի ձանաչեանի եւ բանաստեղծ Վ. Նորենցի այդ մասին արած թուացիկ ու անորոշ յայտարարութիւններից: Չղիտենք, թէ որքանով ստույգ են այդ յայտարարութիւնները, բայց կարող ենք վկայել, որ նոյնիսկ ձանաչեանը, որի բարեխղճութիւնը այնքան էլ վստահելի չէ, զգուշանում է բանաստեղծի բառը փոխելուց, իսկ Նորենցը պարզապէս «սրբապղծութիւն» է համարում այդ կարգի ճշման շտկում» ընդունելը:

Պարտիզունին, առանց հաշուի ստնելու այս թուրքը, հանդիսաւոր կերպով դիմում է հրատարակչական մարմիններին եւ զրուէր յայն հասարակութեանը հետեւեալ կոչով, որ հրամանի ուժ ունի. «կարծում եմ ժամանակն է «Աստուած» դուրս հրատարակել շուրջ մի դար իրեն չպատկանող եւ յանկուտի գրողից, վերականգնել ճաստղեր»ի իրաւունքները եւ այսուհետեւ գրել, կարգալ ու մեկնարանել ճիշդը՝

Ի՛հ, մրնաք բարով, ԱՍՏՂԵՐ ԵՒ ՄԵՐԻ,

Հաւատացած ենք, որ այս անպատասխանատու կոչը կը մնայ անարձագանգ, եւ սերունդները այսուհետեւ էլ «Տրտուեցէ»ը կը գրեն, կը կարդան եւ կը մեկնարանեն ճի՛շդ այնպէս, ինչպէս առաջ, եւ ո՛չ ոք, ո՛չ ոք չի յանդգնի մետաղէ գրիչ խաղացնել այն տողի ու այնպիսի տողերի վրայ, որոնք թանաքով չեն գրուած, այլ հրով եւ «լուսէ գրիչ»ով:

ԱՐՄՄ ԱՐՄԱՆ

### ՊԵՏՐՈՍ ԿՈՒՐՆԱՆ

Լուս, մարմարակերտ դամբանին խորէն,  
 հաննարի աշխերն անհոյժ կը նային,  
 լոյս ոգիներու կեանքովն երկնային  
 ալ մեկուսացուած ռնայն ժըխորէն:

Մեռաւ, խանդավառ սէրերն երգելէն,  
 ու պիտի յաւէտ միտքերն հմային  
 իր քունդ քրնարէն, ու երգերն ալ եին  
 պաշտումով զմեզ միշտ պիտի գերեն:

Հոյզով մեռաւ ան, յուշով կ'ապրի դեռ,  
 ծառերուն նըման, որ քարմ ու դալար,  
 իր գերեզմանին կ'ելլեն քովն ի վեր:

Հիացման կ'երթան իրեն ետեւէն...  
 եւ իր յուշերն ալ յաւէտ անմուտք  
 ու միշտ ոգեւոր՝ դեռ պիտի տեսնեն:

ՄԻՍԱԳ ՄԵՄԱՐԵՆՑ

3. ՕՇԱԿԱՆ

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ**

Իմաստասէրները *գիտակցութիւն* բառը կը գործածեն հոգեկան զանազան վիճակները մէկ գումարի տակ տեսնել երբ ուզեն: Իմ *իրաւութիւնն* ալ նման տարողութիւն մը ունի սա տողերուն վրայ: Գիրքերը, գրել սորվեցնող ձեռնարկները կը գործածեն ուրիշ տարազներ: Անոնցմէ մէկն է *անկեղծութիւնը*. ուրիշ մը՝ *ներշնչեալութիւնը*. երրորդ մը՝ *հարազատութիւնը*, քերթըլածի մը կշիռը երբ կը ջանամ ազատագրել, ներքին գիճով մը պաշտպանելու համար այն բացառիկ հազարդականութիւնը, որ արուեստի իրաւ գործի մը անվրէպ տպաւորութիւնն է իրմէն դուրս: Իմ առաջարկած բառը քիչ մը նուազ գրական, բայց անլի հարազատ կը թուի ինծի, իր պարփակած վիճակը պատկերելու տեսակէտէն: Փորձեր եմ գայն ամէնէն առաջ, կտորի մը, գիրքի մը, շրջանի մը նկարագիրները արժեւորելու, ինչպէս անոնց գուգորդ ուրիշ առաջինութիւններու կշիռին պահուն: Ամէնէն *անիրական* նկատելի պարագաներուն իսկ, իրաւութիւնը բաւ է մեզ գիջումի մղելու: Կա՞յ անլի անիրական վիճակ մը, քան խոռովքը, որ ջուրերունն է իբր թէ.

*Ինչո՞ւ ապշած են, լըճա՛կ,  
Ու չեն խայտար քո ալեակը,  
Միթէ՞ հայլույդ մէջ անձկաւ  
Գեղուհի՞ մը նայեցաւ:*

Ոչ մէկ պաշտպանողական: Շփոթանքը, կասկածը մեզ կը պաշարեն. մուտքին սա տարօրինակ, յանդուգն, տղայական բուսելու չափ միամիտ պատկերովը: Բայց խուլ ազանովութիւնն ունինք բանաստեղծին *իրաւութեան*: Երկրորդ քառուկը մեզ կ'ընէ նուազ անտրամադիր: Ռոմանթիք նկարագրութեան բարիքը չէ, տնշուշտ, հեղինակը այս ամոխումին. *լուսափթիթ ամպը*, 1860ի ապրանք, մեզ պիտի պահէր նոյն կասկածանքի մէջ: Քառուկը փրկողը նմանութեան տարօրինակ իրաւութիւնն է փրփուրին եւ ամպերուն: Յետոյ, երրորդ քառուկին անհուն մարդկայ-

նութիւնը: Լեւկը, որ կը պգտիկնայ, կը պգտիկնայ, դառնալու չափ բանաստեղծի մը կուրծքին տակ փռուած դաշտիկը, տնակը, տաղաւարը, անոր հոգիին ներքին սրբարանը, առանձնարանը, ուր աշխարհէն իր փախուստը պիտի մկէ գայն՝ «*լուհու*», «*խոկալու*»: Ու շքեղ փայլակը.

*Որքան ունիս դու ալի՜  
Ճակատս այնքան խոկ ունի,  
Որքան ունիս դու փրփուր՝  
Միրտս այնքան խոց ունի բիւր:*

որ կը փարատէ բոլոր վախերը: Հոն, ուր մենք հաշտուած էինք արտաքին պատկերացման անխուսափելի չարիքին.— Ի՞նչ կարելի է ըսել լեակի մը ափունքին, նոյնիսկ Լամարթինի եւ *ԴՅ-ֆիտ*ներու համբաւաւոր փառքերէն վերջ, եթէ ոչ մեր աչքերուն նարտարութիւնը գոյներու աստիճանները չափելու, կամ մեր ջիւղերուն կսկիծը ջուրով գովացնելու առաւել կամ նուազ բախտաւոր բտներուն իմաստութիւնը — կը գտնենք բոլորովին տարբեր, նոր, յանդուգն, իրաւ հանդէս մը ապրումներու: Մեծ բանաստեղծներու յատուկ շնորհ մըն է սա աստուածային դիրութիւնը ինքզինքը նոյն ակնբարթին մէջ հալեցնելու, վերակազմելու, ջուրէն հոգի, հոգիէն ջուր իջնալու: Կրկին կարդացէ՛ք վերի քառակը ու պիտի գտնէ՛ք, որ ալիքն ու նակտին գիծերը որքան բնականութեամբ մը զիրար կը թելադրեն: Փրփուրն ու խոցը, ջուրն ու սիրտը որքան սերտ, ընտանի, անհրաժեշտ մերձեցումներ են, հիւանդին հետ, բայց անկէ դուրս մանաւանդ, լեակին իրաւութիւնը իր ալիքներով, փրփուրներով, լուսութիւններով, ծաղկափրփուրներով, արագ, ուրուային բայց կենդանի, բայց պատահական բաներուն զուսպ *թրած իջովը*:

✱

Ու միշտ Դուրեանի շրջանին դուք կը հրաւիրուիք գտնելու գայանակը *Լճակին*: Այդ օրերուն անկարելի բտուելու չափ նոր է, որքան տարօրինակ այդ *Լճակը*, թէ՛ իբրեւ նիւթ եւ թէ իբրեւ ձեւ: Ինչո՞վ է յօրինուած այդ այնքան փափուկ, այնքան *tastative*, այնքան դժուար կառոյցը: Ո՞վ է հայթայթած այդ ֆերթըւածին պարզուկ, ինչպէս վերնաթոփի իր իրաւութիւնը, թեւաւոր, օդակառոյց ռումբիզմը ու խօսուած լեզուին բառերովը ու կըշռայթովը, գետինին շատ մօտիկ դժնդակ հաւասարակշռութիւնը: Քերթնածը այս երկու հակադրութիւններուն համադրութիւնն է սակայն: Քաղցրութիւն է ու մեղեդի, տեսիլ է ու տրամա, մարդ մըն է ու երագ մը, մինչեւ այսօր իր այդ արժէքներէն, իր այդ նարտարապետութենէն անտոյժ ու անխարխուղ: Ի՞նչն է որ նախած է այդ շէնքին սա անկեղծութիւնը, տրամութեան, մարդկայնութեան, անօրեային մէջ յաւիտենականով կնքաւոր իր փառքը, հայարտանքը: Ո՞վ է ստեղծած բառին ու պատկերին,

զգացումին ու ասոր շղարշին, ցաւին ու անոր բոցին, երագին եւ ասոր շապիկին սա տարօրինակ, միշտ կ'ըսեմ՝ անկարելի դաշմութիւնը, սխրանքը սա անտիպ ու վերջնական հրաշքը: Պէ՞տք է տակաւին խօսիլ այդ ֆերթուածին բառերովը մարմին դարձած լեզուէն, անոր վնիտ աշխարհայնութենէն, արիւնէն, որուն տափութիւնը կը զգաս ձայնական մարմաշին իսկ ընդմէջէն հոգիիդ ամէնէն մաքուր մերկութիւններուն վրայ: Ու այս ամէնը իրենց եզերական իմաստին կը բարձրանան, երբ այդ տղուն շուրջը դիտենք կարաւանը մարդոց, անոնք ալ պակասաւոր, մեծափառ, եզակի, անհուն ֆերթոզներ, որոնք կերպն են գտած այդ արժանաւորութեանց ազգ, հայրենիք, կոյս ու գարուն, Մասիս ու Արաքս, Վարդան ու Սանդուխտ հոյովելով անծակ ու անճառ երանութեամբ մը, հեշտանձով մը: Այդ ատեն դուք պիտի համոզուիք, որ Պետրոս Դուրեան երեւոյթ մըն է, հիւսիսայն մը՝ արեւմրտահայ բանաստեղծութեան մէջ:

Կը կրկնեմ հոս, ինչ որ թելադրեցի այս ուսումնասիրութեան մուտքին.— Պետրոս Դուրեան նման է բոլոր ազգերու մեծ, հրաւ, տառապագին ֆերթոզներուն (ո՛չ միայն իր զգայնութեան մեյր մէջ դեռ գոյզը չունեցող նկարագիրներովը, այլեւ թրեւս նակատագիրովն ալ) որոնք կ'երեսան առանց մունետիկի, անսպասելի ու շուարեցնող, տարերային, ինչպէս անմեկնելի: Կը բռնկին ծովերէն բարձրացող հրաբխային ժայթքումներու նման, կը մըխան կամ կը լուսաւորեն, կ'այրեն սիրտերը ու իրենք գիրենք ու կը սպառին՝ արագ կամ երկարատեւ մաշումով մը, մոխրացումով մը, բայց մոյն ատեն նակատագրովը՝ յաւիտեան չմոռացուելու: Անոնց մեզի ձգածը: Բայց մոխիրներն իսկ կ'ապրին դարեր, երբ կու գան ոսկորներէն նման ողբերգութիւններու, ողջակէզներու: Կրակին մէջ կը բանան անոնք իրենց զգայնութեան աչքերը, կ'ապրին անկէ չկիզուելու բացառիկ բախտով մը ու յաճախ կը գոցեն գանոնք մոյն այդ բոցին մէջ, որ պիտի պատմէ սակայն անոնց յիշատակը, դարէ դար, անմար: Մեր բանաստեղծութիւնը չունի երկրորդ անուն մը այս բացառիկ հրաշքը այսօր սայժառ կերպով իր անձին, ինչպէս գործին վրայ համադրող:

Յ. ՕՇԱԿԱՆ

**Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ**

իր թանաստեղծութեան հետ միասին անդիր սոյորել են հայ պատանիների շատ սերունդներ: Այդ երկու թանաստեղծութիւնները բաւական են նրանց հեղինակին անմահացնելու համար: «Ընակի մէջ թանաստեղծը զատն կսկիծով նշում է, որ իրեն շին հասկացել, որ իր ժամանակակիցների համար նրա հոգին մնացել է անմատչելի».

**« Լ Ճ Ա Վ »**

Ոչ ոք ըստ — Սա տրդիմ  
Պատռե՛մք սիրտը տըրտմազիմ,  
Նայիմք ինչե՛ր գրուած կամ...»  
— Հոն իրդեհ կայ, ո՛չ մատեան:

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ**

Հոն կայ մոխի՛ր... յիշատակ...  
Ալեակէզ յուզի՛նք քող, լըճակ,  
Զի էռ խորհիդ մէջ անձկու,  
Յուսահատ մը նայեցու:

Անցեալում դրականութեան մէջ կարծիք է յայտնուել, թէ «Ընակ»ը դրուած է Լամարտինի «Լիմը» յայտնի թանաստեղծութեան արդեցութեան ներքոյ: Դուրեանը ծանօթ էր ֆրանսիացի ոտմանտիկի այդ կրօնա-միտոթիկական շնչտերով յագեցած լիբրիկական երկին: Նրա հայերէն թարգմանութիւնը տպագրուած է «Յրկրագունտ» հանդէսի 1870 թուականի համարներից մէկում: «Ընակ»ը դրուած է 1871 թուականին: Դուրեանի թանաստեղծութիւնը խորապէս ողբերգական է, մինչդեռ Լամարտինի մօտ տիրապետում է վերացական զգացմունքը: Դուրեանը տառապում է այս աշխարհի վրայ եւ այդ տառապանքը ընդունում է ոչ քրիստոնէական համակերպութեամբ: Դուրեանի համար նիւթական աշխարհը միակ իրական աշխարհն է, նա չի ձրգտում հանդերձեալ կեանքի, ուստի եւ սանջանքն ապրում է առանձին սրութեամբ: Դուրեանը կսկիծով է խօսում մարդկանց անտարբերութեան մասին.

Սիրոյ, մերժման եւ տառապանքի զգացումը կեանքից յողնածութիւնը եւ յուսահատութիւնը՝ ուժեղացած Փիզիքական տկարութեան եւ անբուժելի հիւանդութեան գիտակցութեամբ, պոետական անկեղծ եւ սրտաշարժ արտայայտութիւն են զտել «Ընակ» թանաստեղծութեան մէջ, Դուրեանի եւ առհասարակ ամբողջ հայ քնարերգութեան գըլուխ-գործոցներից մէկը, որը ընդ մա-



Շատերը գ'իս մերժեցին,  
«Քնար մ'ունի սուկ — ըսին.  
Միմ' «գաղղոց է, գոյմ չ'ունի —  
Միսմ ալ ըսաւ — կը մեռնի»:

Ոչ աք ըսաւ — հէ՛ք սղայ,  
Արդեօք ինչո՞ւ կը մրխայ,  
Թերևս ըլլայ գեղամի,  
Թէ որ սիրեմ, չը մեռնի»:

Լամարտեր արհամարհում էր նիւթական աշխարհը, ուստի եւ ժարդկանց անտարբերութիւնը նրան չէր յուզում: «Լիմը» բանաստեղծութեան մէջ Փրանսիացի ուսմանտիկը նկարագրում է «ժայռերը, եզերները, եղէգնուտը, բլուրները: Բայց նրանք բանաստեղծի ուշադրութիւնը գրաւում են միայն նրա համար, որ յիշեցնում են մեռած սիրեցեալին... Անցեալի յուշը նրա մօտ ակներեւ կերպով գերակշռում է ներկայի ընկալմանը»:

Դուրեանի մօտ բուրբոյին հակառակն

է: Նա ապրում է ներկայով եւ ուր կերպով դգում է արդի հեանքի հակասութիւնները:

«Լճակ» բանաստեղծութեան մէջ Դուրեանը հետեւել է ուսմանտիկի բանաստեղծական արագիցիային: Խոմանտիկ պոետները լիրիկական թեմատիկայի մէջ առհասարակ դգալի տեղ է դրաւել բնութեան այդ հիանալի հասուածը — յիճն ու լճակը: XIX դարի սկզբին Անգլիայում հանդէս եկաւ ուսմանտիկ բանաստեղծների մի ամբողջ դպրոց, որը կոչւում էր «լճային»: Այդ պոետների մի մասը գրում էր սենտիմենտալ հետտորական գեղօճներ եւ սաղեր, ենթարկւելով Բայրոնի սպանիչ ծաղրին: Սակայն «լճասէրներ»ի շարքում կային նաեւ տաղանդաւոր բանաստեղծներ, ինչպէս Վորդսվորթ եւ Կոլըրիճը:

Դուրեանը չէր պատկանում «լճասէրներ»ի թուին: Նրա համար լճակը մի առիթ էր իր ներքին հոգեկան ոգրերգութիւնը արտայայտելու համար:

Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ



### Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ասլշած են, լընա՛կ,  
Ու չ'են խայտար քու ալեակֆ,  
Միթէ հալոյոյ մէջ անձկաւ  
Գեղաւիտ՞ մը նայեցաւ:

Եւ կամ միթէ կը գմայլի՞ն  
Ալեակֆդ երկնի կապոյտին,  
Եւ այն ամպոց լուսափթիթ,  
Որք նըմանին փրփուրֆիդ:

Մեյամաղճատ լընա՛կդ իմ,  
Քեզ հետ ըլլա՛նք մըտերիմ,  
Սիրեմ քեզի պէս ես ալ  
Գրաւաւիլ, լընել ու խակալ:

Որքան ունիս դու այի՛  
Ճակատս այնքան խոկ ունի,  
Որքան ունիս դու փրփուր՛  
Սիրտս այնքան խոց ունի բիր:

1871

Այլ եթէ գոգզ ալ քափիմ  
Բոյլքն աստեղաց երկնֆին,  
Նըմանիլ չ'ես կընար դուն  
Հագոյս՛ որ է բոց անհո՛ւն:

Հոգ աստղերը չ'են մեռնիր,  
Ծաղիկներն հոգ չ'են թռամիր,  
Ամպերը չ'են թրջեր հոգ,  
Երբ խաղազ էֆ դու եւ օդ:

Լընա՛կ, դու ես թագուհիս,  
Ձի թ'հովէ մ'ալ խորշումիս,  
Դարձեալ խորֆին մէջ խըռով  
Ձ'իս կը պահես դողդալով:

Շատերը գ'իս մերժեցին,  
«Քնար մ'ունի սուկ-բսին»  
Մի՛ն՝ «դողդոզ է, գոյն չ'ունի —  
Միւսն ալ ըսաւ — կը մեռնի՛»:

Ոչ ոք ըսաւ — հէ՛՛ք տղայ,  
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,  
Թերեւս ըլլայ գեղանի,  
Թէ որ սիրեմ, չը մեռնի՛ք:

Ոչ ոք ըսաւ — սա տըղիմ  
Պատոն՛նք սիրտը տըրտմագին,  
Նայիմք ինչե՛ր գրուած կամ...»  
— Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:

Հոն կայ մոխի՛ր... յիշատակ...  
Ալեակֆդ յուզի՛ն թօղ, լընա՛կ,  
Ձի քու խորֆիդ մէջ անձկաւ  
Յուսահատ մը նայեցաւ...:

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆ

ԱԼՖԱՈՆՍ ԼԱՄԱՐԹԻՆ

Լ Ի Ճ Ը

Դէպի տփեր նորանոր, այսպէս, բշուած առյաւէտ,  
Գիշերուան մէջ անվախնամ տարուած անդարձ ու հեռու,  
Պիտի երբեք չկրնամք ովկիանիս վրայ դարերու  
Նետել խարխալս օր մը գէշ:

Օ՛ լին, հագիւ վերջացաւ տարին, եւ ես, տե՛ս, հիմա  
Ալիքներուն մօտ սիրուած, ուր պիտի գար ամ նորէն՝  
Կու գամ նստիլ միս-միմակ այս ճոյն քարին, որուն վրայ  
Տեսար նստիլը իրեն:

Կը գռռայիր դուն այսպէս խարակներում տակ այս մալք՝  
Փշրուելով այսպէս միշտ անոնց կողին պատառուն,  
Կը նետէր հովք այսպէս փրփուրը քու ջուրերուդ  
Իր պաշտելի՛ ոտներուն:

Երեկոյ մը, կը յիշե՞ս, կը նուէինք մենք լոին,  
Ու կը շատէր քիչ հեռուն՝ ջուրին վրայ, երկնի տակ,  
Ճողփիւնը լոկ թիերու, որ համաշտի կ'իջնէին  
Ալիքներուդ ներպաշտակ:

Յանկարծ շնչտեր դեռ անյայտ ու անծանօթ՝ աշխարհին,  
Արթընցունցին արձագանգն իրենց՝ դիւքուած ափին վրայ,  
Նգաւ ալիքն ուշադիր, եւ ձայնն այնքա՛ն թանկագին  
Ըսաւ քստերն այս ահա.

«Ո՛վ ժամանակ, սանձէ ճախրդ, եւ դուք, պահե՛ք զմայլուն,  
Կանգնեցուցէ՛ք վագրը ձեր,  
Խօսյլ տրւէք մեզ ըմբռշխնել մեր լաւագոյն օրերում  
Կախարդա՛նքը վաղամեռ:

Երկրիս վրայ դժբախտներ քազում ձեզի՛ կ'աղերսեն,  
Անո՛նց համար սահեցէ՛ք,  
Օրերուն հետ անոնց դուք տարէք վիշտերն ալ ամէն,  
Երջանիկները մտոցէ՛ք:

Բայց ես ի գրող կը տեճամ յաւերժացումն այս պահում, —  
 ժաճանակը կը փախչի,  
 Ես կ'ըսեմ այս գիշերուան՝ «Սահէ դանդա՛ր», բայց առտուն  
 կը ցրուէ ցայզն երազի:

Ուստի սիրենք, սիրենք մենք եւ ժամերէն խուսափուկ  
 Փութանք, վայելքը խլենք,  
 Մարդը չունի երբեք կայք, եւ ժամանակը՝ ամուսն,  
 կը սահի ան, կ'անցնի՛նք մենք...»:

Ո՛վ նախանձտ ժամանակ, յապէներն այս արբեցման,  
 Ուր սէրը մեզ կ'ողողէ երանութեամբ հեշտալի՛՝  
 Կարելի՞ է որ մեզմէ նայնքան արագ հեռանան,  
 Որքան օրերն արցունքի:

Էհ ի՛նչ, պիտի չկրնա՞նք թռչուլ գէթ հետք մը այստեղ,  
 Ի՛նչ, յաւիտեա՞ն հեռանալ, ի՛նչ, կարասի՞լ լինվին,  
 Ո՛վ ժամանակ, բաւ տաւած պահերդ, որ շուն կը ջնջես՝  
 Պիտի մեզ ա՛յ չտրուի՞ն:

Յաւերժութի՛ւն, մե՛ծ ունայն, անցեա՛լ, մթի՛ն անդունդներ,  
 Ի՛նչ կ'ընէ՞ դուք օրերն այն, որ կուլ կու տաք անազմուկ,  
 Ըսէ՛ք, մեզ տա՞ք պիտի ետ գմայլանքներն այն վսեմ,  
 Զորս կը խլէք մեզմէ դուք:

Ո՛վ լին, ժայռե՛ր անբարբառ, այրե՛ր, անտա՛ն սազարթուն,  
 Դուք, որ անմահ էք, կրնաք վերածնիլ յաւիտեան,  
 Պահեցէ՛ք այս գիշերէն, պահէ՛ք, ով մե՛ծ բնութիւն,  
 Գէթ յիշատակ մը միայն:

Թո՛ղ ան մնայ անդորրից, փոքորկի՛ց մէջ թող մնայ  
 Եւ տեսիլն մէջ, ազաւ՛ր լին, բլրակներուդ տարփագին,  
 Խոնիներուն մէջ տխուր ու ժայռերուն մէջ անահ,  
 Որ ջուրերուդ կը հակին:

Թո՛ղ ան մնայ սիւքին մէջ, որ կը դողայ ու կ'անցնի,  
 Զայներուն մէջ ամբարձարձուած ալիերէդ,  
 Եւ այն առագիւն, որ իր մեզմէ գալզանքովը գազտնի  
 Կ'արծաթէ դէմքդ յաւտ:

Թո՛ղ հովը, որ կը թրթոսայ, եղէզը, որ կը հեծէ,  
 Թո՛ղ հոտաւտ միջոցիդ բոյրերը քաղցր ու հեշտին,  
 Ամէն ինչ, որ կը լսենք, կը տեսնենք ու կը շնչենք՝  
 Ըսեն. «Անոնք սիրեցի՛նք»:

Թարգմ. ԱՐԱՄ ԱՐՄԱՆ

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ**

Նախ՝ իր տարիքը, որ տեւողութիւն շուննցաւ, լեցուն կեանք մը չեղաւ, այլ՝ պատանեկութենէ հաղիւ հասած երիտասարդութեան սեմին՝ կարճ ոստում մը: Պետրոս Դուրեանի վաստակը կը դիտուի այս իրողութեան աընեալով, ապա՝ արեւմտահայ բանաստեղծութեան աշխարհաբար լեզուի ու քնարերգութեան հիմնադիրներէն, իր արժանիքներով՝ մեծագոյն գէժքը ըլլալու հանդամանքով: Մնած էր 1851ին եւ հանգաւ 1872 Յունուար 21ին. այսպէս է գրած իր տապանաքորին վրայ եղբայրը՝ Եղիշէ պատրիարք Դուրեան: Ուրեմն՝ քսան տարուան կարճ ժամանակաշրջան մը՝ ծնունդէն մինչեւ մահ: Փախտական ժամանակի փէշ-վազքին կառչած՝ Պ. Դուրեան հեիհեւ պիտի կրնար տալ այնքան, որքան առկախուած ու հաշուրւած պայմանաժամով՝ իր կանխահաս տաղանգին ներքի էր:

Տասներեք տարեկանին մէջ գրուած տաղէ մը ի յայտ կու գայ, որ ան կանխադրացումը ունէր սեւ յատակ անդունդիմ, որուն եզրին կանգնած ըլլալը իրողութիւն կը գառնար քսանին: Ահա՛ այդ դուշակութիւնը, ոճով մը, որ կը կրէ ազդեցութիւնը ժամանակին իրագործուած անարուեստ տաղաչափութեան եւ ռոմանթիզմին,

Անա՛ կ'իջնեմ, ո՛հ, ես այժմէն  
Առջեւ բացուած գերեզման խոր,  
Բայց սա տրիտուր տեսարանէն  
Ի՞նչ կայ արդեօք հաճոյք մ'Անոր:

Իսկ 1871 Գեկտեմբեր 10ին գրած, գուցէ վերջին նամակով չի՛ կանխազգար, այլ՝ կը հաստատէ, — «Անա ես կ'իջնեմ կամ մօտ եմ իջնելու այն սեւ յատակ անդունդին մէջ, որոյ անունը գերեզման կ'ըսեն»:

Կեանքի կանաչ արեւն իսկ չտեսած, աղքատիկ, բնական լոյսէ ու կրուկէ զրկուած, բայց իր հոգիին ու սրտին մէջ ինկած հրդեհով բոցավառ այս

տղան՝ ինքնածին բնատուր տազանդին ուժով տուաւ տազեր, որոնց լիցուն եւ ոճը, պատկերացումի թափը, քնարական անկեղծ եւ տարերային հոգը չունչը պիտի յառականային ու բիւրեղանային օրով եւ ո՛չ տարիով, Իրրեւ կազմուած բանաստեղծ՝ Գ. Դուրեանին ծանօթ են մէկ-երկու տարեթիւեր՝ 1869 եւ 1871: Առաջին թուականին մէջ գրածներէն շատեր, կրելով ուսման-թիւք ժամանակի այն ծանր չուքն ու չունչը եւ սկսնակի իր թարթափումներու հետքերը՝ վերանայուած ու մշակուած են անմիջական անդրադարձումով մը, առանց որ ժամանակը կոխէր անոնց ճակատագրին վրայ: Իսկ 1871ին տրուածները կը կազմեն Գ. Դուրեանի յաջողագոյն գիւանը, մէկ-մէկ գրալու-գործոցներ՝ բոլորը:

Աւաղելի՛ է, որ Գ. Դուրեան իր չունեցած ժամանակին մեծ մասը սպառած ըլլայ՝ ժամանակին տուրջ տուած թատերգութեանց վրայ: Բաներ, որ իր աստիճին փնտրուած էին գուցէ, բայց ոչինչ կ'աւելցնեն իր բանաստեղծական շահութիւն: Մտտ մը իր քերթուածներէն նոյնպէս կ'առանձնացունին իրրեւ պատեհապաշտութեան գոհեր, այսինքն՝ ձօներդերբ, որոնք կ'երթան նրբմեան Հայրիկի փառարանման կամ ուլոց պէտքին: Ինչ կը մնայ անդին, դրեթէ կէսը իր բերքին՝ իրրեւ որակ եւ իրրեւ քանդակուած մասունք՝ կը դառնայ չքեղ կատարելութիւն մը, ուր շունչի հարապատութիւնը, անկեղծութիւնը հոգիին, խոսիչի եւ այրումի ուժգնութիւնը, քնարականութիւնը կը ներկայանան հաշտ կենսակցութեամբ մը: Արդէն ըսուեցաւ, թէ Գ. Դուրեանի լաւագոյն ստեղծագործութիւնները իրագործուած են 1871 թուականին, երբ ան կ'ապրէր այլեւս իր գիտակցական հոգեմարզը, որ թելադրուած էր սրտին ինկած քայքայումէն:

Իր «Տրտունչէ», «Էնակ», «Իմ մահը», «Ի՞նչ կ'ըսեմ» քերթուածները շատ են ծանօթ, իրենց բռնկուն եւ թախծանուշ կոկիւրով, խորունկ ու անկեղծ երազայնութեամբ, գիտակից եւ բնազանցական եղբրականութեամբ պաշտպանուած: Պատկերացման, գիտալիւն կատոյցի, այրող ու բուռն սիրեբոյսին գոհարներ են միւսները, որ ունին իրրեւ խորապիտի՝ «Սիրելի», «Իրծելի», «Թրճուսիս», «Հեծեծմուսէ» կամ այլ վերնապիւրներ:

Գ. Դուրեանի ստեղծագործական բռնկումը ինքզինք ճարակող հրդեհէի մը կը նմանի, այնպէս որ իր այրող, լափող լեզուակները գալարուն, արիւնադոյն՝ պիտի առնէին իրենց թաթին ներքեւ ամէ՛ն ինչ որ կը գտնուէր տեղ-ուրի վրայ, այսինքն՝ անոր սրտին մէջ: Եւ արդէն ի՞նչ կրնար գտնուիլ աշխարհ շտեսած, փորձառական կեանքէ անմաս, քսանը հայրի կոխած պատանիի մը տեսական ու զգացական մարդէն ներս, եթէ ոչ աննիւթական, երազածին, արբունջի կրակներուն մէջ ճարճատող սիրային դրացումը: Գ. Դուրեանի բանաստեղծութեան ենթահողը պիտի ըլլար, ուրեմն, երազածին, բայց ցանկայարոյց սէրը, որ կրնար բնորոշուիլ իր անբծութեամբ միայն: Ան՝ տուն մը իր «Սիրելի» քերթուածէն.

Ես ուզեցի լուս մեծանայ,  
 Սիրելի փրթիթէ, խորշեր քաւուտ,  
 Սիրելի կայծերն երկնի կապուտ,  
 Ատարան շազն, իրիկուան բայ,  
 Հակատագրիս սեւ գիծ կարդալ,  
 Խակալ, սուգիլ, ըզմայլիլ սաւտ:  
 Ո՛հ, խաւրճ մը վարս, եղեմ մը շունչ,  
 Շրջագգեստ մը շրշեց իմ շուրջ:

Ինքն իր մէջ այրող, երազայնութեան ստեղծած անմեղ ցանկութեան,  
բնութեան խորհրդաւոր անդորրութիւնը յանկարծ կը փոթորկի շրջադեպտի  
մը տուած շրջանով: Նոյն այդ զգացական աղբուծք, սակայն, կը վերածուի  
խոսովքի, երբ փոխարինուած է կենդանի պատկերով մը: Տուն մը «Թրքմախիմ»  
քերթուած էն.

Նե կը վառի, մի՛շտ կը վառի, չը հատնիր  
Տըմանկ կընոջ տանարն վառած ճրագին պէս,  
Աստղերու նման գիշեր սիրէ՝ փաղփաղի՛լ,  
Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բացագէս...  
Իսկ քէ մեռնի,  
Կ'ըսես, — հի՛մա կը ծընի»:

Անշուշտ կրն մըն է, թրքուհի՛ մեծահարուստ տան մը տիկինը, որ  
կ'անցնի դագաղի պէս դանդաղ ընթացող կտրքի մը մէջ ընկողմանած. պա-  
հը՝ երեկոյ, բոցափառ է հորիզոնը եւ այդ շայրող հրդեհին մէջէն անցնող  
զեռատի կնոջ այտին վերջալուսին կրակը:

Պատմանակը, ուր ապրեցաւ իր կարճակեկ կեանքը Պ. Դուրեան, գրա-  
կան դարձոնքի արւալոյսը նոր կը բացուէր եւ յանդգնութիւն էր սիրերգու-  
թիւնը հրապարակով, մանաւանդ՝ երբ գոյութիւն կ'առնէր վերագաս հասա-  
րակութեան մը հոպերանութիւնը՝ հարուստ դաստիարակի մը երեւումով: Ու  
բնական է, որ խրճիթի մը մէջ ապրող, սրտին արիւնէն տաղեր հիւսող հի-  
ւանդ տղուն հանդէպ սնուցուէր արձամարհուտ վերաբերում մը: Դուրեան կը  
գրէ վերոյիշեալ իր նամակին մէջ, — «Արդեօք ի՞նչ պիտի ըսեն իմն գերեզ-  
մանէն անդին՝ «սիա թշուառ երիտասարդ մը, որ աշխարհ եկաւ, եւ միայն  
իր մեռնիլն զգաց ու մեռաւ»: Եւ այս մտածումին հակակշռին տակն է  
գտնուած ան, երբ գրած է իր «Լնակ»ը: Լուս անդոհանքի եւ կսկծացող վիշ-  
տի արտայայտութիւն են սա տողերը.

Շատերը գ'իս մերժեցին,  
«Քնար մ'ունի սոսկ — ըսին.  
Միմ՝ «գողգող է, գոյն չունի —  
Միւսն ալ ըսաւ — Կը մեռնի»:

Այդ վիշտին, զժգոհութեան, պարսափ եւ հիասթափութեան յաճա-  
խանքը յղացք եւ ուժ տուած են շատ մը քերթուածներու. «Տրտունջ»ը ա-  
մենարուստ արտայայտութիւնն է այդ զգացողութեանց, բլլալով մէկ տեղ  
Պ. Դուրեանի վաստակին գրաւոր մէկ կտակը: Սակայն, աւելի համադրական  
կտակի ձեւ կ'առնէ իր «Իմ մահը»: Անլոյս եւ անկրակ խրճիթին ցրտոյ դի-  
չերուան մէջ՝ լուսնի լոյսին ազապատանքը ունեցող, բայց մեր քերթողու-  
թեան արշալոյսին մէջ ծագած այս արեւ-տղուն ձեւակերպած կտակը հե-  
տեւեան է.

Իսկ աննշան եքէ մնայ  
Երկրի մէկ խորշն հազակայտն իմ,  
Եւ յիշատակս ալ քառամի,  
Ա՛հ, այն ատեն ես կը մեռնի՛մ:

Չինք կանխող, բայց նուազ զեղարուեստական վաստակով՝ Ալիշանի եւ Մկրտիչ Պէշիկթաշիանի հետ՝ Պ. Դուրեան հիմը դնողը եղաւ մեր արդի աշխարհարարին եւ քնարերգութեան ստեղծումին, ուժեղ անհատականութեամբ եւ անմիջական իր ճառագայթումով: Երեքը մէկ՝ անդրանիկ ոտմանութիւններ, մեզի տունն քերթողական վաստակ մը, ուր կը զղացուի Հայրենիքի սիրոյ, վերաւոր թախիծի Հայեցիութիւն մը: Պ. Դուրեանի թատերգութիւնները, առանց գրական որեւէ արժեւորման՝ ապացոյց են Հայրենասիրական այդ երակին: Եւմ մտիքն յանգունակութեամբ Պ. Դուրեան ստորագրած է նաեւ ուրիշ քերթուած մը, որ կը կրէ Եւմ ցաւը խորագիրը. ահա վերջին տունը այդ քերթուածին.

Հէ՛ք մարդկութեան մէկ սասը զօս՝  
Հայրենիք մը ունիմ բըշուառ,  
Չ'օգնած անոր՝ մեռնի՛լ անճշան.  
Ո՛հ, ա՛յս է սասկ ցա՛ւ ինձ համար:

Վերջացնելէ առաջ Հատուցման տուրքը մեծ ու հանճարեղ քերթողին, կրկնենք, որ Պետրոս Դուրեան կը Համարուի ծիածան մը մեր բանաստեղծութեան անցեալի ամպամած երկնակամարին վրայ. սակայն, առանց ամպամած երկնքի ալ՝ ան կը մնայ ճառագայթումը, արշալոյսի շողարձակում մը ըլլալուն համար: Իր տապանաքարին գոյատեւումն եւ մահուն հարկաբանակի վերակուումը, այսօր՝ ապացոյցներ են իր անմահութեան:

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Պէյրուք, 5, 1/1972





ՆՈՒՆԻ ՅԻՇԱՍԱԿԻ  
ԱՌ Պ. Հ. ՃԱՆՃԷԱՃԵԱՆ

յուշ

Ասուտներն գարնանային,  
Ո՛հ, հորիզոնն ալ վարդավառ՝  
Յ՛այց ելնելուդ մարչ, չոր մացառ,  
Ուր կը գտնես մարչ, չոր մացառ,  
Երբ քոչմիկ մը նըռուզէ,  
Դու իմ իզները յիշէ:

Սա կապոյտ Մայր-Ովկեանին,  
Ուր փողփողեն աւազ սուկի՝  
Մէք երազոց վառարանին՝  
Թ՛եզրեն՝ վարդից մէջ անիւնի,  
Երբ արեւը շողշողէ,  
Դու իմ սէրը միշտ յիշէ:

Թաւառիէ մը կանաչ ու մարչ,  
Որոց շուքը սիրէինք միշտ  
Պատիլ, Խօսիլ շրթամբ դողողոջ,  
Երծիլ անկազ իրարու սիրտ,  
Երբ տերն մը խարշափէ,  
Դու իմ մրմունջը յիշէ:

Պողարպաշի ելած ատեն՝  
Եւ կամ սարը Ջամլընային՝  
Սիրո՛ւն վայրեր, ուր միշտ արդէն  
Ճեմել հագիք մեր սիրէին՝  
Երբոք գեփիւռ մը փռչէ,  
Դու իմ հոգին միշտ յիշէ:

Եւ անօրեայ աշխատանքէ  
Վաստակաբեկ վերադարձիդ՝  
Եւ կամ սիրոյ արշավանքէ  
Դարձած ատեն տըրոփ ի սիրտ՝  
Երբ հարիզոնն երգեհէ,  
Դու իմ կրակները յիշէ:

*Գրեցի քեզիս յիշող ցրտե  
ուշիցս անտառ քիչիւն ճիւղ  
և ցոլեց վարդեր ցեղ  
ուսուցը քոչմիկ մէջ և ճիւղ  
եթէ քոչմիկս քեզ յիշէ.  
Իմ ճիւղս անտառ յիշէ:*

*Երբեք անտառ ու քոչմիկ  
յուսուտ քոչմիկ այլ անտառ  
առ քոչմիկ ճիւղ ճիւղս  
սեղոյ ճիւղս և քոչմիկ մէջ  
քոչմիկ ճիւղս յիշող քեզ  
Դու իմ ճիւղս յիշէ:*

1891 թ. 6

*Գրեցի քեզիս*

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Դուրեան նուրբ գլխանութեամբ բանաստեղծ մըն է: Տէմիրճի-պաշեան «մեր ամէնէն զգայուն բանաստեղծը» կոչած է զայն: ուրիշ-ներ Պէշիկթաշեանէն աւելի մեծ կը նկատեն զինք: Ինքն իսկ, իրեն եղած Հարցումի մը պատասխանելով, ըսած է օր մը. «Թէեւ շատ պիտի չապրիմ, բայց ըսել պիտի տամ, որ ասանկ մէկը աշխարհ ե-կած է»:

Ուրիշ առիթով մը ինքզինք անուանած էր «մանուկ համբար»: Բարձրագոյն ուսում ստացած չէր, հմուտ չէր քերթողական արուեստի պահանջներուն, նոյնիսկ յաճախ անուշադիր էր տաղաչափական կանոններու: Իր այս տկար կողմերուն ակնարկելով՝ կ'ըսէր ինքն իրեն Համար. «Թճ իր սպասէք կտորած նուագարանէ կամ արուած դաշնակէ մը»: Սակայն իր մեծ ու բնածին տաղանդը կրցած էր ո՛չ միայն փրկել զինք միջակութենէ, այլևս հասցուցած էր բարձր մա-կարդակի մը: Ունէր յանդիմութիւն, ինքնատպութիւն, հաղորդա-կանութիւն, զգացումի ջերմութիւն, յուզականութիւն, բացատրու-թեան նոր մեւեր եւ այլ արժանիքներ, որոնք իրեն շահեցուցին ան-շխիւ փառքը կոչումով բանաստեղծ բլլալու: Իրաւամբ՝ «Ակիւտա-րի սոխակը» անուանած են զինք: Մեր մէջ զրեթէ առաջին բանաս-տեղծն է ինք, որ սկսած է գործածել զուտ աշխարհարար, ինչ որ յառաջդիմութիւն մըն էր իր շրջանին մէջ: Իր քերթումները ոչինչ ունին արուեստական, ուսուցիչ ու ճոռած. գրեթէ բոլորն ալ ապրը-ւած զգայնութիւններ են: Հոգի կը դնէր ան մինչև իսկ իր պարզ նամակներուն մէջ: Հարուստ չէր մտաւորական իր պաշարը, բայց անհունօրէն մեծ էր հոգեկամ պաշարը:

Դուրեանով կը սկսի նոր շրջան մը մեր քնարական բանաստեղ-ծութեան մէջ:

Բ. Թ Ա Շ Ե Ա Ն

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Արտակարգ տաղանդ մըն է Դուրեան, բանաստեղծութեան մէջ: Ուշադրութիւն ըրէք, անուշտ, որ չմանաւորեցինք բառը ու լըսինք «եսյ րանաստեղծութեան մէջ»: Քիչ անուն կը հաշուէ միջադրային քերթողութիւնը տասնիննամեայ կամ քսանամեայ քերթողներու, որոնք, այդ թուականներուն ու Դուրեանի դժով, անոր բառին ու սպրուսին զօրութիւնը ունեցած ըլլան:

Անոր քերթողութեան մտքի՛՞ջը՝ սպրեւու տենչին եւ չկարենալ սպրեւու փախտագրին պայքարն է միշտ: Եւ առանց այդ պայքարին՝ հանճարատիպ Սոխակը պիտի չըլլար ան:

Ծորքի թէ՛ ձեւի կատարելութիւնը, իր բանաստեղծութիւններուն մէջ, թելադրուած է ո՛չ թէ արեւեստին պատրաստութենէն, այլ՝ սպրուսին հարողատութենէն, — որ աղբիւրն է արուեստին: Հիւանդութիւնը անոր հոգիին ծաղիկն է, ու անո՛վ շատ աւելի շահած է իր քերթուածը: Ոտանաւոր մնացած չէ, դարձած է քերթուած: Առած է իր արիւնէն, խմած է իր կեանքէն, փրցուցած է իր հոգիէն:

Փորձեցէ՛ք իր արտէս անցնող արշալոյսներէն՝ քաշել ու հասնել իր «Հնծեմմաւնիներուն», «Հծծիւններուն ու «Տրտունգէ»ին, — ու պիտի լսէք պատմութիւնը կեանքի մը, որ աւելի երկար սպրուած է, աւելի քիչ մամանակի մէջ լեցուցած է տարիներու մեծ թիւ մը, քան մեզմէ՛ն ունէ՛ մէկը՝ իր բազմապատիկ օրերու շղթան: Անոր ամէն մէկ տաղին, ամէն մէկ տողին մէջ, միշտ բախումը պիտի զգաք ըլլալուն ու չըլլալուն, ձգտումին ու չհասնելուն, անհուն երազին ու գեանաբարձ իրականութեան: — Դուրեանի խաչելութիւնը՝ լուս այս միանքով կայ իր քերթուածներուն մէջ: Առաջին բանաստեղծն է մեր իրականութեան մէջ, որ ինքզինք կու տայ՝ այդքան յանդուգն — չըսելու համար անհաւատալի — լիութեամբ մը: Բխումով մը: Կը բխին անոնք անդիմադրելի յորդումով մը, ցնցելով յաճախ ի՛ր մարմինն ալ: Իր բառերուն մէջ ճիւղերը կան իր արեան, ցաւը կայ իր սրտին, կոխը կայ իր հոգիին: Գուճարեցէ՛ք, ու կ'ունենաք ժթ-դարու քերթողութեան ամէնէն անխառն, ամէնէն իրաւ զկայութիւնը:

Սիրոյ, կեանքի եւ մահուան քերթողն է Դուրեան:

Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ



Քա. Պոլսոս

Յուսոս մը տես թեզոյ  
Նո ծաւալեր զոյ ու զոյ  
Ծաղկանց մէջ ինչ տեսու  
Նո մշտեմ զսուսայ տես

Աչերս սոյս ուրբողան  
Եւտես տես ինչ շիջան  
Զայւսածքերն ինչ որ ինչ  
Ի սոյստես զսոյս ուր ինչ

Սիրոյս թաւս ուրբող  
Սիրոյս ինչ, իմա հրեշտակ...  
Սիրով եզան ճիւղ մագեր,  
Ըսին՝ կեանքը երազ էր:

Սիրոյս զոյ ինչ սիրոյ ինչ:  
Սիրոյս զոյս ինչ սիրոյ ինչ.  
Սիրոյս ինչ սիրոյս ինչ ինչ  
Սիրոյս ինչ սիրոյս ինչ ինչ

Սիրոյս ինչ սիրոյս ինչ  
Սիրոյս ինչ սիրոյս ինչ  
Սիրոյս ինչ սիրոյս ինչ  
Սիրոյս ինչ սիրոյս ինչ

ՄՆՍԱ ԲԱՐՆՈՒ

Աստու մը դեռ մթնշաղ՝  
Կը ծաւալեր շող ու շաղ,  
Ծաղկանց մէջ ինչ տեսայ ես,  
Կը ժպտէիր լուսնայ տես:

Աչերդ սիրոյ ստրուշան,  
Մատներդ էին գիրք շուշան,  
Այտերդ վարդի նոր բերքեր,  
Նայուածքդ ծնէր նոր երեք:

Սիրոյս թաւս ուրբող տակ,  
Սիրոյս ինչ, իմա հրեշտակ...  
Սիրով եզան ճիւղ մագեր,  
Ըսին՝ կեանքը երազ էր:

Մինչդեռ դու չես սիրեր գիւ,  
Մինչդեռ գոնէ տկար սրտիս.  
Ուր որ երբամ, դէմքդ ինչ հետ:  
Նայուածք չէ այդ... մահու՛ն նետ:

Երբ անտառին խորքն ճրտեմ  
Կ'երբամ լալ՝ լուս մեծանեմ,  
Դարձեալ հոն կը գտնես գիւ,  
Տերեւներէն կը խօսես:

1869



ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

**ԵՍ՝ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ**

Ո՛հ, տու՛՛ք հոգւոյս կրօնի մի կաթիլ.  
Սիրքի կ'սուգնմ դեռ, ւ՛տպրիլ ու տպրիլ.  
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ բնի՛՛ք  
Կայծ տու՛՛ք, կեա՛՛նք՝ անք սիրահարիմ ձե՛ք...

Յունուարի գիշերը կրկին իջած է քաղաքին վրայ, մուսլ պատանքի մը պէս, որ կ'ուզէ ծրարել եւ կուլ տալ իմ վտիտ մարմինս: Քնացող մարդ-կութիւնը կ'անդիտանայ իր ոչ մի սպառնացող վտանգը:

Քունը ինծի համար անյատակ եւ անեզրք անդունդ մըն է, դեւերով եւ վիշապներով բնակուած, ուր աժան խաղալիքներու պէս երազներս իսկ կը փչրուին: Անմիջապէս որ կոպերս իջնեն բիրերուս վրայ, ահաւոր գլխապտոյտ մը զիս կ'առնէ իր յորձանքներու բազուկներուն մէջ ու կը տանի մըղ-ձաւանջի դուռներէն անդին, ուր էութիւնս կը խորտակուի՝ ցնորական ապառաժներու զարնուելով:

Կը սարսափիմ այս գեհնական ճամբորդութենէն, բայց դիտեմ, որ այդ անմարդկային տառապանքէն ետք է, որ կը սկսի երազի աշխարհը, երգեմի պարտէզը: Հոն կը տարածուի անցեալիս դադունի պարտէզը, սիրոյ կանաչ դրախտը, ուր կ'երթեւեկեն այն էակները, զորս սիրեցի եւ որոնք, սահայն, չուզեցին սիրել զիս, որովհետեւ հիւանդ էի եւ մահամերձ:

Այդ բուպէներուն միայն կը մոռնայի կուրծքիս տակ հեւացող վիշապը եւ այդ միջինաւոր անգութ խլուրդները, որ տիւ ու գիշեր կը ծածկեն թոքերս եւ արեանս հիւլէները կը վերածեն շիկացած մետաղի մէկական զընդիկներու, որոնք կը տարածուին մարմնիս մէջ ու կը բոցավառեն ճակատս: Այն ատեն զլուխս կը վերածուի կապարէ գունախ մը, որ կը ճզմուի պողպատէ աքցանի մը ակուններուն տակ եւ սովալլուկ գայլ մը իր աղամանդէ ատամներով կը կրծէ զանկս ու կը լսփէ ուղեղս:

Դուրսը՝ հովը կ'ոռնայ, կ'աղաղակէ, կը հեկեկայ, շնազայլերու վոհմուկի մը պէս, որ կ'ուզէ կուլ տալ ամբողջ մարդկութիւնը...:

Երբ մանուկ էի, ձմրան գիշերները կը մտնէի մօրս անկողինը ու կը

սեղմուէի անոր տաք կուրծքին: Մայրս կը համբուրէր զիս, կը շուրջը ժողերս եւ իր յուզիչ ու քաղցրալուր ձայնով կ'երգէր հին ու կախարհող օրօր մը: Անոր տաք շունչը կ'ողողէր դէմքս ամբողջօրէն ու քուն կ'իջնէր աչքերուս: Կիրակի առտունները, եկեղեցի երթալէ առաջ, մայրս կ'երգէր շարականներ ու մեր վրայ կը հայցէր Աստուծոյ օրհնութիւնը: Երգը մարդուն վիշտերուն եւ ուրախութիւններուն գերագոյն արտայայտութիւնն է. «Սո աշխարհի մէջ միայն երգերը շատ սիրեցի»:

Հովը կը շարունակէ տնայ, բայց աւելի մեղմ:

Այդ նոյն տունը կը լսէի, երբ աշկերտը՝ հօրս զարբնոցին մէջ, կը քաշէր խոշոր փքոցին շուանը եւ բոցերը խուճապի մասնուած, զիրար կը հրմուկէին շրթալուծած պարիկներու պէս: Հիացած՝ կը դիտէի զարբնոցին գործունէութիւնը եւ անհամբեր կը սպասէի այն պահուն, երբ հայրս՝ երկար ունկիւնով շրթացած երկաթի անձեւ գանդուածը կը դնէր սալին վրայ եւ քունկը իջնցնելով կը յորինէր հեթանոս ու վսեմ կշռոյթ մը, որ կ'արձագանգէ մինչեւ այսօր իմ ուղեղիս մէջ: Ու ես հիասթափ՝ կը համբէի հարւանները, եւ զանոնք փոխարինելով բառերով, կը ստեղծէի երգ մը, յաճախ անկապ ու անհեթեթ, որ կամաց-կամաց իմաստ կ'առնէր, կը կանոնաւորուէր, կ'ըլլար ամբողջութիւն մը: Յետոյ իմացայ, որ ա՛յս էր բանաստեղծութիւնը:

Ես միշտ սիրած եմ աշունը, իր մեղմ ու մեկամղձոտ երեւոյթին համար: Այդ պատճառով շատ կը սիրէի Լամարթիւնը, որ այնքան գեղեցիկ ու տանաւորներ նոյնիքն է այդ եղանակին: Արձապարտի օրերուն, երբ ընկերներուս հետ պտուղներ ելլէի, անոնք անմիջապէս կը վաղէին դէպի անտառը, վայրի պտուղներ քաղելու համար, ես կ'առանձնանայի ու նստած բարձր ժայռի մը վրայ՝ կը դիտէի ծովը: Վարր, կը ասրածուէր Մարմարայի կապոյտ սաւանը: Այլ կողմս Սկիւտարի տուները կը պահուրակէին նոճիներու փունջերուն ետեւը, եւ, բլուրներու կողին նստած, կը դիտէին զիմացի յաւիտենապէս սմայիչ տեսարանը, բազմութեան մը պէս, որ ստիպուած է կանգ առնել վիճի մը աւջեւ: Նաւեր եւ նաւակներ կ'երթնակէին անդադար երկու ափերու միջեւ, ժրջան մը մը կ'անցնէրու պէս: Իսկ զիմացը, Սթամպուլի տուները սարսափած ոչխարներու պէս կը կծկուէին երկնաւայաց միներէններու կամ զանգակատուններու շուրջը: Երբ արեւը հանգչէր Չամլլուճայի կանաչ բլուրին վրայ, անտեսանելի ակունքէ մը կը բխէր յանկարծ վարդագոյն եւ ջրոտը հեղուկ մը, որ կը ասրածուէր արեւմտեան հորիզոնին վրայ, կարճըրած աչքի մը պէս: Այն ատեն երկինքի գորշ ու ճերմակ ամպերը կ'իջնէին դէպի վար ու բլուր-բլուր կ'ըլլային միներէններու սուր ծայրին զարնուելով: Եւ միջոցին մէջ կը հոսէր ժուղիկներու յուսահատական կանչը: Ու ես վերացած, կը սկսէի բառեր արտասանել եւ տխուր երգ մը կը ծնէր ներսիդիս:

Մեծնալի օրեր ցըվերջ  
 Երբեմն՝ հովտի, ծաղկանց Երկնի  
 Ձիւնափրփիթ անպերուն մէջ,  
 Կեանքի մըրուրմ ես քափէի:

Ո՛հ, կը յիշե՛ս, Չամլլուճայի  
 Մարը նստած յո՛ւս մրիայիճք,  
 Ուր շուճ տայիմ մեզի մեծիճ՝  
 Սեւ հովանոցք վշտանարի:

Եւ ցկատարածն աշխարհի, աշնան ամէն իրիկուն, այս նոյն տեսարանը պիտի պարզուի մահիւնացուններուն աչքին, բայց ես պիտի շտեմնեմ անոր գեղեցկութիւնը, որովհետեւ՝

Ունկի ես երբեմն աւատ  
Վարդեր, աւատ աստղեր ճոյնպէս.  
Ճակատագիրս սեւ տեսաւ շա՛տ,  
Փրցուց քաղեց գ'անոնք սըրտէս:

Այն ասան կը կարծէի, թէ այդ սեւ օրը դեռ շատ հեռու էր, կորուսած գալիքէ մշուշին մէջ, թէ՛ առջեւ ունիմ անթիւ տարիներու անսպառ ժամանակ մը՝ վայելիլու համար կեանքին նուէրները, բայց հիմա գիտեմ, թէ սեւ հրեշտակը արդէն հասած է դրանս առջեւ եւ անոր յայտնուիլը օրերու եւ թերեւս ժամերու հարց է:

Որքա՛ն կը սիրէի բնութիւնը, Աստուծոյ հրաշակերտած այդ գլուխ-Քործոցը: Մարդերը չէի ատեր, անոնք ալ Աստուծոյ գլուխ-գործոցներն էին, բայց անտաններուն խորհուրդը, մարգարեամբններու գունազեղ տարածութիւնը, ծովուն դիւրափոփոխ երեւոյթը եւ երկինքին անգերազանցելի հմայքը աւելի կը խօսէին սրտիս: Կը խաղայի ծագիկներուն հետ, կ'երգէի ամպերուն հետ ու կը խնդայի թռչուններուն դայլայլովը: Բնութեան անհուն մեղամաղձոտութիւնը կը բարեխառնէր իմ բնածին տրամութիւնս: Գիտէի, որ ծագիկները օր մը պիտի թառամին, անտունները պիտի փճանան, թռչունները պիտի մեռնին եւ ծովը պիտի շոգիանայ, որովհետեւ նիւթեղէնը չի կրնար յաւիտենական ըլլալ...

Բայց ի՛նչ դառնութիւն կը գգայ մարդ, երբ իրմէ կը խլուի կեանքի արդար բաժինը ու մարմինը կը սկսի փճանալ ժամանակէն շատ առաջ:

Սենեակին մէջ կը տիրէ մեռելային մթնոլորտ մը: Շարժող դիակի մը պէս փյաժ եմ քրտինքովս խոնաւցած անկողինին մէջ: Դեղերու հոտը կը սաւառնի սուրբերու շուրջ, դիւ մտանելով շուարումի: Ի՛նչ յաւակնութիւն: Ի՛նչ կրնան ընել այս հեղուկները այդ ահաւոր հրդեհին դէմ, որ բռնկած է ամբողջ էութեանս մէջ: Ի՛նչ կրնայ ընել մարդկային գիտութիւնը, երբ հոգին գժտուած է մարմնին հետ: Գիտեմ, որ անոնք անօդաւտ են, բայց մօրս հաճոյք պատճառելու համար կանոնաւորապէս կ'առնեմ օրական բաժինս...

Ճակատս կ'այրի ու տաքութիւնը ա՛յնքան սաստիկ կ'ըլլայ, որ կը կորսնցնեմ ուշքս ու կ'իյնամ տեսակ մը վտանգաւոր անդորրութեան մէջ, որ շարժուն աւաղի մը պէս իր մէջ կը քաշէ զիս...

Եւ ահա ինքզինքս կը տեսնեմ հասուն պատանի: Գրեւու տենչս այնքան զորուտ էր, որ պարտականութեան տեսրակներուն կողքին վրայ սկսած էի ոտանաւորները շարել: Այս՝ իմ գաղտնի գործունէութիւնս էր, մուսային հետ գաղտնի գինակցութիւն մը:

Երբ աւարտեցի ուսումս, որոնեցի միջոց մը՝ ապրուստս ճարելու համար արուեստի միջոցաւ: Այս եղած էր իմ մեծագոյն երազս: Եւրոպայի մեծ դրագէտները այդ ձեւով կ'իրագործէին իրենց տաղանդը:

Իրիկուն մը, իմ ունեւոր րնկերներէս մէկը զիս թատրոն հրաւիրեց: Վախով ընդունած էի իր առաջարկը, որովհետեւ արուեստի այս ձեւը լաւ աչքով չէր գիտուած մեր հասարակութեան կողմէ: Մա՛նաւանդ՝ եթէ ծնողքս իմանար, պիտի արգիլէր մուտքս՝ կորստեան այդ հրաշագեղ քարայրին մէջ:

Հարեւաւոր մարդիկ հաւաքուած սրահին մէջ կը սպասէին վարազոյրին բարձրանալուն: Բարեկամս, որ արդէն ներկայ եղած էր անգամ մը բնադրուած ողբերգութեան, համոռօս կերպով ինծի պատմեց նիւթը, եւ տակաին չէր վերջացուցած իր խօսքը, երբ լսեցի բնժի տախտակամածին վրայ դարձուած երեք հարուածները: Դերասաններուն հաղուստներէն հասկցայ, որ պատմական եւ սիրային փիէս մըն էր տրուածը:

Իւրաքանչիւր շարժուածեւ, իւրաքանչիւր խօսք հիացում կը պատճառէր ինծի: Ամէն ինչ նոր էր ինծի համար ու գեղեցիկ: Բարեկամս, սակայն, չէր բաժնէր իմ խանդավառութիւնս: Առիթը ունեցած էր տեսնելու շատ մը ուրիշ ներկայացումներ եւ կրնար մէկը միւսին հետ բաղդատելով՝ իւրաքանչիւրին տալ իր արդար արժէքը: Ես կը նմանէի մանուկի մը, որուն տոջեւ կը բացուի յանկարծ հեքիաթի աշխարհը...

Երկրորդ արարին սկիզբը յայտնուեցաւ Հերոսուհին: Ընթացիկ մտաբանէ ոսկեղօծ թելերով զարդարուած երկար պարեհօտ մը հագած էր: Երկար ու խարտեաչ մազերը՝ դեղին սաթէ ջրվէժի մը պէս՝ կ'իջնէին մինչեւ մէջքը: Ղուրբը կը կրէր իշխանուհիներու աղամանդակուս ապասօյր... Յափշտակուած ու վերացած՝ կը գիտէի այս առասպելներու պարիկը, որ կ'ազաչէր, կը յայտնէր իր սէրը, կը հառաչէր, կը հեկեկար եւ սիրտս կը հալէր, կը ճգմուէր տնոր վշտին ի տես: Կ'ուզէի նետուիլ առաջ, բարձրանալ բնժ եւ դաս մը տալ այդ անհամակրելի թագաւորին, որ գահիճը դարձած էր իր գաւկիին:

Երբ միջնարարին վարազոյրը իջաւ՝ մեծ տրտմութիւն մը զգացի, կը վախնայի, որ այլեւս պիտի չտեսնեմ զայն: Բարեկամս, սակայն, ձանձորութիւն հառաչանքներ կ'արձակէր, մէկու մը պէս, որ վայրկեան առաջ կ'ուզէր դուրս ելլել եւ շնթարկուիլ տաղտկալի տեսարանի մը:

— Դերասաններուն խաղարկութիւնը միջակէն վար է, — ըսաւ վերջապէս:

- Բայց իշխանուհին իսկապէս որ հիանալի էր:
- Հիանալի՞: Կ'ընդունիմ, որ գեղեցիկ է ու երիտասարդ, բայց ասորում չունի: Յայտնի է որ նոր սկսած է իր ասպարեզը:
- Ուրեմն դայն կը ճանչնաս:
- Գիտեմ, թէ յոյն է եւ կը կոչուի Պիստոս:

Բարեկամիս հեզնոց արտայայտութիւնները ոչ մէկ ազդեցութիւն կը գործէին հոգեկան վիճակիս վրայ եւ երբ վարազոյրը բացուեցաւ ու կրկին յայտնուեցաւ իշխանուհին՝ նոյն յափշտակութիւնը զգացի: Անոր ներկայութիւնը կարծես լոյս կը սփռէր բնժին վրայ եւ անոր արտասանած իւրաքանչիւր բառը կեանք կու տար իր շուրջը երթեւեկող անձներուն:

Իմ հոգիս փոխադրուած էր իր հոգիին մէջ եւ իր ձայնին թրթռացումները հեշտանք ու բերկրութիւն կ'արթնցնէին ներսս: Երբ աչքերը դարձնէր սրահին կողմը, կը կարծէի, որ դիւս կը տեսնէր միայն, եւ ինծի համար կը թափէր իր արցունքները: Երկվայրկեան մը իսկ չէի մտածեր բարեկամիս ըսածներուն: Ան իմ աչքիս կը զգննուէր կնոջական բոլոր կատարելութիւնները, իմ պատանեկան բոլոր երազներուս մարմնացումն էր, մարդացած ոգի մը, որուն համար միայն կը վառէին սրահին բոլոր լոյսերը, որուն վրայ կը կեդրոնանար ամբողջ սրահին սքանչացումը:

Երբ վերջին արարին վարազոյրը իջաւ, ահաւոր տխրութիւն մը պատեց էութիւնս: Հազիւ դուրս ելած՝ բաժնուեցայ բարեկամէս ու սկսայ քալել ու քալել փողոցներու մէջ եւ ծովեզերեայ ճամբաներուն վրայ: Միտոս կը



տրոփէր ուժգին: Աստուած իմ, ի՞նչ լու էր կեանքը, ի՞նչ զեղեցիկ բաներ գոյութիւն ունէին աշխարհի մէջ, որոնց պիտի ծանօթանայի կամաց-կամաց: Իսկ զեղեցկագոյն էակը տեսած էի ջիւ առջ, բեմին վրայ... Բայց երազ չէի՞ն արգեօք այս բոլորը:

Այդ օրէն ի վեր թատրոնը եղաւ միակ սփոփանքս: Ղրուշ գրուշի վրայ կը դնէի, կը գրկուէի կէսօրուան ճաշէս, որպէսդի կարենամ մուտք գործել պարիկներու այդ դղեակէն ներս:

Վերջնապէս դտած էի ասպարէզս: Պէտք է սպրէի թատրոնի աշխարհին մէջ, ըլլայի դերասան, իմ զեղեցկուհիս աւելի մօտը ըլլալու համար: Գրէի թատերադրութիւններ, ուր ան ունենար զեղեցկագոյն դերը: Այս ձեւով կրնայի ե՛ւ արթնաւստ ճարել, ե՛ւ սպրիլ հիանալի աշխարհի մը մէջ:

Բայց, աւա՛ղ, կեանքը, կեանքը ունէր տարբեր պահանջներ, եւ աղ-ջատին չէ արտօնուած նոյնիսկ հետապնդելու իր երազը: Ինչպէս ըսած էր հանճարեղ րոնաստեղծ մը, մեր մարմնին կէսը տակաւին իրած կը մնայ տիղմին մէջ: Եթէ յաջողինք իսկ այդ տիղմէն թիզ մը վեր բարձրանալ, ան-միջնապէս ճակատագրերը իր լախտի հարուածները կ'իջեցնէ մեր գլխուն, եւ մենք խոչտանդուած թռչուններու պէս՝ դիտապստ կը փռուինք զարշահոտ ցեխին մէջ:

Քանի մը ամիս անգործ մնալէ ետք, ընդառաջելով մօրս խնդրանքնե-րուն, որ ամէն օր վէճ կ'ունենար հօրս հետ, որոշեցի նեւուել կեանքի աս-պարէզին մէջ, գործի մարդ դառնալու համար:

Կը յիշեմ այն հսկայ խանը, ուր ծանօթի մը բարեխօսութեան շնորհիւ հարուակոյտ պաշտօն մը յանձնուեցաւ ինծի: Ճիշդ մուտքին կար ապակե-պատ դրասենեակը, ուր վարպետը կը բազմէր իր խոշոր գրասեղանին առ-ջեւ, աջ կողմը ունենալով պողպատէ դրամարկըր, Մամոնային անխորտա-կելի միջնարկըր:

Աւելի բեռնակիր էի, քան հաշուապահ: Հագրե սեղանին առջեւ նստած՝ յաճախօրդ մը կը ներկայանար: Վարպետս իմ կողմս կը դառնար եւ գլխով նշան մը կ'ընէր: Կ'ելլէի տեղէս ու կ'իջնէի ամբար՝ յաճախորդին տպագրանք-ները բերելու համար: Կապոց մը երկաթէ ձող, պարկ մը ածուխ, ծրար մը կերպաս... Ուսերս կը վիբուրուէին բեռան կարծրութեան տակ:

Իրիկունը կը նստէի սեղանին առջեւ եւ կ'արձանագրէի օրուան գոր-ծառնութիւնները: Շարաթ օրերը, երբ գործը վերջանար, վարպետս քովը կը կանչէր զիս ու կեղծաւոր ժպիտով մը ինծի կ'երկարէր հինգ դրուշը, որ իմ վեց օրուան աշխատավարձս էր:

Երկուշաբթի առտու մը, երբ գործի դաջի, վարպետս դեռ չէր եկած: Բացի հաշիւներու տետրակը, բայց հոն թուանշաններ արձանագրելու եռանդ չունէի: Գրպանէս հանեցի ճերմակ թուղթ մը եւ սկսայ արձանագրել զան-կիս մէջ երգող բանաստեղծութիւնը: Ա՛յնքան տարուած էի մուսայով, որ չզգայի վարպետիս մուտքը: Կանգնած գլխուս վերեւ, ան աչք մը նետեց քրտածիս վրայ ու անմիջապէս բացազանչեց.

— Ա՛հ ա՛հ ա՛հ, ծօ՛, քեզի հինգ դրուշ շարաթական կու տամ, որ-պէսդի նստիս ու պարագ բաներո՞վ զբաղիս: Սըւոր նայեցէք, տունը անօթի կը մեռնի, հագուելիք հագուեստ չունի, բարիք ըրի եւ առաջին օրէն շարա-թական վճարեցի, եւ ելիք բանաստեղծութիւն կը գրէ: Ծօ՛, անպիտան, բա-նաստեղծութիւնը փո՞ր կը կշտացնէ: Գիր-դրականութիւն ինչի՞ կը ծառա-յին: Այս վայրկեանէն սկսեալ դուն այստեղ գործ չունիս, դեմ՝ ուրիշներուն կարգայ քու լոլոներդ:

Այս գղութիին համար գործած էի մեծագոյն սրբապօծութիւնք :  
Մամոնայի մատենանին մէջ ժպրհած էի գրել աստուածներու լեզուն :  
Ուրի կանգնեցայ, ու դուքս չեյած իրեն ըսի :

— Իրաւունք ունիք, բանաստեղծութիւնք փոք չի կշտացնել, բանաստեղծութիւնք կը սպաննէ, բայց նաեւ կ'անմահացնէ : Եթէ օր մը ձեր անունը յիշուի, այդ պիտի ըլլայ շնորհիւ ինծի, շնորհիւ ձեր արհամարհած բանաստեղծութեան : Գայիք սերունդները պիտի գիտնան, որ դո՛ւք եղած էք պարզապէս շարչի մը, անսիրտ ու անհոգի արարած մը :

\*\*\*

Աստուած այնքան բարի է, որ ամէնէն թշուառներուն իսկ կու տայ երջանկութեան պահեր, որոնք աղամանդէ հատիկներու պէս կը փայլին անոնց գոյութեան մտայլ ու մութ ժապաւէնին վրայ :

Գործէն արձակուելու շատ հաճելի շքուեցաւ հօրս : Իրաւունք ունէր խեղճ մարդը : Ես ազուարտու սկսած էր ապահովել իր ընտանեկան ապրուստը : Սկսած էր տարիքը առնել, գործերը լաւ չէին ընթանար : Մայրս կը ջանար պայծառացնել միջնորդը, կ'առարկէր իմ առողջական վիճակս : Ես ալ ամէն աստու կ'իջնէի Պոլիս գործ փնտրելու համար : Եթէ դրամ չունենայի կը թափառէի Սկիւտարի փողոցներուն մէջ :

Մեր տունէն ոչ շատ հեռու կար պարտէզով շրջապատուած բնակարան մը : Հոն կ'ապրէր իմ հրեշտակ : Հազիւ տասնութից տարեկան էր Եռչան, երբ ճանչցայ զինք : Ատեն մը դասընկերներ ալ եղանք, ոչ թէ նոյն դպրոցին մէջ, այլ ճեմարանի բարձրագոյն կարգ մը դասընթացներուն : Յաճախ միասին առած էինք շոգենաւր : Նորր եւ զգայուն, երկար սեւ մազերով եւ սեւ ուղեքրով եւ աշակատիւ մորթով ազնիւ մըն էր :

Երբեմն կը տեսնէի զայն իրենց տան սեմին, աւելի յաճախ՝ իրենց պարտէզին մէջ : Միշտ ձեռքը ունէր դիրք մը : Երբ քայլերս լսէր, դուրսը վեր կ'առնէր, այտերը քիչ մը կը կարծրէին ու երկշոտ ժպետով մը կը պատասխանէր իմ բարեկիս : Օր մը, մօտենալով ցանկապատին, ինծի երկարած էր իր քաղած ծաղիկներէն մէկը, ճերմակ շուշան մը : Ծաղիկներու մէջ անմեղ եւ երազային ծաղիկ մը : Վարդերու եւ շուշաններու բոյրով սնուեց կ'առնէր իմ ծաղիկս, ի՞մ Եռչանս :

Ձինք տեսնելուս պէս կը մոռնայի իմ տաղտուկներս եւ հոգերս ու նոր եռանդով մը կը նետուի առաջ, նուաճելու համար հարստութիւն ու փառք : Եւ գիշերները սեղանիս առջեւ վերջիչելով անոր աչքերուն լոյսը եւ զէմքին շաղցր ժպետը՝ կը յորինէի բանաստեղծութիւններ :

Արդեօք Լա՛կ մ'ես թէ երկնի գուարթուն,  
Կը նախանձին փայլիդ վերայ վարդ, լուսնակ .  
Չայնիկդ ապշած լոսելով քաղցր ու բքթում՝  
Նոսիներու մէջ կ'սրգայ լռելի լուսիննակ :

Պարտեզդ իցի՛ւ թէ փքթի վարդ լացող,  
Եւ երբ գայիք այգուն շաղիմ ժպտով պերմ՝  
Գոյնով ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող,  
Վերջին շնչիկս ի գիրկդ առնէր ելուէջ :

Ի՛նչ խանդով, ի՛նչ անմեղութեամբ կը սիրէինք զիրար, կը սիրէինք ա՛յնքան, որ, ի վերջոյ, նախանձը զրգուեցինք չար աստուածներուն : Աստու

մը, բայց ինչպէ՞ս առտու կոչել այդ ժամը, որ իր ետին կը պահէր խաւարակուռ եղելութիւն մը. առտու մը նորէն հասայ դրախախտ ցանկապատին առջեւ եւ ի՞նչ տեսնեմ. դրան առջեւ հաւաքուած էին սեւեր հազած մարդիկ: Ներսէն կը լսուէին լացի ու կոծի աղաղակներ եւ խունկի մահահոտ գոտախներ կը սպրդէին պատուհանէն դուրս: Շուշանը, ծագիկս, հոգիս, աչքիս յոյսը մեռած էր: Երկար մնացի անշարժ. չհաստատով պատահածին, յետոյ խենթի մը պէս սկսայ վազել դէպի ծով, ու կանգ առի այդ բարձր ապաստոյթին վրայ, ուր սովորութիւն ունէի նստելու մայրամուտին: Ճիշդ ոտքերուս տակ, ծովը ինծի կը կարգար իր նենդ հրակէրը: Արիքները կու դային լիզել եզերքին ժայռերը ու կը շոյէին աւար յապեցած պերճադիճներու պէս: Պէտք է ես ալ մեռնէի՝ Շուշանին միանալու համար. պէտք է միասին ներկայանայինք Աստուծոյ գահին առջեւ: Կը բաւէր պզտիկ ոստում մը ընել ու մնացեալը ձգել կոհակներուն: Դիակս չէր կորուսեր: Ծովը ուչ կամ կանուխ հոգին կը վերադարձնէ իր զոհերը:

Բայց այդ ոստումը չըրի. ո՛չ թէ որովհետեւ քաջութիւն չունէի, այլ որովհետեւ ձայն մը ինծի կ'ըսէր, որ անպարելու պէտք չկար, եւ թէ՛ շուտով ես ալ պիտի ունենայի նոյն ճակատագիրը:

\*\*

Օրեր առանձնացայ անտառներուն մէջ ու լացի, լացի: Միակ միւրթաութիւնս այցելել էր Շուշանիս շիրիմը, որ տակաւին հողակոյս մըն էր:

Ունէի ես երբեմն առատ  
 Վարդեր, առատ ոստղեր նայնպէս,  
 Ճակատագիրս սեւ տեսաւ շա՛տ,  
 Փրցուց քաղեց գ'անոնք սըրտուս:

Ունէի ես իմ սիրուիմ,  
 Որոյ քէպէտ աչքն էիմ սեւ,  
 Սակայն սրգալ չը գիտէիմ...  
 Հրեշտակ մ'էր նէ, երեշտակ անթեւ:

Սեւ երագ մը օր մը դողողոջ  
 Մըզեց գ'իս սեւ փռսի մ'առջիմ,  
 Ուր քար կըտրած՝ սիրտ ի քընդոջ՝  
 Դագաղի մ'աչքս յառած էիմ:

Եւ լըսեցի յայնժամ՝ թի թի,  
 Սեւ սեւ հողեր կոշտ քընդեցիմ.  
 Տըխուր քաղիմ վըրայ փայտի...  
 Դըժոխք մ'անէծք այն սեւ օրիմ:

\*\*

Կեսնքի յորձանքը զիս կրկին առաւ իր մէջ: Մոռնալու համար վիշտս, դիմեցի Ակիւտարի թատրոնին տնօրէնին եւ իրեն ներկայացուցի «Արտաշէս Ա. Աշխարհակալ» պատմական ողբերգութիւնը, զոր վերջերս յօրինած էի:

Հունեցաւ եւ անմիջապէս անցաւ զործի եւ ինծի ալ դեր մը տուաւ: Այսպէս-  
 ոով կ'իրականանար իմ երազներէս մէկը, դառնալ դերասան եւ թատերա-  
 դիր: Փիէսին ներկայացումը շատ յաջող անցաւ եւ ստացայ աներեւակայնի  
 վարձատրութիւն մը՝ 15 ոսկի: Անմիջապէս շուկայ իջայ եւ իմ խեղճ եզ-  
 րայրներու եւ քոյրերու համար գնեցի նուէրներ: Մէկուն ձեռք մը հա-  
 գուտ, միւսին զոյգ մը կօշիկ: Երբ տուն վերադարձայ, ի՞նչ Հարստու-  
 թիւն, ի՞նչ ուրախութիւն: Մայրս զիս կը համբուէր ու կուլար, պզտիկնե-  
 րը կը նետուէին վրիս...:

Տրամադրութիւնս շատ բարձր էր: Գիշերները մինչեւ այգարաց, տկար  
 մտքի մը լոյսին տակ, կը գրէի կամ կը թարգմանէի նոր փիէսներ:

Բայց յուսախարութիւնը վրաս խուժեց երկինքէն թաւալող ձիւնակոյ-  
 տի մը պէս: Թատրոնի աշխարհը ան շէք՝ ինչ որ կը կարծէի միաժողովէն,  
 Ամէնէն պզտիկ յաջողութիւնը նախանձը կը զրգուէր իմ զործակիցներու: Ա-  
 մէն օր՝ վէճ ու կռիւ, ամէն օր՝ նուաստացում: Վատութիւնը եւ նենդու-  
 թիւնը պայքարի առօրեայ գէնքերն էին:

Բարեբախտաբար, այս դժուարին մէջ կ'ապրէր այն դերասանուհին, ո-  
 բուն հմայքը զիս առինքնած էր առաջին օրէն իսկ: Անոր ներկայութիւնը  
 թարմ ու մաքուր շունչ մը կը սփռէր այս ապականած օդին մէջ: Զգալով  
 իմ գէժս մղուած պայքարը եւ լարուած դաւադրութիւնը, զիս առած էր իր  
 պաշտպանութեան տակ. դարձած էր իմ պահապան հրեշտակը:

Գիտեի՞ս, Գիտեի՞ս, Հելլատայի խարտեաչ աղջիկ: Ինձին վրայ, երբ  
 կը մարմնաւորէիր Օֆելիան կամ Մարկըրիթ Կօթիէն, սիրտս խենթ թռչու-  
 նի մը պէս կը դառնար էութեանդ շուրջը: Ինծի համար եղար քոյր մը, պաշտ-  
 պանելով զիս այս վատերու վոհմանէն դէմ: Գիտէիք, որ հիւանդ եմ, կը  
 գթայիք, կը գուրգուրայիք վրաս: Ես կը յուսայի աւելին: Ո՞վ կ'նսջական  
 սրտի անհասկնալի խորհուրդ, որ կը փայփայէ, կը ժպտի, բայց կը սիրէ իր  
 ուղած ձեւով: Որքա՞ն գեղեցիկ, որքա՞ն քմայքոտ եւ սրքա՞ն անդուք եղաւ  
 քու բարի սիրտդ: Երբ առանձին էինք կ'աղաչէի, կը պազատէի. «Սիրէ՛ զիս,  
 նոյնիսկ եթէ հիւանդոտ ու տկար եմ, սիրէ՛, որպէսզի ապրիմ»: Դուն խոր-  
 հրդաւոր ժպտով մը կը ժպտէիր միայն, ո՞վ սիրուհիս, եւ զիս կը պարու-  
 րէի կանաչ աչքերուդ խորհրդաւոր նայուածքովը, ուր սէրը կը տարածուէր  
 ովկիանոսի պէս, սէր մը, որ կ'ուզէի ըմպել ցմբուր, մինչ դուն միայն կա-  
 թիլներ կը հրամցնէիր ինծի:

Անունդ Հոյովեցի գիշերներու անքնութեան մէջ, եւ զայն պոռացի ծո-  
 վափներուն վրայ, դողդողացնելով անասան ժայռերը: Մողիկները կ'ար-  
 տաբերէին քու բոյրդ, եւ լճակի հայելին մէջ, գեղեցկութիւնդ կը պատկե-  
 րանար յաւերժական նկարի մը պէս,

Երբ առուակիմ մէջ փաղփուց  
 Կուգեմ մռռնալ դէմքդ, դուն  
 Դարձեալ ես կը գտնեմ գիս  
 Ալիսերէ՛ն կը ժպտիս:

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝  
 Զախշախել սիրտս եւ քընար,  
 Հովիմ մէջէն միշտ մնչես՝  
 Թէ բնաւ զիս սիրած չես:

\*\*

Գարնան գեղեցիկ օր մըն էր, ճիշդ այդ պահուն, երբ բնութիւնը կը վերածնի ու կը զարգարուի, կուրծքիս տակ զգացի ահաւոր հրէշին, հիւժախտին առաջին խլրտումը: Մարմինս կը հալէր, ուժեքս կը լքէին զիս: Այլեւս տունէն դուրս ելլելու կարողութիւն չունէի: Երբ ամառը անցաւ ու աշունը յայտնուեցաւ իր մերսմաղճոտ ժպիտով, թափուող տերեւներուն հետ ես ալ ինկայ դեռտին: Անկողնէս դուրս գալ անկարելի եղաւ: Եւ արշաւող մահուան սէզմ մաքառելու համար ձեռք առի զրիչս ու սկսայ յօրինել տխուր երգեր, որոչքսդի ինձէ գոնէ բան մը մնայ, յիշատակ մը:

Միայն երեւակայութիւնս էր, որ զիս կը կապէր կեանքին, աւելի ճիշդը՝ անցեալին: Կը թափառէի դաշտերուն մէջ, անտառներու ծառերուն տակ, բայց կը խրոչէի ամայութենէն: Կանգ կ'առնէի Շուշանիս դերեղմանին մօտ, կը հանդիպէի թրքուհիին՝ բնկողմանած իր կառքի մետաքսեայ բազմոցներուն մէջ եւ կը դմայէի Պիստիսի վրայ՝ պարուբուած իր իշխանուհիի զգեստներուն մէջ...

Երա՛գ, այս բոլորը երազներ էին: Միակ իրականութիւնը կուրծքիս տակ պտուկող այդ ճիւղին էր, որ կը կրծէր թօքերս եւ ոռկորի կը վերածէր մարմինս:

«Ա՛, կուրծքիս տակ հրաբուխ բռնկած է, կրակներ կ'եռան ու կ'այրեն զիս. այս կրակը երկինքի կրակին նման է, որ չի մարիւր եւ պիտի չմարի մինչև որ չսպառէ ամէն ինչ:

«Այո՛, ալ հիմա հաւատացի, թէ կը ծիրիմ եղեր. գիտեմ, թէ ալ շատ պիտի շարժիմ: Ահա երիտասարդ մը, որ եկած է աշխարհ՝ միայն իր մահն ու թշուառութիւնը տեսնելու եւ զգալու համար: Կարծես թէ գերեզմանին մէջէն կը խօսիմ, այ մարդ մանելու վրայ եղող ճառագայթ մ'եմ... Բանաստեղծ չեմ, բայց բանաստեղծութիւնը կը սիրեմ... ես որ աշխարհի վրայ միայն երգերը շատ սիրեցի, կ'ուզեմ, որ իմ վերջին շունչս ալ երգ մ'ըլլայ:

«Կարապի ալ վերջին շունչին հետ իր է՛ն ներդաշնակաւոր ճիշդ կ'արտասանէ, կ'ըսեն, թող ես ալ կարապին սէս անցած ըլլամ աշխարհէս: Ով որ երգ չունի կամ երգել չի գիտեր՝ զգալու ներդաշնակութեան, գեղեցիկին եւ սիրունին իտէականը շօշափելու քաղցրութիւնը չունի:

«Մարդուն նշանաբանը երգն է. էն առաջին ձայնը երգն է, բնութիւնն ամբողջ երգ մ'է:

Երիտասարդ ըլլալ եւ երգել,  
Ծեր ըլլալ եւ աղօթել:  
Ա՛յս է կեանքը:

«Ա՛հ, գեղեցիկ կեանք մ'ալ կայ, սէրով է այդ. «Նրգել, աղօթել եւ սիրել. «Ա՛հ, ի՞նչ քանաստեղծական կեանք, ի՞նչ կատարեալ կեանք:

«Կ'աղաչեմ ու կը փափաքեմ, որ նախախնամութիւնը պահ մը հրաման տայ, որ մահն ու կեանքը զինադուլ ընեն... Ի՞նչ սրտայոյզ բողբոջներ, այդ անկողնումը շանթի եւ ծաղկի աջակցում մ'է:

«Այս ցասումներն անշուշտ պիտի մոռցուին, զի գերեզմանէն անդին, բարկութենէն անդին ամէն ինչ ներողութիւն է: Ներեմք ու ներուինք:

«Ահա ես կ'իջնեմ կամ մօտ եմ իջնելու այն սեւ յատակ անդունդին մէջ, որոյ անունը գերեզման կ'ըսեն: Արդեօք ի՞նչ պիտի ըսեն ինձ գերեզմանէն

անդին «Անա թշուառ երիտասարդ մը, որ աշխարհ եկաւ, եւ միայն իր մեռնիլն զգաց ու մեռաւ»:

Մա՛րդ դարձած է անբաժան Հոմանուհիս եւ փարած է մարմնիս տղբուկի մը պէս: Մա՛րդ, որուն թագաւորութեան մուտքը այնքան ահաւոր ու մըռուսլ է, որ սարսուռ կը պատճառէ ամէնէն քաջ անձներուն իսկ: Մա՛րդ, սահայն, որ փրկութեան միակ ճամբան է, այդ անդենականի դռնապանուհին, որ թեւերը բացած կը մօտենայ ինձի:

Մա՛րդ, խաղաղութի՛ւն, անդենակա՛ն, Հանդերձեալ կեա՛նք, ուր Աստուած ինձի կը վերապահէ:

Կեանք մ'անհաւն շողի, բոյրի, ազօթֆի:

Բայց ի՛նչ պիտի ըլլայ իմ ճակատագիրս այս աշխարհիս մէջ.

Եթէ տմգոյն մահու հրեշտակ  
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,  
Շօգիանան ցաւքս ու եոզիս,  
Գիտցէ՛ք որ դեռ կեանքանի եմ...

Իսկ աննըշան եթէ մրնայ  
Երկրի մէկ խորշն հազակոյտն իմ,  
Եւ յիշատակս ալ բառամի,  
Ա՛հ, այն ատեն ես կը մեռնի՛մ:

Ատիկա պիտի ըլլար սակայն մեծագոյն անարդարութիւնը: Ես վստահ եմ, որ բանաստեղծութիւնը, որ պահանջկոտ, նախանձոտ եւ վեհ Հոմանուհի մըն է, եւ որուն հետ կենակցելու համար հրաժարեցայ աշխարհի բոլոր հանոյքներէն, չի դաւաճաներ եւ ինձի կու տայ զոնէ համեստ տեղ մը անմահունքու պանթէոնին մէջ. որովհետեւ.

Աստղ մ՛ալ ես կ'երբքամ յաւելուլ երկնից...

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԵՈՒՏԵԱՆ

Յունուար 1972



**ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆԻՆ**

Շիրմաբարեր են տերեւներն աշնան,  
Տերեւներն աշնան մի ոտնահարէք-  
Նրանց տակ գարնան ծաղկունքն է թաղուած,  
Ինչպէս անաւարտ բանաստեղծի կեանք:

Օ՛, մի հրդեհէք տերեւներն աշնան,  
Կմախքը նրանց փոշի է դեղին...  
Արեւի ջանքն են... մորմոքը հողի,  
Մեռնող երգեր են տերեւներն աշնան...

ԳԷՈՐԳ ԽԱԶԱՏՐԵԱՆ

**ԳՈՒՐԵԱՆԻ ՄԱՀԸ**

Ցաւն էր տանջում նրա կուրծքը ուժասպառ,  
Իսկ իր հոգին՝ կեանքի տենչը բացավառ,  
Վերջին անգամ հայ բանաստեղծ պատանին  
Թափառում էր մտքով երկրում հայրենի:  
Նա տեսնում էր մտքով դաշտեր կանաչ, գեղեցիկ,  
Գարնանային նախօրոք հաւքեր երգեցիկ,  
Եւ սիրածն իր՝ դէմքին ժրպիտ երկնային՝  
Թուխ վարսերը տուած բնօրէն հովերին:  
Նա տարաբայտ իր Հայրենիքն էր տեսնում,  
Որը կեանք ու փրկութիւն էր երագում  
Եւ տեսիլներ տրտում ու վառ, դիւթակա՞ն  
Փուռում էին նրա առջեւ անսահման:  
Արտասովոր ուժով նրանք միշտ անյազ  
Զգում էին մահամերձին դէպի կեանք,  
Որը վերջին շնչում սիրոյ հուր դառած  
Վառում էր դեռ իր նոր տաղով յօրինած:  
Եւ կախարդուած պատկերներից անանուն՝  
Բանաստեղծը երգելով էր մահանում:

ՅԱԿԱՆ ՇՈՂԵՆՑ

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Նա ծնունդ արհեստաւորի՝ երկաթագործի ընտանիքում: Կարիքն ու թշուառութիւնը խեղդեցին նրան: Հազիւ ապրեց քսան տարի, ու գնաց՝ դեռ օրը չեղած իրիկուն:

Դուրեանը այնքան բնական էր, որ չգիտակցեց անգամ, թէ ինքը բանաստեղծ է. «Թէեւ բանաստեղծութիւնը շատ կը սիրեմ, բայց բանաստեղծ չեմ», — թոթովեց նա իր նամակներից մէկում:

Սակայն Դուրեանը բանաստեղծութիւնն իսկ էր՝ ինքնաբոյս, սրտառուչ, տարերային, քննաւոր, ինչպէս «սիրոյ առաջին արցունքը կոյսին», խոովայոյզ, ինչպէս, երբ գիշերուայ մէջ մտնում են «կայծակնաբեւ նոճիները»:

Իր ժամանակի համբաւաւոր մեծերը չհասկացան նրան, եւ նա մնաց անօգնական՝ յատակում թափցրած իր «փրփուրները»:

Բնական, պարզ ու անեղծ պատանին երբեք արտասովոր, առանձնաշատուկ ձեւեր չտուեց իրեն, այլ միայն դիտեց, նայեց իր շուրջը եւ լռեց, քանի որ «անհուն էր»:

Աշխարհը, իր բովանդակ գեղեցկութեամբ, խուժել էր նրա հոգու մէջ, եւ նա բոցավառուեց ու միաց:

Սիրուց, կեանքի այրող կարօտից սիրտը լցուած էր արդէն, երբ վրայ հասաւ անտոբ հիւանդութիւնը: Դուրեանն ընկաւ անկողին: Տառտպանքը մրճահարեց նրա դուռը. վերահաս մահուան ուրուականը սաւառնեց նրա գլխովերեսում: Օրէցօր սաստկացող հիւանդութիւնը աւելի եւս սրեց նրա զգայնութիւնը: Նա ամէն ինչ տեսաւ ու զգաց կրկնակի ուժով: Բնութիւնը նրան երեսաց բոցավառ գեղեցկութեամբ: Հիւանդ Դուրեանը սիրուց, գաւից, կեանքի այրող կարօտից մոռցաց, երբեմն թախծեց, երբեմն բողոքեց ու ծառայեց, եւ այսպէս, տարերայնօրէն, կեանքի ներքին մզումով, երաբխային ժայթքով ծնունդին իր բանաստեղծութիւնները՝ բնական, պարզ ու անբռնագրօս, ինչպէս ինքն էր:

Հրաշքը կատարուած էր արդէն. իրեն բանաստեղծ չհաւարող Դուրեանը հասել էր իսկական, գերագոյն բանաստեղծութեան: Հեռանալով կեանքի ընկալման գրգային բոլոր նուիրա-



գործուած ձեւերից, նա հասել էր կեանքի նշմարութեան՝ մերկ ու անսխալ, նայնիսկ սովորական, բայց կենդանի, մտերիմ, հարազատ ՝ Տառապանքի մատնահարումով՝ բովանդակ աշխարհը Դուրեանի հոգում անդրադարձուել էր որպէս մի միասնական տեսիլք, որ մարդու եւ նրան շրջապատող հրաշալի իրականութեան փոխադարձ կապի եւ պայմանադրութեան զգացողութիւնը վեր էր ածուել երգի, որ հնչեցում էր կեանքի ու մահուան միջեւ սրտագրաւ, կենդանի ու թրթռուն, կուսական, անխարդախ հոգու բոլոր արտափայլումներով: Դուրեանը համոզում էր իր նշմարտացիութեամբ, գերում էր ու կախարդում: Նա վերացրել էր գրական հմարանքը՝ այն փոխարինելով կենդանի բնութեան շնչառութեամբ: Պատկերները նոր էին ու անսովոր, հայադրոշմ, առհաւական: Լեզուն հնչեղ էր, սահուն ու երաժշտական, բառերը՝ արեւի հատիկների պէս կիզիչ, անցուցամուլ, բայց նշգրիտ, տեղին, անփոխարինելի: Չափի զգացումը անխալական էր, քերթուածի աւարտուածութիւնը՝ բնական: Քսանամեայ հաննաւորեղ պատանին վերանորոգել էր մեր բանաստեղծական երեւակայութիւնը, կենդանացրել էր մեր լեզուն՝ նրան վերադարձնելով իր ներգոր կրակը: Դուրեանը նորարար էր բառի ամենալայն առումով: Առաջին իսկ օրից դասական՝ նա ուներ իր անյեղի կնիքը, ազգային վաւերականութիւնը:

Դուրեանը չէր կրկնում ոչ մէկին, գալիս էր դարերից՝ իր հետ բերելով մեր ժողովրդի հոգեբանութիւնն ու նկարագիրը, նրա աշխարհընկալման իւրայատուկ ձեւը՝ պարզ ու պայծառ, զուսպ, առաքինի, խրոխտ ու առնական, արեւային: Իրենով պայմանադրուած, իրենով ամբողջացած նա մի ուրոյն աշխարհ էր՝ կախարդուած կուսական հոգու բոլոր բռնկումներով, ճիչ ու հառաչանքով, հակընդդէմ ալիքների մշտնջենական բախմամբ, երբեմն թախծոտ ու վշտահար, երբեմն վայրագ ու կատաղի, բայց միշտ կուսական: Տառապանքով ազնուացած, սիրով սանձահար՝ նա մեր հեթանոս ոգու հրաբխային ժայթքն է, մեր բանաստեղծութեան Ջուարթնոցը:

ԳՐԻԳՈՐ ԳԻԻԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Պետրոս Դուրեան պոետի է, Սկիւտար ծնած: Կանխահա եւ վաղածետիկ քնարեր-  
զակ, որուն հանճարը մամոնակ ունեցած չէ յամբաստան տաղանդի մը ինամճին շնորհիւ  
կատարելագործուելու:

Իր տարիքն ու հիւանդութեան ցուերն են, որ կը կազմեն իր ներշնչութեանը ընդ-  
հանրագէտ: Սէրն ու մահը իր գլխաւոր մտադրադումներն են:

Յուսերութիւն յիւնցեող այս երկու նիւթերը՝ արժանի ճշմարիտ բանաստեղծի մը  
հոգուն՝ լքանդի բանաստեղծութիւնը ճշդիւ այն յուզումն է, որ կու գայ անմահութեան քաղ-  
ձանքին կամ դաղափորին՝ սէրն ու մահը իրենց հրեղէն կամ մռայլ երանդները տուած են  
Դուրեանի տոչերուն, որոնց յատկանիւնները կը ձեւացնեն, եւ երիտասարդ՝ զրեթէ պատանի  
հիւանդը չէ կրցած ըլլալ այնքան մեծ արուեստագէտ, որքան եղած է մեծ զգացումով՝ կա-  
րենալու համար կատարեալ զործ մը արտադրել:

Լեզուական անկանոնութիւններ, մասնութեան հապաղութիւններ, ոչ կատարեալ տո-  
ղերու մեծ թիւ մը, պոստո, ուսուցիկ արտայայտութիւններ գլխաւոր թերութիւններն են իր  
քերթուածագրութեան: Ինչ-ինչ տողերու մեւը՝ մանկական ըլլալու տեղ՝ եղած է տղայա-  
կան. հաւանականաբար մտքի ճաշակի, լրջութեան պակաս մը կայ այս երիտասարդին մէջ  
եւ ճշմարիտ աստապակին է, որ միայն կը լրջացնէ զինքը:

Բայց ոչ ոք եղած է իրեն պէս օտեսալ երիտասարդ քերթող մեր մէջ, ոչ ոք  
եղած է անոր պէս հիացիկ, հառաչողին, արտասուողին, խոտով, տառապալից, ոչ ոք անոր  
պէս ուժգին: Իր բանաստեղծական աւելնը մեծ է, բայց հանդերձեալ հաւատքը, անմահու-  
թեան սուղութիւնը կը պակսի իրեն, ուստի իր բանաստեղծութիւնն ալ շատ վեճ չէ: Փա-  
ռասերութիւնը կը թուի փոխանակել իր մէջ անմահութեան համոզումը եւ այս պակասը կ'ը-  
րեւի զոյացած ըլլալ իր ինչ-ինչ բարեկամներու նիւթապալտ դաղափորներու հազորդակցու-  
թենն:

Իր աւելնը՝ լիռիւն եւ համեմատաբար լուս արտայայտուած կը տեսնուի իր քանի  
մը քերթուածներուն մէջ: «Սիւ սիւ», «Լմակ», «Նև», «Տրտումիք», եւ այլն: Իր դեղեկագոյնի  
գործերն են «Թրքուիին» եւ «Ջզլումը»:

Թառերգութիւնները եղբրական ճաշակ մը կը մտնեն եւ ըստ քմաց երեւակայնուած  
իշխանութիւններ: Նկարագրները ոչ մէկ հարազատութիւն ունին:

Նամակներու լեզուն չափազանց ուսուցիկ է եւ տեղ-տեղ անբնաստ: Նամակագրու-  
թեան պարզութիւնը շարալուր կորսուած է անոնց մէջ եւ թախտագին փառասերութիւն մը  
միայն կը տիրէ հոն:

Դուրեան համակրելի անուն մըն է, միշտ սիրահար ու հիւանդ եւ հանճարեղ պա-  
տանիին նկատմամբ ազգը պահած է միշտ համակիր վերաբերում: Ծղած են բանաստեղծներ,  
որ ազգուած են իր աւիւնուս եւ արտասուողին կերպերէն, առանց ունենալու իր քրեթէ ան-  
նախընթաց անմահականութիւնը, իր նոր ու յանդուգն բանաստեղծի արժանիքը:

Երիտասարդները կը սիրեն Դուրեանը, իսկ չափահասները կը մեղքանան չէջ բա-  
նաստեղծին վրայ:

ՏՈՒՆ ՋՐԱՔԵԱՆ

Յ. ԶՈՐԵՑԻ

ԹԱՌԵԱԻ ԵՐԳԻՆ...

Պետրոս Զրմպայեան :  
Երկաթագործի առ ծնաւ որդի :  
Մնաւ քանջար, ծնաւ քերթող կամ  
քերթողացու :

Ու վաղ գարնանային կենացը մէջ,  
ու սիրոյ ծաղկունքի փթթումի հանգր-  
ւանին, տասներե՛ք տարեկանին, երբ  
հանճար շնածնեբը քար կը նետեն ա-  
պակիին, թաղարներուն, դեռ կրակիմ  
հետ կը խաղան, ինք՝ իր մուսան ողջու-  
նելով, առաքինւոյն գեղեցկիմ սիրովն  
անշէջ վառեց սիրտը, սրտին սէրը, չէր  
բնաւ գին միտքն ու հողին ձօնեց սիրոյն,  
դարձաւ Դուրեան, քանաւ բանաստեղծ,  
քանաւ յիսկիւտար, իբրեւ թախտա-  
նուշ, դեզածայն քնարերգակ, քրթուակ  
սոխակ :

Սակայն, շաղի, շաղի այդ կարճատեւ  
չբջանին, երբ սոխակին սիրտը հեծծիւնք  
չունէր դեռ, չէին գողգողեր կուրծքը,  
կեանքը եւ հողին, ոչ Լսքամայի կա-  
պոյտ գօտւոյն գեղեցկութիւնը, ոչ Պաղ-  
լարպաշիի զառիվերը, ոչ ալ Զամլճայի  
գուարթ բարձունքները կրցան դիւթել  
գայլայրդի իր հուժիւնը...

Իցի՛ւ քէ երկար ըլլային հոգւոյն  
քաղաւի չուգած, ահոր մէկ կայծիմ,  
խօսքին մէկ վանկիմ գերի չգարձած իր

այդ ազուրդ օրերը, ուր, լուսիկ, կուսիկ  
դեղուհիին — անգո՛ւթ Պիտոսին —  
չղթաներէն ձերբազատ, սկիւտարցի բա-  
նաստեղծը, առ հայրենիք իղձերով աս-  
դորուն, սոխակն էր սոսկ Հայաստանի...

Երգեց մայր երկիրը չմոռնալ,  
Այլ սեւ ճոճի մ'ըլլալ,  
Եւ իրն շուք տալ...

Չմոռնալ նաեւ Ազատութիւնը, չմոռ-  
նալ երբեք, այլ յուերժօրէն շանթանալ,  
Անշէջ հօտը մ'ըլլալ  
Ու գայն հայուն տալ...

Հայաստանի կամ հայրենասիրու-  
թեան սոխակը երգեց ուրիշ Լրդեր եւս-  
երգեց սիրելի գ'միւմնանս, գողքը հիւսեց՝  
գայն Պատգամողին սիրոյն Մասեաց շու-  
քերուն տակ մեռնիլ ուգած, մարտիրո-  
սացած Մամիկոնեանին, եւ հաւատ,  
յոյս, սէր սորվիլ ուզող մանուկին, ու

սխալ  
արեւ  
Եւ քարաքել,  
փառանախանչ,  
վսեմ  
խաչիմ,  
Երգեր տածեց վեհ Թրիմեան Հայրի-  
կին կամ Վարդգայ արծիւին

յար ազատ,  
հարազատ :

Յետոյ ուզեց լուռ մեմամալ, ուզեց սիրելի կայծերն երկնի կապուտ, ու բնութեան, բանի մասին, փառքի մասին խօսել, սուգուիլ, գմայլիլ սուտ, բայց չկրցաւ, գարունն անցաւ, աշնան մէջ էր, երեկոյ մը, վերադարձին յիւսկիւտար, նաւուն վրայ, երբ լրագիր կը կարդար, հայրուհի մը անցաւ մօտէն, նստաւ իր դէմ...

Միտուն էր նէ, ունէր աչքեր մեծագեղ, քաղցր շուրթեր. համակ չո՞ղ էր...

Ահա ճիշդ այդ բողբոջն. նրանէ՛ Բայլ մը նայումս՝ փունջ մը ժպիտ՝ ֆուրայ մը խօսք դիւթեց իր սիրտ...

Դիւթանքին խոցերը սրտէն անցան քնարին, դարձան սիրոյ ցաւ, արտօսւի երգեր, տագնապի վէրքեր, սանջեցին հոգին, ուր այլեւս երդե՛հ կար, ո՛չ մատնան. կար մը՛ւր, մոյսի՛ր, յիշատակ հրդեհին տակ...

Տեսնել չուզեցին ու չտեսան հրդեհը, չտեսան մրուրը, չտեսան մոխիրը, չտեսան ու չըսին.

— Հէ՛՛ք տղայ Արդեօք ինչո՞ւ կը մխայ... Թերեւս բլլայ գեղանի...  
 Զըսին — սիրեմ, չմեռնի՛...

Այլ՝  
 — Կը դողդոջե՛, տժգոյն է, տժգո՛յն — ըսաւ նէ,  
 — «Գնալոց է» — ըսին նոքա, եւ սպ-

չած լճակի եզրին դի՛նք լքեցին, որ յուսահատ նայի հալւոյն, դառնայ հատայ, հիւծի, հալի՛...

Երգիչն էր ան Հայաստանի, դարձաւ երգիչ Սկիւտարի, արհամարհուած սիրոյ ցաւի ու պապակի՛...

Պաշտեց զ՛նէ, Մերժուեցաւ, տառապեցաւ, հիւանդացաւ, զսե՛ւ, սե՛ւ» երգելով կա՛յծ ուզեց սրտանց, կրակի մի կաթի՛լ... ուզեց սիրելի դեռ, լ՛սալրիլ ու ապրի՛լ...

Ուզե՛ց, ուզե՛ց: Նեկ չտուա՛ւ, նէ մերժե՛ց: Ինք պէտք չէ սիրէր, պէտք չէ ապրէր, պէտք է մեկնէր, գեղեցկին փոխարէն պէտք է գրկէր ցուրտ շիրի՛մ...

Ու տխրութեամբ ու արտունջբով՝  
 — Է՛հ, մնա՛ք բարով — երգեց ստիակը  
 — Աստուած սխբիմ... մնաք բարով արեւ, մնաք բարով կեանք ու քնար...  
 Կոյսին տեղ, լա՛ց, էա՛ր, ճակատս ճրանմ, Համգչեցնեմ, Մաշոզ  
 Հոզ:

Հո՞ղ...  
 Ու չորս պտուղ, չորս եղբայրներն, ստիակն ինկաւ անոր վրայ, Թո՛հաւ հոգին բանաստեղծին, յիշատակը Թո՛հաւ երգին...

Յ. ՁՈՐԵՑԻ

**ԹՐԲՈՒՀԻՆ**

Երեկոյ է. բացավառ է հորիզոն.  
Կառձ մը կ'անցնի դագաղի պէս յամբընքաց,  
Գեղուսի մը ընկողմանած տրոփէ հոն,  
Վերջապոյսի աղջիկ մ'է սա, ա՛վ Աստուած.  
Եթէ նայի,

Կ'ըսես — հի՛մա կը մարի»:

Մեղքաւումէ անդրիանդի մ'է հանգոյն.  
Ի՞նչ դպկահար... կարծես հաջազը վառէ  
Պատան մ'է նուրբ ներս վարդիցը տժգոյն.  
Աստուած ըզմէ գոյց մ'աշերտվն կը վառէ-  
Եթէ ծըպտի,

Կ'ըսես — ա՛հ, հի՛մա կ'անցնի»:

Նայիլ կ'ուզէ, բայց ա՛ւելի կ'ներազի,  
Սիրտը խուսկի պէս կը մըլթա՛յ սիրավառ,  
Նէ շողերաւ, բայրերու է թագուսի,  
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ թառ.  
Եթէ շարժի,

Կ'ըսես — հի՛մա կը թռչի»:

Լանջն է յուզեալ Ովկէանի մը ճըման.  
Կ'ուզէ սիրել... համբոյրի մ'հետ նուազիլ,  
Մաշիլ, խամբիլ, խոնջած ընկնիլ գերեզման,  
Քամել սիրոյ կրակէ բաժնիկն հաւսկ կաթիլ.  
Եթէ շիկնի,

Կ'ըսես — հի՛մա կը թորնկի»:

Սրտի մեղա՛ւ, ինչպէս կոչեց Լամարթիմ,  
Որուն ծըծած ծագիկը՝ սիրտ, մեղրն է սէր,  
Ես կ'աշեմ ըզմէ կո՛յս, արուն սիրտն է երկին  
Անհուն սիրոյ, որ հարիզոն չ'ունի դեռ.  
Եթէ խօսի,

Կ'ըսես — հի՛մա կը հատնի»:

Նէ կը վառի, մի՛շտ կը վառի, չը հասնիր  
Տրնանկ կնոջ տանարն վառած ճրագին պէս,  
Աստղերու մնան գիշեր սիրէ՝ փողփողի՛լ,  
Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բացագէս...  
Թէ իսկ մեռնի,

Կ'ըսես — հի՛մա կը ծընի»:

Անգամ մը, Պաղարարու-  
լիի դերեղմաննոցն է, գա-  
նի մը բարեկամի հետ.  
Թրքուէի մը կ'անցնի կառ-  
քով՝ վերջապոյսի հեւանգ  
կարծրութեանց տակ իր  
չգարշիւն ներծակ ամպին  
մէջէն իր նայուածքին  
Չսխտակ ուտողիբը պըս-  
պըզացիկը մի: Գուրեան,  
չլացած, յուզուած, կը  
նստի իսկոյն կը գրէ  
«Թրքուսիկն», որ իր ու-  
մէնէն գեղեցիկ գերթը-  
ւաններէն մէկն է:

Ա. Չ.

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

ՏԱԳՆԱՊԱՀԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Բանաստեղծութիւն մը ամբողջ՝ մահուան հետ պայքար։  
Պայքար՝ յուսահատութեան նշոյններով։ Պարտութեան գիտակցու-  
թիւն՝ վեհ եւ դաղափարապաշտ ստեղծագործութեամբ։

Պայքար՝ կեանքի շողշողուն արեւէն զրկուած ճակատադրին դէմ։  
Թշուառ մանկութիւն մը, աղքատութիւն, անարդարութիւն եւ անիրա-  
ւութիւն՝ թռչախտին հետ՝ կազմեցին Դուրեանի դամբան օրերու բիւրեղա-  
ցումը բանաստեղծութեան մէջ։

Իր գրական ստեղծագործութեան թեման եղաւ մարդկային կեանքի ա-  
մէնէն հական տաղնապը՝ մահուան հարցը։ Իրեն ներկայացողը աւելի մահն  
էր, քան անոր հարցը, մահը, որուն հետ կը մտերմանար ամէն օր քիչ մը  
աւելի, ի վերջոյ միաձուլուելու համար անոր։

Իմաստասէրներ, ազատ առարկայականութեամբ՝ ուրախութեամբ կ'ող-  
ջունեն մահուան դաղափարը, անոր մէջ զտնելով մարդ անհատին անկաշ-  
կանդեղիութիւնը, անհատական անկախութիւնը, Ֆիդիքական ազատութիւնը  
եւ ինքնուրոյնութեան լաւագոյն դրաւականը։

Այս առարկայական քննութիւնը կարելի է իմաստասիրական հանդարտ  
ուղեղներուն համար, բայց պարագան բոլորովին տարբեր է կեանքով, սիրով  
լիպլիտոյով լեցուն փոթորիտ հոգիի մը համար, որուն կեանքի աճապարան-  
քը, անկարգ օրերու, տխուր դէպքերու արտակարգ հրմշտուքը ամբողջ հո-  
դին կը վերածեն իննելութեան ռազմազաշտի մը։

Մտրդիկ չեն խօսիր մահուան մասին, մահուան ներկայութեան, անկէ  
սարսափահար։ Դուրեան, սակայն, իր թոքախտաւոր, բայց բանաստեղծ  
արտի անկեղծութեամբ ամէն օր զրուցեց մահուան հետ, մտերմարար եր-  
բեմն, կատաղանքով շատ յաճախ. ապրեցաւ զոյն ամէն օր, ապրեցուց զայն  
իր մէջ։

Եւ ո՛րքան խորացաւ այս մտերմութիւնը, ա՛յնքան մեծցաւ իր մէջ  
ապրելու բո՛ւան տենչը։ Ապրիլ կ'ուղէր Դուրեան, ապրիլ՝ դաղափարական  
սիրոյ կեանք մը, բայց զինք կապտող շղթաները կասեցուցին իր կենսունա-  
կութեան թափը։ Մեծ սիրոյ առջեւ մնաց սիրազուրկ, մնաց պապակ՝ կեան-  
քի զեղեցկութեան։ Համատարած ժպիտին մէջ մնաց դառն ու եռացող կեան-  
քին մէջ մտեցաւ ցրտահար, ու երբեմն փորձեց հրեշտակային բերկրանքնե-  
րով սնունդ տալ իր հոգիին, հանդիպեցաւ Ե...սմգոյն մանուկ հրեշտակին։

Այս կիրթը, ապրելու, անդուծ եւ անխուսափելի մահուան դէմ պայ-  
քարելու կիրթը իր առղերը վերածեցին ապրուած բանաստեղծութեան։

Բիւրեղացում մը։ Յաւերու, տառապանքներու, կորստեան դատա-  
պարտուած հոգեբանական ահաւորութեան ու սարսափի ենթակայ՝ արցունք-  
ները մարգարիտներու վերածուեցան։ Անմխիթար վշտերը արնուական ու-  
ղեղրուժով մը զարման արուեստ, ու կեանքին դէմ իր անզօր զայրոյթը զինք  
դասալիք եւ յուսահատ դարձնելու փոխարէն՝ մղեց երգելու եւ երկնելու։

Մտաւորական եւ հողերանական փորձառութիւններ, ենթապիտակից գրգիռներ, յուզումներ կամ մտածումներ կը մղեն մեր բանաստեղծները, որ ընտրեն իրենց ստեղծադրութեան թեման: Նարեկացին՝ գիտակից իր մարդկային անզօրութեան, ժամանակաւորութեան ու մահկանացուութեան՝ ինքզինք քաղղատեց Աստուծոյ հետ եւ անոր յաւերժութեան, հրօրութեան ու անմահութեան առջեւ խոնարհելու ինքնապարտադրումի տաղնապը ապրեցաւ: Մայիս-նոյսի տաղնապը յաւերժական սիրոյ ձգտումն էր, սիրոյ յաղթանակի ապացուցման ճիշդ էր թաղաւորական իշխանութեանց իսկ դէմ: Մակայն, պատանեկան խանդավառութեամբ բանաստեղծութեան մէջ ունի Դուրեան չկրցաւ հանել կեանքէն բխած արժէքներու, մարդս ընտրուող էական ստորոգելներու և բնութանիշներու վերլուծման: Նոր մասած հողեմտաւոր արժէքներու փայլելի ոլորտին մէջ, պարտաւոր եղաւ պայքարել իր անմխիթար հողին Զարին ճերաններէն ազատագրելու: Բայց ի զուր: Դժխեմ ճակատագրի դատապարտուած, զգայուն, ուշիմ, այլամերժ ու դժուարահաճ մարդկութեան տառապանքով ու ինքնահրկիղումով ինքզինք պարտադրած, իր տաղնապին չափ մեծցաւ իր վտիտ վաստակին բանաստեղծութիւնը:

Մտաւորական կեանքի առաջին սանդխամտտին՝ յոգնած էր արդէն ապրելու կրքին բեռան տակ եւ վերելքի ինքնապարտադիր ճիղը, յուսահարութեան գաղափարական ինքնախաբէութեամբ՝ մխիթարութիւն որոնեց պայքարի երկրորդ հանդրուանին մէջ:— զոնէ զրականօրէն անմահանալու, ախկոծ ուկիտանին վրայ հեռք մը ձգելու, չար մարդոց սրտերը բարութեամբ յեցնելու: Այլ խօսքով՝ Հասաւ Հոն՝ ուր մեծ մտածողներն ու մեծ տաղնապահարները Հասած էին տարիներու տքնաշան մտորումներէ, մտաւորական եւ հողեկան խարխափումներէ հեռք: Հասաւ անմահութեան անմխիթար ապաւէնին: Հասաւ ա՛յն տարբերութեամբ, որ անոր հողեմտաւորական մտորումները արիւնեցան բանաստեղծի եւ մտածողի իր հատկութեանէն շատ առաջ, իր իսկ թոքերէն բարձրացող ծովուով, որ եկաւ գորացնելու հողին, մտքին կրակը: Ա՛յնքան զօրացաւ այս կրակը, որուն ջերմութեան տակ կրեցաւ բանաստեղծը, կրեցաւ ու երգեց իր պարտութիւնը՝

Եւ մահամերձն այ կ'ուզէ երկու բան,  
Նախ՝ կեանքը, վերջը՝ լացագ մ'իբ վըրան:

Կեանք, ապա՝ յիշատակի յաւերժացում, եւ ասիկա՝ բնական քնարերգութեամբ: Հայրենասիրութիւն, սէր, վիշտ, յուսահատութիւն, վերացականացած տանջանք: Տխուր ու մահաշունչ քնարերգութիւն մը: Ահաւասիկ Պետրոս Դուրեանը: Համակ սիրող սիրտ մը, որ սիրոյ պարտէզին մէջ բացւելու փոխարէն՝ դժոխքին ահաւորութեան մղձաւանջը սպրեցաւ, զրկուած ճառագիւնայն եւ գեղեցկիմք բնական ընկալումէն:

Մահագուշակ խորշակ անդէմ  
Հասաւ տիրեց սրտիս բալար,  
Թառամեցաւ ծաղկումէ ամէն  
Ծրլած փթթած սրտիս մէջ նոր:

Եւ ասիկա եկաւ ա՛յնքան բարի, ա՛յնքան ազնիւ եւ ա՛յնքան զուարթ բայեղ յուսահատութեան մէջ կը ծառանայ Աստուծոյ դէմ, իր փառաբանած ցուն սրտին տակ անժար բոց՝ «Հոն հրդեհ կայ, ա՛յ մատնան», «Հոն այնպիսի անմար կրակ մը կայ, որ պիտի չմարի միմչեւ որ հասցնէ գիս»:

Տառապանքը կ'ազնուացնէ Հոգին, ազնուացուց Դուրեանի մեծ Հոգին : Տառապանքը նուազեցուց հեռզհեռէ անոր տրոփող սիրտը, բայց այդ սիրտը յարունակեց բարախել մարդկութեան համար : Մնաց մարդ՝ նոյնիսկ իր զայրոյթին մէջ, նոյնիսկ Աստուծոյ դէմ իր ժպտանքին մէջ, եւ բեղմնաւորուեցաւ իր զրիւնք, այդ կենսունակութեան նախապայմանով հարստացան իր տողերը, զեղարուեստակահայան իր մորմաքները :

«Ապրեցաւ» թատրոնով, բայց իր հշմարիտ ապրումը եղաւ բանաստեղծութիւնը : Գրեց տառապելով, տառապեցաւ գրելով, ներքին մղումի մը հրամայական թելադրութեան ընդառաջելով : Այս զազափարական ցոլացումները խոսցուց մասնաւորաբար «Իմ մահը», «Իմ ցաւը», «Տըտուեցէ», «Զղբում», «Ե՞նչ կ'ըսեն», «Լեակ» եւ «Անաւարտ ֆերթում» բանաստեղծութիւններուն մէջ, ուր արձանագրուած մորմաքածին զգայնութիւնները մխիթարութեան տրոնումի փորձեր են լոկ :

Այդ մեծ տազնապին մէջ իսկ, Պ. Դուրեանի մեծ սիրտը, ազգային եւ ընկերային իր դոյութեան իմաստի արդարացում մը կը փնտոնէ եւ այդ ճամբով, նոր ու նորոգուած, վշտամորժոք արտասանքով կը կնքէ իր տողերը :

Նուիրումի, զոհարեութեան ու նառայասիրութեան վայելքով սփոփուած բողբոջի ձայն մը կը բարձրացնէ «Տըտուեցէ»ին մէջ, ուր եղակի կատաղութեամբ ընծադրուող պայքարի մը ականատես կ'ըլլանք, հիւժախառուր Դուրեանին եւ անուան Աստուծոյ միջեւ :

Բարի, ապրիլ ուզող, ապրիլ զիտցող քրիստոնեայ Դուրեան կ'ընդունէի, որ

Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,  
 Կեանք մ'անհետն շողի, բոյրի, ազօրքի :

Բայց այս բարի քրիստոնեան, եկեղեցւոյ հաւատացեալ դպիրը իր ծայրայեղ յուսահատութեան մէջ կը ծառանայ Աստուծոյ դէմ, իր փառապանծ ու պաշտած Աստուծոյ դէմ՝

Իսկ թէ կորրեցի պիտի իմ հուսկ շունչ  
 Հոս մտախուզի մէջ համբ անըջունջ,  
 Այժմէն քա՛ղ որ շանք մ'ըլլամ դայկահար,  
 Պըլլըլիմ տնուանդ, մըրնչեմ անդազար,  
 Թող անէժ մ'ըլլամ աւ կողրդ խըրիմ,  
 Թող յարդորեմ քեզ «Աստուած» յիւրիմ :

Պայքարէն, ապրումէն ու տառապանքէն անզօրացած՝ ան կը հասնի արիւրախի : Խարկանք կը թուի աշխարհը իրեն ու կեանքը՝ ունայն :

Աստուծոյ ծաղրն է Աշխարհն ալ արդէն... :

Այս զիջումով զինաթափ, «օր մը վերջ» գրուած «Զղբում»ով կ'ամբողջանայ եղերականութեան պատկերը, ցուրտ մահուան անկողնին մէջ, մահուան սպասումով :

Ու տազնապահար բանաստեղծը, կ'աւանդէ վերջին շունչը, իր գրական նախաքայլերով իսկ մեղի ժառանգ ձգելով տիեզերական վշտերու ճշմարտութիւններ, վէպերու թանձրացեալ աշխարհահայեացքներ, յուսերժապահար բանաստեղծութեան ջերմութիւն :

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ



# ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Այս մէկ բառը բառական է բնորոշելու համար Պետրոս Դուրեանը:  
 Բանաստեղծ՝ ոչ ժխտյալ յղացումով, այլ եւ բառերով:  
 Վճռայն ժըն էր, բայց ալիարհ մը բացուեցաւ իր ասուպանքին խորութենէն,  
 Դեռ նոր սկսած էր նրզել: Եւ սակայն, ինչ որ կրցաւ արտադրել, մինչեւ այսօր ալ  
 կը մնայ անկործնելի ժառանգութիւն:  
 Հիւսիսային ու թշուառութիւնը շարտիմեզ քրքիջներ կ'արձակէին իր գլխուն վերեւ,  
 պատանութեան օրերուն:  
 Հարցնողներ կան,— Պետրոս Դուրեան պիտի կրնա՞ր հարազատ բանաստեղծութեան  
 այս արձաններին հասնիլ, եթէ ազատ մնացած ըլլաւ այդ երկու ասուպանքներէն:  
 Ապահովարար շատ քիչեր գիտեն, որ հայրենասիրական լարն ալ կայծեր արձակել  
 տուած է ողբացեալ բանաստեղծին, ոտանաւոր թէ արձակ:  
 Ուրեմն իր հորիզոնը շատ աւելի լայն էր, քան կ'ենթադրուի: Եւ կրնար նոր բոր-  
 ձունքի մը հասնիլ, եթէ հողին յրզկտէր վերահաս մահուան մղձաւանջին տակ:  
 Ետ դաջէք մինչեւ 80 տարի, չափելու համար խորութիւնը իր ճիշդերգչին:

Միմչեւ ե՞րբ գլուխդ պիտի ծծծես,  
 Շղթայայտալ այդպէս հեծես,  
 Լէ՛ք Հայաստան շինելարքն,  
 Ե՞րբ տախտակ սրգասերիս,  
 Նոնիմբիւմ շաւա տալով իոյս,  
 Պիտի երգէ վարդ՝ արշալոյս:

Միայն բանակային ու ճակատագրին զէմ չէ, որ կ'ըմբոստանայ բանաստեղծը, այլեւ  
 ներքին թշնամիներու զէմ:

Ո՞հ, վրէժխնդիր շմբեք մայրիմ  
 Հայրենագործ Հայոց մակտիմ...

Անուշա որոշ գիտակցութենէ մը կը բիւշը այս հոտաչունքը, միւսնոյն տակն կանչ մը  
 մարտական:

Ամէն պարագայի մէջ, հարկ է ուշագրութեամբ կարգալ շարք մը ցիրուցան ատկեր  
 ու ասղեր, լրիւ ճանչնալու համար Պետրոս Դուրեանի պիմադիրը:  
 Իր անմահական նամակներն անգամ նոյն սարսուռները կը մտանեն:  
 ...Բանաստեղծներ շատ ունինք այսօր: Բայց քանինն՝ պիտի կրնան գիմանալ մա-  
 մանակի անբերնուն, իրենց յղացումով եւ արուեստով: Այստեղ թէ հայրենիքի մէջ:  
 Դուրեանները բացատրութիւն կազմեցին տնոր համար, որ ո՛ւր ժխտի բանաստեղծ էին  
 ծնած, այլեւ մնացին հուատարիմ իրենց կոչումին:  
 Հարազատ ներշնչումն հզաւ անոնց մղիչ ուժը եւ ազատ արուեստը՝ անոնց մտահո-  
 գութիւնը:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

« Զ Ր Ո Յ Ց »

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՀԵՏ

Ողջերու հետ մեր զրոյցը յաճախ խուլերու խօսակցութիւն է: Անկեղծութիւնը միշտ բացակայ է հոն: Երանի ունոց, որոնք կրնան իրենց խօսքը լսելի դարձնել իրենց կենդանութեան ու... գերեղմանէն ալ անդին:

Ապրողներու հետ շատ կը զրուցենք. կը լսենք, կը լսուինք, չենք լսեր, չենք լսուիր, բայց կը շարունակենք խօսիլ: Կեցցէ՛ յամառութիւնը. անիկա ալ յատկութիւն մըն է, որ յաճախ չկամքո՞ղ կը բացատրուի:

Իսկ մեռելներուն հետ զրոյցը. անշուշտ ձեռնարկ: Շօշափելի՞ ոչինչ: Քեզ լսող չկայ, բայց... կա՛յ պատրանքը, որ էր գոյութիւնը կը պարտադրէ հողի ճամբով: Ի՛նչ պէտք է թաղել հապա յիշատակը...

Ես կը զրուցեմ չթաղուող յիշատակին հետ:



Եթէ մեր օրերուն ապրելիք, մոռցըւելու վախը քիչ մը աւելի պիտի տանջէր զեզ:

Եթէ քու օրերուդ ապրելինք, հաւանաբար չզգայինք մոռացումի ողբերգու-

թիւնը, որքան դուն, մարդարէութեամբդ աստուածաշունչ:

Կը փառասրենք յիշատակը, որուն համար ըսուած է, թէ անգոր միթաբանք է, բայց նաև ընդունուած՝ իբր կորստական կեանքին պարզեւած միակ շօշափելի՞ շնորհը:

Բանաստեղծութեան ու բանաստեղծներուն համար բացուած ճանապարհէն անցար քնքուշ քայլերով, սիրուելու ցանկութեամբ:

Բայց

Ոչ ոք ըսաւ — ե՛՛ք տղայ,  
Արդեօք ինչո՞ւ կը միայ,  
Թերեւս ըլլայ գեղամի,  
Թէ որ սիրեմ, չը մեռնի»:

Տառապեցա՞ր ուրեմն սիրուած չլլալու տաղնապով: Օ՛, այդ չսիրողները անսիրտ, սէրերէ պարպուած հողիները մութ, այդ սրտերը թութ, որոնք բնաւ չճաշակեցին համը դերագոյն պատիւին, որոնք չկրցան զանազանել մուխը մոխիրէն, ու կրակներու հետ խաղցան՝ բոցեր բարձրացնելու զուր ճիգով, անշունչ թոքերով:

Ձրկանքին հետ ապրեցար դեռ պա-

տանի, բայց աչքերդ սիրախոյզ իջնախո-  
րեքը սրտերու, որոնք զողացին նայ-  
ւածքիդ շողերէն:

Հարիւրածայ մեր անջրպետէն քեզի  
կ'ընծայենք մեր սէրերը յորդ, ընդունէ՛  
Տոտապեա՛լ:

Բայց ո՞ր հրաշքը պիտի շունչ տայ  
քեզի, կեանք տալու համար մարած ժպի-  
տիդ, լուծ սրտիդ, որ դուն հնչեցնես  
քնարդ փշրուած: Արդեօք ո՞ր հրաշքը  
պիտի սէր տայ քեզի, որ դուն մօտենաս  
«Ընկալիդ ապշած, որուն զհայելիքին մէջ  
տեսնես պատկերը գեղուհիին, ա՛յն սե-  
ղուհիին, որ եղաւ անգուլթ, արշալոյս-  
ներէն առաջ կախազան կապող դահիճին  
պէս:

Եւ կամ՝

Այդ ո՞ր հրաշքն էր, որ պիտի որ-  
ձանագրէր բողոքդ, Հասցեագրելու «Տըր-  
տունցք»-ը՝ առ Աստուած «սիրերիմ», ա-  
նոր կողերուն խրելու քաջարար:

Լսէ՛, Բանաստե՛ղծ. Աստուածները  
մերթի ռիւերիմ են, բայց մերթ համբե-  
րող, ներող բարեկամի պէս բարի: Բայց  
հազա՛ր ափոսս, որ... «Տիրերիմ» Աս-  
տուծոյ կողքին առիթ չունեցար ճանչնա-  
լու նաեւ այն միւս հօրը, մեծ բարերա-  
րը, որուն սէրը երբեմն կ'ըլլայ անսանձ  
հոսանք ու իր կիրքին կուրուիեամբ կը  
հրապուրէ նոր ծաղկածները:

Դուրեանը սա՛ «Տըրտունցք»ը վկայ:  
Մեծարեանը միւս՝ «Անճանախան»:  
Ջարիֆեանը՝ այդ «Փնարը տըր-  
տուն»:

Սեւակը մեր լոյս, ո՞ «Եղիցի Լոյս»:  
Ու տես, Բանաստե՛ղծ, միակ չես  
այլեւս. դարձաք խումբ մը մեծ, Աստու-  
ծոյ կողին միտուած «անէծք» ինչպէս...:

\*\*

Ունձուածիդ խոցով, տե՛ս, մենք ալ  
կ'այրինք:

Մեր զրականութեան դուն անհարս  
փեսայ, տրամածիդ տենդով, մենք ալ  
կը դուչենք:

Է՛հ, մընա՛ք բարով, Աստուած եւ արեւ,

Բոլոր շախրուածներուն մոռնչով,  
կ'ազերսենք՝ սէր, առաւել՝ սէր:

Բոլոր պատանիներուն ու երիտա-  
սարգներուն տաք սրտերով, գիրկ-գիրկ  
կարօտ կը բերենք, Սկիւտարի հովերէն,  
ու ծողիկներ, որ չմսին, մի՛նակուիեանդ  
սարսուռէն:

\*\*

Հարիւր տարի ետք (արդեօք ո՞ւշ է)  
մենք յապտղած յանդընութիւն, միշտ  
վրիպած վստահութիւն, մահուան պա-  
հուն լոկ, լսելի կոչնակ դուժկան, դամ-  
բարանին դիմաց զարթնող խիղճ խեղ-  
ճացեալ, շիրիմներու շուքին շէժած դէմք  
անդիմակ:

Բայց նաեւ՝

Ներումի ուժով խոնարհած գլուխ,  
խոստովանութեան լեզու անբարաս:

Հարիւր տարի ետք, այսօր, ազգո-  
վին կը յիշատակենք, թէ ունեցած ենք  
Դուրեան մը տաղանդ, Դուրեան մը շքեղ:  
Ազգերու առեանին ճակատ մը ճերմակ,  
ստանց ամօթի մշակ մեր արտին, բա-  
նաստեղծութեան մեր անդաստանին:

\*\*

Այս «զրոյց»ը պէտք չէ փակել ու ա-  
ւարտել այդպէս հապճեպ: Հարկ է յի-  
շել, թէ սրտէ սիրտ կապուող կամարն  
ես, զոր հարիւրամեայ դերեղմանդ իսկ  
չկրցաւ քանդել, վերածել հողի:

Հող էիր, բայց դարձար... յուշ:

Տակաւին՝ շունչ ես, ապրող, ար-  
տագրող: Մեր Մշակոյթին սեղանին վը-  
րայ օրակարգի խօսք: Մեր մատենանե-  
րուն վրայ քանդակուած սրբացեալ ա-  
նուն: Մեր սէրերուն հետ դուն լուծուած  
պատկեր: Երիտասարդութեան սրբազան  
ցաւի դուն տրտում տիպար:

Արդեօք դուն մեռա՞ր...

ՇԱՀԱՆԴՈՒՆՏ

## TERRA INCOGNITA

Պատկերի Դուրեանի մասին: «Սիրելի, «Ծրժելի», «Իմ մահրո», «Տըր-տունիք»... Մեր հրաշունչ ու ողբերգական բանաստեղծը, որ ժայթքեց հարուստի նման ու շուտով հանգաւ, բայց դարձաւ ամենաբարձր ու ամենազեղեցիկ կատարներից մէկը հայ դրականութեան լեռնաշխարհում: Եստ կարճ ժամանակում, քսա՛ն տարի, այնքան խիտ ապրեց կեանքը, որ նրանից մնացող երեք տասնեակ բանաստեղծութիւններն ու նոյնքան բանաստեղծական նամակները ոչ միայն հօր ներշնչումով մուշուած քանդակներ են զգա-դումների, ապրումների, մտքերի, այլև բոլորը միասին կազմում են մի դրա-մատիկ աշխարհ, ուր ամէն մի բառը իր ատոմային կշիռն ու ժխնկային լիցքն ունի: Քնքուչ ու հրեղէն է Դուրեանը, ծաղիկ ու բոց է նա, շշուշ ու որոտում: Սիրոյ նայուածքի մէջ աստղերի բոյլ է տեսնում, սիրոյ ժպիտ-ների մէջ՝ ծաղիկների փունջ, սիրոյ խօսքերի մէջ՝ հրաշէկ թուրայ, եւ բա-նաստեղծական գերագոյն խտութեամբ ասում՝

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժրպիտ,  
Քուրայ մը խօսք դիւրեց իմ սիրտ:

Երբ սիրած ազջիկը նրա ձեռքը տանում է իր կրծքին, նա զգում է, որ այնտեղ զտրոյ երկին մորոտարք, եւ միաժամանակ գեփիւտը հովհարում է բանաստեղծի զրոնկած ճակատը՝ աղջկայ վարսերի զոյճ բոյրերով: Սիր-ւած էակը, մարդը նրա համար վեր է, քան բնութիւնը. սիրով գեղեցկա-ցած մարդն է չափանիշ բնութեան, կոյսի գեղեցկութեամբ է արժէքաւորում բնութեան գեղեցկութիւնը.

Վարդը գարնայնի  
Թէ կուսին տիպար  
Այսերուն չ'ըլլար՝  
Ո՞վ կ'յարգէր զանի:

Եւ մինչեւ իսկ՝

Թէ կոյսը չ'ըլլար  
Սիրուն ու անբիծ,  
Աստուածն այն երկնից  
Մարդ ա՞ր կը կարդար:

Բեթհովլենեան մի բան կայ նրա մէջ. նրա քերթուածներից շատերը հրաշունչ երգահանի սոնատներն են լիւնցնում իրենց խորութեամբ, ներքին բարդութեամբ, ուժով ու գեղեցկութեամբ: Բայց եւ նա, ողբերգական ճա-կատագրի ամբողջ դառնութիւնն ապրած այդ պատանին զորի սրտում՝ հըր-դեհ կայ, ո՛չ մատենա՞, մահուան նախօրեակին իսկական բեթհովլենեան մի սէնֆոնիա ժայթքեցրեց իր սրտի այդ հրդեհից, մի զղրկալից հրարուխ, որ

կոչուում է «Տրտունջ»։ Երբ լսում ես, թէ ինչպէս նա եմում ասողիքի ասն-  
դուխքով եւ իր սասանեցնող բողոքն է որոտում «շանթերի արծառ» Ասածու  
դէճ առ դէճ՝

Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ  
Հոս մտախնդի մէջ համր ու անշրջունց,  
Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,  
Պըլլուիմ անուանդ, մանչեմ անգադար,  
Թող անէժ մ'ըլլամ ու կռիւ խրիմ,  
Թող յորջորջեմ քեզ «Աստուած յիսերիս» :

տեսնում ես դիցարանական տիտանին, որ Պրոմէթէոսի հետ եղբայրացած՝  
հրկրի ընդերքից խոյանում է երկինք ու կանգնում Չեւսի ստալ :

— Արտասանեցէք, ամբողջութեամբ արտասանեցէք այդ բանաստեղ-  
ծութիւնը, — ասաց Մարշակն անհանդիսա շարժուելով քաղկաթոտում եւ մի  
նոր ծխախոժ վառելով : — Կարդացել եմ Բրիւսովի թարգմանութեամբ : Ու-  
զում եմ հայերէն լսել :

Արտասանեցի «Տրտունջ»ն ամբողջութեամբ :

— Իսկապէս հրաբուխ է, — ասաց նա, անշարժ լսելուց յետոյ : Պէտք  
է նորից ու նորից թարգմանել, մինչեւ որ մի երջանիկ բանաստեղծ կարողա-  
նայ ոռուսերէն հնչեցնել այդ հրաբուխը : Պէտք է հրաբուխը թարգմանել, ոչ  
թէ լուկ բանաստեղծութիւնը :

— Գիտէ՞ք, — ասացի, — 1956ի Յունուարին, Մոսկուայում, երեսու-  
սարդ գրողների համամիութենական խորհրդակցութեան օրերին, հիւրանո-  
ցում ապրում էի երկու սուս եւ մի բելոռուս բանաստեղծների հետ : Այդ օ-  
րերին լոյս էր տեսել Բրիւսովի միհատորեակը, ուր Գուրեանի այդ քերթը-  
ւածն էլ կար թարգմանութիւնների բաժնում : Գնեցի գիրքը, եւ երեկոյեան,  
հիւրանոցում, տղաներին կարդացի այդ քերթուածը, շատելով, թէ հեղե-  
նակն ով է, եւ յետոյ հարցրի, «Կուսեցէ՞ք, թէ ո՞վ կարող է դրած լինել» :  
Մոտացայ ասելու, որ նախորդ երեկոյ նրանց խօսել էի հայ բանաստեղծների  
մասին, անշուշտ նաեւ Գուրեանի : Բաւական վիճելուց յետոյ, տղաները կանգ  
առան Բայրոնի վրայ, եւ զարմացան, թէ ինչո՞ւ մինչեւ հիմա իրենց անծա-  
նօթ է մնացել Բայրոնի այդ լուսագոյն բանաստեղծութիւնը : Իսկ երբ յայտ-  
նեցի, թէ Գուրեանն է հեղինակը, շքամբ երես նայեցին, կարծեցին, որ ա-  
ւելի խորհրդաւոր եմ ուզում դարձնել հանելուկը, բայց երբ համոզուեցին՝  
զարմանախօրէն նուազեց նրանց ոգեւորութիւնը... Մի ամն Դուրեանն արդէն  
Բայրոն չէր նրանց համար : Տխրեցի եւ սկսեցի մտածել, որ...

— Հասկանում եմ : Որոշ չափով ճիշդ էք : Բուրքս էլ ունենք այդ տկա-  
րութիւնը, մանաւանդ երիտասարդ տարիքին ընդունուած հեղինակութիւն-  
ների գերին ենք մտում մի որոշ ժամանակ, նոյնիսկ մոլեռնող հաւատացեալ-  
ների նման մերժում ենք ուրիշ աստուածներին : Բայց նաեւ մի՛ մոռանաք, որ  
այդպիսի անակնկալը միշտ էլ առաջին բուզէին թերահաւատ է դարձնում  
մարդուն : Գուք յետո՛յ հարցնէիք նրանց, մի ամիս, մի տարի յետոյ... Կար-  
դայիք հայերէնը : Գուցէ նրանցից մէկն ու մէկը խիղախէր վերասին թարգ-  
մանել...

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԷՆԵԱՆ

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ

“ԵՍ ԵՐԳԵՐԸ ՇԱՏ ՍԻՐԵՑԻ”

Գուրեան բանաստեղծ էր:  
Այսինքն բանաստեղծութիւն կը գը-  
րէր. յանգե՞ր կը շինէր. քերթուածնե՞ր  
կը ստեղծէր:

Ո՛չ:  
Գուրեանի կեանքը բանաստեղծու-  
թիւն էր: Իր սրտին իւրաքանչիւր արո-  
ւիւր, ճակտին վրայ սառուղ քրտինքի կա-  
թիւր, աչքին թարթումը, կուրծքին տա-  
կի հրարուիւր, կրակը, որ կ'այրէր զինք,  
կը հատցնէր, մէկական բանաստեղծու-  
թիւններ էին: Շփոթը, որուն մէջ կ'իյ-  
նար, մէկ անգամէն տալու համար սըր-  
տին հրայրքը, մարելու վրայ եղող խան-  
դերը բանաստեղծութիւն էին ինքնին:

Ինչպէ՞ս չափստուալ ՉՕամեայ երի-  
տասարդ մը, որ իր իսկ բաւերով լեկամ  
է աշխարհ՝ միայն իր մահն եւ թշուա-  
ռութիւնը տեսնելու եւ զգալու համար»,  
որ գարձեալ ըսա իրեն՝ «երկմէի հիւան-  
դութիւնն ունի»:

Երբ Գուրեան կ'ըսենք, անմիջապէս  
կը յիշենք «Տըտուեղէ»ը կամ «Թրքու-  
հիմ»:

Կը մտնանք սակայն տասնեակ մը  
նամակներու այն շարքը, որոնցմէ իւրա-  
քանչիւրը մէկական արձակ բանաստեղ-

ծութիւն է, որոնց մէջ Գուրեան իր ամէ-  
նէն մտերիմ բարեկամներուն կը բանայ  
իր սրտին խոր ծալքերը, որոնց մէջ կեղ-  
ծիք չճանչցող Գուրեանը առաւել եւս  
անկեղծ է եւ մարդկային:

Գուրեան գիտէր, որ օր մը իր քեր-  
թուածները պիտի դառնային հանրու-  
թեան ստացուածք: Երբեք չէր մտածեր  
սակայն, որ իր բարեկամներուն ուղղած  
նամակները եւ որոնց մէջ իր իսկական  
զգացումները կու տայ բաց գրքի մը  
պէս, օր մը նաեւ, կրնային դառնալ հան-  
րային ստացուածք:

Իր նամակներուն մէջ, Գուրեան հաշ-  
տըած է այլեւս իր ճակատագրին հետ:

Իր բարեկամներէն մէկուն կը գրէ.  
«Շնորհակալ եմ, որ զիս կը մխիթարես,  
սակայն ես արդէն ըսած եմ, թէ բնաւ  
մանուրնէ վախ չունիմ, վասնզի տեմե-  
ցայ իմ գիւնէս գգուեցնել աշխարհէն»:  
Քիչ մը անդին՝ կ'ըսէ. «Ա՛յ բայրապիմ  
մարմնայն հետ միտես ալ տկարացաւ,  
մարեցա՛ն խանդերս. ո՛չ, չեմ կրնար  
գրել, ցամաք եմ բոլոր գրածներս...  
կ'ուզէի շատ բաներ գրել իմ այս նուազ-  
եալ ժամերու... ափսո՛ս, կ'ուզէի իր-  
րեւ յաւեոժական յիշատակ երկտող տող

մը գրել քեզ. սակայն իմ մէկ լաւ եւ փայլուն ժամուս կ'ուզեմ գրել, չեմ ուզեր, որ ցամաք լինի... իսկ եթէ դժբախտաբար չկարենամ գրել, գրուած համարէ՛ գայն իմ գերեզմանի հողերում վրայ»:

*Ուրիշ մը.*

«Այո՛, ա՛յ հիմա հաւատացի, թէ կը ծիրիւմ եղեր. գիտեմ թէ ալ շատ չպիտի ապր'ւմ: Ա՛ն, եղբայր իմ, ահա երիտասարդ մը, որ եկած է աշխարհ՝ միայն իր մահն եւ թշուառութիւնը տեսնելու եւ գգալու համար:

«Զգիտեմ ի՛նչ գրեմ, կը գգամ շատ, քայց գրելու դժուարութիւն մը կայ, կարծես թէ գերեզմանին մէջէն կը խօսիմ, ա՛յ մարը մտնելու վրայ եղող մառազայթ մ'եմ, քայտաշում մ'եմ: Գիտեմ, այս տողերս վերջինն են, եւ վերջին պիտի լինեն... սակայն սա ցրուած ուղեղս ինչպէ՞ս վրայ բերեմ ու խօսիմ... Բանաստեղծ չե՛մ, քայց բանաստեղծութիւնն կը սիրեմ... Ես որ աշխարհի վըրայ միայն երգերը շատ սիրեցի, կ'ուզեմ որ իմ վերջին շունչս ալ երգ մ'ըլլայ»:

*Ահա՛ իրաւ բանաստեղծը, որ չ'անդրադառնար իր բանաստեղծ մը ըլլալուն, ինչպէս աստղը, որ չի գիտեր, թէ ինք կը լուսատէ՛, քայց որ համակ լոյս է: Ինչպէս արեւը, որ չ'անդրադառնար, թէ որքան լոյս եւ ջերմութիւն կու տայ մարմիններուն եւ հողիներուն:*

*Դուրեան, ի՛նք տնկրակ վառարանին*

*ստիւն նստած, սառած մատներով, անբարբառ ջերմութիւն կտակեց մեզի, մինչ իր ոսկորները կը սրտփային աղքատիկ սենեակին մերկ պատերուն միջեւ: Կ'ուզէր համոզել իր ընկերներն ու բարեկամները, որ ինք մահէն չի վախճար, թեթեցնելու համար անոնց ազգայն վիշտը.*

«Երբեք մի՛ մտաբերեք որ ես յուսահատ եմ, բնա՛ւ, բանաստեղծ մը մահւամէ չի սուկար. այն ատեն իրտունք ունէի ցաւելու, երբ ամէ՛նքն անմահ ըլլային, եւ ես միայն մահկանացու»:

*Իր միակ փոփոքն էր որ մը իր քերթըւածները եւ միւս կտորները մէկտեղուած եւ հրատարակուած տեսնել: Արմէն Լուսինեանի ուղղուած իր նամակներէն մէկուն մէջ, շատ համեստօրէն կ'ըսէ.*

«Մէկ քանի պատառ թղթերու վրայ արցունքոտ տողեր գրեք եմ. ածուշտ բարեկամս գանձեմ պիտի պատուեն եւ ամուց արեւ տեսցնեն»:

*Սիրելի՛ տեղոյն բանաստեղծ, կտակը բազմիցս կատարուած է այսօր:*

*Եւ երբ, մահուընէք հարիւր տարիներ ետք երբեք չենք մոռցած քեզ եւ արցունքոտ տողերդ, տնոր համար է, որ մ'չ ոք քեզմէ առաջ եւ ետք, գիտցած է երկու խիստ տողերու մէջ ամփոփել գեղեցկութիւնը եւ ըսել.*

Բայլ մը նայումս, փունջ մը ժըպիտ, Գուրայ մը խօսք դիւրեց իմ սիրտ:

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ



**ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒԵՅ  
ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ  
Դ Է Մ Ք Ը**



— Ժամանակ չունիմ :

Սա Պետրոս Դուրեանի վերջին խօսքն է: Հանճարեղ պատանին, որ 19րդ դարի հայ քնարերգութեան գասականներից մէկն է, կիսատ թողեց շատ բան:

Մերնդակիցները ժամանակ ունեին լուսանկարելու եւ նրա դիմանկարը ժառանգութիւն թողնելու յետնորդներին, բայց երբ հասկացան դրա անհրաժեշտութիւնը, արդէն ուշ էր:

1872 թուականի Յունուարի 21ին Կ. Պոլսի Սկիւտար թաղամասում, թոքախտից մահացաւ Պետրոս Դուրեանը: Պոլսահայութիւնը ասես յանկարծակիի եկաւ. զգաց, որ կորցրեց իր հանճարեղ զաւակին: Աղքատութեան մէջ ապրած Դուրեանին թաղեցին մեծ շուքով: Յուզարկաւորութեանը ժամանակեց շորս հագար մարդ: Մահուան օրը Պոլսի նշանաւոր նկարիչ Արքաւանտ Մաքանը փորձեց նկարել Դուրեանին, բայց տեսնելով, որ նրա դէմքը եղծուած է թոքախտից՝ հրաժարուեց:

Հաւանաբար գեղանկարիչը իրաւացի էր: Հիւանդութիւնը հիւծել էր Դուրեանին, փոխել նրա դէմքը: Արշակ Զօպանեանը գրում է. «Անգամ մը, արդէն ծանրապէս հիւանդ, Զամբնա կ'երթայ վերջին պտոյտ մը ընելու. ետ դարձած ասուն, կը հանդիպի գիմալի մը, որ անոր տժգոյն դէմքը եւ դանդաղ կիստ քայլուածքը տեսնելով կ'ըսէ՝ «Ասա ալ երթալոց է»: Դուրեան այդ խօսքին տպաւորութեամբ տակ, տուն դառնալուն պէս՝ կը նստի ու կը գրէ իր գմայլի «Լճակը», որ հայ քանստեղծութեան գերագոյն գոհարներէն մէկն



է» («Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը», Երևան, 1967 թ., էջ 198) :

Հայ նշանաւոր դերասանուհի Ազնիւ Հրաչեան իր յիշողութիւններում գրում է, որ Վարդուիւնի թատերախմբի դերասանուհի Թէրէզա Զուհանեանը, արձազանդելով ընկերուհու կատակին եւ կարծելով, թէ Դուրեանը չի լսում՝ ասել է. «Այնքան գուճատ է, որ ինծի պէտք չէ, շուտով կը մեռնի» :

Ա. Զօպանեանը գրում է, որ այս երկու միջադէպերը շարժառիթ են դարձել, որպէսզի Դուրեանը գրի «Լնակը» : Գինովցած մարդու եւ Թէրէզա Զուհանեանի խօսքերի արդիւնք չեն դուրեանական տողերը .

Շատերը գիտ մերժեցին,  
«Քնար մ'ունի սուկ-քսին .  
Միմ' զդպրոց է, գոյն չունի —  
Միսն այ ըստ — կը մեռնի» :

1892 թուականին, ուսուցիչ Բարսեղ Իջուկեանի պատուէրով, աստրախանցի Նփարէշ Մկրտիչ Պարսամեանցը Դուրեանի ազգականների եւ բարեկամների տեղեկութիւնների վրայ յենուելով, սկսում է ստեղծել բանաստեղծի գիմնականը : Այդ նկարի ստեղծման պատմութիւնը հանգամանօրէն գրել է դուրեանադէտ Ալբերտ Շարուրեանը («Սովետական տրուստ», 1967 թ., № 8) : Հրանդը (Մելքոն Կիրճեան) «Մասիս» հանդէսում 1893 թուականի Յունիսի 11ին տպագրում է «Արուեստական պատկերք» վերնագրով մի յօդուած, որի եզրակացութիւնն այն էր, որ «կարկտած Դուրեան չստեղծւիր», որ դա անպատուութիւն է թէ՛ Դուրեանի եւ թէ՛ արուեստի համար : Զարմանալի դուզողիպութեամբ յօդուածը լոյս տեսնելու օրը մահանում է նկարիչ Մկրտիչ Պարսամեանցը, անաւարտ թողնելով Դուրեանի նկարը : Պարսամեանցի նկարը, — գրում է Ալբերտ Շարուրեանը, — աստիճան է հասցրեում երիտասարդ Տիրան Չրախանը, որը հետագայում թաղեց նկարչութիւնը եւ գրադուէց գրականութեամբ ու յայտնի դարձաւ ինտրա մեռնով : Դուրեանի դիմանկարը քաղմտցրել է լուսանկարիչ Ֆելիքսը, իսկ 1893ի Հոկտեմբերին այն արդէն յանձնուել է քաժանորդներին» («Սովետական տրուստ», 1967 թ., № 8, էջ 55) :

Չնայած այդ լուսանկարը արժանացել է Դուրեանի դաստիարակ Գարրիէլ Խանթեանի, մօր՝ Արուեստի Դուրեանի հաւանութեանը, բայց եւ այնպէս այն չի նծու էր եւ նման չէր Դուրեանին : Տիրան Արփիարեանը Պարսամեանցի նկարի մասին գրել է. «Նա նակատն աշխարհական եղբորս (Ագրիպաս Դուրեանից) փոխ առաւ . աչքերը՝ դարձնելով մը, շրթունքն ազգականէ մը, մազերն ուրիշէ մը եւ շարք մարդ ըստ պատկերի Դուրեանի» :

Արշակ Զօպանեանը գրել է. «Այս հատորի մէջ որեւէ տեղ չեմ տար այն շինձու եւ անկնկան դիմանկարին, գոր պր. էֆուրեան Դուրեանի ազգականներէն ու բարեկամներէն տեղիութիւններ հաւաքելով շինել տաւա գծագրիչի մը եւ գոր ուրիշներ պլ՝ հետեւելով անօր օրինակին, գրական հատընտիր էջերու հաւաքածուներու մէջ արտատպեցին այդ անհոգի պաղ դէմքը» (Ա. Զօպանեան, «Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը», Երևան, 1967 թ., էջ 12) :

Եւ, այնուամենայնիւ, ահա արդէն 77 տարի է, ինչ Պետրոս Դուրեանի այդ նկարը տպագրուել է դասագրքերում եւ դրական բազմաթիւք ու բազմազան գրքերում, ամսագրերում ու թերթերում :

Յայտնի է, որ Պետրոս Դուրեանը թաղուած է Կ. Պոլսի Սկիւտարի հա-

յոց գերեզմանատները: 1957 թուականին գերեզմանատան այն հատուածով, ուր գտնուում է Դուրեանի շիրիմը, պէտք է ճանապարհ կառուցուէր: Այդ պատճառով Դուրեանի շիրիմը քանդուում է եւ փոխադրուում գերեզմանատան խորքը: Այս «նոր» շիրիմի տակ ամփոփուում է Դուրեանի անիւնը: Իսկ բանաստեղծի գանգը վերցուում եւ ուղարկուում է Հայաստան:

Մի քանի ամիս առաջ, բժշկական գիտութիւնների գոհուոր, պրոֆեսէօր Անդրանիկ Ճաղարեանը ձեռքի տակ ունենալով բանաստեղծի գանգը, որբազան մի դողով ձեռնամուխ եղաւ Դուրեանի գիմաքանդակի ստեղծմանը: Գիտական գանդարանական հիմունքներով մարդու դէմքը վերականգնելու եղանակով, ճաղարեանը ստեղծեց մեծ բանաստեղծի այս գիմաքանդակը, որի յուսանկարը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրութեանը: Անուանի գիտնական-վերականգնողին իրենց խորհուրդներով օգնել են գրականութեան եւ արուեստի թանգարանի գիրեկտոր, արուեստագիտութեան թեկնածու Ստրդիս Մելիքսեթեանը եւ բանասիրական գիտութիւնների թեկնածու, դուրեանագէտ Ալբերտ Շարուրեանը:

Ճաղարեանի ստեղծած այս գիմաքանդակը հիմնականում համապատասխանում է այն տուեայներին, որ Դուրեանի մասին հաղորդել են նրա հարազատները. «Անհաւասիկ, ինչպէս կը նկարագրեն Դուրեանը իր մայրն ու իր բարեկամները. շագանակագոյն, իսկ ու շիտակ մագեր, միշտ դէպի վեր սանտրուած եւ ազդեցուն մագերու պէս՝ մէջտեղէն նեղճուած. սեւ ու լայն կոքացոծեր ձեւացնող յօնքնու տակ, որոնք կը միանան բաւական ընդարձակ ճակտի մը ներքեւ, մեծ կողերով գեղեցիկ սեւ աչքեր, որոնց պայծառ ու յարճ նայածքը երկայն սեւ թարթիչներու մէջէն կը մազուի. թրթռօրէն արծրունցն էիք մը. կլար դէմք մը՝ շատ էիչ մագառ ու շատ թարմ մորթով. նուրբ շրթունքներ, կատարեալ տիպար մը ազուար տղու, կանացի փափուկ գեղեցկութեամբ մը: Իր ընկերները կատակով կ'ըսեն եզեր իրեն. «սա էիքիդ տակ էանի մը թել մագը կտրէ, էեք իբր ազդիկ ծախենէն»:

«Իր գեղեցկութեան հետ, Պետրոս ունէր գեղուն ատոզուքիւն մը, որ կեանքի առատ յոյզ մը կը պտտցնէր այդ գեղահասակ, անձնեայ եւ առոյգ պարմանիին մէջ» (Ա. Չօպանեան. «Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը». Երեւան. 1967 թ., էջ 27):

Ճաղարեանի՝ գիտական եղանակով ստեղծած գիմաքանդակը ներկայացուում է Դուրեանի բազմազար երկրպագուների ուշադրութեանը:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ

**ԱՂԱՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ**

**Զ Օ Հ Ր Ա Պ Ը**

**Ե Ի Դ Ո Ի Ր Ե Ա Ն Ը**

բազանի կրտսեր եղբայրը՝ Աղբիպան իր ընտանիքի անդամներով: Ներկաները յարգալիք ողջոյններով չըջապատեցին պոլսահայ անմահ բանաստեղծ Պետրոս Դուրեանի մայր Արուսեակն ու իր Եղիշէ որդին: Երբ Եղիշէ Դուրեանը իր պառաւ ժօր համար հանգստաւէտ անկիւն մը կ'որոնէր եւ զինքը Չամլըճայի գազաթիւր հըրաւիրողներուն կ'առարկէր, յայտնելով տիրամօրն այնտեղ բարձրանալու անկորելիութիւնը, Գրիգոր Զօհրապը ոգեւորուած գրկեց տիրամայրը եւ բտաւ. «Չամլըճան այնքան սիրող մեր անմահ բանաստեղծին յիշատակը պահողներս անոր եւ մեր թանկագին մայր Արուսեակը փոխնիփոխ թելեբու վրայ, թռչունի մը պէս կը հասցնենք լերան գազաթիւր: Երբ փոքրերս, Չամլըճայի ուլոր-մուր ծաղկաւէտ արահետներէն հասանք լերան ստրահարթը, այնտեղ, մարգագետինն վըրայ փռուած դաշտասօղանին առջեւ նըստած գտանք Արուսեակ տիրամայրը՝ Գըրիգոր Զօհրապի կողքին:

Երկար ժամեր, մինչեւ մայրամուտը, մնացինք ուրախութեան սեզանի շուրջը, ուր բաժակահառները իրար կը յաջորդէին: Գրիգոր Զօհրապը, ինչպէս մանկան մը, զուրգուրանքով կերակրեց Պետրոս Դուրեանի պառաւ մայրը: Ուշ երեկոյեան, Պաղլար-Պաշիի անկիւնը, երբ տիրամայր Արուսեակը կը բաժնուէր Զօհրապէն, անզօր նայեցաւ Պաղլար-Պաշիի դերեզմանատան տաղիին դրանը, ուր կէ 10-15 քայլի վրայ թաղուած էր իր անմահ որդին՝ Պետրոս Դուրեանը, եւ, արցունքները կլլելով ըսաւ Զօհրապին. «Ախ, Գրիգոր է՞՞՞նտիս, պէտք չէ՞ր, որ Պետրոսս ալ վայելէր կեանքը»: Իմաստուն Զօհրապը պատասխանեց անոր. «Թանկագիլին մայր Արուսեակ, մահը ամէնքնուս համար է, իսկ անմահութիւնը շատ քիչերուն է արուած»:

1904ին ամառը Իսկիւտարի Պաղլար-Պաշի թաղը օղափոխութեան էին: Կիրակի առտու մը, կերուխումի պատրաստութիւններով, Չամլըճա գացինք: Այնտեղ միացանք ծանօթներու, որոնց մէջ էր Գրիգոր Զօհրապը: Երբ կը խորհէինք մեր խրախճանքը լերան գազաթիւր ընկելու մասին, կրկու միաքարչ կառքեր կանգնեցան մեզմէ ոչ հեռու: Անոնց մէջ էին Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանը, տիրամայրը՝ 80ամեայ Արուսեակն ու սըր-

ԱՂԱՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՍՍՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

«ԳՈՒՐԵԱՆԻ ՏԵՏՐԱԿ»ԷՆ ԱՆՋԱՏՈՒԱԾ ԷՋԵՐ



Այս ամառ Պոլսու գացի: Անշուշտ իբրև կէս-մտաւարակամ, առաջին պարտականութիւնս եզար վագել Ակիւտար, ապա քիչ մը անդին գտնուող հայոց գերեզմանատունը. յարգանքի տուրքը տալու վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանին:

Քիչ ետք, բանաստեղծին երգած Զամլընայի բարձունքին վերայ կանգնած՝ կը դիտէի Պոլսոյ համայնապատկերը, ու քիչ-քիչ կը հեռանայի ներկայէն:

Զինացազար: 1915: Սուլթանի անկումը: Երլարզի պամպան: Պանի Օքումանը: 1890 եւ 1888: Կը հասնէի Գուրեանին, որ կարծես բովա կանգնած՝ մելամաղձու ժպիտով մը կ'արտասանէր իր քերթուածները ու մենք բով բովի կ'իջնէինք Զամլընայի բարձունքէն, կը հասնէինք Ակիւտար, մինչեւ ծովեզերեայ սրճարան մը, ուր կը նստինք դէմ դիմաց, մինչ ինք կը շարունակէր արտասանել հատուածներ իր ստեղծագործութիւններէն:

Ես սակաւին կանգնած էի Զամլընայի բարձունքին, սակայն միտքս ու հոգիս անջատուած էին մարմնէս, մտքի արտացոլացում մըն էր, տեսակ մը առասպելական *թայմ-մաշիկի* հրմայէնով ետ-զարձ ըրած էի հարկւր տարի ու նստած դալկահար

բանաստեղծին դիմաց, անվերջ ծփացող մտայլ վաստիորի ափին:

Անմիջապէս մտերմութիւն մը ստեղծուեցաւ մեր միջեւ եւ ունեցանք գրոյց մը, թեր ու դէմ կարծիքներու երկար բախում մը, որուն պատմութիւնը լեցուց ամբողջ տետրակ մը՝ «Գուրեանի տետրակը»:

Մեր գրոյցէն ետք, հեղ մը դառնօրէն ժպտեցայ ես ինծի եւ սկսայ իջնել Զամլընայի բարձունքէն վար:

Ակամայ սկսայ դարձեալ մըտածել Պետրոս Դուրեանի մասին:

Քսան տարեկանիս, տակաւին բանաստեղծութիւնները կը գնահատէի իրենց հեղինակներուն անունով, նիշդ մօրս նման:

Որբանոցներու սերունդէն էր մայրս ու իրեն համար, Պէշիկ-Քաշիան, Գամառ-Գաթիպա եւ Պետրոս Դուրեան վաւերական ու մեծ բանաստեղծներն էին ու հայեռայնի համագօր էր որեւէ բնագատութիւն, որ կրնար նրբանցանել յիշեալ քերթողներուն համբաւը:

Օր մը, մայրս չափազանց խրոնոված վերադարձաւ մեր տան դիմացի դրացիին տունէն: Անկապած լուրջ խնդիր մը ըլլալու է, մտածեցի:

— Գիտե՞ս, — ըսաւ անց

հարցումի սպասելու, — սա մեր դիմացը մեր վարձակալ մը եկած է Այննարէն: Ուսուցիչ է ու գըրոզ:

— Լա՛ւ, առա՞ր համար խոս-վեր ես:

— Ձգէ, որ վերջացնեմ: Թեր-բերու եւ ամաթերթերու մէջ կը գրէ եղեր եւ եթէ բան մը ը-սեմ ճեղի, բնաւ պիտի չըզայնա-նաս:

Մայրս բուէր կուլ սալով հա-զու կըցաւ արտասանել:

— Պետրոս Դուրեանը չի՞ հաւ-նիր կար...

Մինչեւ աչդ տարիքս, այսպի-սի անարգանք ու սրբապղծու-թիւն լսողութիւնս չէր բռնարա-րած: Մինչեւ այդ տարիքս, միայն գուրգուրանք ու փառարանու-թիւն մատուցուած էր Պետրոս Դուրեանի անունին ու այս յան-կարծակիան ամբարտաւանութե-նէն կատարած՝ վագեցի դէպի պա-տըշցամը ու ամբողջ ծամ մը սպասեցի հոն, տեսնելու համար այդ վարժապետը, որ կէտորումն մաշի համար տուն եկած էր:

Ո՛հ, ինչ հակակրելի թուեցաւ ինծի իր չորցած դէմքը: Գան-գուր մագերը մակտիմ վրայ բափուած էին ու ձեռքին բռնած ունէր բանի մը գիրք:

Իր ետեւէն նայեցայ երկար ու քիչ — քիչ հակակրանքս սկսաւ փոխուիլ տարբեր գզացումի մը, որ եթէ համակրանք չէր, գուցէ համակրանքի մէկ տարբերակն էր: Այդ վայրկեանին, այդ ու-սուցիչը արի մուտքստ մըն էր, որ գլուխը վեր բռնած՝ կը քա-լէր հպարտ, արծամարհելով սաստիկ հովը, որ կը խաղար իր երկար ու գանգուր մագերումն հետ:

— Անա մէկը, — ըսի ես ին-ծի, — որ կա՛մ ամբարտաւան է եւ կամ խիզախ: Ժամանակի ըն-

թացիւն սորվեցայ, որ խիզա-խութիւնն ու ամբարտաւանու-թիւնը այնքա՛ն ալ հեռու չէին իրարմէ: Ժամանակի ընթացքին իմացայ նաեւ, որ այդ ուսու-ցիչը կը կոչուէր Պօղոս Սնապ-եան:

— Պետրոս Դուրեանի մասին բան մը պատրաստեցի՞ր, — հար-ցուց, երբ երկու շաբաթ առաջ հանդիպեցայ իրեն:

Ըսի, թէ անգրչիբիմեան երկար գրոյց մը ունեցած էի Դուրեանին հետ եւ գրոյցին կապուած կըց-կրտուր յուշերը միայն բերած էի հետս, եւ աւելցուցի:

— Անգամ մըն ալ կարդացի իր քերթուածները եւ գիտե՛ս. երեք չորրորդը գրեթէ բան չեն ար-ժեր:

Ժպտեցաւ:

— Իրական պատկերը այդ է, տղայական եւ պարագայական թոթովանքներ շատ ունի, անուա-նելի են, երբ մանաւանդ այսօր-ւան չափանիշով կըռնու յիշեալ շաբթը: Սակայն երբ մկատի ունե-նաս, թէ իրմէ առաջ ինչ կար, այն ասեմ կը համագուխ իր ի-րական արժէքի մասին: Կը տես-նե՞ս ի՞նչ նոր է լեզուն, ի՞նչ վառ են ստեղծած պատկերները, թռիչք ունի, ջիգ եւ զգացում, նարութեան զգայարանք, անուա-խաղկ պանդգնութիւն մը: Իր ամբողջութեան մէջ յայտնու-թիւն մըն է Դուրեան:

Ձուգեցի իրեն պատմել քսան տարի առաջ պատահածը, ցա-սումս ու ընդվզումս, սակայն որոշեցի այս բոլորը բացատրել մօրս, որպէսզի տարակարծու-թիւններն ու թիրիմացութիւն-ները միանգամընդմիշտ փարա-տին ու բանաստեղծ Պետրոս Դուրեան իր լայնածաւալ ու բարձրադիր պատմանդանը գրա-ւէ բոլորիս սրտին մէջ:

Ս. Ն. ՍԱՐԻՆԵԱՆ

## Բ Ա Ր Գ, Հ Ա Ր Ո Ւ Ս Տ

### Ե Ի Բ Ա Ջ Մ Ե Ր Ա Ն Գ

*Ոչ ոք այնպէս զգայնօրէն չվերապրեց Հասարակական ու ազգային այդ մուսյլը, ինչպէս Դուրեանը: «Նոր սեւ օրեր», այսպէս նրան ներկայացաւ իրականութիւնը: Նրա օրօրոցային Հայրենականը յուսալաւ երգ չէր, այլ ողբի մեղամաղձոտ մրմունջ:*

Փռխտակ քաղցր օրօրներու, հայրենի՛ք,  
Օրրամիտ քով մայրիկս ըզքեզ միշտ ողբաց,  
Համբոյրիցն հետ շիք մ'ըզգացի արտասուաց,  
Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք:

*Նրա քնարը մի վերջին ճիգ եւս արեց, փորձեց վերապրել մարած յոյսերի ուսմանտիկական պատրանքը, ճշաց զահագին ցաւի» ազգային բողոքը, «զէնքի դէմ զէնք» մարտակոչեց, խաղաղուեց զսիրոյ եւ միութեան» վերջնական իդէալի փրկաւէտ հաւատով, բայց դրանք այնպէս էլ մնացին իրբեւ սիւբսեկտիւ արձագանդներ: Թոմաստիկ բանաստեղծը մեն մենակ մնաց տըրբամած Հայրենիքի հետ եւ փարեց նրան սիրոյ ու գորովանքի անձնականօրէն այնքան մօտ ու յուզաթափաւ նուիրումներով: Հայրենասիրական լիտիկայի այսպիսի անձնականացում դեռեւս չէր զգացել Հայ պոեզիան:*

*Ինքնամոռաց եւ թրթուուն ազնուութեամբ բանաստեղծը Հայրենիքը ձուլեց իր էութեան հետ, որպէսզի այն չաղարտի անձնական ոչ մի այլ գայթակղութեամբ: Նա պատրաստ էր նոճի դառնալ եւ շուք տալ Հայրենիքին, արցունք լինել եւ ցօղել Հայրենի դամբանները, Հուր դառնալ եւ ազատութիւն տալ Հային, պատրոյգ լինել եւ լուսաւորել Հայրենի փառքը, արիւն դառնալ եւ կարծիք ներկել Հայրենի սեւը, գերեզմանում իսկ քնարի ձայն լինել եւ Հայրենիքի երգ երգել: Արուեստի մի հոյակապ գոհար է ըիմ ցաւը»*

digitised by A.R.A.R.@

բանաստեղծութիւնը, ուր հայրենասիրութեան գաղափարը այնպէս բերեցա-  
նում է անձնական ապրումների լիրիկական խոհերում .

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝  
Յամաք գտնել աղբիքն յամայր ,  
Յամբի՛լ ծաղիկ հասակի մէջ .  
Ո՛հ, չե՛ր այնչափ ցաւ ինձ համար :

Ջերմ համբոյրով մը դեռ չ'այրած՝  
Սա ցարս ճակատս դարկահար՝  
Հանգչեցունի՛լ հողէ բարձին .  
Ո՛հ, չե՛ր այնչափ ցաւ ինձ համար :

Դեռ չը գրկած էակ-փունջ մը  
Փըպտէ, գեղէ, հուրէ շաղեալ՝  
Գրկի՛լ սա ցարս հողակոյտը .  
Ո՛հ, չե՛ր այնչափ ցաւ ինձ համար :

. . . . .

Հէ՛ք մարդկութեան մէկ ոստը զօս՝  
Հայրենիք մը ունիմ թրշուտ .  
Զ'օգնած անոր՝ մեռնի՛լ աննշան ,  
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցա՛ւ ինձ համար :

*Դուրեանի քնարը կոչուած չէր իր լարերը բաժանելու դուռած մտիւ-  
ների պարզ վերապրումներին : «Հանճարեղ անհատի» ոտանտիկական մե-  
ծութեամբ նա ակնկալեց ամբողջ աշխարհը, զգացմունքների, խոհերի մի ան-  
հուն աշխարհ, որն աւելի բարդ է, աւելի մեծ, աւելի տարերջոտ, քան եր-  
բեւէ ընդգրկել է հայկական պոեզիան : Դուրեանը բացեց մարդկային հոգու  
անթափանց խորշեր, անտեսանելի անկիւններ, եւ անհաս հորիզոններ : Մին-  
չեւ Դուրեանը հայ քնարերգութիւնը միագիծ տրամադրութեան վրայ էր կա-  
ռուցուած : Դուրեանի բանաստեղծութիւնը զգացումների սինթէզ է՝ տրամա-  
դրութիւնների հարստութեամբ, յոյզերի լիութեամբ, ներքին գրամատիկ լա-  
րումով : «Սիրելի», «Լեակ», «Իրժել» բանաստեղծութիւնները մոնումենտալ  
ընդգրկումների երկեր են, որոնք ընդլայնում են քնարական պոեզիայի դե-  
ղարուեստական հնարաւորութիւնները : Զգացմունքների լիութիւնը, տրա-  
մադրութիւնների սինթէզը, հոգեբանական դրամատիկ անցումները թելա-  
դրում են իրենց պոետիկան, շափի, կառուցուածքի, խօսքի ու պատկերի հա-  
մապատասխան ձուլուածքը .*

Փունջ մը կընճիտ, բոյլ մը կայծակ,  
Դըժոխք մ'անէ՛ծք խոցեց հոգեակն :

*Այս «երկտող-քնարանով» սկսուած է «Իրժել» բանաստեղծութիւնը եւ  
նրանով էլ աւարտուած : Սա ինքնին ենթադրում է մի ուրոյն տրամաբանա-  
կան կառոյց : Սկիզբն ու վերջը միանում են, եւ եթէ բնարանում այն դրոյթ  
է, ապա վերջարանում դառնում է լուծում : Բայց դրանք իրենց մէջ մի ամ-*

բողոք ողբերգութիւն են պարփակում՝ բանաստեղծի բովանդակական իդէալի եւ իրականութեան բախման ահաւոր ցար։

Քէզի եւ անտիթէզի գուգորդումների, հակադրման, ներքին աններ-  
պաշնակութիւնների վրայ է Դուրեանը կառուցում բանաստեղծութիւնը։  
Միատուն մոտիւի «չործողութեան» հանդարտ բնթացքը նա փոխարինում է  
սուր ելեւէջներով եւ յախուռն տարերքներով։ Ներքին դրամատիզմը յաճախ  
բանաստեղծութեան մէջ բերում է երկախօտութիւնը, հարց ու պատասխանի  
մէջ առաւել խտացնում հոգեբանական դրութեան դրամատիկ սրութիւնը։ Այս  
խմաստով Դուրեանը վիթխարի նորարար էր մեր քնարերգութեան բնագաւա-  
ռում։ Մի՞թէ իր ձեւի կատարելութեան մէջ, «Ի՞նչ կ'ըսեն» բանաստեղծու-  
թեան նախորդն ունի հայկական պոեզիան,

Ինձի կ'ըսեն — ինչո՞ւ լուռ ես» . —  
«Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞»  
Արշալոյսը . որ կը բարձրի,  
Զի անհուն է այն ալ ի՛նձ պէս» :

Ինձի կ'ըսեն — միշտ տխուր ես» . —  
«Ինչպէ՞ս չըլլամ, մէկիկ մէկիկ  
Թօքափեցան գլխուս աստղիկք...  
Արշալոյս մը չ'անցաւ սրտէս» :

Ինձի կ'ըսեն — կրակոտ չ'ես,  
Լընտի մը պէս ես մեռած,  
Դալիանա՛ր դէմքդ ու հայեցումս» : —  
«Ո՛հ, յատակն են իմ փրփուրներս» :

Ես ինձ կ'ըսեմ — ժամդ է հասեր,  
Քու երկրորդ տել մօրդ գընա գոգ,  
Գեքեզման, հո՛ն գտնես քա գոգ  
Վարդեր, քրքում քոնի ու աստղեր...» :

Դուրեանի պոեզիան անձնական ապրումների հզօր տարերքը աստիճան  
առ աստիճան բարձրացրեց տիեզերական մասշտաբների եւ յանձնեց այն փի-  
լիսոփայական խոհի քննութեանը։

\*\*\*

Դուրեանի բովանդակական պոեզիան բնդայինց մարդկային զգաց-  
մունքների տարածական սահմանները։ Նա բնկալեց զգացմունքի «պատմու-  
թիւնը», զգաց նրա շարժումը ժամանակի եւ տեղորութեան մէջ, Թեքեւս Հենց  
սրանով պէտք է բացատրել, որ Դուրեանը բանաստեղծական խոհերի ոլորտն  
է առնում վերյուշը, վերապրում այն, ինչ արդէն անցել է՝ «Ա՛հ, յիշատակ-  
ներ կան, որոնք իրենց շարունակութեան մէջ միեւնոյն շանթերն են»։ (Աեւ-  
լորդ չէ նկատել, որ վերյուշի եւ զգացմունքի «պատմութեան» պոեզիան Հենց  
բովանդակի բանաստեղծական յայտնութիւնն էր)։

Դուրեանի բովանդակական «եսը» ամենահզօրն էր հայկական պոեզիա-  
յում, այն փիլիսոփայական «եսը», որ յանդղնեց բնագրկելի եւ կապակցելի ողջ



տիեզերքը: Դուրեանի պոեզիոն բանաստեղծական նոր որակ էր, թէ՛ ըստ ձևի եւ թէ՛ ըստ բովանդակութեան: Որքան էլ Ալիշանը յախուռն էր, իսկ Պատկանեանը՝ անմիջական, այնուհանդերձ նրանց պոեզիան դեռ պահպանում է արտաքին շարժման ու պատմողական տարրի գեղարվեստական, միջնորդու շնորհիւ զգացմունքի ներքին տարրերի վրայ է կառուցում բանաստեղծութեան էներգիան ու ուրիշ: Որքան Պէտրիկեանի ու Շահազիզի լիբիկան նուրբ եւ հրաժշտական է, այնուհանդերձ, այստեղ զգացմունքը արտայայտուած է մեղեդիական հանդարտութեամբ, համընթաց տոնով եւ համաչափ ուրիշով, մինչդեռ Դուրեանի բանաստեղծական զգացմունքը դրամատիկ է, յախուռն, ալեկոծ: Նա զգում է բնութեան ամենանուրբ շրշիւնը, հովի ամենաթեթեւ հեւքը: Բնութեան ամէն մի շարժումն իր երգն է մրմնջում նրա զգայուն ջնարի լարերի վրայ, Զարմանալի զգացողութեամբ է նա մարդկային ապրումները համահնչում բնութեան երանգներին, կարգում բնութեան «նոյնքանական» թրթիւր: Աստղերը, արեւը, անտառը, ծառերն ու տերեւները, ծագող արշալոյսն ու մարդկային շարժումը, հովի սօսափն ու առուակի խոխոլը, երկնի կապոյտն ու մեղամազծոտ լճակը, տխրամտած աչունն ու ծաղկահանդէս Մայիսը՝ ամէնը մարդկային հոգու մի իմաստուն խորհուրդ են թաքցնում իրենց մէջ, սրտի մի յաւերժող արձագանգ:

Քարդ, հարուստ եւ բազմերանդ է Դուրեանի պոետական արուեստը, տողերի, հնչիւնների, ուրիշի մէջ նա գերագոյն զգայնութեամբ տեղադրեց բնութեան շարժումը, մարդկային հոգու բարախումները, նա կատարելութեան հասցրեց բանաստեղծական պատկերը:

Երեկոյ է. քոցավառ է հորիզոն.  
 Կռաք մը կ'անցնի դագաղի պէս յամբընթաց,  
 Գեղուկի մը ընկաղմանս տրափէ հոն,  
 Վերջալոյսի ազդի՞կ մ'է, սա, ո՛վ Աստուած.  
 Եթէ նայի,  
 Կ'ըսես — եի՛մա կը մարի»: («Թրքուկիմ»)

Բնութեան, սիրոյ ու հաշտութեան վայելքն է՝ բանաստեղծութեան շարժումը սահում է տողերի ներդաշնակ ընթացքով:

Համբոյր մ'առի ներսնէ,  
 Համբո՛յր մ'անհուն գորովի,  
 Երբ կարմիր շագֆ մարտիմ  
 Հորիզոնին վերեւի... («Ներս հետ»)

Մի հապճեպ պահ է, մի շարժում եւ մի հայեացք՝ այդպէս էլ տողերն են փոխանցում թռուցիկ ու թեթեւ:

Միմակ էր.	Շիկնեցաւ
Վարդ մ'ըզգօս	Նէ գուարթ՝
Մատուցի	Կ'ընդունէր
Ներս ձօն:	Երբ իմ վարդ:

(«Զօնիկք»)

Փիլիսոփայական հաշտեցում է մահուան հետ, անմահութեան առեղծ-  
ւածի լուծում՝ բանաստեղծութեան տոնը զառնում է հանդարտ, լեցուն եւ  
խոհական.

Եթէ տժգոյն մահու երեշտակ  
Անեուն ժպտով մ'իջնէ իմ դէմ...  
Շոգիաման ցաւքս ու հոգիս,  
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ...

(«Իմ մահը»)

Փոխում է շափը, փոխում է ինտոնացիան, այլ ձեւ ու իմաստ են  
ստանում տրամաբանական միաւորները, կըր մտորումները տիեզերական  
մասշտաբներ են ընդունում, երբ բանաստեղծի ոտմանտիկական «եսը» ան-  
հուններն է թափանցում եւ կրում համաշխարհային թախծի համակ ծանրու-  
թիւնը («Տրտունգէ»):

Դուրեանը ստեղծեց բանաստեղծական մտածողութեան, պատկերի,  
համեմատութեան մի նոր եւ հոյակապ սիւտեմ: Նա համադրեց անհամատե-  
ղելին, կատարեց գոյների անսովոր մերձեցումներ. «Փունջ մը կնճիս, բոյլ  
մը կայծակ», «արցունքներու լոկ կրկինք», «չիթեր դիչերուան», «թօթուեց  
թեւերն հոգիս մոլոր», «համբոյր մ'անհուն դաշկահար», «հոգիս աստղ մը  
բոց», «եւ այս աշխարհն ալ անձպիտ», «նույն ցուրտ ճառագայթ», «թրթը-  
ռուն ծիծաղն մահու դժխեմ», «արշալոյս մը շանցաւ սրտէս», «թեւերուս  
մէջ լոյս մը, հով մը մարեցաւ», «ստուեր մ'էր նա, որ սահեցաւ զերթ թա-  
խիծ», «վարդից հրդեհ կար երկին», «մի զալկահար Մայիս անհուն»: սա բա-  
նաստեղծական մտածողութեան այն նոր որակն է, այն բարդ ասոցիացիան,  
որին հայ պոեզիան հասաւ տասնամեակներ յետոյ:

Ս. Ն. ՍԱՐԻՆԵԱՆ



ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

**ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԻՐԱՊԱՅՑ ԹԱՏԵՐԱԳԻՐԸ**

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ**

Հայ գրականութեան մէջ, Պետրոս Դուրեան կը ներկայանայ իբրև անզուգական բանաստեղծ եւ տիրանուշ քնարերգակ:

Բանաստեղծի իր մեծութեան զով, յաճախ աննշար մնացած են իր արձակ գրութիւնները, մանաւանդ թատերգութիւնները:

Սակայն, Դուրեան՝ իբրև հեղինակ, եւ մանաւանդ իբրև նորարար թատերագիր՝ անվիճելիօրէն իր արժանաւոր տեղը ունի մեր թատերական դրականութեան պատմութեան մէջ:

Պետրոս Դուրեան գրած է 13 թատերախաղեր, որոնցմէ առաջինը՝ «Վարդ Եւ Շուշան», յաջողած է նոր գիմագիծ մը ստալ մեր թատերգութեան, զայն «գաւառական ողբերգութեան» անձուկ պայմաններէն դուրս հանելով եւ դնելով «Վիպապաշտ թատերգութեան» հունին մէջ: Իսկ իր վերջին գործը «Թաւորոմ կամ թշուառներ»ը եղաւ Հայ թատերգութեան առաջին իրապաշտ երկը:

Մինչեւ 1860, Հայ թատերգութիւնը կը հետեւէր Գորնէյի եւ Ռասինի ստեղծած դպրոցին: Պետրոս Դուրեան, որ մասնաւորապէս խանդավառուած էր Շէյքսպիրի եւ Շիլլէրի թատերգութիւններով եւ կատարած էր կարգ մը թարգմանութիւններ անոնց գործերէն, ընտրեց վերոյիշեալ վարպետներուն վիպապաշտ ոճը, ինչպէս նաեւ կառուցային սկզբունքները:

Կը կարծենք, թէ Դուրեանի թատերգութիւններուն վրայ որոշ ազդեցութիւն գործած է 17րդ եւ 18րդ դարու Փրանսական վէպը: Որդեզրուած են Փրանսական վէպի թեմաները, պաշտական դաւադրութիւնները, ազգութաջութիւնը, առեւանգումը, թունաւորումն ու դաւաճանութիւնը:

Իսկ իր գործերուն մէջ գտնուող Հատուածական եւ գաթակարգային բախումներու աղբիւրը կարելի է նկատել մէկ կողմէ՝ այդ օրերուն Պոլսոյ մէջ տիրող Հատուածական Հակամարտութիւնները, իսկ միւս կողմէ՝ այն շափուղանց աղքատ միջավայրը, որուն մէջ կ'ապրէր տկարակազմ պատանին:



### ԳՈՒՐԵԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարոյաթօսութիւն.— Պետրոս Գուրեանի թատերգութիւններուն մէջ ինտոլ դէր մը ունի բարոյախօսութիւնը: Գրեթէ բոլոր թեմաները հիւսուած են բարիի եւ չարի բախումներուն վրայ: Տեսակէտները կը մեկնին այս երկու բեւեռներէն եւ նոյնիսկ Հոն՝ ուր շարն է յաղթականը, բարոյախօսութիւնը կը կատարէ իր դերը: Պայքարը բնականապէս կը գտնուայ սիրոյ շուրջ. աղատութեան եւ բռնութեան երկու Հակադիր Հոսանքները կը բախին իրարու. կը ներկայացուին բարբէր: Այս բոլորին մէջ, կը զգանք, թէ պատանի թատերագիրը կը ջանայ բարիի գիտակցութիւնը ներմուծել բնթերցողին մէջ:

Դասակարգելու հարց եւ ընդվզում.— Գուրեան կ'ապրէր իրենից մը մէջ, եւ կը յաճախէր մտաւորական շրջանակներ: Մանթէր կեանքի երկու ծայրայեղ երեւոյթներուն: Մանուկ օրերէն, իր մէջ սկսած էին աշկոծիլ Հարցազնականներ, որոնք կը տարուրերէին աղքատի եւ Հարուստի, զեղեցիկի եւ սղեղի, շահագործուողի եւ շահագործողի, Հայրենասէրի եւ ազգադաւի միջև: Գուրեան իր մօրթին վրայ զգացած էր մարդկային անիրաւութիւնը, որ կը մեկնէր զասակարգերու ստեղծած անհաւասարութիւնէն: Պատանի թատերագիրը չէր կրնար թողթին շանձնել իր մէջ կուտակուած այդ տառապանքը:

Գուրեան իր թատերախաղերով անդրադարձած է Հայերու անմիաբանութեան եւ դրդապատճառը գլխաւորաբար դրած է դասակարգային խտրականութեան եւ Հայ աշխարհում ազնուականներու զիջ կեանքին վրայ:

Մարդոց ստեղծած այս յոռի դիժներուն զիժաց՝ բժրոտացած է ան: Ճիշդ է, թէ բանաստեղծութիւններուն մէջ գտնուող ընդվզումի ուժգնութեան շնորհիւ կ'ապրէր իր թատերգութիւններուն մէջ, սակայն, ընդվզումի տարրը Հոն ներկայ է՝ վիպապաշտ թատրոնին պահանջած չափովը:

Այլաբանութիւն.— Գուրեանի թատերգութեան մէջ կը հանդիպինք այլաբանական տեսարաններու: Օրինակ, «Ան հազիր» թատերգութեան մէջ կան այլաբանական տիպարներ, որոնք Հայաստան, Յոյս, Սէր, Անմիաբանութիւն եւ թշուառութիւն անուններով կը ներկայանան մեզի: Ճիշդ է, որ անոնք կը տկարացնեն տեսարանն ու թատերախաղը, սակայն կը յաջողին ամբողջական մեւով մը Հանրութեան փոխանցել Գուրեանի միտքը, Գուրեանի բարոյախօսութիւնը:

Պատկերալից տեսարաններ եւ զգայնութիւն.— Գուրեանի թատերախաղերը մեծ ժողովրդականութեան արժանացան՝ շնորհիւ Հեղինակին շեղական յատկութիւններուն, ինչպէս նաեւ պատկերալից եւ յուզումնալից տեսարաններուն:

Սակայն, այս իրողութիւնը երկայրի սուր մըն էր Դուրեանին համար: Եթէ օտար թատրոնին քիչ ծանօթ ժողովրդային լայն զանգուածը խոնդափառուեցաւ Դուրեանի վիպապաշտ թատերախաղերու գերդաշունն անցքերով եւ լեցուց սրահները, տպա, ժամանակը՝ գրականութեան մեծագոյն գատաւորը՝ մերժեց Դուրեանի դործերուն մէջ գոնեոյ գերդաշունութեան ու քաջագանչութիւններու զեղումը: Տարաբախտ գրողին մահէն երկու տասնամեակ ետք, իր թատերախաղերը դարձան ժամանակավրէյ, ի բաց առեալ «Թատրոնն կամ թշուառներ» դործէն, որ կը պատկանի իրապաշտ դարոցին:

Խօսքի գեղարուեստական կառայցը եւ դիւրամտաչիլի լեզուն — Դուրեան ծնած էր բանաստեղծ, սակայն իր պատանեկան տարիներուն հրատարակ եկաւ իբրեւ թատերադիր: Բանաստեղծի իր խոնուածքին պատճառով՝ ան իր թատերգութիւնները գրած է քնարաշունչ լեզուով ու պատկերալից ոճով մը: Իր դործերուն մէջ, շինք հանդիպիր խօսքի գեղարուեստական կառայցի որեւէ՛ տկարութեան: Պատկերաւոր խօսքի վարպետ է Դուրեան: Ենորհիւ իր այս մեծ յատկութեան՝ կրցած է ստեղծել խօսքի ուժը եւ իրեն կապել ընթերցողն ու հանդիսատեսը:

Դուրեանի արձակը ունի ոճային բացառիկ խտութիւն մը, որ մինչ այդ դործածուած չէր մեր թատերական գրականութեան մէջ: Օրինակ, «Ես չեմ կրնար ժպտիլ, մինչդեռ կը սիրեմ, Հրաշնայ...»: Ես մեռնելու եամար կը սիրեմ, կը մեռնիմ սիրելու համար: Սիրոյ մէջ կեանքը մեծ է, իսկ մահը՝ անմահութիւն...»:

Մինչեւ Դուրեանի թատերական գրականութիւնը, հայ թատերագրները կը ներկայացնէին պատմական թատերախաղեր, որոնք լեցուն էին երկարաշունչ եւ անզտկալի ճառերով, հռետորական պոռոտախօսութիւններով եւ դարձգարձիկ ոճերով: Ճիշդ է, որ Դուրեան եւս զրեց պատմական թատերախաղեր, սակայն ան գիտցաւ խուսափիլ վերոյիշեալ զեղումներէն եւ կըրցաւ բաւականաչափ զուսպ ըլլալ:

Վերջացնելու համար Դուրեանի թատերական երկերու առանձնախտկութեանց թուումը, յայտնենք, թէ իր ամենակարեւոր յատկութիւնը եղած է պարզ աշխարհաբարի գործածութիւնը: Մինչ այդ, մեր թատերգութիւնները կը գրուէին գրաբարախառն աշխարհաբարով մը, որ շատ հասկընալի չէր ժողովրդային լայն խաւերուն:

Դուրեան ընտրեց պարզ աշխարհաբար, դիւրամտաչիլի լեզուն, եւ ժողովուրդը աւելի եւս հասկցաւ թատերգութիւնը, սիրեց թատրոնը ու օտարուեցաւ անոր գեղեցկութիւններէն:

\*\*

Ձմռանք, թէ Դուրեան իր առաջին թատերգութիւնը՝ «Վարդ և Ես» շուն կամ Հովիւ և Մասնաց» գործը գրած է 1867ին, երբ դեռ 16 տարեկան էր: Իսկ իր լուսագոյն գործը՝ «Թատրոն կամ թշուառներ»ը գրած է 16 օրուան ընթացքին: Ձմռանք, թէ Հէջ Դուրեան իր թատերգութիւնները գրած է քարշտալու համար իր հիւանդ գոյութիւնը: Գրած է անպարանջով, ընդզուտով եւ գրեթէ անօթի վիճակով:

Իր թատերախաղերը բեմադրուած են ծայրէ ծայր լեցուն սրահներու մէջ. ծափերը եղած են առատ, սակայն ինք վարձաարուած է նուագադոնով:

Մամուլին ու ժողովուրդին գնահատանքը եղած է շունչալից, որովհետեւ Դուրեան անվիճելիորէն նոր շունչ մը բերած է այդ ժամանակաշրջանի Հայ Քաարոնին: Վարդուիան զգացած է տաղանդաւոր պատանիին արժէքը եւ զայն լծած է գործի: Իսկ Տիգրան Զուհաճեան, խանդավառուելով Դուրեանի թատերգութիւններուն կուռ ոճէն եւ ժողովրդային թեմաներէն՝ կատարած է անոնց երաժշտական յորինումները:

Դուրեանի կարգ մը թատերգութիւններուն մէջ կան պատմական սրբախաներ: Սակայն ասիկա մեր նիւթէն գուրս ըլլալով, կը գոհանանք պարզ յիշեցումով մը միայն:



Համառոտագրինք Դուրեանի կարգ մը թատերգութիւններուն նիւթերը:

«ՎԱՐԳ ԵՒ ՇՈՒՇԱՆ ԿԱՄ ՀՈՎԻԻՔ ՄԱՍԵԱՑ (1867)

Մերային հովուերգութիւն մը, որ կը ներկայացնէ նաեւ թշուառութիւնը, աղէտն ու չարութիւնը: Վարգ եւ Շուշան՝ սիրոյ ներկայացուցիչներն են. Սուրճակ՝ չարութեան ճարճնացումը. Մարիամ՝ իր թշուառութեան մէջ լքուած տիպարը:

Այս գործին մէջ, Դուրեան կը մնայ վիպա-զգացական սեռի ա՛յն գիծին վրայ, ուր ողբերգութիւնն է տիրողը: Սակայն, հեղինակը՝ իր ա՛յս տալիս գործով իսկ՝ կրցած է որոշ չափով մը հեռու մնալ զղասական ողբերգութեան կառուցային ոճէն: Միւս կողմէ, Դուրեան մտածած է նորութիւն մը մեր թատրոնէն ներս. քույրսային ոչ մէկ շարժում կամ լուծում իր թատերգութեան մէջ. բացատրականի միջոցով ոչ մէկ պատմութիւն. զէպոսները տեղի կ'ունենան գործողութիւններու միջոցով, հանդիսատեսին դիմաց եւ իրենց լուծումը կը գտնեն բեմին վրայ:

Ան տարեկան թատերագրին գործին մէջ, անկասկած կան թերութիւններ, մանկունակ ու միամիտ բացատրութիւններ եւ, մա՛նաւանդ, կրկնութիւններ: Սակայն գեղեցիկ եւ նոր ոճը, ջնարական շունչը, ինչպէս նաեւ ստոր գրականութենէն զներածուած» ոճերներն ու դաշունհարութիւնները շատ բան փրկած են եւ թատերախաղը դարձուցած սիրելի իր ժամանակաշրջանի մտայնութեան:

«ՏԱՐԱԳԻՐ Ի ՍԻՊԵՐԻԱ»

Մօտ հարիւր տարի ձեռագիր վիճակի մէջ մնալէ ետք, թատերգութիւնը վերջերս լոյս տեսաւ «Սփիւռէ» շաբաթաթերթին մէջ: Դուրեանն հոս եւս կը բերէ նորութիւն մը: Այդ ժամանակաշրջանի հեղինակները ընդհանրապէս կը կեդրոնանային դարեր ատալ տեղի ունեցած պատմական զէպոսներու վրայ: Պատանի թատերադիրը իբրեւ թեմա ընտրեց իրեն ժամանակակից ազգային հրատապ հարց մը եւ, իբրեւ կեդրոնական տիպար՝ ներկայացուց ազգային-հասարակական գործիչ Միքայէլ Նալբանդեանը:

Ընդհանուր առմամբ պարզունակ այս թատերախաղին մէջ՝ կը հանդիպինք գեղեցիկ էջերու, յաջող պատկերներու: Դուրեան ջնարաշունչ ոճով մը

իր ձայնը կը միացնէ Հայկական Զարթօնքի ընդհանուր շարժումին, եւ իր մտածումները դնելով Ազատութեան բերնին մէջ, կը դրէ. «Մթալի՛. գիտցիր, որ ան իմ ձայնս է, եւ պիտի գամ զիեզ քու ալեւոր հայրենացոյ գիրկը պիտի գարձնեմ եւ Մասեաց մուսամբը գլուխդ ծաղկեայ սրակնորով պննու՛նով՝ ոսկի քնարներուն թեյնքուն վրայ քու անունդ պիտի անմահացնեն: Կարնր պիտի անցնիմ եւ դեռ Նալբանդեանի ամունը քնարներու եւ շղթանց վըրայ պիտի խայտայ: Եթէ հայոց ազատութեան ժամանակէն առաջ մեռնիս, պիտի գամ եւ քու անմահ շիրմէդ պիտի զօշիմ. Յնծացէ՛ք ոսկերք Նալբանդեանի, հայոց ազատութեան արշալոյսը ծագեցաւ եւ այդ ցանկալի ոսկերները հայրենաց գիրկը պիտի լեցնեն»:

«ՍԵՆԻ ՀՈՂԵՐԸ ԿԱՄ ՅԵՏԻՆ ԳԻՇԵՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ» (1868)

«Սնր հողերը» եղած է Դուրեանի ամենաշատ բեմադրուած գործը: Նիւթը առնուած է Քենկթիմուրի արշաւանքի ժամանակ Սերաստիոյ մէջ պատահած պատմական ծանօթ դէպքերէն:

Իր այս գործով՝ Դուրեան կը ջանայ ժողովուրդին մէջ հրահրել ազատութեան տենչը: Սակայն կառոյցով ակար է գործը ու չի մտածում ի եւ շարժումի կրկնութիւններով: Հակառակ այն իրողութեան, թէ Դուրեան յաջողած է բեմ բարձրացնել առեւտրիչը, մատնութիւնը, փաստաբերութիւնը, հայրենասիրութիւնը, զգլումն ու հոգեկան այլ տառապանքները, չէ յաջողած սակայն զսնտնջ դնել զօրաւոր Հիմերու վրայ՝ ուսուցիչ ճառերու եւ բացազանչութիւններու հետեւանքով: Այս գործին մէջ, նշմարելի է արուեստականութիւն մը. հայրենասիրութիւնը պայմանական է հոն:

«ԱՐՏԱՇԷՍ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ» (1969)

Սոյն թատերգութիւնն ու «Թատրոնը կամ թշուառներ» գործը կարելի է նկատել Դուրեանի լատգոյն երկու թատերգութիւնները:

Հոս, արդէն յաղթահարուած կը գտնենք պատանի թատերադրին բազմաթիւ թերութիւնները եւ կը նշմարենք կատուցային նորութիւններ: Ողբերգութիւնը հիւսուած է վիպապաշտ յղացումներով: Գոյութիւն ունի խիստ դնահասակն աստիճանական զարգացում մը. առաջին արարին, կը յայտնուի նիւթ մը, միւս արարներուն մէջ կը ճիւղաւորուի, կը կնճատի, կը ստեղծէ հետաքրքրութիւն, իսկ վերջին արարին կը գտնէ քր լուծումը: Եւ այս բոլորը կ'ընթանայ կուռ երկաթասուրբեամբ եւ վիպական տաք մթնոլորտի մը մէջ:

Շէշքափրի գործերու շունչը ներկայ է այս թատերգութեան մէջ: Իսկապէս հրաշալի էջ մըն է Գ. արարի Բ. տեսիլը, ուր Արտաշէսի կողմէ լքուած Որմզդուխտը աշխարհակալի երեսին կը նետէ մեծամտութիւններու կտին թաքնուած ունայնութիւնը:

Սակայն, այս հրաշալի տեսարանէն քիչ անդին, Գ. արարի վերջաւորութեան եւ միւս արարներուն՝ խաղը կը տկարանայ: Պատճառը թերեւս պէտք է փնտոնել Որմզդուխտի տիպարի զօրութեան եւ Արտաշէսի տիպարի տկարութեան միջեւ: Այս ձեւով, հաւասարակշռութիւնը խախտած է երկու

լլիաւոր անձնաւորութեանց միջեւ, եւ Արտաշէս՝ իրբեւ աշխարհակալ ու մարտիկ՝ կորսնցուցած է իր զերիշխանութիւնը: Մինչդեռ, Որմզդուխտի ատկարը (որ որոշ չափով կը յիշեցնէ Շէյքսպիրի Լէյտի Մաքպէթը) հրաշալիօրէն օտարուած է վրէժխնդիր կնոջ տուեալներով՝ համոզիչ դատանութեամբ, տնօրէնութեամբ, ինքնազստանութեամբ եւ անհատականութեամբ:

«ՏԻՓՐԱՆ Բ.»

Չափազանց ծաւալուն գործ մը, ուր մէկտեղուած են հինգ «երկկոյք»-ներ (Թատերգութիւններ), իւրաքանչիւրը կազմուած հինգ արարներէ: Առաջին երկու «երկկոյք»ներու ձեռագիրները միայն գտնուած են. իսկ միւսները կը մնան անպատանելի: Կասկածներ կան, թէ «Տիգրան Բ.» Դուրեանի գործը չէ եւ կը պատկանի ուրիշի մը գրելին:

— «Ասպատակութիւնք Պարսկաց ի հայս կամ Աւերսմն Անի Մայրա-  
փաղաք Բագրատունեաց» (1870)

— «Անկումն Արշակունի Հարսուսեանց» (1870)

Այս երկու Թատերախաղերը կը պատկանին «Արտաշէս Աշխարհակալ», «Տիգրան Բ.» եւ «Անի իողերը» Թատերգութիւններու շարքին: Ունին պատմական վերապաշտ կառույց, ուր իշխողն է իրթին դաւադրութիւնը:

Տկար գործեր: Տիպարները կը նմանին իրարու եւ չենք հանդիպիր իրար հակադրուող շնչուած խառնուածքներու: Հոգեվիճակներու զարգացումները համոզիչ չեն: Յայտնի է, որ Դուրեան հապճեպով գրած է իր այս գործերը եւ լաւ քննարկած չէ տեսարաններն ու տիպարները:

Այս վերջին երկու Թատերգութիւններուն մէջ կը հանդիպինք ողբերգական յաջող տեսարաններու, որոնք լի են յուզիչ անզգեքով եւ քնարերգութեամբ: Այդ էջերուն մէջ կը գզանք, թէ Դուրեան աւելի բանաստեղծ է, քան Թատերագիր:

«Ասպատակութիւն Պարսկաց» Թատերախաղին մէջ կան հայ Հոգեւորականին կեանքը լարդախ եւ անբարոյ ներկայացնող տեսարաններ: Մինչ այդ, ոչ ոք համարձակած էր քննադատաբար մօտենալ կղերին եւ խրատովանահայր մը պատկերացնել իրբեւ անասնական կիբքերով լեցուն անձնաւորութիւն մը, որ կը շահագործէ իրեն դիմող ազլիկներուն անփորձութիւնն ու միամտութիւնը:



«ԹԱՏՐՈՆ ԿԱՄ ԹՇՈՒԱՌՆԵՐ»

Դուրեանի այս գործը կ'անջատուի միւսներէն՝ իր արժէքին ու իրապաշտ կառույցին բերումով:

Կ'արժէ նաեւ անշատաբար խօսիլ անոր յառաջարանին մասին, որ ինքնին հետաքրքրական է եւ, դրական առումով՝ յիշատիւնական:

Յառաջարան.— Դուրեան՝ իր գրած յառաջարանով՝ կը յայտնէ վիպապաշտ Թատերգութիւնին իր հրատարումը, եւ մուտքը իրապաշտ Թատերգութիւնին ներս:

Հատուած մը յառաջարանէն.



«Քատերախաղիս միւրը քէպլտուի Յշմարիտ դէպքեր կը պարունակէ, սակայն այսուամենայնիւ, ինչպէս որ հեղինակ մը կը ստիպուի ընել, պահանջուած յանելադրութիւնք չեն գրացուած :

«Ձայս երկասիրելով, իմ մասնաւոր դիտումն է իմ աննշանաբեամբ օրինակ ըլլալ ուրիշ քատերագրաց, որ աւելի արդի ընտանեկան անցքերը պարունակող բարոյալից քատերախաղի յօրինելու աշխատին, որով աւելի օգուտ կրնան ընծայել հայ հասարակութեան, քան թէ ազգային եին դիցագրութիւնքն որքերգութեան վերածելով, որք միշտ միակերպութեան վրիպած չեն, վասնզի նիւթոց հարուստ ազգիւրներ չունին եւ հետեւաբար ունենդիր քատերախաղներու տարակալի կրնան ըլլալ իրենց միակերպ եւ անընդհատ ներկայացումներովը» :

*Դուրեան կ'ուզէր կանխել ժամանակը: Արդարեւ, Հայ թատերասէր հասարակութիւնը, այդ օրերուն մեծ հանոյթով կը դիմաւորէր զազգային եին դիցագրութիւնքն ներկայացնող թատերախաղերը: Սակայն երիտասարդ թատերադիրը անդադարած էր, թէ միօրինակութիւն մը ստեղծուած էր Հայ բեմին վրայ: Անգրադարձած էր, թէ եկած էր ժամանակը՝ անմիջական իրականութեան հետ կապ ունեցող հարցեր հրապարակ նետելու:*

*Դուրեան իր յառաջարանին մէջ կը գրէ. «Առյժ թատերախաղը վիճարկելու չի կարող հեռանալ թատերահանդէսին պէտք չի պիտի յեղափոխէ հասարակութեան գաղափարքն ու գրադմունքը»: Չափազանց համեստ էր հէջ պատանին: Այսօր, իր մահէն հարիւր տարի ետք, այնքան անմիջական դարձած է ա՛յն իրադրութիւնը, թէ իր սոյն յառաջարանով եւ թատերախաղով, Դուրեան յեզպատիւց մեր բեմը, նոր էջ մը բացուած էր թատերգութեան համար եւ նշաւ մեր առաջին իրապաշտ թատերագիրը:*

*Իր իրապաշտ թատերգութեան համար՝ Դուրեան եղաւ չափաւորական եւ ընտրեց ժողովուրդին սրտին մօտ եզող կենցաղային հարց մը:*

«Քատերան եւ քշուտներ» — Նիւթը. երիտասարդ բանաստեղծ Երանդ կը սիրէ աղքատ աղջիկ մը՝ Վարդուհին, որուն մեծահարուստ հայրը կորսնցուցած է իր ամբողջ ունեցածը եւ այժմ կը գտնուի ծայրաստիճան թշուառութեան մէջ: Մակար անուն տնօրէն մը միջնորդութեամբ, 50 ոսկի փոխարէն Վարդուհի կ'ընդունի իր պատիւը ծախել տարբերու վաճառականի մը՝ իր հայրն ու Երուանդը ազատելու համար թշուառութեան ճիրաններէն: Սակայն, Մակար 50 կեղծ ոսկիով կը խարէ Վարդուհին հայրը: Երուանդ եւ Վարդուհի, որոնք մաս կը կազմեն դերասանական խումբի մը, կը վճեն դիմել անձնապահութեան: Կ'որոշեն իրենց ծրագիրը իրագործել թատերախաղի մը ընթացքին: Քաղաքով յուսահատ երկու սիրահարներու գերբերը՝ կը դործածեն իսկական թոյն եւ դիրար գրկած՝ կը մեռնին բեմին վրայ:

*Մերօրեայ ճաշակով եւ ըմբռնումով՝ նիւթը շատ սովորական եւ հասարակ կրնայ թուիլ: Սակայն, եթէ նկատի ունենանք հարիւր տարի առաջ մեր իրականութեան մէջ գտնուող ըմբռնումները, պիտի եղբակացնենք, թէ Նիւթը իր իրապաշտութեամբ յեզպատիւական է:*

*Մինչ այդ, ոչ ոք համարձակած էր գրել մարդոց անտեսական ծանր վիճակէն բխած ընկերային բարդութիւններուն մասին: Ոչ ոք համարձակած էր պաշտպանել անպատուութիւնը եւ ամբաստանել անպատուութեան դրդապատմանը: Ոչ ոք բարձր գասուն երեսին նետած էր իր մեղքերը:*

*Դուրեան մինչեւ իր ոսկորներուն ծուծը զգացած էր աղքատութեան ստեղծած կացութիւնը, հողերեկումը, հոգեփոխութիւնը: Ու առաւպանքը դճրուր ճաշակած այդ պատանին միայն կրնար հօր մը բերին մէջ դնել հե-*

տեւեալ սարսափելի տեսակէտը. «Այո՛, (ազնիկս) թող անպատիւ ըլլայ, բայց ոչ անօրի... վասնզի անօրի մարդը. աղքատ մարդն արդէն անպատիւ է...», այո՛, անպատիւ կ'ըլլամ, բայց ոչ անօրի»:

Դուրեան ներկայացուցած է իր շրջապատի մարդոց տառապանքը, յոյսները, երազներու խորտակումը: Իր տիպարներն ու անոնց խօսքերը առած է կեանքէն եւ գանոնք տխրօրէն դեղեցկացնելով՝ վերադարձուցած է կեանքին: Սեւ է կեանքը, դառն է կեանքը եւ Դուրեան իր ստեղծած Վարդուհիին բերնին մէջ կը դնէ իր մտածումները. հանոյքով հաշտուիլ մահուան գազափարին հետ եւ ձգել այս աշխարհը, ուր «մարդիկ իրարու հաշտար եղբայրներ չեն» եւ «միայն տկար արարածները ամօք, խիզն եւ ցաւ ունին»:

Այս գործին մէջ թէեւ գոյութիւն ունին վիպային կարգ մը անցքեր, սակայն, թատերգութեան ընթացքը դրուած է իրապաշտ հունի մը մէջ: Սիրային խօսակցութիւններու պահուն իսկ, կը հանդիպինք գծուարին կեանքի ազդեցութենէն եկած մտածումներու: Սիրոյ երազէն վերացած միւս գուարթ աղջիկներուն նման չէ Վարդուհին. անոր սիրտը լեցուած է իր սիրած ազուն աղբատութեամբ, խեղճութեամբ ու կեանքի դժուարութիւններով:

Վարդուհեան շհամարձակեցաւ բեմագրել «Թատրոն եւ քշուառներ»ը, եւ պոլսահայ մեծատուն դասուն երեսին նետել իրենց անբարոյ խաղերը: Չհամարձակեցաւ բեմի վրայ հանել Պոլսոյ աղբատունակ հայ թաղերուն կեանքը ու ներկայացնել հոն տիրող հոգեվիճակները:

Պետրոս Դուրեան շտեսաւ իր գրած իրապաշտ թատերախաղին բեմագրութիւնը: Սակայն, «Թատրոն եւ քշուառներ» գործով արժանաւորապէս կոչուեցաւ մեր առաջին իրապաշտ թատերագիրը:

ԱՐԱ ԱՐՄԻՐՈՒՆԻ



**«ՄԵՐ ՆՈՐ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՄԵԾԸ»**

Իդէալի ու իրականութեան անհամայնատախտանութիւնը, անճանաչան ու անճանաչական ցուերը միայն տառապանքներ չէին ծնում: Դուրեանը բոլոր հայ բնորոշակներէն ալեւերմբոսն է: Խոռովն ու կակածը, հակառակումն ու բնդվզումը վարորդում էին նրա միտքն ու հոգին, մորմնումն ու նշումն թէ՛ գրողի տաղերում, թէ՛ բանարտախոյնում, թէ՛ յօդուածներում եւ թէ՛ նամակներում: Իսկ «Տրտունջք»-ում հրարխուսեց բանաստեղծի եռնի հոգին, որոտաց եւ հեծեծաց այնպէս ուժգին ու տառապալի, որպիսին իտալացի բնագետ Ֆրանկո Նետտի-Վալենտինի խոստովանութեամբ «երբեք չեն Համարձակւել ո՛չ Լէոպոլդին, ո՛չ Միւսէն, ո՛չ Կատուլը»:

Յիրաւի, վիթխարի են հայ բնորոշութեանը մատուցած Դուրեանի ծառայութիւնները: Նա ի սպառ հրաժարուեց կլասիցիզմից, խուսափեց պատմադաստիւնութիւնից ու նկարագրականութիւնից, բանաստեղծութեանը հազարէն զգալունեան յանդիման խարութիւն, հագեցանութեան եւ արուեստի բացառիկ ինքնատիպութիւն: «Սկիւտարի սոխակ»ը հայ նոր բնորոշութեան մեծագոյն սիրերգակներից անդրանիկն է... Նա չգրեց նմանազան ոչ մի տաղ, մնաց ժամանակի այն հազուագիւտ բանաստեղծը, որ Արշակ Զօպանեանի արտայայտելի մտքով, «գաղափար ու բնութիւն իր սրտին մէջ փնտռեց»: Հազար անգամ իրաւացի էր Պարսյր Սեւակը, երբ Դուրեանին համարում էր «մեր բնորոշութեան Վահագնը»՝ գրելով՝ «Նա է մեր նոր բնորոշութեան առաջին մեծը եւ միշտ էլ կը մնայ վերջինի կողքին, որովհետեւ նա չի հնանում, ինչպէս չեն հնանում Ժպիտն ու Հոտայը, Ժրծաղն ու Հեծկլտոցը...»:

Հրատարակութեան համար Դուրեանն ընտրել էր 38 տաղ, որ նրա բանաստեղծական հիմնական ժառանգութիւնն է: Սա էր չէ Դուրեանի տարիքի մի գրողի համար, մանաւանդ, եթէ նկատի ենք առում, որ ստեղծագործեց կեանքի դժնշակ պայմաններում: Միւս կողմից յայտնի նշմարութիւն է, որ բանակային խնդիրը գրողի մեծութեան նշմարիտ ցուցանիշը չէ: Յովհ. Թումանեանը սիրում էր յիշել Հայնէի մի միտքը, թէ «մեծ բանաստեղծը նա է, որի եօթ երգից մէկը լաւն է»: Իսկ այս իմաստով «Սկիւտարի սոխակ»ը ո՛չ միայն մեծ, այլևս մեծագոյն բանաստեղծ է, քանի որ նրա բերքաւածների գրեթէ երեք տասնեակը մեր բանաստեղծութեան մշտամնայ գանձերն են: «Միրէյ»ն ու «Դրժէյ»ը, «Լճակ»ն ու «Տրտունջք»ը, «Թրքուհին»ն ու «Հեծեծմունք»ը բոլոր ժամանակների հայ բնորոշութեան ամենարժար գագաթներից են: Ասանց «Լճակ»ի ու «Տրտունջք»ի կարուստներ կ'ունենար նաեւ համաշխարհային բանաստեղծութիւնը:

ԱԼԲԵՐՏ ՇԱՐՈՒՐԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱՆՆՍՅԱՆՅԵԱՆ



~~~~~  
**Պ. ԳՈՒՐԵԱՆ**  
~~~~~

Մեզուհի եւ թիթեանիկը, քնական մղումով մը, կը ժօտենան նուսուֆարին եւ շուշանին — կարծէք իրրեւ «ճանաչողներ» — եւ անոնց բուրմուռնէն եւ հիւթէն կը սնանին ու չկը ստեղծագործեն» իրենց մեղքն ու կը ստանան հաճոյքը, առանց «ճանճորոյթի» նշաններ ցոյց տալու եւ առանց իրարու հետ շփոթելու ծաղիկներն ու անոնց իւրախտուկ բուրմուռը:

Պարզապէս այսպէս չէ սակայն «յաւազդիմութեանց» ատակ մարդ հակին համար, մանաւանդ ներկայ դարու քնն-նայածի՞ յոխորասանքերով տողորուած, բիւրաւոր հեշտութիւններէ յզփացած, ճանաչումներէ զուրկ երիտասարդ սեւրունդի ջախջախիչ մեծամասնութեան համար: Այս բողմութիւնը զիւրաւ չփոթելի կը գտնէ ոսկին եւ աւազը, սանդղ-ծաղրծութեան մը վեհութիւնն ու մեքենայի հասարակ ճոխնը:

Շոփէն, դեռ ասկէ 20 տարի առաջ, պատշաճօղ նորաձեւութիւն մըն էր այս կարգի մարդոց համար, ինչպէս էր Պ. Դուրեան: Անոնց հանճարին թափանցումը մնաց ինզճ, թերի ու մակերեսային՝ շատ մը այլանդակ ու խեղաթիւրուած մտքերու: Այս վերջինները «նոր մուրազ»ներու հասան փափ միւզիքին յարելով եւ կամ հողեցնորային զառանցանքներուն անճանատուր՝ ինքնագոհութիւնը հասցնելով մոլութեան: Դուրեան եւ Շոփէն, սակայն, զոլէճներու եւ երաժշտանոցի առաջին կարգի պանուճանքներ չեն, ալ յաւիտենականութեան եղեմին մէջ աստղաթրթիւ լուսակերտումներ:



Երբ 1851ին Պ. Դուրեան կը ծնէր Արեւելքի մէկ անհիւրընկալ ու անշուք անկիւնը, Շոփէն արդէն մահացած էր

Թարգման է՝ Յուլիանի լիզափոխական շարժումներուն պատճառով: Ան կը տարուրերի ոտմանքիդի, բնկերվարութեան եւ հայրենասիրութեան յորձանքներու միջեւ: Ճրահասական երաժշտական ստեղծագործ հանճարը շորցած կը թուի բլալ՝ հակառակ Պէրլիոզի Փանքաքիմ համանուագի յայտնագործումին (1830): Այս երկը տարօրինակ ու աշխատակ գործի մը տպաւորութիւնը կը ձգէ՝ բլալով բացարձակապէս անհաղորդ՝ իշխող թեթեւամտութեան: Արդարեւ, ոչ մէկ Քըրանստցի երգահան չի մտածեր համանուագ կամ քառեակ յորինելու մասին, անոնք կը գոհանան թեթեւալիկ եւ յոխորտացող քովանոններ եւ Փանքէզիներ սարքելով՝ սիզանեմ տիկիներով օտարւած շուայտ ստղաններու մէջ աժան փառք վաստկելու ակնկալութեամբ: Օփերայի գահուն բարձրած է այդ շրջանի պուֆֆաթատերգութեան աստուածը՝ Ռոսսինի եւ պոռոտախօս արկածախնդիր մը՝ Մէյէրպփեր, որոնք իրենց շուրջ հաւարած են իտալացի թէ Ֆրանսացի միջակ ու միջակէն հողի վեր վիպապաշտ քնարերգուններու փաղանգ մը: Եւ վերջապէս նրազատարանները կը թնդան մասններու եւ կոկորդի փայլուն վիրքիւզներու սեթեւեթանքներէ հրապուրուած բազմութիւններու հանդիւնէն: Փականինի եւ Լիստամբոյններ կը հմայեն իրենց շուրջով եւ դաշնակով: Եկեղեցական երաժշտութիւնը լուծ է՝ անիկա պարզապէս այլասերումն է բոմաններու եւ օփերաններու՝ անոնց բառերու լատինացումէն ետք: Միակ յուսադրիչ պարագան ազգային երաժշտանոցի համաւարտը նուագախումբն է, որ մեծ ջերմեանդութեամբ կը ներկայացնէ նոր մահացած Պեթհոլէնի համանուագները: Ուրեմն երաժշտական վաւերական արուեստի ձգտումներէն շատ հեռացած այս խառնարանին մէջն է ահա, որ պիտի փթթէր արուեստի պատմութեան ամենահրաշալի ծաղիկներէն մէկը՝ յանձին ջրանամեայ պատանի Շոփէնի, իր հանճարին:

Եթէ միջակութիւնները անհամար են եւ տաղտկալի թէ՛ Փարիզի եւ թէ՛ Պոլ-

~~~~~  
**Ե Լ Ֆ. Շ Ո Փ Է Ն**  
 ~~~~~

Ճրանասյի շքնաղէղ մայրաքաղաքին մէջ՝ երկու տարիներէ ի վեր, դո՛ւ՛՛՛ չառմանքիքներու յատուկ այն հիւանդութեան, որ պիտի չինայէր նաեւ մեր պատանի բանաստեղծին: Երբ 21ը չըրոյրած մեր հէք քերթողը կը գրկէր ճշուրտ շիրիմ՝ իր նարկիզներու, նունուֆարներու, շուշաններու անթառամ փունջը դեռ շամբուղջացած, ճիշդ նոյն տարիքին Շոփէն վերջնականապէս կը թողուր իր այնքան սիրելի Լեհաստանը, Վրոյլը սրբափն, եւ կը ժամանէր ասուպանքի ու ցնծութեան հայրենիքը՝ Փարիզ, շմոռնալով այսուհանդերձ հեռը բերել, իր վրայ հիացողներուն կողմէ նուէր ստացած սրուակի մը մէջ՝ բուռ մը հող հայրենիքէն, իր խոկումներուն մտերիմ բուռ մը հող ունենալու իր սեղանին վրայ, բերուած ցարական վայրագութեանց անձնատուր իր հայրենիքէն, կանխելով այսպէս մեր վարուժանը՝ մօտ մէկ դար:

1830ական թուականներն ենք: Փարիզ, հազիւ խորտած 1789ի Յեղափոխութեան ցատումէն, նոր ցնցումներու են-

ոոյ մէջ, Շոփէններ եւ Գուրեաններ կրր- նան ճառագայթել անշուք դիւղերու ան- կիւններէն ալ: Շոփէն համեմատաբար շատ աւելի բախտաւոր եղաւ, քան Գուր- եան: Ան չըջողատուած գտաւ ինքզինքը գաղթական հայրենակիցներու պարզու- րանքով: Իսկ Սկիւտարի մեր Սոխա՞կը- ծանօթ են բոլորիս անոր կեանքի դժոխա- յին պայմանները: Մինչ Շոփէն սալոննե- րու զարդն էր եւ ազնուական դասուն հիացմունքի աւարկան, Գուրեան հաց ճարելու համար նուաստացումներու կ'ենթարկուէր եւ կ'այլափոխուէր գեա շատ երիտասարդ տարիքին:



Մեր երկու բանաստեղծներուն ամե- նայատկանշական տարրերէն մէկը իրենց երրակացութիւնն է: Գուրեան, Շոփէնի նման, ոչ յառաջընթացներ (précurseurs) ունեցաւ եւ ոչ ալ հետեւորդներ ու աշա- կերտներ: Անոնք ինքնատեղծագործ հրե- դէն ասուպներ եղան՝ ինքնատուեղորէն բուսակող: Մ'չ դպրոց հիմնեցին եւ ոչ ալ վարդապետութիւններու բարձրան ե- ղան: Երկինքը երկիրը դիտելու համար սկիւղ չի կրեր: Շոփէն եւ Գուրեան թեք- նիքներու շխառնեցան ժայթքելու համար, եւ մանուածապատ յատակաղծեր չկազ- մեցին՝ իրենց բեղմնաւոր հողիին դրսե- ւորումը դիւրացնող: Երկուքին ալ պա- րագային, ներքին նուազագոյն թրթռա- ցումն իսկ եղաւ յայտնութիւն մը:

Մարդիկ կը տարուին ստորագնահա- ւելու Շոփէնը, ըսելով, որ ան Պեթհո- վէնի պէս հնչեղ ու զօրեղ համանուար- ներ չէ հեղինակած: Նոյնպէս, թերեւս մտածողներ ըլլան, որ Գուրեան կիսատ ստեղծագործող մըն է՝ վայլուն թատե- րադրի մը եւ կամ վիպասանի մը համբա- ւը վայելած չլլալուն համար: Բայց ինչ- պէ՞ս կարելի է հանճարի ցոյքը ժամա- նակի, քանակի եւ տարածութեան ար- ժեշտներուն վերածել: Կայ վերլուծող ու համբերատար աշխատանքով կառու- ցանով հանճարը եւ կայ յանկարծական

փայլատակուածով կենսագործուած, սկիդ- րէն իսկ գրեթէ կատարեալ յղացումը:

Այս վերջինն ձեռք կը պատկոյնին Գուրեան եւ Շոփէն: Երկուքն ալ մէկ հարուածով կը կերտեն, կերտուածը ըլլայ մեղմ, թախծալի, հնչտապարար, անըջային թէ ցատուածով լի, պոթիւու- ժով շոնդալից ու ախրութեամբ եւ թա- խիծով առցուն: Քիչեր կրցած են անոնց ներքին ձայներու ջրփիտմին գաղտնի- քին թափանցել: անոնք իրենց խօսած լեզուի առաջին ու անփոխարինելի հե- ղինակներն են:

Այս անմիջականութեան մէկ զմայ- լելի արդիւնքն է անկասկած Գուրեանի սրտին ամենամօտ եղող արտայայտա- կանութեան լեզուն՝ աշխարհաբարբ, գր- րաբարբ վերապահուած ըլլալով նարե- կացիի մը անդնգախոր յորձանքներուն թաւալումները յայտնաբերելու: Գուր- եան չէր կրնար ժամանակ վատնել ու մա- համերձ լեզուով մը կենդանութիւն պար- դել էլ իր ալեկոծ հողիին ու խոհերուն: Շոփէն, նոյնպէս, չմտաւ բարդ փոխիւ- միաներու ծալքերուն մէջ. դաշնակը ե- դաւ միակ գործիքը իր հողիին ու մտա- ներուն անմիջական թարգմանը հանդի- սացող:

Երբեմն թաւջութակը եւ ժարդկային ձայնը կարելի է կռահել ձախ ձեռքին շնորհուած թաւ ու մեխամաղձոտ արրա- մերդի մը ընդմէջէն, կամ՝ ալ ձեռքին վստահուած ցնծերգներու բովէն: Շոփէ- նի դաշնակի բովէն մ'չ կարելի է նուա- զախումք դուշակել (ինչպէս Պեթհովէնի դաշնամուրի սոնատներէն քանի մը հա- տին մէջ), մ'չ քլավիրուէն ընդնշմարել (ինչպէս է յաճախ պարագան Հայտընի եւ Մոցարտի դաշնամուրի սոնատներուն) եւ ոչ ալ երգահոն (Ս. Ֆրանք) կամ Էստ- րաճիլեր (Բովէլ) նախատեսել: Շոփէնի մօտ դաշնակը աներկբայ, աներկմիտ թարգմանն է ջայտող զգացումին, որ անմիջանկեալ ձեւով կը հաղորդուի, ստեղնաշարին: Ասկէ պէտք չէ հետեւցը- նել, որ Շոփէն չէ խնամած իր ստեղծա- գործութիւնները, ընդհակառակն, իր ներզգացումները եւ թրթռացումները մեծ

լըճութեամբ եւ գուրգուրանքով զտած է զործիքային զիւրազիզ սայթաջումնհրէն, որոնք կրնային սպրդիլ մա՛նականգ երկարաշունչ պոեմներուն մէջ (Պալլադ, Ըջֆերցո)։ Եւ արդէն բայրովին ալ չէ կրցած անոնցմէ ձերբադատուիլ, երբ փորձած է քննչերթօ գրել։ սակայն դեռազանցապէս բիւրեղացուցած է իր փրէլիտները, Կանոնք վերածելով զուլալ եւ հնչող ֆանթեզիներու, ուր կը լսենք վայրեր, մագուրքաներ, փոլոնէզներ. առոնք բոլորական յիշատակներէ ներշնչուած են, աշխնքն՝ ա՛յն մոթիֆներէն, զորս իր սրտին շատ մօտ գրացած է։ Հաւանաբար այն պատճառով, որ իր մանկութեան Հարազատ մտերիւնները եղած են որու մը հողէն բխող քնքուշ ձայները։

Դուրեան նոյնը չ'ընե՞ր արդեօք. ըլլալով Հարազատ թարգմանը իր ցեղային բիւրեղացած զգացումներուն եւ թըռիչներուն, նաեւ ծառայումներուն, վերջապէս Հանդիսանալով զաւարտած կաթողիկէն մեր ժողովուրդի զգայնութեան»։ Արդեօք իր «Նէ» բանաստեղծութիւնը սքանչելի փրէլիտ մը չէ՞, կամ «Ջղզումն»՝ հոյակերտ Էմիլիոնի մը։

Ձկայ մարդկային զգացում մը, որ ցուցած չըլլայ այս երկու երիտասարդ Հանճարներու հողեմտային փղձկումներուն մէջ, անհատական, ազգային թէ Համամարդկային, խորունկ թէ անցողակի, ուրախութեան թէ տխրութեան, որոյ թէ երազի, պոեթիկութի թէ ցասումի։ Երկուքն ալ, փափաքելով Հանդերձ տեսնել իրենց պոեմներուն լոյս ընծալիլը, իրաչած են ամբողջներէն։ Ձէ՞ որ ճշմարիտ բանաստեղծները, ինչպէս մեծ նորութիւնները միշտ ալ բախած են սովորութիւններով մղուած ու կայունացած զգայնութիւններու։ Շոփէն, կրկին, աւելի բախտաւոր հղաւ, քան Դուրեան։ Ան իր նուագահանդէսներով արդէն սիրցուցած էր իր կտորները՝ հանդիպելով Հանդերձ անհասկացողութեան պատին։ Իսկ մեր տարաբախտ Դուրեանը՝ Սկիւտա՞ր եւ Փարի՛զ...

Եթէ Պետրոս Դուրեան ունի Շոփէնի Հարադատութիւնն ու ազատութիւնը, երբեմն ալ ունի սակայն յանդաբանական ճշգրտութեան ձգտելու տկարութիւնը։ Հո՛ն է, որ ի յայտ կու գան զարարէն փոխ սոսնուած կամ ուղղակի զարար բառեր (օրինակ, սեաւ = սեւ, սիրայնոց = սիրելիներուն), զիջելով յանդի եւ չափի տուեալներուն։ Ասոնք, սակայն, աննշան բիծեր են, որոնք ոչինչով չեն կրնար աղարտել պոեմին ինքնութիւնը։ Շոփէն ունի ճիշդ հակառակ թերութիւնը. իր գործերուն մէջ կը հանդիպինք յափազանցեալ ֆիկիւրներու եւ զուտ գործիքային շատախօսութիւններու։

Ինչպէ՞ս չ'փորձուէր Հէջ տղան նուագային զիջումը չ'ընել փարթամ սայուններու թեթեւամտներուն առջեւ (հոս պէտք է յիշել, որ հակառակ ՄԴՅԻ յեղաշրջումին, երաժշտութիւն ունկնդրողները, թէ՛ նուագահանդէսներու ընթացքին եւ թէ՛ անձնական սալոններու մէջ, աղնուպետութեան ներկայացուցիչներն էին առաւելաբար եւ ընդհանրապէս)։ Սակայն իր փաթեթիկն ա՛յնքան ազնիւ է եւ իր մեղեդիները պարուրող միբանուշային բուլաքաները եւ շղարչները ա՛յնքան նրբին, թափանցիկ ու բարախուն, որ ամենածեր ու տնկենդան հոգիներն անգամ կեանքի կը վերակուչէ։



Պ. Դուրեան եւ Շոփէն ամենաբիտառարգ ստուպներէն են արուեստի երկնակամարին պլպլացող. Ի՞նչ փոյթ, թէ տառապանքն ու թախիծը մաշեցուցանոնց մարմինները, երբ Հանճարը կրցաւ իր խօսքը բռնել։ Ճառագայթը ցելով չի ծեփուիլ։ Եւ վերջապէս, չէ՞ որ «Աստուծոյ ծաղրն է Աշխարհն ալ արդէն»։ Երբեմն կը տարուէնք հակառակը մտածելու աշխարհի ծաղրը չէ՞ միթէ Աստուած ինքնին։

ՊԵՏՐՈՍ ԱԼԼԱՆՍՅՏՈՆԵԱՆ

**ԶԱՊԷԼ Կ. ՊՕՅԱՃԵԱՆ**

Այս երկու բանաստեղծները իրարու հետ բաղդատել՝ կը նշանակէ աւելի շեշտել իրենց տարբերութիւնները, քան նրա մոնոթիւնները:

Երկուքն ալ թոքախտաւոր եղած են ու երիտասարդ մեռած:

Երկուքն ալ կեանքի եւ սիրոյ սաստիկ փափաքով վառուած են, երկուքն ալ զեղեցկութեան ոգիին մարմնացումն են՝ իրենց գործին մէջ:

Քից ժառանգած էր լեզուական ճոխ եւ հաստատուն աւանդութիւն մը, իսկ Դուրեան ապրած է վերածնունդի մը սկիզբը, նոր աւանդութիւն մը ստեղծելու յետաշրջումի մը մէջ:

\*\*\*

Քից հինգ տարի աւելի ապրած է Դուրեանէն: Վիրաբոյժի մը քով զբերւած էր իրրեւ աշկերտ, ու նոյն ատեն ժամանակ գաած գրականութիւն ուսումնասիրելու: Հասարակ գործաւորի մը որդին էր, բայց ոչ շատ աղքատ, որքան էր Դուրեանը, որ իրրեւ ծառայ աշխատեցաւ վաշխատուի մը քով, սակայն նոյնպէս միջոց գտաւ գրականութեամբ զբաղելու:

Երկուքն ալ սիրահարութեան փորձառութիւն ունեցած են:

Քից՝ Դուրեանէն հինգ տարի աւելի ունեցած կեանքը օգտագործած է՝ քանակով շատ աւելի մեծ թիւով գործեր տարով: Իր գործերը բաւական մեծ հատր մը կը լեցնեն. կը տարուսակեն երեք

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ**

երկար ստանաւորներ: Էնտիմիոն (Endymion), Հայփիթիոն (Hyperion) եւ Լամիա (Lamia). երեքն ալ յունական դիցարանութենէն առնուած. գրած է նաեւ բաղմաթիւ տաղեր, սոնետներ, տրամաներ. վերջիները՝ անյաջող:

Քից ունի շատ ճոխ եւ նուրբ երեւակայութիւն եւ գրելու ինքնուրոյն ձև. սակայն այնքան ներշնչուած է դասական ուսումնասիրութիւններով, որ կարծես անոնցմէ դուրս կեանք, անհասականութիւն չունի:

Քից երազներու մէջ ապրած է, երազներու մէջ գրած ու կարդացողն ալ երազներու աշխարհը փոխադրած:



ԵՒ ՃՈՆ ՔԻՑ

թիւներուն կատարելագործումէն առաջ մեռնելու զար. ան իր անձնական ծանօթներու կողմէ զխուլածորթ կոչուած է: Իր սգրերը ա՛յնքան սաստիկ եղած են, որ մարդիկ քննադատած են իր քաջութիւնն ու առնականութիւնը:

Դուրեան, բնդհակառակն, երբեք վախ ցոյց չի տար մահուան առջեւ: Վճմ մահը լաւագոյնս կը հաստատէ Սկիւտարի Սոխակին արիութիւնը, զոր ունի մահուան հանդէպ: Մահուան սարսափը, կակիծը կը պատկերացնէ զայն տեսնողներուն վրայ, յուզարկաւորներու դառն վիշտին մէջ: Իմ կարծիքով՝ ամէնէն յուզիչ ոտանաւորներէն մէկն է, որ երբեւիցէ գրուած ըլլայ օտար լեզուով:

Դժբախտաբար, Հայերէնը եւրոպական լեզուներէն հետու ըլլալուն, Հայկական գրականութիւնը գրեթէ անմատչելի է օտարներուն համար եւ նման բանաստեղծութիւններ չեն կրնար միջազգային զնահատանքի արժանանալ:

Դուրեան եւ Քից, երկուքն ալ, հիանալի բաներ գրած են, թէեւ իրարմէ շատ տարբեր: Քից իր ճոխ արտադրութեամբ այս աշխարհէն չէ: Մեզի հեքիաթներ կը պատմէ սաստուածներու, յաւերժահարսերու, ճիւղաներու եւ այլանդակ էակներու մասին: Ինքն ալ, իր կարգին, այն աշխարհէն եկած ոգի մըն է, որուն խորհուրդները միշտ հոն կը վերադառնան, ինչպէս պանդուխտը շարունակ իր Հայրենիքը կ'երազէ:

Իսկ Պ. Դուրեան աւելի մարդկային եւ աւելի տաքայիւն, իր զգացածը, տեսածը, ապրածը կը գրէ, զանոնք գեղեցկացընելով բոցավառ հրեակայութեամբ:

ՁԱՊԷԼ Կ. ՊՅՅԱՆՆԵԱՆ

Պ. Դուրեան օտար գրականութիւն կարդալու շատ քիչ առիթ ունեցած ըլլալուն՝ մաքին մէջ յտակօրէն գիտէ, թէ ի՛նչ կ'ուզէ ըսել եւ այդպէս ալ կ'արտայայտուի: Իր միտքը նոյնքան լեցուն է գեղեցիկ գոյններով, որքան Քիցին միտքը՝ վարդերով, լճակներով, անտառներով եւ արեւու շողերով: Բայց անոնք իրենց տեղը կը մնան, մթնոլորտ մը կը ստեղծեն, առանց կեդրոնական նիւթին տեղը գրաւելու, որ ընթերցողին ուշադրութեան առարկան է միշտ:

Քիցի ոտանաւորներուն մէջ շատ բան չկայ իր մահուան մասին: Միայն մէկ սոնետ ունի, ուր կ'ողբայ իր կարողու-

*Ծուռկի՛ եկե՛ք... Եկե՛ք...*



Ծուռկի՛ եկե՛ք, ա՛վ վարդագեղ աղջիկներ,  
 Յիշատակին առջեւ դժբախտ ֆերթողին,  
 Դու՛մ որ տուի՛ք իրե՛ն անհուն գիշերներ՝  
 Եղնի խայթով, գացե՛ք հիմա շիրիմին:

Լացե՛ք, խռով իր հոգիին սիրատենչ,  
 Որ ձե՛ր «ոչ»ով տառապեցաւ տոզ առ տոզ,  
 Հիմա ինչպե՞ս սէր կը բաժնե՛ք էջ առ էջ  
 Երբ այն ատեն՝ տուի՛ք միայն ցաւ ու դող:

Ծուռկի՛ եկե՛ք, ա՛վ *միամիտ* աղջիկներ:

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

\* \* \*

Քանի տարիքս կ'առնեմ, աւելի ու աւելի  
կը սիրեմ անոր՝ Դուրեանի մէջ գտնելով  
մարդկային մղձաւանջներուն մեծագոյն հար-  
ցականները: Դրեթէ ամէն օր, աղօթքի պէս,  
«Տրտունցք» կ'արտասանեմ եւ ջիղերս չեն դի-  
մանար անոր պրկումին: Կը զարմանամ,  
«Տրտունցք»ի էջը լոյսին կը բռնեմ՝ համոզ-  
ւելու համար, թէ արդեօ՞ք ան գոյութիւն ու-  
նի թուղթի վրայ, որովհետեւ մարդկային կա-  
րողութիւններէն վեր է անոր գրուած ըլլալու  
փաստը: Ինք ինչքա՞ն աւելի սաստիկ է զգա-  
ցած, որ իմ՝ առողջ մարդու նեարդներս քայ-  
քայող ա'յսքանն է տուած: Ձէ', պիտի ըսեմ,  
«Տրտունցք»ը անմարդկային իրականութիւն  
է, ոչ-մարդկային իրազործում: Անոր ամէն  
մէկ տողին տակ չգրուած գիրք մը կայ: Ինչ-  
քա՞ն պիտի ուզէի գրել այդ գիրքերը, չմտա-  
ծելով, թէ անոնցմէ ետք ինչ կը մնայ իմ Ֆի-  
զիքական գոյութենէս:

ԱՅՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ

## ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

## Տ Ո Ւ Ա Ց Է Ն

Անսովոր ծնունդներու բերքը սովորական բանածուերով չի սահմանուիր. բացառիկներու պարագային լաւագոյն բնորոշումներն անգամ թերի կ'ըլլան, ընդհանուր տեսութիւնները կը յեղաշրջուին յանկարծ եւ կու գայ պահ մը, երբ պատճառն ու արդիւնքը զիրար կը խաչաձուեն:

Այս կարգի մտածումներ կը յաճախեն մտքիս ամէն անգամ, երբ կարգամ Դուրեանի մէկ գլուխ-գործոցը, ամէն անգամ, երբ բաղդատեմ անոր կեանքն ու արուեստը:

Մաշած բանածու մը գոյութիւն ունի, որուն համաձայն «տա-  
ռապանքը ստեղծագործութեան աղբիւր է»: Հաւանաբար ճիշդ է, որ տառապանքը փորձառութեան առիթ կու տայ, միշդ է անպայման, որ տառապանքը պտտփայտ եւ պարպուելու պահեր կ'ապրի, սխալ չէ տակաւին, որ զօրութեամբ ապրածով դէպքը ինքնին արուեստի այժմագրութիւն համարուի, բայց կը բաւձն արդեօք այդ բոլորը՝ յայտարարելու համար, որ դար մը ամբողջ իր արուեստին ճառագայթով ընթերցողը շլացուցած, բայց հագիւ «ժերջալույսի մը շափ կարճատեւ» կեանք ապրած բանաստեղծ Դուրեանը բանաստեղծութեան գագաթ մը չէր ըլլար, եթէ չհիւանդամար:

Դուրեան չէ ապրած կեանքը, այլ ստեղծած է կեանքին պաշտամունքը, արեւին տեճը, լուսնին տեճը: Ան չէ ապրած երկուստարդութիւնը, բայց երկուստարդի ապրումներուն սարսուռը չէ հեռացած հագիւն եւ տակաւին արժա՞ն խիտ ապրումներ ստեղծած է Դուրեան.

*«Նրեկոյեան բաշն կը սողոր բարդիլ խաւ»*

*Այն լուսազարդ անդունդն Հիւսել լուս ու սեաւ...*

Այսպէս կը սկսի Դուրեան եւ բնութեան պատկերներուն մէջ տակաւ կը ներմուծուին հոգիւն ու ետը, նախանձն ու ծիծաղք, երգն ու մահը, մինչեւ որ հասնին հո՞ն՝ ուր կան.

*«Ի՞նչ խոստումներ, ի՞նչ մրմունջներ սրամաշուք...»*

## Ա Ի Ե Լ Ի Ն

Եւ ամբողջ բանաստեղծութիւնը կը մնայ խոստում, տնոր ընդ-  
գրկած հորիզոնը կը նեղնայ, մակընթացութիւնը կանգ կ'առնէ, տե-  
ղը կը խեղդէ եւ յուսահատ խորտակումի միջը կը տալէ հագին:

*«Հիւանդութեան պատճառաւ ընդհատուած»:*

Քերեւս հիւանդութիւնը ընդհատեց արուեստի լրիւ պսակ մը  
ըլլալու սանձաւորած գուլիս-գործոց մը, ո՞վ գիտէ...: *«Հիւանդու-  
թեան պատճառով ընդհատուած»*ը իր վերջին կտորն էր ժաւանդարար,  
արուն երբեք առիթ չունեցաւ վերագտնելու զարկահար Դուրեանի  
գործը գրիչը:

Ինչո՞ւ արդեօք Դուրեան պէտք գգացած է բանաստեղծութեան  
կցելու այս հոբել: Ինչպէ՞ս հաւատալ, որ ընդհատումներուն միակն  
է ստիկա:

*«Հիւանդութեան պատճառաւ ընդհատուած»*էն ետք, ինչպէ՞ս  
ընել հաշիւը երանդութեան պատճառաւ չգրուածներուն, այդ պատ-  
ճառաւ չստուգուած գանձներուն, անգիր հրաշակերտներուն: Ընդ-  
հատումին անխուսափելի մտիկութեան հետեւանքով շատ եւ շատ  
ըսելու վնասարար անսպարանքը ինչպէ՞ս նկատի չառնել: Տակաւի՞ն  
ինչո՞վ փոխարինել գրչի գարգարանքին կարօտ բռններուն, տոզե-  
րուն, տաղերուն սպասումը: Հասուն ապրումներու սրտագրու հե-  
ռանկարով ինչպէ՞ս չփոթարկել: Վերջնական ընդհատումով որոացած  
գրականութիւն մը որո՞ւ ժառանգ տալ:

Ինչպէ՞ս ընդունիլ, որ հիւանդութիւնը ծնած է հանճար մը եւ  
մտոնալ հանճարին մեղը:

Եւ միթէ Դուրեան աւելի վիշտ չէ՞, քան ժպիտ, աւելի երաց  
չէ՞, քան կեանք, աւելի տրտուելք չէ՞, քան փափաք, աւելի խոս-  
տում չէ՞, քան վաւերագիր:

ՔՐԱՐ ԺԻՆՊԱՆՇԵԱՆ

3. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ինձի կ'ըսեմ — ինչո՞ւ լուռ ես...  
«Ո՞հ, սիրի՛ք քառ կամ իսո՞ք ունի՞ր»  
Աըշայոյսը, որ կը բողբկի.  
Ձի անհուն է այն ալ ինձ պէտք:

ԵՐԿԻՆՔԻ  
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ  
ՈՒՆԵՑՈՂ  
ՏՂԱՆ

ՎՋՎ

Որքա՞նք վերցուած է իր մէկ նամակէն, եւ որքան ալ իր հիանդութեան անկարկէ, նոյնքան հիշէ կը մնայ իրբն բանաստեղծ գինք յասկանըւլու անանկիւնէն:

Բանաստեղծութիւնը ենթակայական արարք մըն է եւ բանաստեղծը այն զգայուն զկայանն է, որ կը գրուէ՞ մինչեւ իսկ ամենանորին շունչն ունի արեան կարկաշէն, թէ պոթիկան զանազան երեւոյթներու մէջն եզոզ յարարութիւններէն:

Պետքս Գուրեան ամենահարազատ պատճեններէն մէկն է այս պատկերին... Մարդը, որ ներքնապէս կ'ուշկնո՞ւ է այդ զգայութիւնները կը սիրէ իր անձին գուրս: Ձգայարանները եոյն աննշէն բանուած են եւ նոյն աննշէն ընդմէջէն կ'ընկալն այնարեւը:

Այս է իր այնարեւը, իր ներքին այնարեւը, իր ներքին ժամանակով: Որովհետեւ, այնու ըստ նաստեղծի մը կենսագրական ենթակողքը, սուրբան չէ, որ մեզ կը նետաքրքրէ, այլ ներքին կենսագրութիւնը: Հարկու, առէլի լուս կերպով կարծի է յայտնարեւէ այս մէկը, բանաստեղծական իր փորձասութեան ընդմէջէն:

Կրնանք ըսել, թէ Գուրեան անուկան մթնուրբէ մը մէջ կ'ապրէր, որ բանաստեղծական մթնուրբան է, եւ այս մէկուն ըրած իր հուստարձութիւնն է միայն, որ կարճ ժամանակամիջոցի մը մէջ իրեն ասի՞ք տուաւ փոխանցելու գրական հարուստ եւ հետուն աւանդ մը:

Բանաստեղծական այս մթնուրբան բազմաբուշիլ զգիտար տարրերն են սէրն ու մահը:

Սէրը, որ իր զանազան մեներով կը գրուէր — ի իր մէջ, եւ

Մահը, որ յանախանք մըն է իր մէջ, բոլոր երեւոյթներուն գիմաց:

Պետքս Գուրեան կենսոյի աննշէլ հարուստ ուժեղանութեամբ լեցուն խառնուածք մըն է եւ իր սէրոյ յայտուն թափն է, որ այդքան տարբեր եւ այդքան նետաքրքրական է բանաստեղծական իր այդ լարը: Սակայն այս բոլորը լինուած մեկով մը կը գրուէր: ին՝ իր կացութեան իսկ պատճառով:

Ոչ ոք քսաւ — հի՛շ տղայ,  
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,  
Թերեւս ըլլայ գեղամի,  
Թէ որ սիրեմ չը մեռնիս:

Կարելի է ընդհանրացնել ասիկա, կեող սէրն անցնելով մարդկային յարարութիւններու նիւթին եւ հազարակցութեան խնդիրներուն:

Որովհետեւ Գուրեան կարեօք ունի սիրելու եւ սրովհետեւ կը բացահայտ սիրոյ ասարկան:

իր ներքին կրակը պարպելու համար, երբեմն իր անկարգը տարբեր տեղեր կը տեսնե՞ք:

Իրագե՛լ հիւզիմ այժմ՝ բանաստեղծն ուր ազնւո՞ւմ իմէ լոյս՝ կրակ, ոչ մէկն ունի զըզելու:

Այսպէս, եռյն կրակը կը սկօթ ալլ երեւոյթներու մէջ մարմնաորուիլ, որուն լուսազոյն արտայայտութիւնը ճիշդ է, որ անբառ պատուառ մը ըլլալով հանդերձ, բանաստեղծին անհասանկանութենէն անկարելի փախուստ մըն է:

Այս բոլորը կ'ընդշնչուի զերեզմանին հետ, բնութեան, ծաղիկներուն, երկնքին, որոնց մէջ իտր փոխափայտութենէ մը աւելի ընդերու երատ մըլուսութիւն մը կայ:

Գուրեան այն բանաստեղծն է, որ կ'ուզէ կեանքի բոլոր երևոյթներուն մէջ մտնել, մասնակից դառնալ տաղանայոց բոլոր հարցերուն (տարուն լուսազոյն ապացոյցը իր հայրենասիրական տակերն են), սակայն իր հացութիւնը քանդած է բոլոր կամուրջները եւ զինք առանձին ձգած իր անձին հետ, իր սէրերուն ու շիրիմին հետ:

Այլ ո՛չ, անգո՛ւք, եթէ տուիր մեկուս սէր,  
Իրի՛ւ ք-անոթ զերեզմանիմ շարմ լինեմ,  
Ըս դու քոյմած գաս շնչի շուրջս...

արտասուե՛ր...

Վեզ ինչպիսի համար ետքի լոկ գոյ շիրիմ...

Հետաքրքրական երեւոյթ է նաեւ իր բանաստեղծի ինքնախտակցութիւնը, իր հացութեան գիտակցութիւնը, որ թերեւս պատճառ դարձաւ գրելին հանդէպ ցուցաբերած իր լրջութեան:

Գուցէ բնութիւնը, որ իր տարրերով համարեա՛լ բոլոր բանաստեղծութիւններուն մէջ գոյութիւն ունի, չի տար աչք բայրի, գոյնի, մեծի զգայնութիւնները, որոնք Մեծարձեցի մտ կը հասնին այդ աստուածային շունչին մէջ լուսուելու ցանկութեան, իր մտ մնալով սոսկ փոխաբերութիւն ըլլալու աստեղծի մէջ: Հաւանաբար նկարագրական եւ պատմողական իր սեն է, որ վճատած է իր բանաստեղծութիւններուն մեծ մասին: Պէտք չէ մոռնալ նաեւ վիպապաշտութեան աղանջութիւնը (Մանեստրարար իրրեն մեւ եւ լեզու), որ շատ աչ նպատակաւ չնկատ Գուրեանին, սակայն, Յակոբ Օլազանի իսկ բառերով զիր քերտարիւնները պարտական է իր մտամանկին:

Այս բոլորով հանդերձ, բանաստեղծութեան հանդէպ իր ունեցած հաւատարմ եւ գիտակցութեամբ, Գուրեան յաջողեցաւ իր տարերային թափին մէջ բանաստեղծական լեզու մը կերտել, որ հիմը պիտի կազմէր արեւմտահայ աշխարհարար բանաստեղծական լեզուին:

Այս բոլորը կարելի է հանդուստան մը համարել միայն: Հաւանաբար, ինք նոր հանդուստանի մը առջեւ կը գտնուէր: Այս պարագան լուսազոյն կարելի է զգայ անուարտ բանաստեղծութենէ մը, որ անվերնազիր է եւ թերեւս վերջինը, իր ստորագրած ապագան:

Երեկոյեան բալմ կը սողար բարձի իտալ,

Նախ, այս բանաստեղծութիւնը ուշագրաւ է իր ընդգրկած նիւթերու առատութեամբ եւ հրմտորէն, սուսեց արուեստականութեան, կ'առքնչէ բնութիւնը, սէրը, լուսինը, անմահական վիճակը... ասոնցմէ անդին անցնող մթնոլորտ մը ստեղծուով: Հոս թէ՛ շունչը եւ թէ՛ կ'ըսոյթը ակնհերեւ յաւելում մը կ'արձանագրեն ի նպատակ իրեն:

Ընթր մտնոյ արեւոյմ մարեր հուսկ շատայ  
Ստանամուտու բլրոց վրայ Քայլ առ Քայլ,  
Ինչպէս հիւսնալ կոյսի մ'ակմարկ առ դամբան,

Ինչպէս ամբողջութիւնը, լուսազոյն արհեստներէն մէկն է վիպապաշտ գարոցին եւ սուսել իրագործում մը կը համադրէ:

Ուրիշ պարագայ մը, գուցէ գլխաւորը, իր ընդգրկումն է, ցատու՛մ, մինչեւ իսկ կարելի է ըստել, ապստամբութիւնը հակաապագին զէմ: Պետքս Գուրեան, հակառակ վիպապաշտ լծազու մը գործածելուն եւ խառնուածքային կարգ մը յատկանշիներուն՝ աւելի անդին կ'երթայ, այսպէս:

Այժ որ առաւ երկրիս ցարսւ՛մ,  
Ծագկումք, մարգերմ ալ գարդ ճորիմ,  
...Ինչո՛ւ արդեօք խորշակաւար  
Կ'ընէ ծագկումք գեռափորիք:

Այս մէկը 13 տարեկան տղու մը սոցերն են, որ առաջին բանաստեղծութեամբ իսկ կը զգայ կեանքի եւ բնութեան հակասութիւնները: այս հոգեկենտրոն տախտ քորանալով փոթորկի մը պիտի վերածուէր զճրտուցեցնի մէջ:

Այսպիսի վիճակի մը մէջ է նաև իր աշխարհը, որ իր ներքին ամբողջ կրակով կը զգայ իր ճակատագրին անխուսափելիութիւնը: Իսկ ի՞նչ:

Այո ճակատագիրն ի՞նչ սեւ է, Աստուած, Արդեօք դամբանի մը սրտով է գրծուած...

Մէկը պէտք է պատասխանատու ըլլայ այս կացութեան, մէկու մը գէթ պէտք է պտտիկայ, վիճի՛ իր կացութեան ճամբը եւ յառջին օրէն, 13 տարեկան ազուն առջին իսկ Աստուծոյ լեռ իր հարցը պայտօթիւն ունի:

Բայց ուս տխուր տեսարանն է՝ Ի՞նչ կայ արդեօք հանայն մ'Ամեր:

Ընկերային եւ բարոյական ըմբռումները նշուած պատուար չեն, որ իր ջրասուճը աւելի անձու-

զերծէր: Անկայն հուսալքի կարեօք զգալի է ո՛ւր միայն իր ըմբռումներէն շտապարեւու, այնու պարեւու՛ն ճամբը:

...Եւ սորվեցուր թմնի հաւատ, Սէր, յոյս, սրով միշտ բարասիւն իմ փափուկ լոռը եւ փարատէ լուսավոյ խաւարն սրբուխ վնաս:

Սակայն սեղմուող ազակը, տակաւ Թոթափէլ սուղով այս բոլորը, պատճառ պիտի գտանար, որ ճայթջէր:

Աստուծոյ ծագրն է Աշխարհն այլ արդէն...

Այլեւ Դուրեան ըմբռնացում է ճակատագրին դէմ: Աշխարհը խառնաշփոթ, առանցք կաշտող հիմարտութիւնները կործանուցան ծագր մը: Անկաւ աշխուհ, իրբեւ խորք՝ գալլ մըն է ապագային մէջ:

Թ. ՊԵՐՊԵՐՆԱՆ





ՆԱԶ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԽԻՉԱԽՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Բանաստեղծի իր հարուստ զգայնությունն ու սեւ ճակատագիրը՝ Դուրեանի կուրճքին տակ կը վառեն նախ ծեղձ կայծ մը, որ օրերու ընթացքին կը բոցավառի ու կը դառնայ բոցաշունչ երգ:

Դուրեան աւելի տառապեցաւ, քան ապրեցաւ, աւելի երգեց, քան սիրեց:

Սէրը, սղբերգությունն ու բանաստեղծությունը նոյնացան իր մէջ գեւ պատանի տարիքին:

Ան բնությունը դարձուց սիրոյ եւ կեանքի ազրիւր, խորհրդանշան:

Իր քերթուածներուն մէջ կեանք տուաւ ծաղիկներուն, անտառին, զեփիւռին, լուսնին, արեւուն, լճակին: Անոնցմէ ուժ առաւ նաեւ ինք: Տեսաւ ծաղիկներուն ժպիտը, զգաց անտառին շունչը, ապրեցաւ զեփիւռին համբոյրը: Լուսինով իր տխրությունը պատկերացուց, լճակին մէջ իր ներաշխարհը տեսաւ, արեւէն կրակ աղերսեց:

Իր բանաստեղծություններէն մեծ մասին մէջ՝ բնությունը կնոջ պատկերով կը ներկայանայ, կը դառնայ սիրոյ եւ կեանքի ազրիւր:

Դուրեանի բանաստեղծությունները մեծ իմաստ կը ստանան, կը խոսվեն ու կ'առնին ճանաչող՝ երբ պատկերները կու գան ու կը բախին դառն իրականության, անել կացութեան մը առջեւ գնելով բանաստեղծը ու բանաստեղծին հետ կը զգացնեն մարդ էակին անել կացությունը: Ան խորացէս կը զգայ կեանքի եւ մահուան հակասությունը, եւ մահուան սահմանաժամ մարդու գիտակցութեամբ կը դառնա ինքն իր մէջ, եւ իր տառապանքին մէջ կը շեշտէ կեանքին գեղեցկությունը, ապրելու հանգրէ:

Երբեմն կը պարզուի ազգային ու սիրոյ ապրումներէն եւ իր ժամանակի շահանքներուն մէջ շտեղատրուող շահանքի մը տեղեկելով՝ կը նկարագրէ մահուան հեղքը զգացող մարդու մը տառապանքին ապրումը, ընդգրկումը:

Իր այդ ընդգրկումին մէջ, Պետրոս Դուրեան զգալով հանդերձ մահուան դիմաց մարդուն ոչնչությունը, նոյն մարդուն կու տայ աստուածային արժէք մը, որ կը փնտռէ, կը գտնէ իր ճակատագրին պատասխանատուն, «ոխերիմ Աստուածը», կ'իջեցնէ դայն վար, կը հաւատարեցնէ իրեն, ապրելու իր պահանջը կը ներկայացնէ անոր, իրաւունքը, ու կը յանդգնի նոյնիսկ բարձրանալ վեր ու ինքզինք տեղափոխել աստուծոյ մէջ:

Միզայնությունն ճանապարհորդ՝ Պետրոս Դուրեան ընդարձակեց մարդ էակին ներքին հնարաւորությունները:

ՆԱԶ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

**Դ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի**

**Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն**

**Խ Ա Ռ Ն Ո Ւ Ա Ծ Ք Ը**

Պետրոս Դուրեանի ամբողջական վաստակին անձանոթ ընթերցողը, մանաւանդ Դուրեանի բանաստեղծական հանճարին միայն հազորդակից ընթերցողը, վստահարար, որոշ վերապահութեամբ պիտի մտնեայ Դուրեանի մօտ հրապարակաբանական խառնուածք մը ընդգծող այս խորագրին:

Դուրեան եւ հրապարակագրութիւն...  
 Երեւութեան կրնայ թուիլ, որ այդ երկուքին միջեւ գծուար է կապ մը գրտնել, անուազն հաշտութիւն մը ենթադրել: Որովհետեւ, Դուրեանի ստեղծագործական գիծագծին շուրջ հիւսուած անդուութիւնը, ժողովրդային առումով, «պատանի եսնեարին» մէջ տեսած է զորտունջէն սանձարձակ պոսթկումը միայն, մահուան գիրկը յանձնուելէ առաջ մարդուն, տիեզերքին եւ Աստուծոյ հաշտեցումը կատարող՝ սիրոյ եւ ըմբոստացումի խտացումը միայն:

Դուրեանի սանդղական տիպարը, թո-

քայտէ տառապող եւ սիրոյ ու գուրգուրանքի խորունկ պահանջով միացող սիրտը, որ ճանչցուած է գերազանցապէս իր բնական շիջման, զգացումներու եւ երեւակայութեան անիմանալի հանդոյց մը, ըմբռնելի է, թէ ինչո՞ւ չի կրնար հաշտուիլ հրապարակախօսի մը խառնուածքին հետ, մանաւանդ ա՛յն հրապարակախօսին, որմէ կը պահանջուի իմացական պատրաստութիւն, հասունութիւն եւ, առաջին հերթին, քաջութիւն:

Ահա թէ ինչու Դուրեանի հրապարակաբանական վաստակին ծանօթանալու համար պէտք է յատկացում մը կատարել, եւ ճշդել, որ պատանի բանաստեղծին մը տաւորական պատրաստութիւնն ու ախորժակները շատ քիչ տոկոսով ծանօթ են հայ ընթերցողին: Շատ քիչերու համար միայն, Դուրեանը բնածին թոքախտաւոր մը չէր, ընդհակառակն, ունէր առողջ կազմ մը եւ զուարթ, ուշիմ ու հարցապնդող միտք, որուն կեանքին մե-

ծափոյն Հաճոյքն էր մտաւորական որոնումներու եւ իրազորումներու մթնոլորտը:

Դուրեանայէտներու համաձայն, «Սկիւտարի Առիւտակը» իր կարճատեւ կեանքի ընթացքին ու՛չ միայն ինքնամփոփ ու «զգասանցանք»ով շապրեցաւ, այլև եղաւ հանրային աշխատանքի լծուած ա՛յն դէմքերէն, որոնք նախապատրաստեցին արեւմտահայութեան զարթօնքը, իրենց նըպաստը բերելով հանրային դաստիարակութեան գործին՝ Թատրոնի ու մամուլի ղեկներէն:

Դուրեանն եւ Երազարեանը իրար ընդհանրեցնելու...

Դուրեանի Հրապարակախօսական վարակը, աւելի ճիշդ՝ Դուրեանի անուշով մեղի հասած Հրապարակախօսական յողումները, Թիւրքի ինք հաստ են միայն:

Առաջին երկուքը Հրատարակուած են 1869ին, Նոյեմբեր 26 եւ Դեկտեմբեր 27 Թուականներուն, Կ. Պոլսոյ «Օրագիր ծիլն Աւարայրոյ» օրաթերթին մէջ: Առաջինը կը կրէ «Եսօտարան», իսկ երկրորդը՝ «Թատրոն» խորագիրը:

Այնուհետեւ, աւելի քան տարի մը, Դուրեան կը դադրի Հրապարակազրական ելոյթներէ, 1871 Մայիս 24ին վերագտնելու համար հանրային կործիչին, «Օրագիր Կ. Պոլսոյ» օրաթերթին մէջ Հրատարակելով «Բանասիրական» խորագրով յողում մը: Ապա, նոյն օրաթերթին մէջ, Դուրեան յաջորդաբար կը ստորագրէ «Պատկաւում մը» (27 Մայիս), «Բանասիրական» (18 Յունիս), «Երկու խօսք առ Սամաթիացիս» (19 եւ 20 Յունիս), «Դիմում» (21 Յունիս), «Ով որ ազատը կ'ըսէ, չուզածն ալ կը լսէ» (23 Յունիս) եւ «Առ Օրագիր» (26 Յունիս) խորագրով յողումները:

Հակառակ այն իրողութեան, որ Դուրեանի այս յողումները ուսումնասիրական բնոյթ չունին, այնուհանդերձ, անոնցմէ կարեւորագոյններուն մէջ, բնութեզոյրը կը հանդիպէ Դուրեանի մը, որ մտաւորական յանդգնութեամբ մը, իր մտածումի կարկինը կը տարածէ օրուան հրատապ հարցերուն վրայ, կը գրէ հանրային կեանքէ ներս մշակութային եւ

Թատերական բնդհանուր զարթօնքի մը անհրաժեշտութեան մասին, կը շեշտէ հայկական արժէքներ ստեղծելու կարեւորութիւնը, կը պահանջէ հանրային գիտակցութեան եւ դաստիարակութեան ծառայող Հաստատութիւններ՝ լսարաններ, կը պայքարի չի՛ն ու զարգանալու անկարող մտայնութեանց դէմ եւ, վերջապէս, այս բոլորին բնդմէջէն կ'ուզէ լսելի դարձնել իր մայնն ու տեսիլատր՝ իր ժողովուրդին առջեւ գրուած զարթնումի խնդիրներուն շուրջ:

Այսպէս, զանազան յողումներու մէջ անդրադառնալով հայ ժողովուրդի նկարագրին, արժէքներուն եւ ձգտումներուն, Դուրեան կը հասնի հետեւեալ վերլուծումներուն, հաստատումներուն եւ թելադրանքներուն:

«Մեր ժողովուրդը միշտ նորատէր ու կասկածոտ է, ամէն քանի սկիզբը կը յարգէ, կը բազայնէ, կը պաշտէ ու վերջապէս անոր յարտուութեան ի բոլոր սրտէ կ'ուխտէ, բայց փոքրիկ շարժում մը, կասկած մը կարող է ժողովուրդեան այս եռանդը մարել ու ամէն խոստում մտցնել...»:

«Թատրոն»

«Հայը դեռ իր արժանապատուութեան կէտերուն լաւ վերահասու եղած չէ»:

«Պատարան»

«Պատուայ եր գգացում տէր Սամաթիացի'ք, ձեր էն նուիրական պատիւը, ձեր էն գեղեցիկ ու վեհ գգացումը հայկականի մէջ կը փայլի, երբ գեղեցականն հեզնեն ու անուանարկեն, գձե՛գ, ձեր պատիւն ու գգացումը հեզնած ու անուանարկած կ'ըլլան»:

«Երկու խօսք առ Սամաթիացիս»

«Թողումք օտարները, որովհետեւ օտարներէն չկայ մեզ յոյս, յուսանք միակ հայ անուան, սիրենք ինչ որ հայ անուանը կը կրէ, հայը միայն կը մայ հայ յուսն օգնել եւ անոր ցաւակից կամ ուրախակից ըլլալ»:

«Թատրոն»

*Կամ՝ խօսելով Սամաթիոյ Հայութեան մշակութային, կրթական, հրապարակագրական կամ բնդհանուր ազգային զարթոնքին մասին, Դուրեան իր յոգևածներուն մէջ կ'արտայայտէ նոյնիսկ այժմէական տեսակէտներ: Այսպէս՝*

«Մենք, երիտասարդներ, մենք պիտի հանդիսանանք լուսոյ դրօշակիրները, քոյ մեր ալեւոր հայրերը սպագային աստղը իրենց կենաց սեւ կամարին վրայ նշմարելով գոնէ իջնան այն անցելոցն փսսը: Ինչպէս որ մենք մեր հայրերուն նախապաշարեալ գաղափարներուն վրայ կը խղճանք, մեր գաւակներն ալ մեր վերայ գաղափարներուն վրայ պիտ խղճան, որոնք դեռ եին գլխոց մըսին ու մնացորդն են, սրբենք մեր նակատը եւ ծաւալենք մտածումնիս հոն, ուր որ կը հասնի»:

**«Ոտարան»**

«Սամաթիացի՛ք, խառն ի խառն կ'ընթանաք, կանգ առնէք վայրիկ մը՝ վիհ կայ առջեւնիդ. ախան պեղած են ձեր ստից տակ. ընկերական աշխտալի պայքին մը կ'սպառնայ Սամաթիոյ եւ անվիրիպելի է: Սամաթիա հրաբուխ մ'է այսօր. կը մ'իսայ. մօտալուտ է իւր պոթեկումը: Այդ ախանին եւ հրաբուխին վրայ երկու տարակարծիք քանակներ կան, գաղափարաց երկու ախոյեան ըմբիշներ կան: Այդ երկու քանակներէն,

այդ երկու ըմբիշներէն կախում ունի Սամաթիոյ ճակատագիրը. դոցա մինն է լոյս, միւսն մութ է: Մութ անկամի պիտի, եւ այդ անկամը պիտի վճռէ Սամաթիոյ քախտը: Անկամը որքան մեծ եւ սոսկալի ըլլայ՝ այնչափ շքեղ ու յաղթական պիտի ըլլայ կանգնումը»:

**«Երկու խօսք առ Սամաթիացիս»**

«Հրապարակային մարդ մը, մանաւանդ լրագրագետ մը կամ վարժարանագետ մը, պէտք է որ սկզբունքի մը այնպէս գամուի՝ ինչպէս Աստուած մը իր խօսչին»:

**«Դրժուծ»**

*Մէջբերումները ինքնին պերճախօս են, դրսևորելու համար Դուրեանի հրապարակաստական խառնուածքը: Ձեւակնի էւ «Տրտուեցէ՛ք Հանճարեզ բանաստեղծը, իր անհատական տառապանքին անկախ, իր միջովայրին Հանդէպ կ'ապրէր Հանրային գործիչի մը յատուկ մտաւորական ներշնչութեամբ: Իր յոգևածներուն մէջ, Դուրեան ո՛չ միայն ժամանակին շունչով կ'առաջնորդուէր, այլև ազգայ մը կերտելու տմբողջական պատրաստակամութիւնը կը յայտնարէր:*

*Դուրեանի հրապարակագրական վստակը արժէք մըն է զնամնարեզ պատանի» ժառանգութեան հաշտոյն:*

**ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԷՐԵԱՆ**

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

ՄԱՆՈՒԿ ՄԱՐԳԱՐԷՆ

Եթէ ճշմարտութիւն է, որ բանաստեղծ Դուրեանի շուրջ շորս տասնեակ երգերուն մէջ, հայուն վիշտերն ու տառապանքները մարմնաւորող քերթը-ւածները չունին միւսներուն պերճութիւնը, բանաստեղծական վարկն ու կշի-ռը, սակայն ճշմարտութիւն է նաեւ, որ այս քերթուածները, թատերադու-թիւններն ու հրապարակագրական կարգ մը յօդուածները ճշմարիտ պատ-կերներն են հայ կեանքի մթնոլորտային յեղափոխութիւններուն:

Դուրեան իր ամէնէն ախուր օրերուն իսկ, 1871ի Հոկտեմբեր 1ին, թուղթին հետ ժամագրուած պահուն, տալէ ետք այցելութիւն մը կայսեր — Եսին, սէրերուն, ժահուան իր վիշտերուն եւ յուսարկումներուն, — կը նստի Աստուծոյ յանդիման, այսինքն՝ իր երակներուն մէջ թաւալող, ժրկող հայրենիքի եւ հայութեան դեպքան արեան դէմ ու կը տագնապի անոր տապնակներով: Կը տառապի, կը բորբոքի, կը դառանայ է ի տես անոր — հա-յութեան — զաւակներուն կուրծքերուն տակ սիրտ մը չըլլալու դաժան ճըշ-մարտութեան: Իրենց ներսը նախնեաց արովը շունենալուն եւ պապերէն միայն սեւ-սեւ մըռըր ու ժահր ժառանգած ըլլալու տխուր իրողութենէն մըղ-ւած՝ կը փոթորկի հանճարեղ պատանին:

Եւ հրարուիւր կ'նռայ, կը ժայթքի լաւայ, կը ժայթքեն բառեր, որոնք բառ չեն միայն, մտրակ են նաեւ՝ եղերերդ ըլլալէ աւելի, լաց ու կոծ ըլլալէ առաջ՝ առնական բողբոք են, յանդիմանական շեշտ են, երբ քանդելէ ետք ջնարին ամենանուրբ մեղեդիները, կ'երգէ թաւ լարերով:

Ժամգատ սուր մը, պատրած գոռ մը քէ չ'ունիմք,  
 Կարծեմբնուս տակ տըրտիտդ սի՞րտ մ'ալ չ'ունիմք.  
 Օ՛ն, ստփերնիս գարնն'նք գեաիմ,  
 Յայտնեմք մեր ցաւը տեազիմ:

Մեր քերթ վարդերն եւ արեւներն մեր եզրարց՝  
 Մեր տանարաց խաչերն՝ պատիւն հայրենաց  
 Մենք պանանցենք, բարօրութիւն մեր ազգին.  
 Զ'ա՛յս պանանցենք՝ գ'ա՛յս Սուրբանէն արտագին,  
 Մեր պատիւն ու Քուրդը կ'ուզենք,  
 Եւ կամ նորա զէմքին գէմ գէմք:

*Քոյր, եղբայր, խաչ ու պատիւ Հայրենի, բարօրութիւն մեր ազգին, քիւրտին խոշտանդումներուն եւ անմարդավայել զրտութիւններուն՝ դազանային բրտութիւններուն գէ՛մ՝ անոր կեանքը, արիւնը, զէնքին գէ՛մ զէնք պանանցել եւ այս բոլորը 1870ական թուականներուն, ու տակաւին քաղաքի մը մէջ, որ կը կոչուի Պոլիս, եւ առաւել սոսկալին՝ երկնքի մը տակ՝ ուր լուսին բտուր գործածե՛ն իսկ յանցանք էր, որովհետեւ զոյ էր երկրային սառույցէալ նըլորը, որ կը տեօրինուի եւ կը բեմադրուի մեծազոյն սառնաորտութիւնները...*

*Եւ այս բոլորը, որովք այն զմանակ համնարին, որ կոչուեցաւ Պետրոս Դուրեան, ու ապա՝ Սկիւտարի Սոխակ եւ այսօր՝ Քերթոզ յեղպիոխական:*

*Յորովայնէ բանաստեղծ էր Դուրեան: Ծնաւ սեւ հողի վրայ, ապրեցաւ իրեն վիճակուած եւ դամբանի մրուրով գծուած սեւ ճակատագիրը եւ իր ճակատագրին միւս երկուտրեակին՝ հողին, երկրին, ազգին ճակատագիրը:*

*Ապրեցաւ, մրկեցաւ եւ իր մահը բնութագրելու արարքին առընթեր՝ ապրեցաւ հողին սեւ երախներուն արեան կանչը, սահմուկեցուցիչ սոսկումները եւ տխուր յիշատակները, իրրեւ իրաւ եւ ճշմարիտ երկրացի, ու երգեց, պայքարեցաւ ի խնդիր այդ սեւ հողին, որուն սիրոյն, իրմէ՛ կտք՝ արեան ընկուղիչ պատարագին մասնակցեցան միւս ընտրեալները՝ խե՛նթ աղոց բովանդակ սերունդ մը:*

*Կրկնակի դառն ջստամ մը ապրած այս տղան, մեր գրականութեան նրարա՛լիք էթէ կ'ուզէք, անկարելի էր, որ շեռար, շալկեղծէր միւս մեծ քուրային մէջ...*

*Ու Դուրեան իրաւ կերպով ապրեցաւ այդպէս ու մարտերգեց՝ զօրակոչի ենթարկելով Հայ սրտերը:*

Դառն են արցունքով մեր սիրոյ բաժակք,  
 Սիրոյ դրօշք՝ մեր քերթ արցունքոս լաչակք,  
 Թէ չերգնումք, եզրա՛րք յիշել զՀայաստան,  
 Արեւմտր եւ պանել պատիւն հայոց տան,  
 Կը տառապի՞ Հայրենիք  
 Կամ Հա՛յ ըստիմք կամ մեռնիմք:

*Հայ ըստիմք կամ մեռնիմքի ա՛յս հրամայականն էր, որ ղեկավարեց Դուրեան Հայուն հողին լարերը, եւ անոր բոլոր բառերը հանդերձեց, արտօններով, կայծերով, շանթերով...*

*Եւ շանթերը շանթահարեցին...*

...Դեռ կը գտնու Ձեզ, Հայե՛ր,  
 Որ դամբանիս մէջ չը լըսուի Ձեր վայեր:

Եւ առաւել ուժովորէն.

«Թէեւ ըլլամ ես մեռել,  
Գամբանէս գարս կը նետուիմ ԱԶԱՏ Հայն տեսնել»:

Այս դպագողութիւնը, այն օրերուն յատուկ մտային, այսինքն՝ քերթող Հռչակուելու համար աղային լարեր շարշարելու արդիւնքը չէ: Անիկա, քիւրտին շխտարհելու եւ քիւրտին դիտուն ազատ տապար շողալու յեղափոխական գաղափարաբանութիւնն է:

«Թողումք օտարները, արավիեանս օտարներէն չկայ մեզ յոյս, յուսանք միմակ Հայ անուժէն, սիրեմք ինչ որ Հայ անուժը կը կրէ, Հայը միայն կրնայ Հայուն օգնել...»:

«Թատրան» յօդուածէն ընդօրինակուած վերի սողերուն մէջ խոստեալ կերպով ներկայ է մեր պատմութիւնը եւ, ի մասնաւորի վերջին մէկուկէս դարերը ուղիղ ուղիին առաջնորդող ուղենիւր:

Արդարեւ, մեր սեւ ներկան հոեւեփեցաւ Գուրեան հայուն ներաշխարհին մէջ, որ ունի տուաւ հողին ձայնին, ապա բարձրացաւ պահ մը, բարձրացաւ հողէն ալ վեր, հասաւ աստղերուն, մարգարէացաւ, իջաւ աշխարհ, եւ իբրեւ իրապաշտ մտածող օտարներէն չկայ մեզ յոյս» պատուիրանը արիւնազրեց Հայ Յեղափոխութեան այս մանուկ մարգարէն:

Ու սիրեց Հայ անունը: Իր արեան եւ Հայ անուան միջեւ դոյուքիւն ունեցող մազնիսէն՝ գիտակցութեանէն ժայթքելով կապուեցաւ Հայութեան՝ Հանճարներու միայն յատուկ Հաստարիմ պորտակապով: Հայկականով շնչաւորւելու, Հայկականով ծլարձակուելու եւ մանաւանդ Հայ հողին վրայ, Հայ աւելիւմ, բոլորով եւ արեւով կենսաւորուելու ու բարտի գառնայու գիտակցութիւնը բնազդային կերպով զգաց ան՝ իր մարմնին բոլոր հելլէներով, տասնըհինգ տարեկանին իսկ...:

Գուրեանի գրականութիւնը իր հրաբխային կեանքին, գառնեցանքներուն եւ հողեկան ու ջերմաստիճանային սարսափելի տեղատուութիւններուն եւ մակընթացութիւններուն հարազատ բիւրեղեայ Հային է:

«Ազգային հանդէսները ազգի մը շնչառութիւններն են» ճշմարտութեան գիտակից Գուրեան ապրեցաւ այդ առողջ հանդէսները՝ զանոնք իր թրջախաւոր կուրծքին մաքուր շունչով շնչաւորելու ի խնդիր:

Յեղափոխական էր Գուրեան: Յեղափոխական էր ո՛չ միայն իբրեւ տարիք, այլեւ իբր շնչառք միտք, էութիւն...:

Արդարեւ, որքա՛ն արգարացի է այն, որ Հանճարները ո՛չ միայն իրենց ժամանակաշրջանը կ'ապրին, այլեւ գալիք դարերը:

Գուրեան ապրեցաւ իր ժամանակաշրջանը, ապրեցաւ գալիքը, յեղափոխութիւնը, որ օր առ օր գոյն ստացաւ իր մէջ, սաղմնաւորուեցաւ, անոր ապագայի պատկերով շնչաւորեց իր հողին, գրչագրեց, սրբագրուեցաւ իր ներաշխարհին մէջ, մրրկեցաւ, երկրաշարժեց Գուրեան հայը, որ զգաց այդ հանելի սրբազան պարտականութիւնը, երազեց մարգարէի նման, բայց չար օր մը սեւ ճակատագիրը չյարգեց ժամագրութիւնը, ու հանկեցաւ երկտասարդ հրարուիւր, միւս մեծ հրարուիւր՝ Հայկական Յեղափոխութեան պայթումէն առաջ...:

ՍԱՐԳՍԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

“ԵՍ ԿՐ ՍԻՐԵՄ  
ՉԻՄ ՊԻՍՏՈՍ”

Պետրոս Դուրեանը կենսացրած ու անոր ժառանգութեամբ պայտապած էին ու նոր բոլոր մտաւորականները, առանց բացառութեան, փնտռած են այն էակը, որ սնունդ տուած է եղիբարարիստ քառասունչ՝ ժիւն սիրային յարդուներում: Կը յիշուին երեք անուններ, «Մէ», «Ե» բանաստեղծութեան հետ՝ վազամեռ դասակարգի մը, «Ջնէ պայտապած» հետ՝ Պիստոս Արափսիս եւ, «Էնտիմ հետ» Թերզա Չուրեանեան, բայց հին ու նոր հետաքրքրներէն եւ ոչ մէկը չի փորձեր վճարելու հաստատել Դուրեանի հետ յիշեալներէն մէկուն կամ միւսին սիրային կապին առկայութիւնը:

Դուրեան, կասկածէ վեր է, որ ունեցած է «սիրոյ կոնկրետ առարկայ»: Անձանօր չէր իրեն «սիրոյ արշաւանքը» եւ զիտենէ. թէ «ձեռքս առաւ կուրծիս» Էոն սիրոյ երկինք մ'արտար: Աստի իրական վարձատուութեան մը մասին կը վկայեն, փորձատուութիւն մը, զոր՝ պատուաբխններով պարտաւոր այրերով, էգերով ու արձակներով վստացող այն օրերուն հողի թուղիքին կարելի էր վստահիլ:

Դուրեանի, սէրը իրկեային չէր, բայց սիրոյ առարկային անունն ու պատկերը ցարդ անձանօր կը մնան, ափսոս...

Դուրեանի սիրային բանաստեղծութիւններէ մէջ կայ մէկը, որը տարբեր կարծիքներէ տեղիք է տուել եւ առիթ է եղել վիճելու, թէ բանաստեղծը արդեօք

սիրե՞լ է երբեւէ, եւ դոյութիւն ունեցե՞լ է արդեօք նրա համար սիրոյ կոնկրետ առարկայ: Կան Հիմքեր ենթադրելու, որ Դուրեանը կրքոտ կերպով սիրել է մի աղջկայ եւ փոխադարձ սիրուել նրանից: Դուրեանի ժամանակակիցները ճանաչել են այդ աղջկան: Անա թէ ինչու երկերի տաղթին հրատարակութեան մէջ «ՋՈՒ պայտապած» բանաստեղծութեան մի տողը վերջանում է մի անունով, որ մինչեւ այժմ մնում էր հանելուկային:

Ես կը պաշտեմ գիմ Պիստոս...

Նկատուած հրատարակութեան մէջ Պիստոս անունը բաց է թողնուած եւ փոխարինուած է բազմակէտերով:

Ես կը պաշտեմ գիմ...

Սակայն ինչո՞ւ առաջին հրատարակիչները, բանաստեղծի մահուանից անմիջապէս յետոյ լոյս ընծայելով նրա երկերը, հարկ են համարել յականջ յանունէ յիշատակել Պիստոս անունը:

Իրօք, Պիստոս-Արաքսիա անունով մի հայ գերասանուհի եղել է Վարդուխանի խմբում Հենց այն ժամանակ, երբ Դուրեանն էլ դերասան էր: Պիստոս-Արաքսիան բանաստեղծին հասակակից է, մեռել է նրանից մի տասնամեակ յետոյ՝ երիտասարդ հասակում: Նա եղել է բառական տաղանդաւոր դրամատիկ դերասանուհի:

Որ բանաստեղծի սիրոյ երգերը իրական ապրումն զգացմունքի արձագանդներ են, դրա վկայութիւնն է «Ներսէս հետ» բանաստեղծութիւնը, որն ինքնաբերական է եւ անկեղծ, սքանչելի է իր պատկերաւորութեամբ եւ ուժով: Այդ բանաստեղծութեան մէջ չքեղ պէյզաժը դառնում է զարմանալի իրական ֆոն, որի վրայ պատկերում է երկու սիրող սրտերի անհուն գորովը:

Վ. Թ.



Ն Ե Ր Ա Հ Ե Տ

Համբոյր մ'առի ներանէ,  
 Համբոյր մ'աննուն գորովի,  
 Երբ կարմիր շողք մարտին  
 Հորիզոնին վերելի:

Ձեռքս տարաւ կուրծին՝ հոն  
 Սիրոյ երկին մ'որոտար.  
 Թօշնեցայ գիրկն ես իբրեւ  
 Համբոյր մ'աննուն, դայկահար:

Նէ գ'իս իր ինչ նստեցուց  
 Գարգի վրայ դայարեայ.  
 Հուսկ ծանանջ սը կ'սլալար  
 Ներս դիմացը վըրայ:

Թոթովեցի... դոզացի...  
 Առի համբոյր անհամար.  
 «Եստի՛նք» ըսաւ — ա՛հ, խօսի՛լ,  
 Հատնիլ է լսկ ինձ համար:

Աչերու բոցն երբ մարի,  
 Դադրի տըրտփն երբ արտին,  
 Լսկ այն ատեն հարկ է որ  
 Անգոր շուրթերը խօսին:

Հուր հարիզոնն մարեցաւ,  
 Երկինքն աստղեր վթթեցան,  
 Համբոյր մ'առի դարձեալ ես  
 Յանուն աստեղց ցիրուցան:

Նէ քողուց որ վարսն ազատ  
 Սիւհը դէպ յ'իս բերելով  
 Միշտ ետվանիտ բըռնկած  
 Ճակատըս գով բայրերով:

Ո՛հ, այն ժամը ոսկեգոծ  
 Անշուշտ սահած, քրտած է  
 Ճակատագրին անդորտ  
 Սեւ ձեռներէն երկարէ:

Մեր համբոյրներն պսակեցին  
 Տերեւները խարշափամբ,  
 Եւ շողերու տալին շուք  
 Աստղերն երկնից այն անամպ:

Ձեռք վերցուցինք աստղերուն,  
 Մեր ուխտեցինք իրարու,  
 Դողդըղացին աստղերն ալ  
 Մեր երգումէն ահարկու:

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,  
 Աստղեր սրակեց ի գորով,  
 Բնութիւնն եզաւ պըսակիչ,  
 Մեզ պըսակեց աստղերով...

1871

«ՄԹՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՄԹՈՒԹԻՒՆ ՄԸՆ ԱԼ»

... Իր նամակներուն մէջ տեւ աղջկան մը անուն շնոր գտներ, ոչ ալ ոյ եւէ ակնարկութիւն սիրային գէպքի մը. եւ իր նամակներէն շատերը գրած են չեռու տեղ գտնուող բարեկամներու, որոնց անշուշտ պիտի խորհրդապահարար հաղորդէր իր սիրային արկածները՝ եթէ ունեցած ճշմարտ: Միայն մէկ նամակի մէջ, որ ուղղուած է Արմէն Լուսինեանին, կայ տող մը, մէկ հատիկ, ուր կնոջ մը վրայ կը խօսի, բայց ան ալ շատ անորոշ է.

«Ներսէս հետ ի՞նչ ունեցաք մինչեւ հիմա. կ'աղաչեմ, տեղեկութիւն:

Առ Նէն Լուսինեանի սիրած մէկ աղջիկն ըլլալ կը թուի: Եւ ատիկա մթութեան վրայ մթութիւն մըն ալ կ'աւելցնէ:

Նմանապէս, իր քերթուածներուն մէջ միակ անգամ մը աղջկան մը անունը յիշուած կայ.

Ես կը պաշտեմ գ'իմ Պիստոս.

Բայց այդ անունը վաւերական չէ. Դուրեանի ձեռագրին մէջ Պ. սկզբը շատառը կայ միայն, իստուր վերջէն աւելցած է՝ ուրիշի մը, չի գիտցուիր որո՞ւ ձեռքով:

Այս տնորոշութեանց հետ, կան նաև քանի մը հակասական եւ անփաստացի պատմութիւններ, զոր կ'ուզեմ յիշատակել հոս՝ հետաքրքրութեան համար, քանզի որ ատոնցմէ կարելի ըլլայ կիրակացութիւն մը հանել:

Դուրեանի բարեկամներէն մին, տղթ. Սարգիս Ֆինճանճեան, որ Պուլկարի կը գտնուի եւ որմէ խնդրած էր տեղեկութիւններ տալ բանաստեղծի կեանքին վրայ, ինծի ուղղեց հետեւեալ լակոնական պատասխանը.

«Երբ կենսագիր Պետրոս Դուրեանի, գուցէ աւելորդ չըլլայ Ձեզ յայտնել, թէ Պ. Դուրեան կը սիրէր Ս... անուն օրիորդ մը, որ այժմ ամուսնացած եւ մեռած է: Իւր ոտանաւորներուն մէջ շատ տեղ անոր ակնարկութիւններ ունի. այս սէրը բանաստեղծական եւ իտէական էր միայն, եւ աղջիկը տեղեկութիւն իսկ չունէր, որչափ որ կը կարծեմ գիտնալ, թէ այս մեծ բանաստեղծէն կը սիրուի»:

Ատիկա յստակ է, բայց շատ անբնական: Կրնայ ճիշդ ըլլալ, որովհետեւ Դուրեանի տաղերուն կը յարմարի թաքուն մնացած ու չփոխանակուած սէր մը: Բայց մանրամասնութեան կատարեալ երաժշտութիւն մը կը պաշարէ ոչ ոք Ս... սկզբնատար: Եւ ահաւասիկ հակասութիւնները. ըստ Արմէն Լուսինեանի ինծի անմասպէս տուած տեղեկութեան, այդ աղջիկը կը կոչուի Սաթենիկ ու կ'ապրի տակաւին:

Իսկ այն պատմութիւնը, որ ամէնէն տարօրինակն է, ամէնէն փրկասանականը, ամէնէն անփաւերն ու անբնականը, հետեւեալն է, զոր տղթ. կողմա, Դուրեանի բարեկամներէն կը պատմէ, որպէս թէ Դուրեան զպրոց եղած ատեն սիրահարուած ըլլայ ծանօթ ընտանիքի մը աղջկան, որ նոյն դրոշմներէն կ'աշակերտէր, սիրուած ըլլայ անկից, անոր հետ ժամադրութիւններ ունեցած ու նամակներ փոխանակած ըլլայ: Դպրոցէն ելլելէն ետքը, այդ սէրը կը շարունակէ մաս մնալ Դուրեանի սրտին մէջ եւ այն աստիճան կը սաստկանայ, որ բանաստեղծը կը յանդգնի ամուսնութեան խնդրել աղջիկը: Մտողքը արհամարհանքով կը մերժէ զայն իր ազատութեանը համար եւ այնուհետեւ ամէն տեսակցութիւն անկարելի կը դարձնեն երկու սիրահարներուն միջին: Աղջիկը սրտին ցաւէն կը հիւանդանայ: Բժիշկը կը պատուիրէ, որ թոյլ տան Դուրեանին, որ գոնէ երբեմն գայ զայն տեսնելու: Քանի մը տեսակցութիւն կ'ունենան: Բայց աղջիկը տեսնելով, որ Պետրոսը երբեք իրը պիտի չըլլայ, չի կրնար իր վիշտին սիրտանք գտնել եւ վերջապէս կը մեռնի իր հիւանդութենէն, ճիշդ այն հիւանդութենէն, որ Դուրեանն ալ պիտի տունէր տանէր անոր ժահէն վեց ամիս յետոյ:

Ա Ր Շ Ա Կ Զ Օ Պ Ա Ն Ե Ա Ն

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԹԵՐԷՉԱ ԶՈՒՀԱՅԵԱՆ



Երէջ քոյրը Աննիկի: Մնած է Կ. Պոլիս, 1852ին: Բեմ բարձրացած է քրոջը Հեա, Սկիւտար, Այիդիէ թատրոնին մէջ: Գործած է միայն Վարդովեան խումբին մէջ: Ստանձնած է քանի մը ղլխաւոր դերերէլ գաս, utilité comique եւ մայրական մասեր: Իր առաջնակարգ դերերը եղած են Թէրէզա («Սէզար Պարմիս») եւ Քաթերին («Մերուսի տասնայետը»): Կապուտաչուի եւ երազային ազջիկ մըն էր ու սիրուած մեր նոճեքնոր բանաստեղծ Պետրոս Գուրեանէն: Ահա թէ ինչ կը գրէ դերասանուհի Ազնիւ Հրաչեայ իր «Իմ յիշողութիւններս» խորագրերը կրող զբոյրի մէջ (էջ 30-31):

«Ամառուան եղանակի առաջին փորձը տեղի պիտի ունենար Սկիւտար, նոյն Այիդիէ թատրոնին մէջ: Նշանակուած էր փորձ՝ ժամը 3ին (ըստ եւրոպացւոց՝ 9ին): Բայց արդէն ամբողջ խումբը երկուուկէսին հաւաքուած էր: Խմբապետն էր Վարդովեան, ուժիտէօր՝ Մաղաբեան, ընկերներս էին Երանուհի Գարազալ, Վերդինէ Գարազալ, Թէրէզա Չուհաճեան, Գարեգին Ռչտուհի, Մանուկ Սիսակ, Սերոբէ Պենկիւն, Նալեան, Թոսպաթեան, Սանճաքեան, Չափրասաճեան, Գէորգ Պէրպէրեան, Տէօյիւճեան, Տիրան Գալֆայեան, որոնց հետ ծանօթացիր էի թլխատութեան հանդէսներու ժամանակ: Չախ կողմի թուխներուն քոյ նստած էին տղամարդիկ եւ աջ կողմը՝ կանայք: Այսինքն՝ Գարազալ քոյրերը եւ Թէրէզա Չուհաճեան, որոնցմէ տասը քայլ հեռու էր փողոցի դուռը: Ես

ալ դրեթէ տասը քայլ հեռու նստած էի օրիորդներէն, դրան հակառակ կողմը: Այդ միջոցին ներս մտաւ պատանի մը, երկար հասակով ու երկար վզով. ունէր երկար քիթ. դունաս էր: Մոխրագոյն ու շատ մաշած զգեստ էր հագած: Թեւին տակ կար տետրակ մը: Երբ երեւցաւ, դերասանուհիները սկսան ծիծաղել ըսելով. «Քա, Թէրէզա, քուիկնք եկաւ»: Իսկ Թէրէզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինծի պէտք չէ. շատով կը մեռնի»:

«Ես լսեցի այդ խօսքերը, բայց չէի կարծեր, թէ պատանին ալ լսած է: Այդ ցնցոտիներ հագած ու գերեզմանին մօտեցած պատանին Գուրեանն էր, մեր բոլորին սիրելի բանաստեղծը: Իսկ իր թեւի տակի տետրակն էր «Թատրոն» խաղը, զոր կ'ուզէր կարգալ Վարդովեանին եւ ընդունել տալ խաղացուցակին մէջ:

«Երբ իր մահէն ետք կարգացի անոր բանաստեղծութիւնները, այն ատեն իմացայ, թէ ան ալ լսած էր Թէրէզա Չուհաճեանի խօսքերը, քանի որ գրեր էր.

Շատերը գ'իս մերժեցիմ,  
«Քրնար մ'ունի տակ — ըսիմ.  
Մին՝ «դողդոջ է, գոյն չ'ունի —  
Միւսն ալ ըսաւ — կը մեռնի»:

Թէրէզա Չուհաճեան ամուսնացաւ Արթաթի Դեբափեան անուն մէկու մը հետ ու կանուխէն վերջնականապէս հրաժեշտ տուաւ բեմական կեանքին:

(«Թատրական դիվերս», էջ՝ 634-635)

ՎԱՐԴԱՆ ՓԱՐՔԱՄԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԸ

Ի Ն Չ Պ Է Ս Ո Ր Ե Ղ Ե Լ Է

Հարցի պատճառները համարեա՛ մէկ հարկաւորակի վաղեմութիւն ունի: 1872ին էր: Վաղածոթիկ բանաստեղծի եւ թատերադասի յիշատակէ յանրագիտական նախանձախնդրութեամբ, Սկիւտարի Ընթերցասիրաց Ընկերութիւնը ձեռնարկեց Դուրեանի երկերի հրատարակութիւնը, որը եւ հետագայ շատ աքնութիւնների, վարկածների, ճշմարտութիւնը վերականգնելու համար թափուած մեծ ջանքերի դուռ բացեց: Բանն այն է, որ հրատարակչական յանձնախումբը Դուրեանի բանաստեղծութիւնները յանձնում է գրաբարի ուսուցիչ, բանաստեղծ ու խմբագիր Սիմոն Յէլէկեանին՝ խմբագրելու: Նա իրեն անշափ ազատ է զգում երեսասարդ բանաստեղծի սրբութիւն դարձած ձեռագրերի նկատմամբ, որ աղաւաղում է գրանձ՝ ըստ իր ճաշակի: Ե՛րեսմանի սամաւորները երբ պիտի տպագրէին, — ասել է նա, — ինծի բերին, որ մէյ մը աչճէ անցրնեմ: Էփէնտիմ, տեսայ, թէ

մէջը շատ մը փոխելու բաներ կան, անբարոյական տողեր կան, ամէնքը վերցուցի, շինեցի, շտկեցի, կոկեցի, շնորհալ բան մը ըրի, որ երես կը ձերմակցընէ, թէ՛ հանգուցեալիմ պատիւ կը բերէ, թէ՛ գրականութեան»:

Աւելորդ չի լինի Ս. Յէլէկեանի «չտկելու» աշխատանքից մի նմոյշ բերել: Դուրեանը իր շնորհ առ Հայաստան՝ բանաստեղծութիւնը աւարտել է այսպիսի տողերով.

Թէեւ ըլլամ ես մեռել,  
Դամբանէս դուս կ'ենտալիմ ԱՁԱՏ  
հայն տեսնել:

Ս. Յէլէկեանը այս տողերը «երթբազրիւով» այսպիսի վիճակի է հասցրել.

Քնարդ իմ, զքեզ մոռանա՛լ,  
Ո՛չ, յետ շիրմիս քեզ ձայն ըլլալ,  
ու հայ լալ:

Ազատ Հային տեսնելու համար դամբանից դուրս դալու Դուրեանի ցանկութիւնը վերածուել է լալու ցանկութեան: 1893ին, Բարսեղ Էքսէրեանը նոր Հրատարակութեամբ ձգտեց իր նախորդի «աւերումները» վերացնել, բայց նա էլ ղերծ լինաց քմահաճ ժտեցումից, «խրմբադրելու» մարմաջից:

Մեծ աշխատանք է տարուել Դուրեանի քնարական խօսքը անաղարտ տեսքով վերականգնելու համար: Այդ հարցում ակնառու երախտիք ունեն յատկապէս Ա. Զօպանեանը, Մ. Միհրզաւտեանը, Ա. Գալստեանը, որը վերջերս Երուսաղէմում Հրատարակեց Պուրեանի տաղերն ու նամականիքն քնազրերից:

Եւ ահա այժմ Հրապարակի վրայ է Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի Մ. Արեղեանի անուան գրականութեան ինստիտուտի Հրատարակած Դուրեանի երկերի երկհատորեակի առաջին հատորը: Այն պարունակում է Դուրեանի տաղերը, Հրապարակախօսութիւնն ու նամականիքն, իսկ երկրորդ հատորում կը լինեն թատերգութիւնները:

Ներկայ Հրատարակութիւնը տարբերում է բոլոր նախորդներից իր ակնյայտ արժանիքներով: Նախ՝ որ այն առանել ամբողջականութեամբ ընկզբկում է Դուրեանի տաղերը, եւ երկրորդ՝ այնտեղ Դուրեանն է իր ինքնազրերի Հարապատութեամբ:

Ժողովածուն պատրաստել ու ծանօթագրել է քանասիրական գիտութիւնների թիկնածու Ալբերտ Շարուրեանը: Նա վիթխարի աշխատանք է տարել Դուրեանի տաղերին ուղեկցուած քանասիրական ու գրականագիտական ամէն ժի երեւոյթ բացայայտելու համար: Բաւական է ասել, որ Ժողովածուն ունի ընդարձակ ծանօթագրութիւն, ուր ամենայն մանրակրկիտութեամբ ու նիւթի խոր իմացութեամբ ցոյց են տրուում Դուրեանի ինք-

նազրից կատարուած շեղումներն ըստ տարբեր Հրատարակութիւնների, այդ առթիւ արտայայտուած հայեցակէտերը, տաղերի Հրատարակութեան պատմութիւնը, դուրեանական ինքնազրերի «ոգիտականը» եւ այլ բազում հարցեր: Գրականագէտը աչքաթող չի անում առղերի տառն իսկ ու վերականգնում է դուրեանական գրչի յօրինուածքը գրանից շեղումների ամէն ժի ու որտեղ էլ թոյլ տրուած լինելու արձանագրումով: Հատորը փաստորէն ստեղծում է դուրեանագիտութեան արծարծած հարցերի եւ բազմազան մեկնարանութիւնների համայնապատկերը: Այն Հարստացուել է նաեւ տեղանունների, անձնանունների եւ դժուարընկալելի բառերի բատարաններով, որոնք նպաստում են հատորում զետեղուած երկերի բազմակողմանի ծանօթացմանը:

Հատորի խմբագիրն է Հանդուցեալ Պարոյր Սեւակը, որ այնպիսի՝ սերով էր տանում խմբագրական աշխատանքը:

Դուրեանի երկերի այս նոր Հրատարակութիւնը, այնուհանդերձ, մի կենսական հարց է ծնում: Ինչպէս ցոյց է արուած ծանօթագրութիւնների մէջ, Դուրեանի Ա. տետրակը գտնուում է Երուսաղէմում եւ պէտք է Հրատարակել, որովհետեւ, ինչպէս իրաւացիորէն ասուում է ինստիտուտի խօսքում, դա «ցոյց կը տայ, քէ ինչպէս է ստեղծագործել Դուրեանը»: Բացի դրանից, Հաւաստի է նաեւ այն հետեւութիւնը, որ ինչ-ինչ տեղեր պէտք է գտնուելիս լինեն Դուրեանի ձեռագրերից, գրանց արտադրութիւններից, որոնք կարող են լրացուցիչ լոյս փոռել մեծ քնարերգակի ստեղծագործական ուղու վրայ: Հաւատացած ենք, որ Դուրեանի արուեստի սիրահարները դեռ կը Հանդիպին ուրախաբախտ աւակնկալներին:

ՎԱՐԴԱՆ ՓԱՐԹԱՄԵԱՆ

## ԿԸ ՍԻՐԵՄ ԶՔԵԶ

Համարի կենսագրիչը կարծիքին, Պետրոս Դուրանի  
 գրվել բոլոր բանաստեղծությունները յանկարծական բխումներ  
 են, մեկ գրչով առաջուած գործեր, որոնցմէ հազիւ երկու-երեք  
 հատը ենթարկուած են բանաստեղծին սրբազրութեան:  
 Սրբազրութեան մէկը զՆՐ սիրն գեղգ տեսն բանաստեղ-

Ո՛հ, ո՛վ ես դու սե՞ր, երկնային շո՛ւնչ կամ հո՞ւր,  
 Քու սեւ անուշ աչերդ չունի գիշերը,  
 Վարդը չունի քու լանջդ անբիծ ձիւնաթոյր,  
 Լուսինն չունի քու վարդագոյն այտերը:

Յայզն՝ աստղերուն փափուն, լուսնոյն սիրադէժ,  
 Տերեկն՝ ալեաց՝ ծաղկանց ժըպտիս, մէկուն... գէ՛ք-  
 Իսկ քեզ համար ես արցունքով կ'ազօթեմ,  
 Իսկ չես շնորհեր նայուածք մ'ինձ սեւ աչերէդ:

Արդեօք էա՞կ մ'ես թէ երկնից զըսարթուն.  
 Կը նախանձին գեղոյդ վրայ վարդ՝ լուսնկան,  
 Ձայնիկդ ապշած լսելով քաղցր ու թրթռուն,  
 Խոնեաց խորերն կ'սգայ լրտիկ լուսնեակ:

Ա՛յլ ի՞նչ քաղցր է եթէ ըլլամ ես գեփիւռ  
 Եւ զըզուելով մագերդ խարտեաշ ու անօր՝  
 Տամ շունչս յուշիկ այտերուդ վրայ վարդասփիւռ,  
 Սրբեմ եթէ կայ աչերուդ մէջ արտօսը:

Պարտեգիդ մէջ իցի՛ւ թէ վարդ մ'ըլլամ ես,  
 Եւ երբ դու գաս առաւօտուն ժըպտով պերճ՝  
 Որ քու այտերդ կարմիր գունովս ներկես,  
 Թռումիմ... փափկիկ ձեռքիդ մէջ տամ կեանքիս վերջ:

Երանի թէ վտակ մ'ըլլամ ես վընիտ,  
 Եւ երբ յուշիկ նըստած մօտ իմ եգերքին՝  
 Պատկերանայ հայելոյս մէջ քու ժըպիտ,  
 Պղտորելով կապոյտ ալիքս ցամքին:

Այլ ո՛չ անգութ, եթէ ունիս սիրահար,  
 Իցի՛ւ թ'անոր գերեզմանին վէմն ըլլամ  
 Եւ հոն թափած դառն արցունքներ ծծեմ յար-  
 Ըզգամ դէմքդ... այլ ո՛չ, թէպէտ վեմ, այլ կուլամ:

Ո՛հ, դու սիրէ՛, գգուէ՛, ժպտէ՛, Հայ աղջիկ.  
 Քեզի համար պիտի մեռնեմ, թող պլպլուն  
 Արցունք մ'հեղու դագաղիս վրայ սեւ աչիկդ,  
 Տխուր շիրմիս վերեւ երգէ թող պլպուլն:

Յուրիսն է, որուն մարմինն կրած զգալի փոփոխութեան հետ փոխուած է նաև խորագիրը եւ եղած ճիցի՛ւ քէջ: Աշխատանքի ուժով ազգերը բնորոշուցնելու Դուրեանի արունստին մասին գազափայ մը ապու համար՝ կու տանք ինչորոշ առարկայ բանաստեղծութեան երկու սարքերակները զէժ դիմաց:

Ի Յ Ի՛ Ի Թ Է

Ո՛հ, ի՞նչ ես դու, սէ՞ր, երկնի հո՞ւր կամ ժըպի՞տ.  
Չունի երկին աչացոյ կայծերն ու կայոյտ,  
Վարդը չունի քու լանջոյ անբիծ՝ լուսափթիթ,  
Չունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ:

Գիշերն՝ երկնի կայծից, լուսնոյն սիրադէմ,  
Յերեկն՝ ալեաց, ծաղկանց ժրպտիս... մէկո՛ւն գէթ,  
Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղօթեմ,  
Դու չ'ես շնորհներ մայրածք մ'ինձ հուր աչերէդ:

Արդեօք էա՞կ մ'ես, թէ երկնի գրարթուն,  
Կը նախանձին փայլիդ վրայ վարդ, լուսնակ,  
Ջայնիկդ ապշած լքսելով քաղցր ու թրթռուն,  
Նոնքրու մէջ սրգայ լըռիկ լուսինեակ:

Ծնէի իցի՛ւ ք'հեւացող հով մ'անուշիկ.  
Եւ գգուելով երազք նակտիդ այդ անշուք,  
Տայի շունչս շուրթերուդ մէջ ես յուշիկ,  
Լոկ սրբելով թէ շողար աչքդ արտասուք:

Պարտեզդ իցի՛ւ թէ փոթթէի վարդ լացող,  
Եւ երբ գայիր այգուն շաղին՝ ժրպտով պերն,  
Գունովս ներկել այտերդ, քափել գոգդ իմ ցօղ,  
Վերջին շնչիկս ի գիրկդ առնէր ելեւէջ:

Բխէի ես իցի՛ւ ք'առու մը վնիս,  
Եւ երբ յուշիկ գայիր մօտ իմ եզերքին,  
Յուանար իմ հայելույն մէջ քու ժպիտ,  
Պատրելով կայոյտ ալիքս ցամփէին:

Ա՛հ, իցի՛ւ թէ լինէի ես նառագայթ,  
Շողշողայի դէմքիդ վըրայ վայրիկ մի,  
հարէի քեզ ք'ես աւելի գեղազարդ,  
Ի՛անուշարոյր մազերուդ մէջ մարէի:

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթէ տըւիր մէկուն սէր,  
Իցի՛ւ ք'անոր գերեզմանին քարն լինիմ,  
Եւ դու թօշնած գաս շնչել շուրջս... արտասուե՛լ...  
Դեզ երպելու համար հարկ լոկ գոյ շիրիմ...



## ՎԱՂԱՄԵՌԻԿ ՀԱՆՃԱՐԸ

«Պիտի փնտռե՛ն, պիտի փնտռե՛ն զիս»  
Գ. ԴՈՒՐԵԱՆ

Հայ նոր ջնարկագութիւնը՝ մեր ժողովրդի ազնիւ հոգու տարեգրութիւնը, հիւսել են վարպետներ, որոնք ճակատագրի դաժան բերումով յաճախ մնացել են կեանքի կէս ճանապարհին: Սիւմանթո, Վարուժան, Ռուբէն Սեւակ, Տէրեան, Մեծարեանց ու Պետրոս Դուրեան... Նրանք, որ կոչուած էին Արեւը, Լոյսը, Հոգու բերկրանքը աշխարհին, մարդուն պարզեւելու, ապրեցին ողբերգականօրէն կարճ կեանք: Սակայն մի զարմանալի կանխազգացողութեամբ, իմաստուն այս այրերը շտապեցին ասելու իրենց խօսքը՝ մեծ խօսքը ու անմահացան: Եւ հիմա ո՞վ համոզուած չէ, որ 1872 թ. Յունուարի 21ը ոչ թէ նրա մահուան, այլ անմահութեան, յաւերժութեան տարեթիւրը դարձաւ:

«Մի վառ, հրաշէկ ասուլի պէս փայլեց պատանի Դուրեանը հայ պոեզիայի պատմութեան մէջ»: «Այդ հիւանդ, համնարեղ պատանիքն ուղում էր իր հոգու լոյսով լուսաւորել աշխարհը, նա երազեց, անշաղկապ տարեալ, մարդուն արժանի կեանք: Այս մեծ ձգտումից էլ ծնունդին քերթովի զոզտրիկ տողերը, որոնք եշանաւորեցին Հայ ջնարկագութեան նոր, բարձր աստիճանը: «Մէկ քանի պատառ բուրբերքս վրայ գրուած արցունքառ այդ սողիքը» զարմացնում, հիացնում են թէ՛ մաքերի, յոյզերի, ապրումների ազգային ու հա-



մամարդկային բովանդակութեան հարստութեամբ եւ թէ պեղարուեստական ձեւի կատարելութեամբ: Ապշեցնում են, սքանչացնում, մա՛նաւանդ՝ որ դրանք արարողը ապրել է ընդամէնը քսան դարուն:

Դուրեանի ուսմանտիկական քնարն ընդլայնեց մարդկային զղացմունքի սահմանները: Աշխարհը, կեանքի իմաստն ու առեղծուածն է աշխատում պարզել բանաստեղծը: Նա, որ հեռանալու էր կեանքից՝ ոչինչ չտեսած ու վայելած, հոպեկան մի անհուն տառապանքով փորձում է յայտնաբերել ու սրբապրենել այն արժէքները, որոնք կեանքի հիմքն են: Այս պատճառով էլ յախտուն, գրամատիկ ու աչեկոծ է Դուրեանի ստեղծագործական աշխարհը: Իրարամերժ զգացմունքների մի ուղիկան է փոթորկում այնտեղ:

Դուրեանն իր անձնական ապրումներն ու տառապանքները հանճարեղ ներշնչումով կարողացաւ բարձրացնել համամարդկայինի աստիճանին, դորձրնել ամէն մի մտածող, զգացող մարդու սեփականը: Նա իր ողբերգութեան մէջ, մարդու ողբերգութեան մէջ տեսաւ աշխարհի ողբերգութիւնը: Շէշբրփիրեան մի թեմա է սա, որ հմայ բանաստեղծը լուծում է իւրովի: Աշխարհից, դատը կեանքից խորթացած ու հեռացած մարդկային հոյնների՝ հէք հոգիների երգիչն է դառնում նա:

Քերթողը, որ այնքան որոնել էր ու դեղերել, գտել ու կորցրել, իր հանճարեղ «Տրտուկներ»ում կարծէք ի մի է բերում ամէնը՝ նորից սրտման ճանապարհը բռնելու համար: Իր նամակներից մէկում Դուրեանը գրում է. «Կ'անիծես աշխարհը, քարեկամ, արդէն ինքն անիծեալ է: Աշխարհ կամ Աստուծայն ճանճարայքի մէկ հառայն ըլլալու է, կամ դժոխոց մէկ անիւմ կատակը...»: Այդ աշխարհում էլ ապրում է մարդը, խեղճ, անօգնական մարդը: Բայց «Տրտուկներ»ը դառնում է մարդկային ռզու, մարդկային եզրուաթեան ու նրա արարչագործ ուժի հիմնը:

Ո՛հ, կայծ տըւէ՛ք ինձ, կայծ տըւէ՛ք ապրի՛մ...  
Ի՛նչ, երազէ վերջ գրկել ջուրս շիրի՛մ...  
Ո՛հ, տըւէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ,  
Սիրե՛լ կ'ուզեմ դեռ լ'ապրիլ ու ապրիլ:  
Ըրկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,  
Կայծ տըւէ՛ք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէ՛ք:

Բայց գուցէ անխուսափելի մահն է ճիւղ: Եթէ ապրելը տանջանք է, ապա արեւոջ մահը փրկութիւն չէ՞: Հանդարտ ու խաղաղ հոգով նա պատրաստ է թողնել այս աշխարհը, բայց մեռնել՝ ապրելու համար: Ուստի նա ողջոյն է ասում Աստծուն, բարձրանում զաստղերի սանդուխտն անալիս՝ լուծելու կեանքի ու մահուան ստեղծուածը:

Աստուած չի կարող փրկել աշխարհը, մարդուն: Յանդուգն մի զայրոյթով բանաստեղծը ըմբոստանում, անէծք զառած խրում է ճոխերիմ Աստուծոյն զողջ ու վերադառնում դէպի կեանքի ամենամեծ արժէքը՝ մարդը:

ԲՈՒԴՈՒՅ ՍԻՄՈՆԵԱՆ

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՓԵՐԹՈՒԱԾՆԵՐՈՒՆ

## ց ա ն կ ը

(ԻՐ ՎԵՐՋԻՆ ՁԵՌԱԳՐԻՆ ԿԱՐԳՈՎ)

- 1.— «Իզճք առ Հայաստան» (1869):
- 2.— «Սիրեցե՛ք գմբեանս» (1869):
- 3.— «Պէտք է մեռնիլ» (1869):
- 4.— «Ի պատրիարքական ընտրութիւն ամենապատիւ Հայրիկին» (1869):
- 5.— «Ի դիմաւորութեան» (1869):
- 6.— «Հայրիկն հայոց» (1869):
- 7.— «Իրգ մարտին Վարդանանց» (1869):
- 8.— «Նէ» (1871):
- 9.— «Առ կոչսն» (1871):
- 10.— «Վիշտի հայուն» (1868):
- 11.— «Կոյսն լիեալ» (1870):
- 12.— «Նայուածք մը» (1871):
- 13.— «Նուագ՝ Ժ. տարեդարձի Ազգային Սահմանադրութեան» (չիրատա-  
րակաւած) (1870):
- 14.— «Հծծիւնք» (1871):
- 15.— «Ձօնիկք» (1871):
- 16.— «Մանուկն առ խաչ» (1871):
- 17.— «Իցի՛ւ թէ» (1867):
- 18.— «Սիրեցի քեզ» (1869):
- 19.— «Սիրելի» (1871):
- 20.— «Իրժեյ» (1871):
- 21.— «Լնակ» (1871):
- 22.— «Թրքուհին» (1871):
- 23.— «Ներս հետ» (1871):
- 24.— «Տրտուկք» (1871): Առաջին կապածք ըստ վերընթեր ձեռագրի,  
«Մերձ ի մահ գրուած» վերագրին մասը քերթողինը չէ:
- 25.— «Ջրզում» (օր մը վերջը) (1871):
- 26.— «Ջնէ պաշտմն» (1871):
- 27.— «Կոկոն-ձաղիկի կոչսն» (1871):
- 28.— «Սե՛ւ, սե՛ւ» (1871):
- 29.— «Առ Մոյիս» (1871):
- 30.— «Մանիշակ» (1871):
- 31.— «Իմ հանգիստք» (1871):
- 32.— «Նար սու օրէք» (1871):
- 33.— «Իմ ցաւք» (1871):
- 34.— «Նուէր յիշատակի առ Պ. Հ. Յանֆէտեան. Յուլի» (1871):
- 35.— «Ի գերեզմանն ամենասիրելոյ Վ. Լուսինեանի. Հեծծմունք» (1871):
- 36.— «Իմ մահը» (1871):
- 37.— «Ի՛նչ կ'ըսեն» (1871):

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԷՆ Ն ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱՆԻ Ժողովածուներ



*Մինչև այժմ Դուրեանէն լոյս տեսած ժողովածուներն են.*

- 1.— «Տաղք եւ քտորերգութիւն» Պետրոսի Դուրեան, Հրատարակիչ Լաւրի Ընթերցասիրաց Ընկերութեան Սկիւտարու, Կ. Պոլիս, 1872:
- 2.— «Տաղք եւ քտորերգութիւնք, նամականի, դամբանակամ, ստալածագիր», Հաւաքեց Բարսեղ Ե. Էքսէրճեան, Կ. Պոլիս, 1893:
- 3.— «Բանաստեղծութիւններ», ժողովածու, Բաքու, 1900:
- 4.— «Տաղեր», կազմեցին Աւետիս Տէր Յարութիւնեան եւ Հրաչեայ Աճառեան, առաջարկ Ա. Տէր Յարութիւնեանի, կենսագրութիւնը եւ բանարանը՝ Հրաչեայ Աճառեանի, Եռուզի, 1902:
- 5.— «Բանաստեղծութիւններ», ժողովածու, երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1904:
- 6.— «Երգեր եւ տաղեր», Եղիշէ սրբազան Դուրեանի բարեհաճ արտածութեամբ, Կ. Պոլիս, 1908:
- 7.— «Տաղք եւ նամականի», Նիւ Եորք, 1918:
- 8.— «Ընտիր քերթուածներ», Վեննա, 1922:
- 9.— «Քերթուածներ», Գ. տպագրութիւն, Պէյրութ, 1926:
- 10.— «Տաղեր», կազմեցին եւ խմբագրեցին Ալազան եւ Վ. Նորենց, Երևան, ✓ 1932:
- 11.— «Տաղեր», կազմեցին եւ խմբագրեցին Ալազան եւ Վ. Նորենց, երկրորդ հրատարակութիւն, Երևան, ✓ 1936:
- 12.— «Տաղեր, նամականի, դամբանակամ», Պէյրութ, 1940:
- 13.— «Տաղեր, նամակներ, հատուածներ», Վենետիկ, 1945:
- 14.— «Ընտիր քերթուածներ», Հալէպ, 1945:
- 15.— «Երկեր», կազմեց եւ տեքստը խմբագրեց շՄՍՀ գիտ. Ակադ. Իսկական անդամ Հր. Աճառեան, Երևան, 1947: ✓
- 16.— «Քերթուածներ եւ նամակներ» (ծննդեան 100ամեակի առթիւ), Պէյրութ, 1952: ✓
- 17.— «Տաղեր», կազմեց եւ խմբագրեց Սողոմոն Տարօնցի, Երևան, 1954: ✓
- 18.— «Քերթուածներ եւ նամակներ» (Բ. տպագրութիւն), Պէյրութ, 1956:
- 19.— «Տաղեր, նամակներ, հատուածներ» (Բ. տպագրութիւն), Վենետիկ, 1959:
- 20.— «Տաղեր», առաջարանը, բանարանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Նորենցի, Երևան, 1963: ✓
- 21.— «Տաղեր», կազմեց, առաջարանը, բանարանը եւ ծանօթագրութիւնները գրեց Վաղարշակ Նորենց, Երևան, 1967:
- 22.— «Տաղք», փորձ մը բնագրային վերականգնումի, Հրատարակիչ Արա Գալաճեան, Երուսաղէմ, 1967:
- 23.— «Նամականի Պ. Դուրեանի», Հրատարակիչ Արա Գալաճեան, Երուսաղէմ, 1968:
- 24.— «Երկերի ժողովածու», երկու Հատորով Պետրոս Դուրեանի, տեքստը պատրաստեց եւ ծանօթագրեց՝ Ա. Ս. Շարուրեան, Հրատարակութիւն՝ Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութեան, Երևան, 1971: ✓

բողքելէ յետոյ, որ մը շատ անախորձ կը գտնէ այդ թուրքերէն բառը (հայ բանաստեղծի տնտեսի մը համար մանաւանդ), բառարանի մը մէջ կը փնտոյն Զգմպային հայերէնը, կը գտնէ դուր բառը եւ իր մակահունը կը փոխէ Դուրեանի»:

Հետագային այս անունով կոչուած է նաեւ իր հանրածանօթ եղբայրը՝ Եղիշէ պատրիարք:

Դուրեան ունեցած է երէց եղբայր մըն ալ, Յարութիւն, որ իրմէ տարի մը ետք մեռած է: Դժբախտ զուգարհոյութեամբ մը, Դուրեանի երկու քոյրերն ալ վաղամեակի եղած են:

Դուրեանի մանկութեան մասին ոչ մէկ հետաքրքրական մանրամասնութիւն կայ. ապրած է Հանդարտ, անլուր եւ միտրիակ մանկութիւն մը, աղքատ յարկի տակ:

Չորս տարեկանին, դինք Վարպետ Տուտուշի քով կը գնեն, որպէսզի գրել-կարդալ սորվի: Վեց տարեկանին, արդէն կը սկսի յանձնիլ Սկիւտարի Տեմարանը, ուր ինը տասը տարեկերու ընթացքին ան կ'իւրացնէ Նարեկը, դրարար քերականութիւնը եւ ամէն ինչ, որ կար զգատ-ւելիծներուն մանկավարժութեան մէջ: Այդ տարիներուն կը սկսի կազմուորուիլ նաեւ Դուրեան բանաստեղծը:

Ըլլալով դպրոցաւէր եւ՝ կրօնասէր տղայ մը, ան ամբողջութեամբ կը նուիրուի լեզուական ու գրական գասերուն ու բանաստեղծական փորձերու:

Գարրիէլ Ներշապուհ, օւսողութեան դասատուն, յուսահատած Դուրեանի իր գագին հանդէպ ունեցած անհոգութենէն, որ մը կ'ըսէ անոր.

— Զո՛ւ՛ սա բանաստեղծական տրք նութիւններդ...

Սակայն Դուրեան, որուն մէջ Քսրոբան կրակը արթնցած էր արդէն, այսպէս կը պատասխանէ.

— Ա՛խ, էֆէնտի, չն'ս գիտեր որ քա՛ն շատ կը սիրեմ բանաստեղծութիւնը:

# ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՄԵՐ)

Պետրոս Դուրեան ծնած է 1851 Մայիս 20ին, Սկիւտարի Ենի-Մահալլէ թաղին մէջ. ունեցած է աղքատ ընտանիք մը: Հայրը՝ Աբրահամ աղա, ժամանակ մը եղած է Զրհանկիրներու պետ, իսկ հետագային՝ երկաթագործ. այս վերջին բրհեստով զբաղած է նաեւ ժեծ հայրը, Սարգիս, որուն Զըմպա մակդիրը տըրւած է հետեւեալ պարագաներուն տակ.

— «Որ մը, յաճախորդին մէկը Սարգիս աղային կը հարցնէ, թէ պարզունակին ծակերը ինչով կը բանան, — «Զըմպայով» կը պատասխանէ երկաթագործը: — «Վա՛յ Զըմպա, վա՛յս կ'ըսէ յաճախորդը, եւ ատկից Սարգիսի անունը Զըմպա Սարգիս կը մնայ, եւ ատկեա ընտանիքի մականուն կը դառնայ: Պետրոս, իր տղայութեան ատեն Զըմպեան ստու-

Ասիկա ինքնին փաստ մըն է, թէ փոքրին Պետրոս, վաղ զգարնանային կենացը մէջ՝ արդէն սկսեց էր բանաստեղծի Հոսիեր առնել, «տօնութիւններ ունենալ»:

Իր միւս ուսուցիչները եւ դասընկերներէն ոմանք, իրենց յուշերուն մէջ կը յայտնեն նաեւ, թէ Դուրեան «թուղթ մրտեւելու» յամառ վճռակամութիւն մը օրէնք ու մեծ հոգածութեամբ կը մօտենար իր ստեղծագործութիւններուն:

Յակոբ Պարոնեան, որ այդ շրջանին Ճեմարանի տեսուչն էր, գնահատելով Դուրեանի բանաստեղծական փորձերը, իր «Թարսրոն» պարբերաթերթին մէջ Հըրատարակութեան կը յանձնէ Պետրոսի կարգ մը քերթուածները:

Դուրեանի դպրոցական շրջանին ամէնէն կարեւոր արտադրութիւնները, սակայն, իր առաջին երկու թատերգութիւններ են՝ «Վարդ եւ Շուշան» ու «Ան հողեր»։ առաջինը, Հակոբակ միամիտ Հիւսուածք մը ըլլալուն, ապա ու թրթրուուն շեշտ մը կը պարունակէ, նոյն ատեն Հանդիսանալով գրական ճշմարիտ սկզբնաւորութիւնը վաղամեծիկ բանաստեղծին: Իսկ դպրոցական շրջանի իր վերջին երկու տարիներուն, Վարդուհանի խոսմբին համար թարգմանած է ուրիշ թատերգութիւններ եւս:

Այս քերթողին դպրոցական կեանքը տարբեր երեւոյթ մըն ալ կը պարզէ: Թէ՛ իր դասընկերները եւ թէ՛ ուսուցիչները կը վկայեն, որ Պետրոս եղած է զուարթ, տպաւորիչ պատանի մը, որուն ներկայութիւնը միշտ ալ Հաճոյք պատճառած է շուրջիններուն:

Կը յայտնեն նաեւ, թէ ան պատուական տղայ մըն էր, ազնիւ եւ սիրուն:

Միտմամանակ, նոյն այդ լուստեղծակ անձերը կը յայտնեն, թէ Հետազոտին, ընտանեկան աղքատութիւնն ու այդ իրականութիւնէն բխած այլազան դժուարութիւնները պատճառ դարձան, որ երիտասարդութեան սեմին կանգնած Դուրեանը ամբողջովին փոխուի:

Պետրոս Դուրեան, աղքատութեան Հարկադրանքներուն ենթարկուելով, կը

Հեռանայ դպրոցէն եւ կը սկսի աշխատել դեղագործի մը քով:

Քայքայ դեղերու աշխարհին մէջ հրեք օր Հաղիւ կը մնայ, ապա կը վերադառնայ դպրոց, տարի մը եւս ուսանելու:

1867ին, Դուրեան վերջնականապէս կը լքէ դպրոցը, եւ Հետեւելով ծնողքին յորդորներուն, սեղանաւոր Մարտիկ ազգային քով կ'աշխատի իբրեւ Հալուսպահ. բնական է, որ տարիէ մը աւելի պիտի չկրնար դիմանալ սեղանաւորի մը ծառայող բանաստեղծ գրագէտ մը: Դուրեան, վերացումներն ու երազները շարկած, քնարն ու դիրքը թեւի տակ կը վերադառնայ տուն:

Սակայն բնութիւնը պէտք ունէր իր օժանդակութեան. բանաստեղծ Դուրեան զուկայի գործ» չ'ուզէր կատարել եւ մեծապէս կը ատապի իր ընտանիքին օգնել չկորենալուն համար: Այդ շրջանէն սկսեալ, Դուրեան կը փորձէ իր ապրուստը շահիլ նախ ուսուցչութեամբ, ապա թարգմանութեամբ եւ թատերական գրականութեամբ, նոյնիսկ ատեն մը դերասանութիւն կ'ընէ, սակայն ոչ մէկ տեղ կը յաջողի, կը մնայ միշտ անպործ, միշտ թշուառ:

Ապրուստի պայքարը Դուրեանի համար կ'ունենայ մահացու նշանակութիւն: Զբաւորութեան ցուրտ ու մութ ոլորտներուն մէջ կեանքը քաշկռակու դատարարուած ըլլալու ճորճքեցուցիչ մը տածումը, գրկանքները, քիչ մը ստակ ձեռք բերելու համար կրած յոգնութիւններն ու նեղութիւնները, դերասանութեան շրջանին իր վարած անառողջապահիկ ու տաժանելի կեանքը, իր մտաւոր մշտական ու արագ աշխատութիւնը կը մաշեցնեն իր առողջութիւնը եւ կը սպառնան զինք:

Զուարթ ու առոյգ պատանին կը գառնոյ տառապող ու տնոյս երիտասարդ, եւ իր ցուերուն լուծումը կը փնտռէ բանաստեղծութեան մէջ: Բնականաբար Հոգեկան այս կացութիւնը Ֆիզիքայէն կը Հարուածէ Դուրեանը, ան կը սկսի մարմնապէս տկարանալ, մինչեւ որ 1871 Յունիսի սնոր բերնէն արիւն կը

սկսի հասիլ: Թոքոխտի տխրանչանք բացայտ կը դասնայ: Այնուհետև, Դուրեան հոյեղէս կը փարի մահուան եւ իր կեանքին մնացեալ սովորները կը վերածուին ստեղծագործական բեղուն շրջանի:

Իր մարմնոյն հիւանդութեան մէջ, որ հողիին այ կը փոխացուի, բանաստեղծութիւնն այ իրեն համար տեսակ մը հիւանդութիւն կը դառնայ: Երբեք չի նկատեր զայն պաշտօն մը, այլ կը նկատէ վիճակ մը: Ինք բանաստեղծութեան մոլի էր, ինչպէս ուրիշ մը՝ գինիի, ուրիշ մը կնոջ: Կը ջերթէ, որովհետեւ աստիկա պէտք էր իրեն համար. պէտք էր այնքան, որքան՝ խոհարն ու արտասուելը: Կը ջերթէ, իր ներփոխի զգալով դիպուկը ծանր վիշտերու, որոնց բառերու ձեւով իրմէ զուրս թափելը կը թեթեւցնէ իր չարչարանքը:

Անունն ու անյալ սրտի մը բնուն ունենալով իր կեանքին վրայ ճիւղ ու բազմադիմի գրկանքներով անոր հետզհետէ սպասուած տեսնելով, աղքատ, անուշ, դժբախտ, իր ուզածին եւ արժածին պէս չսիրուած, չհասկցուած, չգնահատուած, իր ուժերուն օրէ օր փճացումը եւ իր յայտերուն ընդմիջտ ցնդումը զգալով, Ակիւտարի Սոխակը կամ, ինչպէս ինքն իսկ կ'անուանէ ինքզինք՝ «Նոճեաց տղան», կը թուի մարմնացում մը ցաւի:

Եւ օրէ օր տժգունելով ու նուազելով, խեղճ մեծ ջերթողը, դեռ մաքառելով մահուան պաղափարին դէմ, իր դողդոջ բազուկներով դեռ փարելով կեանքի ստուերին, կամաց-կամաց ժօռնայր կը տեսնէ անան ու անխուսափելի Այցելուին:

1872 Յունուար 21ին, շինչարթիէն Ուրբաթ լուսոյդ դիւրբը, Պետրոս Դուրեան կը մեռնի:

Անոր մահը խոր ցնցում կ'առաջացնէ Ակիւտարի մէջ: Ամբողջ արուարձանի ե-

**Տ Ա Ղ Ք**  
 ԵՒ  
**Թ Ա Տ Ր Ե Ր Գ ՈՒ Թ Ի Ի Ե Ր**

**ՊԵՏՐՈՍԻ ԳՈՒՐԵԱՆ**

ՀԱՅՏԱՆԻ ԱՍՏՆԱԿ  
 ԵՐԹԵՐԱՍՏՐԱՅ ԲՆԿԱՐՈՒԹԵԱՆ  
 Ի Տ Յ Կ Ի Ի Յ Ա Գ Ո Ւ

**Կ. ՊՕԼԻՍ**  
 ԳՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ  
 1872

բիտասարդութիւնը, որ զօրաւոր համակրանք մը ունէր Դուրեանի հանդէպ, կ'ուզէն ազգային երեւոյթի մը վերածել Դուրեանի յուզարկաւորութիւնը: Նախ, իր փափաքին համաձայն, մինչեւ կիրակի կը պահեն Դուրեանի մարմինը, եւ ապա՝ աննախընթաց ելոյթով մը, նուազախումբի ընկերակցութեամբ, կը թաղեն հանձարեղ բանաստեղծը:

Շուտով, Դուրեան կ'արժանանայ առաջնակալ ժողովրդականութեան: Ամէնուր կը սկսին գրել անոր հանձարին մասին, հրատարակութեան կը յանձնեն իր գործերը՝ «Տաղի և քառերգութիւններ» անունով եւ այդ հատորին հասոյթով յուզարձան մը կը բարձրացնեն «վաղա՛մեռիկ համեմար» շերտին վրայ:

(Քաղուած՝ Ա. Զօպանեանի «Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը» Խատարէն)

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ



ԴՈՒՐԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Պետրոս Դուրեանի մահը ցընցում առաջ կը բերէ Սկիւտարի մէջ: Այն խուլ, բայց զօրաւոր համակրութիւնը, որ այդ արւարձանին ամբողջ երիտասարդութեան սրտին մէջ զիգուած էր, կը պոռթկայ ցաւի ահագին արտայայտութեամբ մը: Շատեր կու գան բանաստեղծին անշունչ մարմինը տեսնելու, կու լան անոր վրայ ու կ'ըսեն. «Երանի՛ իրեն, մենք ալ այսպէ՛ս մեռնէինք»: Սուգ՝ ամբողջ այդ փունջին վրայ, ուր հնչած էր Դուրեան քնարը, ուր երգած էր Դուրեանի հոգին եւ ուր օգին մէջ դեռ կը ծածանէր անոր անհուն հատաչը:

Իր կամքին համեմատ, մարմինը մինչեւ կիրակի կը պահեն:

Կիրակի օրը կը կատարեն յուղարկաւորութեան հանդէսը՝ ջանալով, որ ան ամէն կերպով շքեղ ըլլայ: Բայց արգելքներ կ'ենլին: Դժբախտ օրհասականին վերջին փափաքն իսկ խոչընդոտներու կը հանդիպի: Երիտասարդութիւնը, մասնաւորապէս ընթերցասիրաց ընկերութիւնը, կ'ուզէ, որ նուազամութեամբ վերցուի մեռելը: Սկիւտարի եկեղեցիին պաշտօնեաները չեն թոյլատրեր, հայ եկեղեցիին ոչւայն հակառակ նկատելով նուազարանօք յուղարկաւորութիւնը: Տաներէցն իսկ, Ս. Գրիգոր քահանան, կ'ընդդիմանայ: Երիտասարդները չեն համոզուիր, հանդէսը կը յետաձգեն, եւ իրենցմէ մէկը՝ Աւետիս Գոռան-


եան, Գուրեանն ամէնէն աւելի  
 սիրողներէն մին, կ'երթայ իւ-  
 կոյն Պոլիս՝ պատրիարքէն հրա-  
 ման աննելու: Բայց Խրիմեան  
 Հայրիկ պատրիարքարանք չէ-  
 Գոռանեան պատրիարքական տե-  
 ղապահ Արխեանկէս սրբազանին  
 կը զիմէ եւ անկից արտօնութիւն  
 կը ինզրէ, ան ալ կը վախնայ  
 ինք իր դիմուն որչափ տալ եւ  
 կը թելադրէ պատրիարքին դի-  
 մել: Գոռանեան կ'երթայ Որ-  
 թաքիոյ Կիւմիւշնի Գասպար ա-  
 ղային տունը, ուր Հարմիքի  
 Հանդէս մը տեղի կ'ունենար  
 պատրիարքին նախապահութեան  
 տակ, կը մտնայ Խրիմեանին  
 եւ ինզիրքը կը ներկայացնէ:  
 Խրիմեան, որ Հայրական խան-  
 զաղատանք մը ունէր Գուրեա-  
 նին Համար, խորապէս կը յուզ-  
 տի անոր ման իմանալով. յե-  
 տոյ, իրեն ներկայացուած խն-  
 դիրքին հետեւեալ սիրուն պա-  
 տասխանը կու տայ. «Արտօնու-  
 թիւն չեմ տար, բայց կը ներեմ»:   
 Սակայն մինչեւ որ այս բոլոր  
 բաները կը կատարուին, ատենը  
 կ'անցնի եւ երբ Գոռանեան Սկիւ-  
 տար կը դառնայ, ժամը 11ը ե-  
 կած է: Բարեբախտարար Քուզ-  
 կունճուքի քարոզիչ Աեթեան  
 Յովհաննէս եպիսկոպոսը, հը-  
 մուտ ու բարի մարդ մը, ասանց  
 ապասխալու, որ արտօնութիւնը  
 զայ, ժամը 9ին «Տղա՛ք, — կ'ը-  
 սէ, — քայնցէք ետեւէս»: Նուա-  
 զարանը հնչեցնել կու տայ եւ  
 կ'առաջնորդէ դադաղը մինչեւ  
 գերեզմանատուն: Կ'ուզէն որ  
 որեւէ զարդ չպակսի դադաղին  
 վրայ, եւ ասոր Համար կ'ուր ալ

կը ծայրի: Ա. Խաչ եկեղեցիին  
 շապկապետը՝ Կամէրեան, կ'ընդ-  
 դիմանայ աստղին կարգի ծած-  
 կոցը տալու՝ վախնալով, որ  
 կ'աւրուի, որովհետեւ օղջ թէլ  
 մը անձրեւոտ էր: Բայց կը պնե-  
 դեն ու կ'առնեն դայն: Այսպէս,  
 այդ շքանք բանաստեղծը ճշմա-  
 րիտ Հարուստի յուզարկաւորու-  
 թիւն մը կ'ունենայ: Եւ ինչ որ  
 շատ Հարուստներ չեն ունենար  
 յաճախ, ինչ որ մեր մէջ շատ  
 քիչերու դադաղը վայելած է,  
 շորս Հազար Հոգիէ աւելի քաղ-  
 մութիւն մը, մեծ մասամբ երի-  
 տասարդներէ թաղկացած, բա-  
 նաստեղծին մարմնոյն կը հետեւի  
 հակառակ անձրեւոտ օդին:  
 Եկեղեցին, արարողութենէն յե-  
 տոյ, Աեթեան եպիսկոպոսը դամ-  
 բանական քարոզ մը կ'արտասա-  
 նէ Գուրեանին վրայ. գերեզմա-  
 նատունը՝ դամբանական ճառեր  
 կը կարդան Պօղոս Դելիփեան, Ար-  
 մէն Լուսինեան, Մ. Մելիքեան  
 եւ Խորէն քահանայ Փեւելիփա-  
 եան:

Այդ օրն է, որ կը սկսի Գուր-  
 եանի փառքը: Այն աղեղնութիւ-  
 նը, որ կաթիլ կաթիլ իր սաղե-  
 րէն թատերգութիւններէն եւ նա-  
 մակներէն, իր խօսակցութիւն-  
 ներէն ու իր անձէն Հոսած էր  
 այդ բոլոր թարմ հոգիներուն  
 մէջ, այդ օրը դուրս ելլելով իր  
 թաքստոցէն, կուսակուելով այդ  
 դադաղին շուրջ եւ անկից ալ ան-  
 գին՝ աւելի հետունքը Համար-  
 ձակօրէն տարածուելով, ծով կը  
 դառնայ:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ





ՏԱՊԱՆԱԳԻՐ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ  
 ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ  
 ՔԵՐԹՈՂ

Աստ Բանգյի Մարմին Պետրոսի Դուրեան,  
 Որ ըսանամեայ էջ ի գերեզման,  
 Երկաթագործի սա ծրուա որդի,  
 Բանաստեղծ Թուեա ի կենաց աստի .  
 Ի տարածամու Յոնվար ջրսանի  
 Հազար ունիարիւր եօթանամներկի-  
 Արեւն իւր էր դեռ առաւօտին,  
 Օրհասին սեառ ամաբ ըզնա ծածկեցին .  
 Մահ նորա ընաւից իւրոց սիրելաց  
 Սուգ անմրկիմար եւ կակիծ էած,  
 Վշտըմբեր կենաց իւրոց սուկ վրկայ  
 Կենայ Մահարձանս առասիկ սաա կայ: (1)  
 ԾԵՆՁԱԷ Ի 1859

(1) Սոյն տապանագիրն գրած է կրտսերագոյն եղբայրն,  
 Ամեն. եղիշէ Պատրիարք Դուրեան 1872 թուականին:

## ԳՈՒՐԵԱՆԻ ՍՍՏՂԸ

Հեղին աստուածներն եւ դիցազուններն  
Տուին աստղերին իրենց անուններն  
Գո խօսքն ասելով իրենց անունից՝  
«Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից»:

Դու էլ քո հոգին, իբր անեղ բողոք,  
Նետեցիր Աստծոյն անգոյ, անողոք,  
Սպառնալով նրան՝ գնալով երկրից՝  
«Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից»:


Ես գիտեմ՝ թէ դու ո՛րն ես աստղերից,  
Որ այնքան պայծառ նայում ես վերից,  
Դու ես սիրելին, մաքուրն ամենից՝  
«Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից»:

Դու ե՛ւ այնտեղ ես, ե՛ւ այստեղ, մեզ հետ,  
Հուր ու բոյր տուող մեր երգին յաւէտ.  
Ու բարբառում ես մեր երգի հունից՝  
«Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից»:

Դու հայ համնարի աստղերից վերին  
Գալիք դարերի մեր սերունդներին  
Նայնալէս կը յուշես, ինչպէս հիմա ինձ՝  
«Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից»:

1947

ՎԱԿԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ



**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԳ**

Ամբողջ տասնամեակ մը ժամացու-  
ցային կանոնադրութեամբ լոյս տեսն-  
լէ ետք, Պետրոս Դուրեանին նախընտ-  
նելոյ բացառիկով՝ «*Քաղիկ*» կը սկսի  
իր հրատարակութեան ժՎ. տարին:

Ծանօթ է, որ արտասահմանի պայ-  
մանները շատ ձեռնառու չեն գրական հան-  
դէսներու համար, որոնք գուրկ ըլլալով  
նիւթական կողմնակի ազդիրներէ, յա-  
նախ լոյս կը տեսնեն մախաճեղմաներուն  
յաւելեալ գոհագոյթումներով:

«*Քաղիկ*» բացառութիւն չէր կրնար  
կազմել եւ չկազմեց:

Մեր առաջին քիւին հրատարակու-  
թեան ցայտօր՝ քէ՛ քուղթին գինը, քէ՛  
աշխատավարձը եւ քէ՛ առաջման ծախ-  
սերը տառացիօրէն եռապատկուած են:  
Այս հանգամանքը աւելի դժուարացուց  
արդէն դժուար մեր գործը:

Այս իրողութեան մեկնելով, երկ-  
րորդ տասնամեակի սեմին, «*Քաղիկ*»-ի  
վարչութիւնը հարկադրաբար որոշեց  
աննշան յաւելում մը ընել բաժնեգիւնին  
վրայ, 22 լ. ոսկին 25ի եւ 8 տարբեր 10ի  
բարձրացնելով:

Կը յուսանք, որ մեր բաժանորդները  
բաժնեկից պիտի ըլլան մեզի նաեւ այս  
մտահոգութիւններուն մէջ եւ սիրայօժար  
պիտի շարունակեն մասնակցիլ «*Քաղիկ*»-ի  
էջերուն տարած գրական մեր ճիգերուն:

پاکین  
مجله شہریہ ادبیہ و فنّیہ علمیہ  
مدیر المسؤؤل  
السید ارتین کارنیک قزاقچیان

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄՍԱԳԻՐ

ԻՐԱՆԻ ԱՆՆՈՒԹՅԱՆ  
ԵՆ ԱՐՈՒՆՍՏԻ


ՎԱՐՉԱԿԱՆ  
Կ. ՍԱՍՈՒՆԻ  
ԽՍԲԱԳԻՐ  
Գ. ՄԱՊԵՆԱՆ

ԽՍԲԱԳՐՈՒԹԵԱՆ  
ԱՆԳԱՄԵՐ  
Յ. ԳԵՂԱՐԳ  
Տ. ՈՍԿՈՒՆԻ  
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ  
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ  
ՀՆՍԱԳԻՐ ԱՆԴԱՄԵՐԵՆ  
† ԵՊ. ՊՅՅԱԶԵԱՆ

Խմբագրութեան հասցէ  
**G. SASSOUNI**  
Rue Sélim Boustani,  
Beyrouth-Liban

Հեռագրային քիւ 296898

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ  
ԼԻԲԱՆԱՆ 25 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 10 ՏՈՒԱՐ  
ՀԱՏԱՎԱՅԱՌ 5 Լ. ՈՍԿԻ



digitised by A.R.A.R.@

Վարչութեան հասցէ :-  
G. SASSOUNI  
Rue Sélim Boustani  
Beyrouth - Liban